

ԱՐՏԵՄ ԵՂԻՇԵԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՅ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հատոր Ա

Երևան-Լոս-Անջելես - 2018

Խմբագիր՝ Բ.Գ.Պ. Ռ. Թոխմախյան

Սույն հատորում ներկայացված են հանրալեզվաբանության, լեզվաբանական աշխարհագրության, բարբառագիտության արդի խնդիրներին նվիրված աշխատություններ:

Հատորը ամփոփում է վիճակագրական քննության տվյալները և հայ լեզվաբանության մեջ նորագույն մեթոդների օգտագործման առաջին փորձերի արդյունքները:

ՀԱՆՐԱՆԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն «հանրալեզվաբանական քննությունը» հատկապես ուշադրություն է սևեռում հարավկովկասյան տարածաշրջանի հանրալեզվաբանական խնդիրների վրա: Ինչ խոսք, հանրալեզվաբանությունը, որպես առարկա, համեմատաբար նոր ձևավորված գիտություն լինելով, բազմաթիվ հրատապ խնդիրներ ունի, որոնք տակավին գտնվում են հետազոտության փուլում: Այդուհանդերձ, այն ամենը, ինչ ձեռք է բերվել վերջին կես դարում, այնքան նշանակալից ու արժեքավոր է, որ ներկայումս աշխարհի գրեթե բոլոր հասարակագիտական, բանասիրական և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում «Հանրալեզվաբանություն» առարկան ունի իր կայուն տեղը: Տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնական նյութեր, որոնք հստակ պատկերացում են տալիս նորաստեղծ այս առարկայի խնդիրների ու նպատակների, գործադրած որակական ու քանակական մեթոդների մասին և այլն: Հայոց լեզվով նման դասընթաց հրապարակվել է առաջին անգամ 2002թ. մեր հեղինակությամբ:

Ներկա քննությունը նպատակ ունի ոչ միայն ներկայացնել հանրալեզվաբանության առարկայի ձևավորման պատմությունն ու արդի վիճակը, ընդհանուր հանրալեզվաբանական խնդիրները, այլև կարևորագույնս արծարծել այսրկովկասյան տարածաշրջանի լեզվական բարդ, բայց հարուստ համապատկերը: Լեզուների փոխհարաբերությունները, լեզուների փոխհարստացման, ներգործման և զարգացման առանձնահատկությունները, երկլեզվության և բազմալեզվության ինքնատիպ երևույթները ներկայացվում են Անդրկովկասի երեք հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) անվանի հանրալեզվաբանների, բուն լեզվաբանների ցայժմ ձեռք բերած գիտական արդ-

յունքների հիման վրա: Աշխատանքում հանգամանորեն դիտարկվում են լեզվի և մշակույթի, լեզվի և կրոնի, լեզվի և կրթության և մի շարք կարևորագույն հարցեր:

Հանրալեզվաբանության սույն քննությունը ոչ միայն կարող է մեծապես օգնել ապագա հասարակագետներին, երկրագետներին, բանասերներին՝ կողմնորոշվելու լեզվական խճճված ու չափազանց նուրբ համաշխարհային հարաբերությունների ոլորտում, այլև հստակ պատկերացում կազմելու, թե ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում ինչպիսի՛ լեզվաքաղաքականություն է մշակվում, մարդու և լեզվի իրավունքների ինչպիսի՛ չափորոշիչներ են գործում, ինչ ուղղվածություն ունեն լեզուները իրենց զարգացման ճանապարհին, առհասարակ՝ ի՛նչ ենք հասկանում լեզվական զարգացում ասելով և այլն:

Մեր օրերում խնդիրը շատ ավելի մեծ հրատապություն է ստանում, երբ հատկապես հարավկովկասյան տարածաշրջանում արտալեզվական և բուն լեզվական խնդիրները ոմանք փորձում են ներկայացնել առանց հաշվի առնելու այնպիսի մի գիտության անուրանալի նվաճումները, ինչպիսին է մի քանի գիտությունների «խաչմերուկում» ծնված հանրալեզվաբանությունը: Եթե զգացմունքային ոլորտից դեպի սառը գիտական և ծրագրավորման ենթակա դաշտ մտնելուն դույզն ինչ օգնի սույն ձեռնարկը, մենք մեզ բավարարված կզգանք: Քանի որ այս աշխատանքը վեր է հանում (կամ՝ գոնե փորձում է վեր հանել)՝ հաճախ աննկատ, բայց միշտ առկա լեզվական իրավունքների այս կամ այն չափով ոտնահարման, միջազգային դաշնագրերով արդեն իսկ վավերացված հնարավորությունների անտեսման երևույթները, դրա լուսաբանումը կարող է նպաստել այդօրինակ հարցերի գիտական լուծմանը:

«Հարավկովկասյան տուն» կամ առավել ևս «կովկասյան տուն» վերջերս շրջանառության մեջ դրված թեզը կարող է մնալ օդում հենց այնպես կախված, եթե հաշվի չառնվեն այնպիսի կարևորագույն հարաբերություններ, ինչպիսիք են՝ լեզվի ազդե-

ցութունը հասարակության վրա, հակառակը հասարակության ազդեցությունը լեզվի վրա, երկլեզվության և բազմալեզվության երևույթներում ճիշտ կողնորոշման սկզբունքները և այլն, և այլն: Կարծում ենք, մոտ ապագայում հնարավորություն կստեղծվի Անդրկովկասի համապատասխան գիտական ուժերի ջանքերով ոչ միայն լուծելու հանրալեզվաբանական հրատապ խնդիրներ, այլև մշակելու լայնամասշտաբ լեզվաարդյունավետ գործունեության ծրագրեր և իրագործելու ճիշտ լեզվաքաղաքականություն:

ԳԼՈՒԽ 1.
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրալեզվաբանությունը լեզվաբանության նորագույն ուղղություններից է, որը հանդես է եկել բուն լեզվի մասին գիտության և սոցիոլոգիայի, հանրային հոգեբանության (հանրահոգեբանության) հանգուցակետում՝ «խաչմերուկում», նպատակ ունենալով հետազոտել ինչպես լեզվի ծագման, զարգացման և գործառույթյան հասարակական պայմանավորվածությունը, այնպես էլ մի կողմից՝ լեզվի ազդեցությունը հասարակության վրա և մյուս կողմից՝ վերջինիս ազդեցությունը լեզվի վրա: Հանրալեզվաբանության առարկան սովորաբար դիտարկվում է հետևյալ երեք առումներով.

Ա) Լեզու և հասարակություն (նկատի են առնվում լեզվի և հասարակության փոխհարաբերության բոլոր տարատեսակները՝ լեզու և էթնոս, լեզու և պատմություն, լեզու և մշակույթ, լեզու և քաղաքականություն, լեզու և դպրոց, լեզու և եկեղեցի և այլն): Ահա հենց այսպիսի անհամեմատ լայն մոտեցում է որդեգրել Ն. Մեչկովսկայան իր հեղինակած դասագրքում (տե՛ս գրականության ցանկը):

Բ) Երկրորդ մոտեցմամբ դիտարկվում են խոսողի կողմից լեզվի այս կամ այն տարբերակի ընտրության պատճառաբանվածությունները, երկլեզվության պայմաններն ու առանձնահատկությունները, լեզվի ցանկացած կարգի տարբերակները («մրցակից» լեզուների միջև գոյություն ունեցող հաղորդակցական տարբերակները): Ըստ էության հանրալեզվաբանության այսպիսի ըմբռնումը գերիշխում էր հատկապես խորհրդային լեզվաբանության վերջին փուլում (20-րդ դարի 70-80-ական թթ.), երբ լեզվի հանրային հայեցակետի տակ նախ և առաջ ըմբռնվում էր լեզվի տարբերակայնությունը: Անշուշտ, «լեզվաշինության» հարցերը ուշադրության առարկա են եղել նաև 20-րդ դարի

20-ական թվականներին: Խոսքը տվյալ դեպքում զուտ հանրալեզվաբանական ըմբռնումների գերակայության մասին է:

Գ) Երրորդ մոտեցմամբ, որ հաճախ գերիշխում է ամերիկյան և արևմտաեվրոպական հանրալեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների գործերում, գերազանցապես դիտարկվում են խոսողների տարբեր տարիքային, սոցիալական խմբերի լեզվական առանձնահատկությունները: Այսպիսի մոտեցմամբ, ըստ էության, քննվում է հասարակության սոցիալական կառուցվածքը, դիտարկվում են լեզվի տարբերակային դրսևորումները՝ տարբերակները, պարզվում է այն համապատկերը, ըստ որի ճշտվում է, թե հասարակության որ խավերը ինչպես են խոսում (խորհրդարանում, շուկայում, եթերից, լսարանում, լսարանից դուրս և այլն):

20-րդ դարի կեսերից հետո (հատկապես 60-70-ական թվականներին), ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունները սկսեցին բնութագրվել մի շարք գիտությունների հարակից դաշտում միջճյուղային նոր գիտությունների ձևավորմամբ: Ահա այդպիսի գիտություններից մեկն էլ հանրալեզվաբանությունն է: Իր ձևավորման հենց սկզբից այդ գիտությունը անվանման մի շարք տարբերակներ ունեցավ (հմմտ. ռուսերեն՝ լեզվի սոցիոլոգիա). ի միջի այլոց, պետք է տարբերել սոցիոլոգիական ուղղությունը, դպրոցը լեզվաբանության մեջ (Ա. Մեյե և ուրիշները) բուն հանրալեզվաբանությունից՝ իբրև միանգամայն անկախ և ինքնուրույն գիտություն, (սոցիոլոգիական լեզվաբանություն, լեզվաբանական սոցիոլոգիա և այլն): Հայերենում նախընտրաբար սկսեց կիրառվել հանրալեզվաբանություն տերմինը, որի միջազգային համարժեքը՝ «սոցիոլինգվիստիկա»-ն, առաջին անգամ շրջանառվեց ամերիկացի Խ. Կարթիի կողմից 1952 թվականին: Այսպիսով 70 տարի առաջ գիտական շրջանառության մեջ մտած եզրը կիրառվում էր մի ուղղության համար, որը փաստացի գոյություն ուներ

տակավին նույն դարասկզբին՝ գլխավոր նպատակ ունենալով զբաղվել լեզվի, որպես հասարակական երևույթի, քննությամբ:

Արդի հասարակությունը լեզվաքաղաքականության գիտական (ոչ սիրողական) մակարդակով մշակման սուր պահանջ է զգում, լեզվաշինության հստակ սկզբունքների որդեգրմամբ՝ առաջնահերթ այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք կարևոր են ն՝ լեզվաբանության, ն՝ սոցիոլոգիայի, ն՝ այն հաստուկ գիտության համար, որը կոչվում է հանրալեզվաբանություն, որի հետապնդած խնդիրներից մեկն էլ հենց դա է: Ահա թե ինչու հանրալեզվաբանության արդյունքները հետաքրքրություն են ներկայացնում թե՛ լեզվաբանների, թե՛ սոցիոլոգների, թե՛ հոգեբանների, թե՛ ազգագրագետների, թե՛ փիլիսոփաների լայն շրջանակների համար: Պետք է ընդունել նաև, որ հանրալեզվաբանների մեծ մասը իրեն զուտ լեզվաբան է համարում նպատակ հետապնդելով լեզվական և հանրային սոցիալական կառուցվածքների միջև կայուն և հետևողական կապերի, համապատասխանությունների բացահայտումը:

Անվիճելի իրողություն է, որ հանրալեզվաբանության առարկայի և խնդիրների մասին, սկսած իր առաջացման փուլից, հստակորեն ձևավորվել է երկու մոտեցում՝ ա) այսպես կոչված բուրժուական կամ ամերիկյան և բ) մարքսիստական կամ խորհրդային: Հանրալեզվաբանության ակունքներում կանգնած են Ա. Մեյեն և Ֆ. դը Մոսյուրը, որոնց ընդհանուր լեզվաբանական դրույթները հիմնարար դեր խաղացին լեզվաբանության հետագա ողջ զարգացման և մասնավորապես՝ հանրալեզվաբանության վրա (հմմտ. Կ.Բ. Լերներ, գրակ. ցանկ): Ընդ որում լեզվի, որպես սոցիալական երևույթի, էության ըմբռնումը էականորեն տարբեր է Ա. Մեյեի և Ֆ. դը Մոսյուրի լեզվաբանական աշխարհայացքում, երբեմն անգամ հակոտնյա (տե՛ս Լերներ, էջ 3-5): Թեև հատկապես նշված գիտնականների ջանքերով է, որ առանձնացվում է այսպես կոչված ֆրանսիական հանրալեզվաբանական դպրոցը:

Տակավին 1927 թ. Մ.Ն. Պետերսոնը, անդրադառնալով լեզվի սոցիալական երևույթ լինելու խնդրին, Ա. Մեյեին համարում է լեզվաբանական սոցիոլոգիզմի հիմնադիր. «Ա. Մեյեն առաջինը ամենայն հստակությամբ դրեց լեզվի սոցիոլոգիայի խնդիրը» (Պետերսոն, 1927, էջ 8-9): Նույն ժամանակաշրջանում Ռ. Օ. Շորը, Ա. Մեյեին և Ֆ. դը Մոսյուրին հատկացնելով մեկ լեզվաբանական ուղղության, շեշտում է Է. Դյուրկհեյմի ազդեցությունը նրանց վրա՝ հատկապես նկատի ունենալով լեզվի, որպես հասարակական երևույթի, դյուրկհեյմյան ըմբռնումը (Շոր, 1926, էջ 140):

Ուղիղ կես դար առաջ (1952թ.) Վ.Մ. Ժիրմունսկին նշել է. «Լինելով այսպես կոչված «սոցիոլոգիական դպրոցի» հիմնադիր՝ Ա. Մեյեն հանդիսանում է նշանավոր ֆրանսիական սոցիոլոգ Է. Դյուրկհեյմի աշակերտը» (Ժիրմունսկի, 1952, էջ 3):

Չայտնի է, որ Ա. Մեյեն լեզվաբանությունը դիտում է որպես սոցիոլոգիայի մեկ մասը, այն դեպքում, երբ Ֆ. դը Մոսյուրի ըմբռնմամբ, «լեզուն խստորեն տարբերվում է հասարակական բոլոր մյուս երևույթներից» (Մոսյուր, 1977, էջ 108): Ըստ Մոսյուրի, լեզուն սոցիալական, համակարգային երևույթ է, որը հակադրվում է «ոչ սոցիալական» երևույթ հանդիսացող խոսքին: Ըստ էության, դա հանրալեզվաբանության, որպես առանձին գիտության, կայացման առաջին փուլն է:

Այնպես, ինչպես անցյալ դարում ստեղծված (սեմիոտիկա) նշանագիտություն առարկայի մի բաղկացուցիչ մաս դիտարկվեց լեզվական նշանի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը (լեզվաբանությունը), այդպես էլ դրանից շուրջ երեք տասնամյակ առաջ ձևավորված սոցիոլոգիա առարկայի մի բաղկացուցիչ մաս սկսեց դիտարկվել այն նոր առաջացող գիտությունը, որ կոչվում է հանրալեզվաբանություն, որին տակավին սպասվում են զարգացման լայն հեռանկարներ, դիտարկման բազմազան խնդիրներ, որոնց մոտեցման և վճռման հարցերում հենց սկզբից ի հայտ եկան էական տարբերություններ (սկսած ելակետային դրույթներից մինչև ստացված արդյունքների ընդհանուր ուղղվա-

ծության ծրագրավորումը): Ըստ այդմ էլ հանրալեզվաբանության անցած կեսդարյա պատմությունը սովորաբար բաժանվում է երկու մասի՝ 1) ամերիկյան և եվրոպական հանրալեզվաբանական դպրոցի և 2) խորհրդային և սոցիալիստական ճամբարի երկրներում բուռն զարգացում ապրած հանրալեզվաբանության:

Ստորև ներկայացվում է այդ երկու ուղղությունների համառոտ պատմությունը՝ անհրաժեշտ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուրի հետապնդած հիմնական նպատակներին, կիրառած մեթոդներին և ստացած արդյունքներին:

Հանրալեզվաբանությունը ԱՄՆ-ում

Հանրալեզվաբանության առարկայի նկատմամբ միասնական մոտեցման բացակայությունը հանգեցրել է այն բանին, որ քննության առարկա են դարձել ընդհանուր և մասնավոր բնույթի մի շարք խնդիրներ: Ինչպես գրել է Ա. Գրիմշոն. «Իրականում ոչ մեկին հայտնի չէ, թե ինչ կարող է մտնել այն ոլորտը, որը կոչվում է հանրալեզվաբանություն» (հմմտ. Մ. Յուսելեր, Հանրալեզվաբանություն, 1987, էջ 88):

Շատ ավելի բնութագրական է Ու. Բրայտի 1967 թ. արտահայտած այն միտքը, ըստ որի՝ հանրալեզվաբանությունը հոյակապ աճող մանկիկ է, բայց սուսկ մանկիկ է, որի զարգացումը տակավին չի ավարտվել: Ըստ նույն Գրիմշոյի, հանրալեզվաբանությունը պարզապես հիբրիդային առարկա է:

Ուղիղ կես դար առաջ՝ 1952 թվին ԱՄՆ-ում ստեղծվել էր լեզվի և լեզվաբանության դպրոց (School of Language and Linguistics), որտեղ ուսումնասիրվում էր լեզվի դերը որպես գիտակցության կառավարման և վարքի ուղղորդման միջոց (տե՛ս Մ. Յուսելեր, նույն տեղում, էջ 23): Դիվանագետների այդ դպրոցը ծանոթացնում էր լեզվաբանական իմաստաբանության հիմնախնդիրներին՝ կախված քարոզչության վերլուծության և լեզվաքաղաքականության հետ: Այս դպրոցը փառավորապես գոյատևել է Ռոկֆելլերի հիմնադրամի հաշվին: Սառը պատերազմի

տարիներին հատկապես լեզվական քարոզչությունն ու հակա-քարոզչությունը ցայտուն կերպով վկայում էին, թե ինչպիսի մեծ դեր է խաղում լեզուն հասարակական կարծիք ձևավորելու գործում:

Գերմանացի մարքսիստ-լեզվաբան Մ. Յուսելերը քննադատում է ամերիկյան հանրալեզվաբաններին, որ նրանք լեզվի և հասարակության փոխհարաբերությունը հաճախ դիտում են մեխանիկական, քարացած վիճակով, այլ ոչ թե փոփոխության, դինամիկայի մեջ: Բնական է Յուսելերի մոտեցումը, քանի որ նա հետևում է մարքսիստական աշխարհայացքի «լավագույն» ավանդույթներին: Ուստի նրա դասագիրքը կարելի էր խորագրել նաև «լեզուն որպես սոցիալական երևույթ»:

ԱՄՆ-ում և արևմտաեվրոպական մի շարք երկրներում նախընտրաբար զբաղվել են խոսքային վարքի տարբերակայնության հանրային պայմանավորվածությունների հարցերով, այսինքն միկրոմակարդակային վերլուծությամբ: Մակրոմակարդակային վերլուծությամբ գերազանցապես զբաղվել են բուն սոցիոլոգները: Անշուշտ, էական են նաև միկրոմակարդակային հետազոտությունները, սակայն հանրալեզվաբանության, որպես ամբողջական գիտության, գերխնդիրը այդ երկու մոտեցումների համալիր քննությունն է, այսինքն՝ միկրոհանրալեզվաբանական և մակրոհանրալեզվաբանական սկզբունքների ներդաշնակ կիրառումը, որի պահանջը հստակորեն դրվել է Ա. Շվեյցերի կողմից Ռոջեր Բեյլի «Հանրալեզվաբանություն» գրքի առաջաբանում: Այն, որ ԱՄՆ-ում 20-րդ դարի կեսերին հանրալեզվաբանությունը բուռն զարգացում ապրող գիտություն էր, կարող է վկայել հետևյալ փաստը, ընդամենը 5 տարում հրատարակվել են հանրալեզվաբանության 5 ձեռնարկ-ներածություններ, որոնցից արժե առանձնացնել Ջ. Ֆիշմանի գիրքը: Դրանում հեղինակը փորձում է հայեցակարգային ընդհանրացումներ տալ իր ձեռքի տակ եղած հանրալեզվաբանական հարուստ գրականությանը՝ նպատակ ունենալով փոխկապակցման մեջ դիտարկել ինչպես

միկրոհանրալեզվաբանությունն ու մակրոհանրալեզվաբանությունը, այնպես էլ կիրառական լեզվաբանությունը:

Հանրալեզվաբանությունը Մեծ Բրիտանիայում և ԳՖՀ-ում

Եթե ԱՄՆ-ում հանրալեզվաբանությունը անհամեմատ մեծ ընդգրկում ունի (նկատի ունենք շոշափած հարցերի ծավալն ու բազմազանությունը), ապա Արևմտյան Եվրոպայում, հատկապես Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում, այն համեմատաբար նեղ ընդգրկում ունեցող խնդիրներ է շոշափում, գերազանցապես բավարարվելով հասարակության առանձին խավերի ու դասերի լեզվագործածության ուսումնասիրությամբ: Արևմտաեվրոպական հանրալեզվաբանները մասնավորապես հետազոտում են «լեզվական արգելքները», «սահմանափակ և ծավալուն կողերը», «փոխհատուցող (կոմպենսացնող) ուսուցումը» և այլն:

Անգլիացի հանրալեզվաբան Բ. Բեռնստայնը քննել է հասարակության միջին և ստորին խավերի կողմից լեզվագործածության առանձնահատկությունները:

Ու. Էվերմանը լեզվաբանական կողի տեսությունը դարձրել է հանրալեզվաբանական հետազոտությունների անցկացման գիտական հիմքը: Լեզվական պատնեշները, որոնց վերացումը արևմտյան հանրալեզվաբանների գերխնդիրն է, ըստ էության վերաճում են սոցիալական պատնեշների (արգելքների), որոնք պայմանավորված են հասարակական-տնտեսական գործոններով: Ահա թե ինչու գերմանացի Մ. Յուսելերի կարծիքով խոսքը ոչ թե լեզվական, այլ սոցիալական պատնեշներին է վերաբերում (նույն տեղում, էջ 100): Հետաքրքրական է Բ. Բադուրայի հետևյալ թեզիսը. «Լեզուն ոչ միայն մտածողության և հաղորդակցման միջոց է, այլև հենց ինքը կարող է խոչընդոտել այդ երկու կարևոր գործառույթների իրականացմանը» (տե՛ս Մ. Յուսելեր, էջ 102):

Հանրալեզվաբանությունը Իտալիայում և Ֆրանսիայում

Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և մանավանդ Գերմանիայի, հանրալեզվաբանությունը Իտալիայում և Ֆրանսիայում անցյալ դարի վերջին երեք տասնամյակներում նույնպիսի բուռն զարգացում չի ապրել: Իտալիայում և Ֆրանսիայում հանրալեզվաբանությունը նախընտրաբար զբաղվել է տեքստի լեզվաբանությամբ: Հատկապես Ֆրանսիայում հանրալեզվաբանությունը ավանդաբար զարգացրել է նախորդ փուլի սոցիոլոգիական ուղղվածությունը՝ շարունակելով մշակել Սոսյուրի, Ա. Մեյեի, Ա. Մարտինեի գաղափարները: Ըստ Սոսյուրի «Լեզուն անհրաժեշտ է, որպեսզի խոսքը հասկանալի լինի, իսկ խոսքը իր հերթին անհրաժեշտ է, որպեսզի կազմվի լեզուն, խոսքի պատմական փաստը միշտ նախորդում է լեզվին (Сосюр Ф. Труды по общему языкознанию, М.1977): Այսպիսով Ֆրանսիայում է, որ զուտ հանրալեզվաբանական խնդիրները առաջին պլան են մղվում: Այսպես՝ Մարսել Կոենը առաջինն էր, որ ստեղծեց հանրալեզվաբանական հիմնախնդիրների կատալոգը: Ֆրանսիացի լեզվաբաններ Ա. Օդրիկուրը և Գ. Գրանը իրենց «Լեզվաբանությունը և սոցիոլոգիան» հրապարակումներով (1955 թ.), կարող են դիտվել որպես ֆրանսիական հանրալեզվաբանության հիմնադիրներ: Ժ. Մարսելեզին իր աշխատանքներում սոցիալական բարբառները հակադրում է տարածականներին: Նա ուշադրությունը կենտրոնացնում է լեզվական սոցիալական խմբերի վրա: Անխզելի կապով են ներկայացվում տեքստի լեզվաբանությունը և հանրալեզվաբանությունը: Ֆրանսիացի հանրալեզվաբանների աչքից չեն վրիպում նաև նորաբանությունները: Ընդ որում տարբերակվում են խոսքային իրադրության մեջ դրսևորվող նորաբանությունները լեզվում հանդես եկող նորաբանություններից: Բաժոնին հատուկ քննության է ենթարկում բառի ներգործման ուժը և զանգվածային հաղորդակցման միջոցների դերը զուգահեռ անցկացնելով ֆետիշացված բառի ուսուկու և այլ արժեքների ֆետիշացման միջև:

Ֆրասիական հանրալեզվաբանության պատմության համառոտ ուրվագիծը կարելի է գտնել Ֆ. Էլգորսկիի «La sociologuistique aux Etats-Unis et en France» աշխատության մեջ (1973, էջ 387-409):

Իտալացի հանրալեզվաբաններին շատ ավելի հետաքրքրում է բարբառային ավանդույթների քննությունը: Իտալիայի տարբեր շրջանների անհավասարաչափ զարգացմամբ պայմանավորված՝ մինչև վերջերս գոյություն ունեին ավելի քան 20 տարածքային բարբառային խմբեր, որոնք իրարից բավականաչափ հեռու են: Տարածքային բարբառների մերձեցման բազմաթիվ փորձեր են եղել հաջողության և մանավանդ ձախողման տարբեր աստիճանով: Գ. Բերուտոն, իտալացի մյուս հանրալեզվաբանների նման, իտալական բարբառները բնորոշում է իբրև իտալերեն ստանդարտի դրսևորման տարբեր համակարգեր:

Ի միջի այլոց, ֆաշիզմի տարիներին, դուչեի տիրապետության ժամանակներում, Իտալիայում ճնշվում էին ոչ միայն լեզվական փոքրամասնությունները, այլև սահմանափակվում էին բարբառները, որոնց գործածությունը խստորեն արգելվում էր: Ներկայումս Իտալիայում բարբառների նկատմամբ «ներողամիտ» վերաբերմունք է դրսևորվում:

Իտալացի հանրալեզվաբաններին հուզող խնդիրներից է ռոմանական և ոչ ռոմանական փոքրամասնությունների առնչակցության հարցը: Երբ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հարավային Տիրոլը մտավ Իտալիայի կազմի մեջ, շուրջ 260 հազար գերմանացիներ, որոնք հաղորդակցվում են վերին գերմաներեն լեզվով, սկսեցին լեզվագործածության խնդիրներ ունենալ: Միայն 1975 թվին ընդունվեցին գերմանական փոքրամասնության լեզվական իրավունքները պաշտպանող ակտեր:

Հատկապես ֆաշիզմի իշխանության տարիներին Իտալիայում տարվում էր կենտրոնացված լեզվաքաղաքականություն և կիրառվում էին ազգայնական ծրագրեր: Ինչպես մի

շարք երկրներում, այդպես էլ Իտալիայում օրինակելի լեզու է դիտվում ռադիո-հեռուստատեսության լեզուն, որը փաստորեն ձեռք է բերել գրական իտալերենի ստանդարտի կարգավիճակ: Ընդ որում տեղի են ունենում հետևյալ բնորոշ գործընթացները՝ 1) ցանկացած լեզվից հրաժարում՝ հոգուտ իտալերենի, 2) տեղական լեզվի բարեշրջում:

Որպես արևմտավրոպական հանրալեզվաբանական դպրոցների պատմական ակնարկի ամփոփում կարելի է նշել հետևյալը, հենվելով հանդերձ բավական հարուստ փաստական նյութի վրա, լեզվական բազմաթիվ տվյալների հաշվառմամբ, նրանք լեզուն նախընտրաբար դիտարկում են իբրև համակարգային կատարյալ տիպ (որն, իհարկե, այդպես չէ) և մանավանդ ստատիկ վիճակով, ինչը հասուկ էր Պրահայի և Ժնևյան դպրոցներին: Իմաստաբանական հարցերը նրանց աշխատություններում լայն տեղ չեն գրավում: Ոչ ստանդարտ լեզվական երևույթները (ինչպես, օրինակ, անգլերենի դրսևորումները սևամորթների և մեքսիկացիների լեզվում) ուշադրության առարկա չեն դառնում: Թույլ է ներկայացվում կապը սոցիալական և լեզվական կառուցվածքների միջև, ինչը որոշ չափով ծայրահեղացված էր ներկայացվում Արևելյան Գերմանիայի և Խորհրդային Միության հանրալեզվաբանների գործերում:

Լեզվական արգելքների վերացման, փոխարացնող ուսուցման կազմակերպման, լեզվական ծավալուն կողի ստեղծման և այլ հիմնախնդիրներում ֆրանսիական և իտալական հանրալեզվաբանական դպրոցների մեջ որոշ առաջընթաց նկատվում է, սակայն այդ և հարակից մի շարք այլ հարցեր իրենց գիտական սպառփչ և արդյունավետ լուծումներն առ այսօր չեն ստացել:

Մարքս-լենինյան հանրալեզվաբանության փուլը

20-րդ դարի 20-30-ական թվականներին նախ Ռուսաստանում, ապա Խորհրդային Միությունում, իսկ 40-ականների վերջին նաև՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությո-

յունում հանրալեզվաբանները հստակեցրին այն հասկացություններն ու խնդիրները, ինչը կազմում է տվյալ առարկայի էությունը: Հատկապես ԳԴՀ-ում, շնորհիվ Ռ. Գրոսսեի, Ա. Նոյբերտի և այլոց, ճշգրտվեցին հանրալեզվաբանության, որպես ինքնուրույն գիտության, խնդիրները:

Հանրալեզվաբանությունը Խորհրդային Միությունում: Մովորաբար խորհրդային հանրալեզվաբանության պատմությունը բաժանվում է երեք փուլի: Ա) Առաջին փուլում, որն ընդգրկում է 20-րդ դարի 20-40-ական թվականները, ըստ էության կատարվում է հանրալեզվաբանություն առարկայի ձևավորումը: Ուստի այդ փուլը կարելի է կոչել ծագման և ձևավորման շրջան: Այս փուլում է, որ հրատարակվում են Ե. Պոլիվանովի, Վ. Ժիրմունսկու, Վ. Վինոգրադովի, Ֆ. Ֆիլինի հիմնարար աշխատանքները: 1926 թվին լույս է տեսնում լեզվի սոցիոլոգիայի գծով առաջին մենագրությունը «Լեզու և հասարակություն» խորագրով: Գրքում լեզուն դիտվում է որպես մարդու ոչ թե բնական, կենսաբանական գործառույթ, այլ հասարակական արդյունք:

Նոր պայմաններում ռուսաց գրական լեզուն պետք է ծառայեր անհամեմատ լայն հասարակական զանգվածների: Մեծանում էին գրական լեզվի գործառույթները: Գրական լեզվի մեջ էին ներթափանցում բարբառային և ժարգոնային երևույթներ, այն աստիճան, որ գրական լեզվի կանոնի անաղարտ պահպանման վտանգ էր ստեղծվում: Անհրաժեշտություն էր առաջանում մշակել լեզվական հստակ քաղաքականություն: Այս փուլում լեզվաբանության մեջ «արմատավորվում են» մարքսլենինյան դրույթները, որոնք այս կամ այն չափով «գոյակցում են» նաև հետագա փուլերում: Դրական իրողություններից է այս փուլում մի շարք գիր չունեցող լեզուների (կովկասյան փոքր ազգությունների, ինչպես նաև քրդերենի, Ռուսաստանի հյուսիսում ապրող մի քանի ժողովուրդների) համար այբուբենների ստեղծումը՝ կիրիլիցայի հիման վրա: Մինչ այդ

արաբատառ գրային համակարգ որդեգրած ադրբեջաներենում, օրինակ, անցում է կատարվում լատիններենի այբուբենի միջակա ճանապարհով դեպի կիրիլիցա (հետագայում, XX դարի վերջում ադրբեջաներենը ապրում է հետընթաց ուղի): Հայերենի դեպքում իրագործվում է տակավին XX դարի սկզբին մտահոգացված Աբեդյանական գրային ռեֆորմը (1922թ.), որը 1940թ. ենթարկվեց որոշ բարեփոխումների և արևելահայերենի գրային համակարգում գործադրվում է առ այսօր:

Բ) Երկրորդ փուլն ընդգրկում է երկու տասնամյակ՝ 20-րդ դարի 50-60-ական թվականները: Այս փուլում ոչ միայն ընդարձակվում են խորհրդային հանրալեզվաբանության ընդգրկած խնդիրները, այլև կատարելագործվում են մեթոդները, խորացվում են դիտարկումները և այլն: Այս փուլում է ստեղծվում. «Ազգային լեզուների զարգացման օրինաչափությունները՝ սոցիալիստական ազգերի զարգացման հետ կապված» գիտական խորհուրդը, սկսում են հրատարակվել «Լեզու և հասարակություն» և «Հանրալեզվաբանության հարցեր» ժողովածուները:

1956 թվից (ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո) բազմազգ Խորհրդային Միությունում լայն թափ է առնում լեզվաշինության, լեզուների փոխազդեցության, փոխհարստացման (իմա՝ հաճախ ձուլման և ռուսացման) երևույթների ուսումնասիրությունը: Բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ են գրվում ազգային հանրապետությունների գրական լեզուներին նվիրված, ինչպես նաև՝ խոսակցական և միջազգային լեզուների գործառույթներին, երկլեզվության երևույթներին, ռուսաց լեզվի մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններին:

Հանրալեզվաբանության հետագա զարգացման խթան հանդիսացան խորհրդային լեզվաբանների համամիութենական խորհրդակցությունները (առաջինը՝ 1966թ. մայիսի 24-26-ը, երկրորդը՝ 1985 թ. ապրիլի 20-24-ը): Առաջինը նվիրված էր լեզվի և հասարակության փոխհարաբերությանը: Այդ խնդիրը առավել արդյունավետ և համագործակցված լուծելու համար ստեղծվեց

գիտական խորհուրդ Յու. Դեշերիևի ղեկավարությամբ, որը զբաղվում էր «սոցիալիստական ազգերի» լեզվական զարգացման հիմնահարցերով: 1985-ի խորհրդակցության թեման երկլեզվության, ռուսերենի որպես ազգամիջյան հաղորդակցման լեզվի և հանրալեզվաբանության առանձին խնդիրներն էին:

«Լեզու-հանրույթ», «լեզու-անհատ» հիմնահարցերը հանգամանորեն քննվել են Բ. Սերեբրենիկովի «Լեզուն որպես հասարակական երևույթ» աշխատանքում: 1972 թ. հրատարակված «Լեզվի բառապաշարի միջազգայնացման հարցերը» մենագրության մեջ Վ. Ակուլենկոն մի շարք լեզուների բառապաշարի հանրալեզվաբանական քննությամբ պարզել է միջլեզվական միջազգայնացված բառաշերտերը: Եզրակացությունների մեջ առկա են այնպիսի դրույթներ, որոնք եթե համայնավարական շրջանում առարկության չէին հանդիպում, ապա ներկայումս նվազագույնը վիճահարույց են: Վ. Ակուլենկոն, օրինակ, գրում է. «Լեզուներում, ինչպես և այլ ոլորտներում, մարդկային գործունեության ձևերում միջազգայինը երբեք չի հակադրվում ազգայինին» (В. Акуленко, Вопросы интернационализации словарного состава языка. М., 1972):

Ծրագրային մեծ ընդգրկում ունի Յու. Դեշերիևի «Լեզուների գործառական զարգացման հիմնահարցը և հանրալեզվաբանության խնդիրները» գիրքը, որում լայնորեն դիտարկվում են ներլեզվական և արտալեզվական գործոնների փոխհարաբերությունները, լեզվի հասարակական գործառույթների զարգացման ուղիները, գիտատեխնիկական տերմինաբանության մշակման չափորոշիչները և այլն: Չափազանց հետաքրքրական և կարևոր է Ա. Շվեյցերի «Հանրալեզվաբանության մի քանի հրատապ խնդիրներ» ոչ այնքան ծավալուն հոդվածը, որում դիտարկվում են արդի հանրալեզվաբանության մեթոդներն ու խնդիրները: Առաջին անգամ այս աշխատանքում է հստակորեն խնդիր դրվում ստեղծելու հանրալեզվաբանական տիպաբանություն (լեզուների դասակարգում ըստ նրանց գործառության ոլորտների

քանակի): Ա. Շվեյցերը խորհրդային այն լեզվաբաններից էր, որը փորձել է լրջորեն մոտենալ լեզվածրագրավորման խնդրին:

Ա. Լեոնտեր «Լեզու և հասարակություն» ժողովածուում հրատարակել է «Լեզվի հասարակական գործառույթները և նրանց գործառական համարժեքները» հոդվածը, որում պահանջ է դրվում ստեղծելու խոսքային գործունեության այնպիսի մի տեսություն, որն իր մեջ ներառի երեք հայեցակետերը միաժամանակ՝ լեզվաբանական, հոգեբանական և սոցիալական:

Ֆ. Ֆիլինն իր մի շարք աշխատանքներում դիտարկում է լեզվական կանոնի, լեզվի և բարբառների փոխհարաբերության, լեզվի սոցիալական տարբերակման խնդիրները: Նա ձգտում է լեզվի միակողմանի քննության փոխարեն հավասար ուշադրություն դարձնել ինչպես լեզվի ներկա ստատիկ վիճակին, այնպես էլ նրա պատմական զարգացմանը, լեզվական շարժնթացին: Ֆ. Ֆիլինը անհրաժեշտ է համարում հանրալեզվաբանական մի շարք կենտրոնների ստեղծումը, ինչը խորհրդային կարգերի փլուզումից հետո, ցավոք, ինքնաբերաբար դուրս մնաց նրա կարգից:

Մասնակի հանրալեզվաբանական հարցերին նվիրված բազմաթիվ աշխատանքներից շահեկանորեն ընդգծվում է Մ. Պանովի խմբագրած «Ռուսաց լեզուն խորհրդային հասարակարգում» հանրալեզվաբանական քառահատոր հետազոտությունը (1968 թ.): 13 հազար հարցաթերթիկների միջոցով հարցման է ենթարկվել 5000 մարդ՝ հնչյունաբանությունից, ձևաբանությունից, բառակապակցությունից և շարահյուսությունից: Քննության արդյունքում հիմնավորվել է այն դրույթը, որ լեզվի ներքին և արտաքին զարգացումները փոխշաղկապված են:

Վերջապես, արժե հատուկ հիշատակել նաև հետևյալ ուշագրավ աշխատանքը. Վ. Տիմոֆեևի «Ժամանակակից ռուսաց լեզվի զարգացման հանրալեզվաբանական գործոնները», ըստ որի լեզվի ստանդարտացումը աճում է հասարակության ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմամբ, իսկ

բարբառները, թեև նահանջում և սահմանափակվում են իրենց գործածության ոլորտներով, սակայն չեն անհետանում:

Գ) Երրորդ փուլը ընդգրկում է 20-րդ դարի 70-90-ական թվականների սկիզբը: Այս փուլի ամենաբնորոշ գիծն այն է, որ ըստ էության քննվում են ԽՍՀՄ ազգային լեզուների հետ կապված հանրալեզվաբանական խնդիրները:

Ֆ. Ֆիլինի «Լեզու և ազգ», Ա. Շվեյցերի «Արդի հանրալեզվաբանությունը, տեսություն, մեթոդներ, հիմնախնդիրներ» (Մ., 1976 թ.) և բազմաթիվ այլ աշխատանքներում խորհրդային հանրալեզվաբանները փորձել են լուծում տալ մի շարք հրատապ խնդիրների: Յու. Դեշերինը ներկայացնում է լեզվի հասարակական գործառույթների հիմնական 20 տեսակներ. 1. Ամենօրյա հաղորդակցման ոլորտ, 2. Տվյալ լեզվակիրների հաղորդակցում այլազգիների հետ, 3. Պաշտոնական թղթակցություն (կենտրոնական և հանրապետական) հաստատությունների հետ, 4. Տարրական դպրոցներ, 5. Միջնակարգ դպրոցներ, 6. Միջնակարգ մասնագիտական հաստատություններ, 7. Բուհեր, 8. Պետական հիմնարկներ և հասարակական կազմակերպություններ, 9. Դատական գործավարության ոլորտ, 10. Գործավարություն և պաշտոնական թղթակցություն, 11. Հասարակական-քաղաքական կյանք, 12. Գիտություն և տեխնիկա, 13. Գեղարվեստական գրականություն, 14. Մամուլ, 15. Հեռուստառադիո սփռում, 16. Արվեստ, 17. Մշակութային-լուսավորական հիմնարկներ, 18. Կինո, 19. Գիտական կյանք, 20. Մշակութային կյանք:

Յու. Դեշերինի կողմից առանձնացված՝ լեզվի հասարակական գործառույթներին վերաբերող 20 հիմնական տեսակները, թեկուզ որոշակի մակերեսայնությամբ, գաղափար տալիս են տվյալ լեզվին բնորոշ գործառույթների ծավալի, գրական-կանոնական լեզվի զարգացման մակարդակի մասին, սակայն բավարարվել միայն դրանց առկայություն/բացակայությունը ի հայտ բերող ցուցիչներով, ճիշտ չի լինի: Այսպես, հարավ-կովկասյան տարածքի բոլոր երեք գլխավոր գրական լեզուներին

քնորոշ են գործառույթների 20 տեսակներն էլ, սակայն եթե Հայաստանում գիտության գործառույթն, օրինակ, ընդգրկում է նաև այսպիսի ոլորտ, ինչպիսին է աստղագիտությունը, ապա Ադրբեջանում այն ընդգրկում է նավթամշակումն ու արտադրությունը, Վրաստանում՝ բուսաբանության ցիտրուսային բույսերի մշակմամբ զբաղվող ճյուղը և այլն:

Այսօր էլ Ռուսաստանում լեզվի և հասարակության փոխհարաբերության խնդիրները շարունակվում են մնալ հանրալեզվաբանների ուշադրության կենտրոնում, սակայն արդեն ձերբագատված «մարքս-լենինյան» գիտության ծայրահեղացված և մերժելի դրույթներից:

Հանրալեզվաբանությունը ԳԴՀ-ում

Ըստ էության ԳԴՀ-ում հանրալեզվաբանության տեսական հիմքը դրվել է Ա. Նոյբերտի և Ռ. Գրոսեի «Հանրալեզվաբանական հոդվածներ» ժողովածուով: Խոսքը վերաբերում է մարքս-լենինյան գաղափարների վրա խարսխված առարկային: Ժողովածուի մեջ ամփոփված են նաև Յենի համալսարանում անցկացված բարբառային հետազոտության արդյունքները: Արևելագերմանական գիտնականներ Գ. Իզինգի «Լեզվի կառուցվածքն ու գործառությունը ընդհանուր սոցիալ գարգացման մեջ» և Ի. Դոնատի «Խոսքային գործունեության հանրալեզվաբանական հայեցակետերը» աշխատանքների խորագրերն իսկ վկայում են քննարկվող հարցերի լայն շրջանակների մասին: Գերմանացի հանրալեզվաբանները, մինչև երկու Գերմանիաների վերամիավորումը, կարևոր էին համարում հանրալեզվաբանական հետևյալ խնդիրների դիտարկումը.

1. Ազգային լեզվի հասարակական գործառույթների քննությունն ըստ որոշակի պայմանների,

2. Սոցիալիստական հասարակարգում հաղորդակցման արդյունավետ օգտագործմանը նպաստելու խնդիրները,

3. Բուրժուական հանրալեզվաբանության տեսական սկզբունքների քննադատությունը (մի բան, որ ավելի լայն թափով և հետևողականորեն էր արվում արևելագերմանացի հանրալեզվաբանների կողմից, հատկապես էթե նկատի ունենանք Մ. Յուսելերին),

4. Մոցիալ-տնտեսական հիմքի և լեզվի գործածության միջև եղած կապերի հետազոտությունը դրամատիրական երկրներում:

Արևելագերմանացի հանրալեզվաբանները իրենց աշխատություններում հաճախ են շեշտում, որ հանրալեզվաբանությունը, ինչպես վավերացված է անվան մեջ, մի առարկա է, որը պարտադրում է հաշվի առնել թե՛ զուտ լեզվաբանական, թե՛ սոցիալական հայեցակետերը, ընդ որում գնահատելով ոչ միայն երևույթների որակական հատկանիշները, այլև ճշտելով գործընթացների քանակական արժեքները:

Հանրալեզվաբանությունը Հայաստանում

Անցյալ դարի 70-80-ական թվականներին Հայաստանում ևս սկսեցին լրջորեն զբաղվել հանրալեզվաբանության հարցերով: Եթե մինչ այդ հանրալեզվաբանական մասնավոր հարցեր դիտարկվել են զուտ լեզվաբանական աշխատություններում, ինչպես, օրինակ, Թերեզա Ղարազյուլյանի «Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը», Ռաֆայել Իշխանյանի «Հայ տերմինաբանության հարցեր» և այլն, ապա արդեն 80-ականներին լույս է տեսնում Հովհաննես Զաքարյանի «Երևանի խոսակցական լեզուն» հանրալեզվաբանական ծանրակշիռ աշխատանքը: Մենագրության մեջ հանգամանակից վերլուծության է ենթարկվում Երևանի խոսակցական լեզուն:

Երեխաների խոսակցական առանձնահատկությունները հատկապես հոգելեզվաբանական հայեցակետից դիտարկվում են Անահիտ Գալստյանի աշխատանքներում:

Երիտասարդ գիտնականներ Աստղիկ Գևորգյանը, Կարինե Միքայելյանը, Արսեն Գինոսյանը և ուրիշները ուսումնասիրել են երկլեզվության և բազմալեզվության երևույթները Հայաստանում:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, Հ. Զաքարյանի ղեկավարությամբ, սկսվում է հանրալեզվաբանության սկզբունքներով մշակված հարցաթերթիկային հետազոտության աշխատանքը: Տասնյակ հազարավոր քարտերով վիճակագրության են ենթարկվում հայերենի գործավարական ոճում առկա երկլեզվության հարցերը, հայերենի և ռուսերենի օգտագործման ոլորտները, ծավալները և այլն: Ափսոս, որ 90-ականների կեսերին անցումային փուլի իրավիճակով պայմանավորված, այդ աշխատանքները դադարեցվեցին: Հանրալեզվաբանական մասնավոր հարցերի նվիրված աշխատանքներից արժե հիշատակել Կ. Քաթանյանի «Հայաստանի գիտական հիմնարկներում լեզվավիճակագրական քննության փորձ» ուսումնասիրությունը: Կ. Քաթանյանը քննում է լեզուների բաշխման խնդիրը ըստ հաղորդակցման իրավիճակների: Հաշվի են առնվում ոչ միայն զուտ գիտական գործոններն, այլև կենցաղային այն իրավիճակները, որոնք դրսևորվում են զանգվածային հաղորդակցման ոլորտում: Ըստ հեղինակի եզրահանգումների՝ 1. հայ-ռուսերեն երկլեզվություն կրող բոլոր անհատները այն բնութագրում են երկու և ավելի լեզուների իմացության հիմքով, 2. ռուսերենի, որպես երկրորդ լեզվի, իմացության մակարդակը որակապես բարձր է, 3. առօրյա կյանքում և կենցաղում հայոց լեզուն կիրառվում է շատ ավելի հաճախ ու լայնածավալ, քան ռուսերենը, 4. Հայաստանում բնակվող այլ ազգությունների կողմից հայերենի կիրառումը գլխավորապես սահմանափակվում է կենցաղային հաղորդակցման մակարդակով: Ճիշտ է, հեղինակը իր եզրահանգումները բխեցնում է հարցաթերթիկային արդյունքներից, սակայն ինչպես այս, այնպես էլ հատկապես Ա. Գևորգյանի ուսումնասիրության մեջ

որոշ չափով կասկածելի է գրանցման ճշգրտությունը: Այսպես, ըստ հարցաթերթիկներից մեկի, որը լրացվել էր նախկին «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում, խմբագրական կազմը գերագանցապես իրար հետ հաղորդակցվում էր անզլերեն լեզվով, ինչը առնվազն անլուրջ է:

Հանրալեզվաբանական հետազոտությունները Հայաստանում դեռ նոր միայն անհրաժեշտ թափ ու պատշաճ որակ են ստանում:

Խնդիրը բնավ չի կորցրել իր հրատապությունը: Ներկա պայմաններում նկատելի են լեզվական ազդեցությունների և փոխազդեցությունների ուղղվածության նոր տեղաշարժեր, գրական լեզվի մեր կողմից աղավաղումների ծավալի մեծացման և գրական կանոնի նահանջի երևույթներ:

Ձանգվածային լրատվամիջոցների առանձին պատասխանատուներ գրական լեզվից ունեցած շեղումները որակում են իբրև բնական լեզվի դրսևորումներ:

ԳԼՈՒԽ 2.
ԼԵԶՎԻ ԵՎ ԽՈՍՔԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.
ՄԱՐԴՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվահաղորդակցումը մարդու բարեշրջության (ելույնացիայի) մեջ: Մարդ արարածի, որն ըստ Չ. Դարվինի «աշխարհի հրաշքն ու փառքն է», զարգացումն ընթացել է յուրահատուկ բարեշրջման ճանապարհով: Աշխատանքն էապես տարբերակեց մարդուն կենդանական աշխարհի բոլոր մյուս ներկայացուցիչներից: Եթե վերջիններիս դեպքում իրազեկումը ունի կենսաբանական, ժառանգական բնույթ, ապա մարդու դեպքում այն բնութագրվում է միանգամայն այլ չափորոշիչներով: Ընդ որում, բացի մարդուց, մյուս կենդանական տիպերի դեպքում արձագանքային, ձայնային, ազդում//փոխազդեցություն և այլ կարգի երևույթները բնութագրում են միայն համաժամանակայնության կտրվածքով, միայն մարդ արարածի դեպքում է, որ հաղորդակցման, իրազեկման ինչպես բովանդակության, այնպես էլ արտահայտության պլաններում տարաժամանակայնությունը (դիախորոհան) որոշակի է: Այսինքն, եթե մարդ արարածն ու իր լեզուն ժամանակի ընթացքում ենթակա են անխուսափելի փոփոխությունների, ապա կենդանական աշխարհի բոլոր մյուս արարածների «լեզվի» դեպքում զարգացում չի արձանագրվել: Այսպես, օրինակ, չորրորդ դարի նշանավոր աստվածաբան Բարսեղ Կեսարացին իր «Վեցօրեայ ճառ»-երում (տե՛ս Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացի, Երևան, 1985 թ.) մանրակրկիտ կերպով ներկայացրել է մեղունների բոլոր գործողությունները: Ավելի քան հազար վեց հարյուր տարի է անցել, բայց այդ գործողությունները մնացել են բացարձակապես նույնը: Մինչդեռ մարդկային և ոչ մի լեզու ոչ թե այդքան մեծ ժամանակահատվածում, այլ նույնիսկ երկու հարյուր տարվա ընթացքում բացարձակապես նույնը չի մնացել: Անվիճելի է, որ

կենդանիները լեզու չունեն (այդտեղից նրանց տրված հայերեն անվանումը՝ անասուն- չխոսող իմաստով), թեև մեզանից յուրաքանչյուրը ականատես է, թե շները ինչպիսի «տարբերակված» հաչոցներ ունեն: « Ամենքը տեսել են և գիտեն, - գրել է Հր. Աճառյանը, - թե ինչպես մի շուն որևէ վտանգի դեպքում կամ մի օտար շուն տեսնելիս սկսում է մի հաչոց, որ լսելով մյուս շներն իսկույն դուրս են թափվում. նշանակում է, թե դա մի որոշ «միտք» արտահայտող բան էր, և որ շները այդ «միտքը» լսեցին և հասկացան: Ուշադիր ականջը նույնիսկ կարող է զանազանել այս հաչոցները: Հայերեն լեզուն գիտե՝ հաչել, ոռնալ, կաղկանձել, կնձկնձալ, վնգվնգալ, թնձկալ, ինչպես և՛ վայրահաչ և լուսնահաչ բառերը:

Այս ամենը ցույց է տալիս, որ շունը զանազան տեսակի հաչոցներ, այսինքն զանազան «բառեր կամ խոսքեր» ունի, ինչ որ նշանակում է որոշ «լեզու»: Քաղաքներում ապրող շները թերևս այդքան հարուստ «բառարան» չունենան...» (Հր. Աճառյան, ՀԼԼՔ, Ներածություն, Երևան, 1955, էջ 32):

Մարդու գործունեության մեջ տիպաբանորեն առանձնահատուկը նորությունն է, շփման, աշխատանքային գործունեության մեջ «գյուտերի» առկայությունը, ինչը բացառվում է կենդանական աշխարհի բոլոր մյուս տիպերի դեպքում: Մի խոսքով, մարդու աշխատանքային գործունեության մեջ ստեղծագործական նախահիմքը ամենաբնորոշ առանձնահատկություններից է: Գոյության կենսաբանական հայեցակետին զուգընթաց՝ մարդու գոյությունը ուղեկցվում է սոցիալական բավականին բարդ օրինաչափություններով և առանձնահատկություններով: Իր գործունեության ողջ ընթացքում մարդուն առաջ մղող ուժը ճանաչողական հատկանիշն է, որը սովորաբար սկսվում է շրջապատից և աստիճանաբար ծավալվում՝ ներառելով աշխարհը, տիեզերքը և այլն: Աշխարհընկալման լեզվական պատկերը հատկապես վերջին երեք տասնամյակների ընթացքում ձեռք է բերել որոշակի գիտական հրատապություն: Աշխարհի արտա-

ցումը մարդու գիտակցության մեջ և նրա լեզվական արտա-
պատկերումը («վերարտադրումը») լեզվում դիտարկվել է ինչպես
հոգեբանների, հանրալեզվաբանների, այնպես էլ մանավանդ
փիլիսոփաների հայեցակետով (հմմտ., օրինակ՝ Գ. Բրուտյանի,
Լ. Բրուտյանի աշխատությունները գրականության ցանկում):
Ընդ որում աշխարհի ճանաչողական գործընթացում հարա-
բերությունը ոչ թե միայն անհատ մտածող մարդու և միջավայրի,
մարդու և բնության միջև է, այլ ամենից առաջ մարդ+մարդ,
հանրույթի անդամների միջև, մարդկային անհատների
զանգվածային տարբեր խմբավորումների (ցեղային, տոհմային,
գերդաստանային և այլ միավորումների) սահմաններում:

Տարածամանակյա կտրվածքի դեպքում մարդու
հաղորդակցային շփման սահմանները գնում են վերընթաց
ծավալման, ընդարձակման ուղղությամբ:

Թե՛ հաղորդակցական, թե՛ ճանաչողական գործընթաց-
ների իրականացման ճանապարհին մարդու հիմնական գործիքը
(«զենքը») լեզուն է:

Հաղորդակցման կարևորագույն միջոցը հազարամյակներ
շարունակ եղել և առայժմ մնում է հնչյունական լեզուն: Ներկա
պայմաններում համացանցային լայն տարածումը հնչյունական
հաղորդակցման աստիճանական նեղացում է պարտադրում, թեև
բոլոր դեպքերում տեխնիկական հաղորդակցման բոլոր ձևերում
նախահիմքը մնում է լեզուն: Ժամանակին Ն.Մառը պնդում էր, թե
քաղաքակրթության զարգացման բարձրագույն փուլում հնարա-
վոր է նաև հաղորդակցում առանց լեզվի:

Մարդկանց հաղորդակցումը և կենդանիների հաղորդակ- ցումը. հիմնական տարբերությունները

Հայտնի է, որ ըստ նշանագիտության լեզուն բնական, ոչ
արհեստական նշանային մի այնպիսի համակարգ է, որը
կենսաբանական ծագում չունի, բնածին չէ (հմմտ. էդ. Ավետյանի
և Ռ. Ավոյանի աշխատությունները, տե՛ս գրակ. ցանկը):

Արհեստական, այսինքն՝ հորինովի, նշանային համակարգերը ստեղծվում են մարդու կողմից, որոնք բոլորն էլ ի վերջո խարսխվում են մարդկային լեզվի վրա և հստակ նպատակ են հետապնդում ավելի ճշգրիտ և խնայողաբար ներկայացնելու իրազեկման բովանդակությունը՝ լինեն դրանք գծագրեր, թե աշխարհագրական քարտեզներ, փողոցային երթևեկության նշաններ, թե ծրագրավորման լեզուներ, արաբական թվանշաններ, թե երաժշտական ձայնանիշեր:

Ի տարբերություն կենդանիների հնչարտասանական համակարգի, որն, ըստ միահամուռ կարծիքի, զարգացում չի ապրում և բնութագրվում է կենսաբանական խորքով, մարդկային լեզվի հնչարտասանական ողջ համակարգը գտնվում է անընդհատ իրագործվող բարեշրջական կարևորագույն գործընթացի մեջ: Մարդկային լեզվի և կենդանական լեզուների նշանային համակարգերը մանրամասն դիտարկվել են շուրջ կես դար առաջ ձևավորված հատուկ գիտության կողմից, որ կոչվում է նշանագիտություն: Տարբեր նշանային համակարգերի ամփոփ քննությունը կարելի է գտնել Ա. Լոսևի հիմնարար աշխատանքներում:

Նշանի արտաքին ձևի և բովանդակության ոչ պատճառաբանվածության մասին իշխող կարծիքն այն է, որ ինչքան շատ են լեզվում չպատճառաբանված նշանները, այնքան ավելի լայն են տվյալ նշանային համակարգի հաղորդակցական հնարավորությունները:

Մարդկային խմբերի հաղորդակցումը, բացի հնչական-խոսքային վիճակից, ըստ զարգացման փուլերի անցնում է ավելի բարդ աստիճաններ՝ գրավոր, նշանային, կողավորված հաղորդակցման և այլ համակարգերի ձևով, որոնք բոլորն էլ բացառվում են կենդանիների «հաղորդակցման» պարագային: Ինչպես նշել է Լեոնտևը (1972, 153).

«Լեզուն յուրահատուկ մի պրիզմա է, որի միջոցով մարդը «տեսնում է» իրականությունը: Մարդկային լեզվում խտացվում է

հասարակական ողջ փորձը: Ընդ որում մարդկային կենսափորձը տևականորեն կուտակվում և ներկայացվում է լեզվական համակարգերի մեջ և միջոցով: Բնականաբար ինքը՝ լեզուն անընդհատ նպաստում է մարդկային մտքի կատարելագործմանը: Այսինքն, ինչպես ժամանակին նկատել է Վ. Հումբոլդտը, լեզուն գծում է մի ճակատագրական շրջանակ, որից տվյալ լեզվակիրը չի կարողանում դուրս գալ (լեզվի արգելակիչ կողմը), մյուս կողմից՝ այդ նույն մարդկային լեզուն ուղղակիորեն նպաստում է մտածողության վերընթաց զարգացմանը: Ժամանակին ակադեմիկոս Վիգոտսկին նշել է. «Միտքը կատարելագործվում է բառի մեջ», (1931,1982,307):

Մարդու զգացական ընկալման նախասկզբնական աստիճանն իսկ կապված է լեզվի հետ: Լեզուն, ինչպես նկատել է գերմանացի գիտնական Կրյոբերը, «մի յուրահատուկ ցանցկեն պատուհան է», որի միջոցով մարդ արարածը ճանաչում է աշխարհը, ընդ որում լեզվական այդ յուրահատուկ «պատուհանի» առանձնահատկություններից բխելով՝ առաջանում են աշխարհընկալման և աշխարհաճանաչողության առանձնահատկություններ, որոնք հիմք են դառնում լեզվատիպաբանական զանազան դասակարգումների:

Ի տարբերություն կենդանական բոլոր այլ տիպերի, մարդ արարածը իր նախնիների կուտակած ողջ փորձը, որպես կանոն, գերազանցապես ձեռք է բերում, կուտակում և սերունդներին է փոխանցում լեզվի միջոցով: Այսպիսով սերունդների շփումն ու հաղորդակցումը և մարդկային վերընթաց զարգացումը ամենից առաջ պայմանավորված է լեզվով:

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում են մարդու և մնացած բոլոր կենդանական արարածների ընդհանրություններն ու էական տարբերությունները (ըստ Ն. Մեկլովսկայայի, էջ 13):

Հաղորդակցական գործունեության հատկանիշները	Մարդիկ	Կենդանիներ
1. Կենսաբանական արժույթայնությունը:	+	(+)
2. Անհատի կոմպլեքսության, սոցիալական կամ կենսաբանական (բնածին) նկարագիրը:	Գերազանցապես սոցիալական	Գերազանցապես կենսաբանական
3. Հաղորդակցման բովանդակության որակական և քանակական չսահմանափակվածությունը;	+	-
4. Կապը ճանաչողական գործընթացների հետ:	+	-
5. Նշանագիտության մակարդակային կառույցը:	+	-

Ճանաչողական գործառույթ. լեզուն որպես մտածողության օրգան և «նշանակությունների գրադարան»

Մարդը, որպես հասարակական էակ, հաղորդակցման մեջ է իր նմանների հետ: Տակավին վաղնջական շրջանում մեր նախահայրերը օգտվում էին խոսակցական պարզունակ նշաններից: Անցյալ դարի խոշորագույն աշխարհագետ Էլիզե Ռեքլյուն, անդրադառնալով ամերիկյան միքս (mixe) ժողովրդի աղքատիկ լեզվին և այդ խղճուկ լեզվական միջոցները «կոմպլեքսացնող» հոսպտանքներին, շարժումների «լեզվին», գրել է. «երեկոյին, երբ լույսերը հանգչում էին, խոսակցությունը ստիպողաբար վերջանում էր» (հմմտ. Հր. Աճառյան, նույն տեղում, էջ 46): Կարծում ենք շատերին ծանոթ է հին մի գավեշտապատում. վանեցին հյուր է գնում մեկ այլ վանեցու: Երբ նստում են զրուցելու, տանտերը հարցնում է. «Խոսակցությունը գրավո՞ր է լինելու, թե՞ բանավոր»: Համոզվելով, որ բանավոր է լինելու, տանտերը լույսն անջատում է: Վերջում, հրաժեշտից առաջ, երբ տանտերը վառում է լույսը, պարզվում է, որ հյուրը քանի որ սենյակում մութ էր, տաբատը հանել էր՝ չմաշվելու համար...

Իրականում է. Ռեքլյուն սխալվել է, ինչպես ապացուցել է ֆրանսիացի լեզվաբան Գրասերին (Grasserie, Langue zoque et langue mixe, Փարիզ, 1898թ.), միքսերի լեզուն բոլորովին էլ աղքատիկ չէր:

Լեզվի դերի մասին խոսելիս, որպես կանոն, առանձնացվում է երկու հայեցակետ: 1) Լեզվի մասնակցությանը աշխարհընկալման, ճանաչողության գործընթացում (համեմատություն, վերլուծություն, համադրություն և այլն), հիշողության մեխանիզմների առումով նույնպես և 2) լեզվի դերը մարդկային հասարակության հասարակական-պատմական փորձի «պահպանման և փոխանցման» մեջ: Վերջինս կատարվում է երկու մակարդակներով՝ բուն լեզվի մեջ քերականության ձևով և լեզվի միջոցով՝ խոսքի բոլոր, կարգի դրսևորումներում տեքստային, հնչական (բանավոր) և այլն:

Եթե տեքստերի իրազեկման բովանդակությունը փոխանցվում է համեմատաբար մեծ արագությամբ, ապա լեզվի իմաստաբանական ոլորտում խտացված տեղեկատվությունը բնութագրվում է նշանակալից կայունությամբ: Այս առումով արժե զուգադրել Սվոդեշի մեթոդի կիրառման երեք փորձերի արդյունքները (Աբուլաձե, Գ. Ջահուկյան, Ա. Սարգսյան): Արդյունքների մեկնաբանումը սովորաբար տրվում է 100-120-150-ական բառ պարունակող ցանկերի տեսքով (տե՛ս Ա. Սարգսյան, անդ.):

Խոսքի հուզաարտահայտչական գործառույթի լեզվական միջոցներ

Խոսքում հուզական արտահայտության հիմնական միջոցը հնչերանգն է:

Խոսքի հուզաարտահայտչական գործառույթը իրացվում է, երբ արտահայտվածը «մատուցվում է» խոսողի անձնական-զգացական վերաբերմունքով: Խոսքի այդ գործառույթը Ռ. Յակոբսոնն անվանում է ոչ թե զգացական (էմոցիոնալ), այլ

Էմոտիվ (տե՛ս Р.Якобсон, Мозг и язык, Ընտիր երկեր, 1985, էջ 270-286): Ընդ որում զգացմունքայնության հատկանիշը կապ չունի՝ հաղորդվածն իրական է, թե՛ շինծու, ինչպես որ արտահայտության բովանդակության առումով այն կարող է լինել ճիշտ (истинно) կամ անկեղծ (искренно):

Հնչերանգային առումով երկբաղադրիչ բառակապակցությունը սովորաբար կարող է ունենալ շուրջ հինգ տասնյակ զգացական տարբերակներ (հմմտ. Ն. Մեչկովսկայայի դասագրքում բերվող օրինակը «այսօր երեկոյան» — сегодня вечером, որն ունի ավելի քան 40-50 տարբերակ):

Ինչպես ապացուցվել է մասնագիտական գրականության մեջ, խոսքի զգացականությունը ուղղակիորեն կապված է գլխուղեղի աջ կիսագնդի հետ: Հնչերանգային միօրինակություն, «միապաղաղություն» է առաջանում, եթե խոսողի գլխուղեղի աջ կիսագունդը հիվանդանում է: Փաստ է, որ այսպիսի հիվանդը ըստ էության խոսքի լրջության աստիճանը (կատակով, թե լուրջ ասված լինելը) չի տարբերում: Հակառակը, երբ խախտվում է գլխուղեղի ձախ կիսագունդը, ապա հիվանդին դժվար է լինում ընկալել հաղորդման բովանդակությունը, մինչդեռ նույն այդ հիվանդը հիանալիորեն տարբերակում է զգացականությունը, տոնայնությունը:

Խոսքի հաղորդակցային գործառույթը

Հաղորդակցման ժամանակ պատահում է, որ խոսակիցները բոլորովին չեն ձգտում ոչ հուզականության, ոչ էլ առավել ևս իրազեկում ապահովելու: Խնդիրը պարզապես լեզվական շփման (հաղորդակցման) մեջ լինելն իրականացնելն է: Այս երևույթը հատկապես դրսևորվում է ողջույնի, շնորհավորանքի, եղանակի, որպիսության մասին հարցուփորձերում: Այդպիսի լեզվահաղորդակցումը կարելի է որակել որպես «հաղորդակցում հենց այնպես»: Բնական է, որ խոսքի այդ տարատեսակն ունի

կադապարավորման բարձր աստիճան և, ամենակարևորը, նվազագույն իրազեկում:

Լեզվի մետալեզվային գործառույթը

Մետալեզուն այն լեզուն է, որի միջոցով նկարագրվում է ինչ-որ այլ լեզու: Այսպես, եթե հայոց լեզվի քերականությունը գրված է ռուսերեն, ապա առարկան հայերենն է, մետալեզուն՝ ռուսերենը: Մետալեզուն կարող է նաև առարկայի հետ համընկնել: Այսպես, հայերենի քերականությունը հայերենով շարադրելու դեպքում, արևելահայերենի քերականությունը արևմտահայերենով կամ հակառակը, նրանցից առաջինը կլինի առարկան, երկրորդը մետալեզուն կամ հակառակը:

Ու. Վայնրայխը տակավին հինգ տասնամյակ առաջ նկատել է, որ լեզվի բառագանձի բնութագրման տիպաբանական էական հատկանիշներից է մետալեզվական միջոցների բազմազանության աստիճանը, քանի որ յուրաքանչյուր լեզու ունի «ինքնաբնութագրման» իրեն հատուկ արժեքները (տե՛ս Новое в лингвистике, 5-րդ պրակ, Մ., 1970, էջ 221):

Շայոց լեզուն ըստ էության բնութագրվում է մետալեզվական անհամեմատ մեծ հարստությամբ:

Խոսքի գեղագիտական-բանաստեղծական գործառույթը (լեզվի «տոնական» տարբերակը)

Ըստ Ռ. Յակոբսոնի, դա այն դեպքն է երբ տեղի է ունենում «հաղորդում հանուն հաղորդման»: Խոսքն այս պարագային ընկալվում է որպես գեղեցիկ, հրաշալի կամ տգեղ, այլանդակ, որպես գեղագիտական առարկա: Այս դեպքում լեզուն սոսկ ձև չէ, բովանդակային «թաղանթ» չէ, այլ առանձին գեղագիտական արժեք: Խոսքի այդ գործառույթը լավագույնս դրսևորվում է ոչ միայն գեղարվեստական գրականության մեջ, ճարտասանությանը դիմելիս, հրապարակային ելույթներում, այլև խոսակցության այլազան դրսևորումներում:

Գեղագիտական գործառնությունը փորձում է փշրել խոսքային սովորական կադապարները՝ լինի բանավոր, թե գրավոր խոսք (թերթային, պաշտոնական, ճարտասանական), հաղորդակցությանը ինքնատիպություն է տալիս և կենդանություն ներարկում: Այս դեպքում հաճախակի են հանդես գալիս փոխաբերությունը, փոխանունությունը, բառախաղերը, ռիթմը, բաղաձայնությունը, հանգավորումը և այլն.): Բազմաթիվ են օրինակները տարբեր լեզուներում:

Ինչքան գեղագիտական գործառնությունը դրսևորման բարձր աստիճանի է հասնում, այնքան «խոսքային ավտոմատիզմը» մոտենում է նվազագույնի, այսինքն հաղորդակցությունը «աննկատելիորեն» մեծանում է, ընդգծվում է խոսքային «նորություն»:

Գեղարվեստական-գեղագիտական խոսքի կարևորագույն բաղադրիչը, ըստ Սերգեյ Էյզենշտեյնի, ռիթմն է:

Հակառակ դրան, ինչքան «խոսքային ավտոմատիզմը» մեծանում է, այնքան ավելի լայնորեն է դրսևորվում խոսքի կապաստեղծիչ գործառնությունը (фатическая функция): Այդ դեպքում հաղորդակցումը գերազանցապես աննպատակ է. խոսողների համար կարևորը լեզվական շփում, կապ ստեղծելն է: Այդպիսիք են նաև կադապար համարվող ողջույնի ձևերը, նամակների սկզբնամասը և վերջին հատվածները: Կապաստեղծիչ գործառնությունը դրսևորվում է հատկապես նախորդ օրվա հեռուստատեթերի մասին մտքերի այնպիսի փոխանակումների ընթացքում, երբ իրազեկման աստիճանը մոտենում է գրոյի:

Լեզուն որպես ազգը համախմբող, միավորող և միասնականացնող գործոն

Եթե լեզվի և խոսքի նախորդ գործառնությունները ի հայտ են գալիս բոլոր բնական լեզուներում, այսինքն՝ ընդհանրական (ունիվերսալ) են, ապա լեզվի էթնիկ գործառնությունը պարտադիր (հմմտ. Ն. Մեչկովսկայա, էջ 24) և լեզվից լեզու տարբեր է իր դրսևորման աստիճանով և ուժգնությամբ: Էթնոմիավորող այս

գործառույթը դրսևորվում է ոչ թե լեզվի գործածությամբ, այլ մայրենի լեզվի, ազգային-լեզվական մշակութային գաղափարախոսության նկատմամբ տվյալ հանրության անդամների վերաբերմունքով:

Պարզ ճշմարտություն է, որ աշխարհի էթնիկ և լեզվական քարտեզները չեն համընկնում: Առկա հսկայական գրականությունից հիշատակենք մեկը՝ Հ. Աճառյանի «Լիակատար քերականության» ներածության հատորը, ուր խոսվում է «մեր լեզուն մեր հայրենիքն է» թյուրըմբռնման մասին: Ըստ Աճառյանի, այդպես կարծելը ոչ միայն սխալ է, այլև լեզվական կիսագրագիտության արդյունք:

Հայերենն այդ առումով հանրալեզվաբանական ինքնատիպ երևույթ է: Հայոց ազգային-էթնիկական ամբողջականությունը համաժամանակյա կտրվածքում ունի երկու գրական լեզու, ոչ վաղ անցյալում՝ չորս տասնյակ բավական տարբեր բարբառներ և շուրջ 250 խոսվածքներ:

Այն, որ մեկ լեզուն կարող է ծառայել էթնիկ մի շարք միավորների, լավագույն օրինակը տալիս է արաբերենը՝ Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի և մի քանի այլ պետությունների էթնիկ կազմավորումների լեզուն հանդիսանալով միաժամանակ:

Ամերիկյան հնդկացիների լեզուների հանրահայտ հետազոտող Դեյ Հեյմսը գրել է. «Հավանաբար մեր մտածողությունը չափից ավելի գունազարդված է 19-րդ դարի եվրոպական լեզվական ազգայնականությամբ (նացիոնալիզմով), որպեսզի մենք կարողանանք նկատել, որ ոչ բոլոր լեզուներն են, որ ունեն խորհրդանիշի կարգավիճակ, ինչն անհրաժեշտ է խմբի միասնության համար» (Новое в лингвистике, 7-րդ պրակ, Հանրալեզվաբանություն, 1975, էջ 65):

Արդի պայմաններում, ազգերն ու ազգությունները, կարծես ձգտում են ոչ միայն պահպանել լեզվական ավանդույթները, այլև վերածնել լեզուն որպես հոգևոր-

մշակութային ինքնատիպության հիմք (հմմտ. Գ. Ստեպանով, Ազգային լեզու, 1990):

Խոսքի մոզական գործառույթը

Ըստ Յ. Յակոբսոնի, լեզվի մոզական գործառույթի դրսևորման դեպքում հաղորդակցումը, խոսքի ուղղորդումը կատարվում է ոչ թե անհատ խոսողների, այլ մարդու և վերին՝ գերբնական ուժերի միջև: Մոզական գործունեության դրսևորումներից են՝ տաբուն, չխոսկանությունը, տարբեր կրոնական ավանդույթների համաձայն՝ աղոթքները, երգումները, անեծքները, սուրբ գրքում՝ սրբազան բնագրերը: Հայերենում Մուրբ գրքի հենց այդ հատկության բնութագրումն է՝ Աստծո շունչ-Աստվածաշունչ:

Լեզվական միավոր բառը դիտվում է որպես ոչ թե նշանային համակարգի տարր, այլ նշանակող առարկայի մի մասը (հմմտ. Ռ. Ավոյան, Լեզվական նշանը, 1975, Էդ. Ավետյան, Լեզվի նշանային համակարգը, 1966թ.):

Նորածիններին հաճախ չար ուժերի ներգործությունից հեռու պահելու համար վատ անուններ էին տալիս, թաքցնում էին բուն անունը, չվնասելու համար անվանակրին: Հայաստանի գյուղերից մեկում արու մի քանի զավակի ծնունդից հետո, վերջիններիս վաղաժամ մահվան պատճառով հերթական նորածնին տրվել է օտար անուն՝ Հասան, չար աչքից հեռու պահելու համար: Այս երևույթը դարերի խորքից է գալիս: Տիպական է այդ առումով զրադաշտական կրոնի հիմնադիր Զրադաշտի անունը, որը ավեստայում նշանակել է «ձերուղտյան» (հմմտ. Մեչկովսկայա, էջ 25):

Բառային կախարդանքը համահունչ է տակավին անտիկ աշխարհում ծագած բնությամբ և դրությամբ վեճին և գալիս հասնում է մինչև Է. Սեպիրի և Բ. Ուորֆի «լեզվաբանական հարաբերականության» տեսության հիմնադրույթները:

Ըստ Լ. Վիսոգենշտեյնի և Տ. Մուրիի՝ լեզվի «մեղքով» է, որ առաջանում են մարդկային սխալների կեղծ խնդիրներ:

Խոսքի կախարդական գործառույթը ի հայտ է գալիս կրոնա-մոզական բոլոր ավանդույթներում, անշուշտ, տարբեր դրսևորումներով, սակայն միևնույն է, դա նույնպես ապացույց է խոսքի մոզական գործառույթի ընդհանրական արժեք լինելուն:

Հիշենք Հ. Թումանյանի «Գելը» ստեղծագործության մեջ գայլերին գյուղի տարածքից հեռու վանելու մոզական անեծք-շուտասելուկը՝ «ալալոս-գալալոս...», որ տակավին 19-րդ դարի վերջում տարածված երևույթ էր հայկական գյուղերում:

Կենդանիների լեզվում բացակայում է լեզվական նշանների շարահյուսությունը:

Մարդկանց և կենդանիների «լեզուների» գործառույթները հանրալեզվաբանության մեջ ներկայացվել են հետևյալ ընդհանրական պատկերով.

Գործառույթներ	Նշանային համակարգերի դասերը	
	Մարդկային լեզու	Կենդանիների լեզու
1. Հաղորդակցական	+	(+)
2. Ճանաչողական	+	-
3. Կանոնարկող	+	+
4. Հուզա-արտահայտչական	+	+
5. Կապաստեղծիչ	+	+
6. Մետալեզվական	+	+
7. Գեղագիտական	+	-
8. Էթնիկական	+	-
9. Մոզական	+	-
10. Կենսաբանական	-	(+)

(-+) նշանը վերաբերում է սահմանափակ տարածվածությանը:

Լեզվի, որպես հասարակական երևույթի, ինքնատիպությունը

Լեզուն Homo sapiens-ի առանձնահատկության անկյունաքարն է: Լեզվի առկայությունը հասարակության գոյության անհրաժեշտ գլխավոր պայմանն է: Գիտակից մարդկության ողջ պատմության ընթացքում լեզուն եղել է մարդու և կենդանական աշխարհի բոլոր մյուս տարատեսակների բնորոշ առանձնահատկությունը: Հանրահայտ ճշմարտություն է, որ քանի կա հանրություն, կլինի և լեզու: Ճիշտ է նաև հակառակը, եթե նկատի ունենանք կենդանի լեզուն, քանի որ վերջինս անխզելիորեն կապված է մարդ արարածի հանրային կեցությամբ:

Հանրալեզվաբաններից ոմանք ինքնատիպ դիտարկում են արել, որի էությունը կարելի է ներկայացնել հետևյալ սեղմ բնութագրությամբ. «Լեզուն կախված է և միևնույն ժամանակ կախված չէ հասարակությունից» (հմմտ. Ն. Մեչկովսկայա, էջ 27):

«Պատմության ընթացքում շատ ցեղեր ու ժողովուրդներ որոշակի պատմահասարակական պայմաններում կորցրել են իրենց մայրենի լեզուն և յուրացրել մեկ այլ լեզու, որը և դարձել է նրանց մայրենի լեզուն: Սյսպես, օրինակ, Եվրոպայի արևմտյան Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում) մեր թ. առաջ և մ.թ. առաջին դարերում ապրում էին շատ բնիկ ժողովուրդներ (ակվիտաններ, հելվեթներ, գալեր, լուզիտաններ և այլն): Նվաճվելով հռոմեական կայսրության կողմից, ժամանակի ընթացքում այդ ժողովուրդները ձուլվեցին հռոմեացիներին, ռոմանացման ենթարկվեցին, այսինքն՝ կորցրին իրենց մայրենի լեզուները և յուրացրին լատիներենը, որի հետագա զարգացումով էլ առաջացան ֆրանսերենը, իսպաներենը, պորտուգալերենը և այլն» (Էդ. Ադայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1976, էջ 8):

Խորհրդային լեզվաբանության ձևավորման շրջանում իշխող Ն. Մառի տեսությունը, ըստ որի լեզուն դասակարգային բնութագրում ունի, անցյալ դարի 50-ական թվականներին հիմնովին մերժվեց, հատկապես Ի. Ստալինի «Մարքսիզմը և

լեզվաբանությունը» հողվածի հրապարակումից հետո: Նախորդ տասնամյակներում ձևավորված գռեհիկ սոցիոլոգիզմին փոխարինելու եկավ լեզվի հասարակական դերը շեշտող, վերդասակարգային երևույթ լինելու հիմնարար դրույթը: Ըստ այդմ էլ Ն. Մատի «Ֆեոդալական հայերեն», «ռամկական հայերեն» բնութագրումները որակվեցին որպես լեզվի դասակարգային դրսևորման փորձեր և գիտականությունից գուրկ պնդումներ:

Արդի լեզվաբանության մեջ և հատկապես հանրալեզվաբանական աշխատություններում ընդգծվում է լեզվի պատմության և ժողովրդի պատմության անժխտելի կապը, միաժամանակ շեշտվում է, որ հասարակական վայրիվերումները անմիջականորեն լեզվական նոր որակներ չեն առաջացնում: Լեզուն շարունակում է մնալ իբրև վերդասակարգային, ընդհանրական հաղորդակցական միջոց՝ ծառայելով հասարակության բոլոր խավերին հավասարապես: «Գոյություն ունենալով հասարակության մեջ՝ լեզուն ծառայում է իրենով խոսող հասարակությանը ամբողջությամբ վերցրած, լեզուն ընդհանուր է և միասնական իրենով խոսող հասարակության համար՝ անկախ հասարակության դասակարգային շերտավորումներից, քաղաքական խմբավորումներից գաղափարական ուղղվածությունից և այլն: Լեզուն անտարբեր է հասարակության դասակարգերի նկատմամբ, ...թեև դասակարգերը անտարբեր չեն լեզվի նկատմամբ» (Էդ. Ադայան, էջ 6):

Գրական լեզուների տիպաբանական առանձնահատկությունները

Լեզվաբանական տիպաբանության խնդիրը աշխարհի լեզուների կառուցվածքների ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտումն է (հմտո. Ա. Մարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, Հայոց լեզվի կառուցվածքը, 1975):

Ավանդական տիպաբանությունը բնութագրվում է իբրև ձևաբանական-դասակարգողական: Այն հենվում է լեզուների միաչափ կառուցվածքների վրա (գերազանցապես՝ բառի) և, ըստ էության, բնութագրում է ոչ թե լեզուն ամբողջությամբ, այլ լեզվի միայն առանձին միավորները: Ձևաբանական տիպաբանությունը առանձնացնում է սահմանափակ թվով լեզվատիպեր: Այսպես, առաջին անգամ Ֆ. Շլեգելը տարբերել է երկու տիպ՝ թեքական և ոչ թեքական: Թեքական լեզուները համարելով «օրգանական» և կատարյալ լեզուներ՝ նա դրանք հակադրել է «անօրգանականներին»՝ իբրև անկատար լեզուների: Ա. Շլեգելը լեզուների դասակարգումը ներկայացրել է երեք տիպով՝ անձև (կամ անջատական), մասնիկավոր և թեքական: Ըստ շարահյուսական առանձնահատկությունների նա տարբերակել է երկու տիպ՝ վերլուծական և համադրական: Հետագայում Վ. Հուսթրլտը դասակարգման այդ շարքում ավելացրել է բազմահամադրական տիպը: Լեզուների թվի ավելացմանը զուգընթաց, հետազոտողները (Հ. Շտայնթալ, Ֆ. Միստելի և այլք) ստիպված ավելացրել են նաև ձևաբանական տիպերի թիվը:

Լեզուների հասկացությանին դասակարգումը (Է. Մեպիր) հիմնված է ձևությունների արտահայտած իմաստների վրա: Ըստ այդ դասակարգման՝ առանձնացվում են երկու (մաքուր ռելացիոն և խառը ռելացիոն) լեզվատիպեր՝ իրենց ենթատիպերով: Արդի տիպաբանությունը հենվում է կառուցվածքային լեզվաբանության սկզբունքների (լեզվի և խոսքի, արտահայտության և բովանդակության պլանների տարբերակման և այլնի) վրա: Տիպաբանական հետազոտությունների էլակետը լեզվի կառուցվածքն է, ընդ որում զուգադրվում են ոչ թե առանձին, միմյանցից անջատ տարրեր, այլ ներհամակարգային որոշակի փոխհարաբերություններով բնութագրվող լեզվական բաղադրիչներ: Արդի տիպաբանության հիմնական խնդիրը լեզվի համընդհանուր տեսության ստեղծումն է, լեզվական առանձնահատկությունների բացահայտումը: Բացի բոլոր լեզուներին հատուկ ընդհանրությ-

յունների բացահայտումից, տիպաբանությունը հաստատում է նաև լեզուների մի մասին կամ առանձին խմբերին հատուկ ընդհանրությունները:

Գոյություն ունեն մի շարք տիպաբանական մեթոդներ՝ ըստ կոնկրետ հարցադրման. 1. Տարբեր լեզուների տեքստեր են համեմատվում, թե՞ համակարգեր (տեքստի տիպաբանություն և համակարգի տիպաբանություն), 2. Ցեղակից լեզուներ են զուգադրվում, թե՞ ոչ ցեղակից (միկրո- և մակրո- տիպաբանություն): 3. Հաշվի են առնվում լեզուներն ամբողջությամբ, թե՞ միայն առանձին մակարդակները (մակարդակային տիպաբանություն՝ հնչյութային, ձևաբանական և այլն) 4. Լեզվի մասին իրազեկությունն ինչպես է ներկայացվում՝ հաստատման-ժխտման ձևով, թե՞ թվային որոշակի արժեքներով (որակական տիպաբանություն և քանակական տիպաբանություն) և այլն (ավելի մանրամասն տե՛ս «Մեթոդներ» բաժինը): Տիպաբանության մեթոդների զարգացումը հանգեցրել է մի շարք տիպաբանությունների ձևավորման՝ բնութագրաբանական, որն ուսումնասիրում է լեզվական երևույթների փոխալայմանավորվածությունը (Վ. Սկալիչկա), կառուցվածքային՝ քննում է լեզվի համակարգի տարբերի միջև եղած որոշակի հարաբերությունները, ընդգծում է էտալոն լեզվի և մետալեզվի նշանակությունը (Ֆ. դը Մոսյուր և այլք), քանակական (Ջ. Գրինբերգ), սերող (Բ. Ուսպենսկի), հարաբերակցային, որը, հստակորեն առանձնացնելով արտահայտության և բովանդակության պլանները, նրանց փոխկապակցված գննությամբ բացահայտում է լեզվի կառուցվածքային ամբողջական պատկերը (Գ. Ջահուկյան), եթե հաշվի առնենք, որ արդի տիպաբանությունը ձգտում է հնարավորինս միանշանակ և խնայողական կերպով ներկայացնել լեզվակառուցվածքները: Այս առումով լավագույն արդյունքներ երաշխավորող մեթոդներից է հարաբերակցայինը, որի կիրառումով բացահայտվում է ամբողջական լեզվի կառուցվածքը: Արդի տիպաբանությունը հիմնվում է գերազանցապես բազմա-

հատկանիշ դասակարգումների վրա և զերծ է ձևաբանական տիպ «գնահատողական» արատավոր գծից: Տիպաբանության տվյալները մեծապես կարող են օգնել մեքենական թարգմանության, լեզուների ուսուցման, բառարանագրության, նորահայտ լեզուների վերծանության, ռճերի քննության և մի շարք այլ ասպարեզներում: Տիպաբանության տվյալները կարող են օգտագործվել նաև պատմահամեմատական լեզվաբանության մեջ՝ վերականգնված լեզվական ձևերի կառուցատիպերը ճշտելու առումով:

Մեր օրերում ստեղծվել են տիպաբանական դասակարգման տարմակարդակային մի շարք դասակարգումներ (հնչյունական, ձևաբանական, շարահյուսական և այլն):

Գրական լեզուների տիպաբանությունը ոմանք դիտում են որպես լեզուների գործառական (հանրալեզվաբանական) տիպաբանության բաղկացուցիչ մաս: Իրոք, առանձին կոնկրետ գրական, լեզուների միջև առկա առանձնահատկությունները պայմանավորված են նրանց գործառության ոլորտում եղած տարբերություններով:

ԳԼՈՒԽ 3. ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Բնականն ու մշակվածը լեզվում, ինչ խոսք, առաջացնում է լեզու և մշակույթ հիմնահարցի բազմակողմանի դիտարկման անհրաժեշտություն: Մշակութաբանական ու փիլիսոփայական, ազգագրական ու լեզվաբանական, գրականագիտական ու հոգեբանական միջոցները միանգամայն տարբեր մոտեցումներ կարող են դրսևորել նույն հիմնախնդրի դիտարկման ժամանակ:

Լեզու և մշակույթ երևույթների կապը քննելիս կարող ենք առնչվել նվազագույնը երկու խնդրի.

1. Ինչպես են ազդում լեզվի վրա տարաբնույթ մշակութային գործընթացները և

2. Ինչու է իր հերթին լեզուն ազդում մշակույթի վրա: Այլևս չենք խոսում այն մասին, թե լեզուն ինքնին մշակույթ (լեզվական մշակույթ) է, և այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչ աստիճանի մշակվածության հետ գործ ունենք:

Մշակույթը սոցիալական արդյունք է և ոչ թե կենսաբանական երևույթ: Լեզվական մշակույթը նույնպես, որպես մշակույթի մի բաղկացուցիչ մաս, ունի իր ընդգրկման սահմանները, ինչպես հնչույթային կառուցվածքները մարդկային լեզուներում ունեն իրենց նվազագույն և առավելագույն չափերը՝ 10 և 100, ինչպես որ բառապաշարը գրական լեզուներում ունի նվազագույնը 10000 բառ-միավոր և առավելագույնը կես միլիոն բառ-միավոր, այդպես էլ մշակված գրական լեզուները ունեն որոշակի չափանիշներ, ասենք՝ շարահյուսության ոլորտում նախադասության միջին երկարության և ստորադասական կապերի միջին արժեքները ըստ Ինգվեի վարկածի (7 ± 2) և այլն:

Համամարդկային մշակութային բաղադրիչը լեզվական իմաստաբանության (սեմանտիկայի) մեջ

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի մեջ առկա են ինչպես համամարդկային, այնպես էլ էթնոսագգագրական գծեր: Ամեն մի ազգային լեզվի իմաստաբանության մեջ արտացոլվում են թե՛ մշակույթի ընդհանրական, թե՛ կոնկրետ տվյալ ժողովրդի բաղադրատարրերը:

Տիպաբանական ընդհանրույթ է այն, որ աշխարհի բոլոր լեզուներում առկա է խոստոյի, լսողի և հաղորդակցմանը չմասնակցողի (3-րդ դեմքի) եռադեմ տարբերակումը:

Բնական լեզուներում «ամրակայված» է մարդ էակի կողմից ամենանախնական, վաղնջական շրջանում ձևավորված աշխարհընկալումը, ըստ որի՝ *արևը* ծագում և մայր է մտնում, *սիրտը խառնում* է, *հաջողությունից զուխը կորցնում* են և այլն, որոնք հնդեվրոպական լեզուների համար միջմշակութային ընդհանրությունների արդյունք են:

Լեզուների մեջ եղած տարբերությունները պայմանավորված են մշակութային տարբեր կաղապարավորումներով, ծագումնաբանական տարբեր հիմքերով: Այդպիսիք շատ ավելի ցայտուն են դրսևորվում բառապաշարի հատկապես դարձվածաբանության ոլորտում: Տասնամյակներ առաջ Ստենլի Կրամերի նկարահանած «Այս իսելակորույս, իսելակորույս աշխարհը» ֆիլմի վերնագիրը նույն լեզվաընտանիքի երկու լեզուներում՝ հայերենում և ռուսերենում, միանգամայն տարբեր բնութագրումներ ստացան. եթե ռուսերենում, *безумный мир*-ը պարզապես **խելքի** բացակայության հատկանիշն է շեշտում, ապա հայերենում **խելակորույսը** մատնանշում է, որ աշխարհը մի ժամանակ իսելք ունեցել է, այժմ է, որ չունի, այսինքն՝ ռուսերենում աշխարհի երբևէ իսելք ունենալու հատկանիշը բնավ չի արտացոլված:

Լեզվաերկրագիտական մասնահատուկ բառապաշարը հանրալեզվաբաններին բավական նյութ է տալիս:

Ներկայացնենք գյումրեցի ամուսինների երկխոսությունը
նուս ընտանիքի հետ ծովափին.

-«Какой огурчик ваш муж!».

-Ի՞նչ ըսավ...

-Ըսավ՝ ինչ խիյար ամուսին ունես»:

Անգամ գրական լեզվի վարունգ բառով փոխարինելիս՝
արտահայտության բացասական գնահատականը չի վերանում:

Ոչ ոք չի ժխտում, որ լեզվի բառապաշարը անխզելիորեն
կապված է տվյալ ժողովրդի մշակույթի հետ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ բառապաշարի 6-7
տոկոսը լեզվում իր համարժեքը չունեցող բառաշերտն է,
այսինքն՝ այնպիսի բառերն են, որոնք մինչև վերջ թարգմանելի
չեն, ըստ էության որակվում են իբրև անթարգմանելի:

Լուպե դե Վեգայի «Շունը խոտի դեզի վրա» պիեսը
ռուսերենից միջնորդավորված պատճենում է, որը հայերեն
թարգմանության մեջ կորցրել է իր բուն իմաստը: Հետագայում
նույն թատերախաղը թարգմանվեց «Պարտիզպանի շունը»
տարբերակով, որը նույնպես բնագրի դարձվածքային իմաստից
հեռու է, թեև գոնե մասամբ գաղափար է տալիս բուն իմաստի
մասին

Ս. Ավերինցևը «Новый мир» ամսագրում (1988, 8)
սրամտորեն նկատել է, որ յուրաքանչյուր լեզվի լավագույն
բառերն անթարգմանելի են:

Բառի ներքին ձևի ազգային-մշակութային առանձնահատկությունները

Բառի ներքին ձևն այն բառացի իմաստն է, որ
բաղադրվում է տվյալ բառը կազմող ձևույթների իմաստներից:
Բառի ներքին ձևը տվյալ բառիմաստը դարձնում է
պատճառաբանված (մոտիվացված): Ա. Պոտեբնյան բառի ներքին
ձևի մեջ տեսնում էր բառի պատկերը (1976, էջ 429): Արդի

հայերենի **մերկապարանոց** բառը թեև գալիս է հին հայերենից, այսօր էլ քաջածանոթ է բոլորին: Գրաբարում այն ունեցել է «ակներև» իմաստը: Բառը սպացույց է այն բանի, որ հնում հայերը վիզը ծածկելու սովորություն են ունեցել, իսկ **մերկ վիզը, պարանոցը** դիտվել է իբրև անպարկեշտ, անպատշաճ բան (այլևս չենք խոսում արդի իրականության մեջ տարածում գտած **պոքտը** բաց լինելու մասին):

Բառի ներքին ձևի համընկնումը տարբեր լեզուներում երկակի պատճառաբանություն ունի, կամ դրանք պատճենման արդյունք են, կամ ստեղծվում են տիպաբանական ընդհանուր գործընթացի արդյունքում: Փիղ բառը տարբեր լեզուներում ի հայտ է բերում ներքին ձևի և առանձնահատկություններ, և շատ ընդհանրություններ:

Տաբու. Լեզվի և հասարակական ըմբռումների սերտ կապը հանրալեզվաբանական և գուտ լեզվաբանական աշխատանքներում լայնորեն դիտարկվել է: Մանավանդ թույլ զարգացած ժողովրդների լեզվում տաբուն, որ պոլիներգյան բառ է՝ tabou, մեծ տեղ ունի: Հնդեվրոպական հնագույն լեզուներում տաբու էին **արջ, օձ, լուսին, կամուրջ** և այլ բառերը: Կարիճ բառն, օրինակ, տաբու է և այն «ներկայացվում» է **կրորհաքի** ձևով (=կեռ պոչ): Ցեղակից և ոչ ցեղակից շատ լեզուներում կա մի թիվ, որ ենթարկված է տաբուի: Դա 13 թիվն է: Նախապաշարմունքով եվրոպական շատ երկրների հյուրանոցներում տասներեք թիվը պարզապես բացակայում է՝ **փոխարինվելով 12 bis-ով**: Ռուսերենում այն ստացել է «чертова дюжина» անվանումը: Ազերիները (հատկապես Իրանում բնակվող) հաշվելիս, երբ հասնում են 13 թվին, սրամտորեն ասումեն «onucdeyil» (13 չէ), ինչը պարսկերենում ներկայացվում է hic («ոչինչ») բառով:

Տաբուն ներգործման հակառակ ուղղություն էլ է ձեռք բերում: Այսպես, 13-ից այնքան են խուսափել, որ ոմանց համար էլ հենց այդ «ձախորդ» թիվն է մեկնաբանվում իբրև հաջողության նախապայման: Այնպես որ միանգամայն ճիշտ է նկատել

Հր. Աճառյանը, գրելով. «Տաբուն ջնջում են, բայց նոր տաբու են ստեղծում» (Հր. Աճառյան, ՀԼԼՔ, Ներածություն, էջ 122):

Հասարակական ըմբռնումների թելադրանքով առանձին բառեր դիտվում են իբրև ոչ պատշաճ: Այսպես, կնոջ **ստինք** ասելը թույլատրելի է, իսկ **ծիծ**՝ պատշաճ չէ բարձրաձայն արտաբերելը: Ամոթ է, օրինակ, վարտիք բառն օգտագործելը: Այն փոխարինվել է **փոխան** (ըստ Հր. Աճառյանի *փոխանակ* շապկի իմաստով): Երեսփոխան բառն էլ, որ գործածվում է արևմտահայերենում, նշանակում է **երեսի, անձի**, ընտրողի փոխարեն: Ժամանակի ընթացքում փոխանն էլ դարձավ անպատշաճ բառ և փոխարինվեց **ոսնաշոր, ոտաշոր** ձևով, որն իր հերթին սփյուռքահայերի լեզվում ամոթալի է և փոխարինվում է **շապկընկեր, շապրնկեր** բառով:

Ոչ քաղաքավարի բնութագրում ունեցող բառերն արտաբերելուց առաջ անցյալում հաճախ էին դիմում «ասելն էլ ամոթ է», «ամոթ է ասել», «անհարմար է ասել», «հեռու լսողաց» և այլ ձևերով: Գրաբարյան հերատուկ «մազերը կտրած» բառը նախնական իմաստ է ունեցել և վավերագիրն է այն բանի, որ հնում մազերը կտրած լինելը ամոթ է եղել կնոջ համար:

Այդ առումով անդրկովկասյան լեզուների բառարանների քննությունը շատ բան կարող է բացահայտել հատկապես հայերի և վրացիների քաղաքակրթության պատմության, հասարակական կյանքի անցյալի պատկերման առումով:

Խոսքային վարքի ազգային-մշակութային առանձնահատկությունը

Յուրաքանչյուր ազգային-մշակութային դաշտում ձևավորվում են որոշակի կաղապարներ (ստանդարտներ), որոնցով ճշգրտվում է, թե ինչ կարող է խոսողն անել, ինչը՝ ոչ: Դրանք մարդկային վարքի այն կանոններն են, որոնցով առաջնորդվում են տիպական հանգամանքներում (հյուրը և տանտերը,

վաճառողն ու գնորդը, մատուցողն ու հաճախորդը, բժիշկն ու այցելու հիվանդը և այլն): Դրանք ըստ էության ինչպես վարքային, այնպես էլ լեզվական կաղապարներ են:

Տարբեր են նաև համանման իրադրություններում խոսքային բովանդակությունները տարբեր ժողովուրդների մոտ՝ հոր և որդու, այր և կնոջ, ուսուցչի և աշակերտի միջև երկխոսություններում և այլն: Այդ առումով հետաքրքիր է հնդկացիների «խոսքային վարքը»: Անխոս հաղորդակցության փայլուն օրինակ է կանադացիների շրջանում տարածված հետևյալ ձևը. «Կարելի է հյուր գնալ հարևանի տուն, առանց խոսելու լուռ ու մունջ ծխել և հեռանալ», դա նույնպես հաղորդակցում է համարվում (տե՛ս Մեչկովսկայա, 60):

Եվրոպական մշակույթում բառային հաղորդակցումը բավականին լայն տարածում է գտել, թեև դա ձևական բովանդակություն ունի: Միննույն խոսքային վարքագծի առկայությունը արևելահայերենում և արևմտահայերենում, միանգամայն տարբեր հաղորդակցային իրավիճակների հետ կապված, արդյունք են տարբեր վարքային կաղապարների: Օրինակ՝ **ձգե-գցե, շոր-լաթ, պահաբան-ծրար-կապոց** և այլն:

Ներգործում է՞, արդյոք, լեզուն մշակույթի վրա

Բնավ վեճի առարկա չէ մշակույթի ազդեցության խնդիրը լեզվի վրա, իսկ ահա հակառակը՝ լեզվի ազդեցությունը մշակույթի վրա, տակավին բավարար հետազոտության առարկա չի դարձել:

19-րդ դարում շատ-շատերն են լեզուն ընկալել որպես ժողովրդի մշակույթը ձևավորող հոգևոր ուժ: Լեզվի դերը մշակույթի պատմության վրա, իրոք, դժվար է բացահայտել, քանի որ անգամ բանահյուսության համեմատությամբ լեզուն ավելի հին երևույթ է: Այդ կապակցությամբ ճիշտ են նկատում որոշ հանրալեզվաբաններ, որ մարդկային մշակույթի ճշգրիտ

տիպաբանական պատկերը կբացահայտվի միայն այդ և ոչ մարդածին մշակույթների, քաղաքակրթությունների բաղդատությունամբ:

Վ. Հումբոլդտ (1767-1835). լեզվի փիլիսոփայությունը և մշակույթը

Վ. Հումբոլդտը համոզված էր, որ հսկայական է լեզվի ազդեցությունը ազգի հոգևոր զարգացման վրա: Բեռլինի համալսարանի հիմնադիրը, որի անունով ներկայումս այն կոչվում է, բազմաթիվ լեզուների էր տիրապետում՝ հին հնդկերեն, հին հունարեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն (ավելորդ է խոսել գերմաներենի մասին), իտալերեն, իսպաներեն, պրովանսալերեն, բասկերեն, չեխերեն, հունգարերեն, ճապոներեն, վաղ և ուշ եգիպտերեն, չինարեն (չարժի թվարկել բոլորը): Ավելացնենք միայն, որ Վ. Հումբոլդտը Հյուսիսային և Հարավային Ամերիկաների տեղաբնիկների լեզուն ուսումնասիրող նախակարապետներից մեկն էր, պոլինեզյան լեզուների բուն գիտակ: Հետազոտելով իսպանական բասկերի լեզուն՝ Հումբոլդտը բազմաթիվ տարբերություններ նկատեց այդ լեզվում, ուր բառավերջը առանձնանում է հնդեվրոպական բոլոր մյուս լեզուներից: Շուրջ մեկ ու կես դար հետո հայ գիտնականներից մեկը պիտի փորձեր բացահայտել բասկերենի կապերը հայերենի հետ: Ինքնին հետաքրքրական մի մոտեցում, որի արդյունքները հրապարակի վրա են: Ջարմանալի մի զուգադիպությամբ դրացի վրացիները նույնպես առաջ են քաշել մի վարկած, համաձայն որի՝ հին վրացերենը և բասկերենը ծագումնաբանական ընդհանրություն ունեն:

Լեզվական հսկայական պաշարի յուրացումով՝ Վ. Հումբոլդտը եկել է այն եզրահանգման, որ «տարբեր լեզուները ոչ թե համամարդկային գիտակցության սուկ տարբեր թաղանթներն են, այլ աշխարհի միանգամայն տարբեր ընկալման (видение) ձևեր»:

Ալեքսանդր Պոտերնյա

Ալեքսանդր Պոտերնյային (1835-1891) է պատկանում նշանավոր ասույթը. «Ապագայնացումը «բարոյական հիվանդություն» է»:

Ա. Պոտերնյան լեզվաբանության մեջ զարգացրել է հոգեբանական ուղղությունը: Բողոունն դե Կուրտենեի և Շչերբայի հետ միասին նա խոսքային գործունեության տեսության ներկայացուցիչներից է: 140 տարի առաջ գրած իր «Գեղագիտություն և պոետիկա» աշխատանքում (1978, էջ 231) շեշտել է. «Ապագայնացումը... թուլացնում է կապը աճող սերնդի և տարեցների միջև, այդ կապը փոխարինելով օտարների հետ ունեցած ավելի թույլ կապով, հասցնելով հասարակության կազմալուծման, անբարոյականության, ստորացման»:

Քննադատելով հաղորդակցական միջոցների ձուլման գործընթացը՝ Պոտերնյան գտնում էր, որ յուրաքանչյուր էթնիկ լեզու համամարդկային արժեք է, որն արտապատկերում է աշխարհը: «Մարդու գոյության համար անհրաժեշտ են այլ մարդիկ, աղբյուրի համար՝ այլ աղբյուրներ» (անդ, էջ 229):

Էդ. Սեպիրի և Բ. Ուորֆի «լեզվաբանական հարաբերականության» վարկածի մասին

Այն պնդումը, որ մարդիկ աշխարհին ընկալում են տարբեր՝ կախված մայրենի լեզվից, ընկած է «լեզվաբանական հարաբերականության» տեսության հիմքում: Այդ տեսության կողմնակիցները ձգտում էին ապացուցել, որ «միջինեվրոպական (արևմտյան) մշակութային ստանդարտը առանձնանում է այլ մշակութային աշխարհներից (օրինակ հյուսիսամերիկյան հնդկացիների) պայմանավորված լեզուների մեջ եղած տարբերություններով» (հմմտ. Մեչկովսկայա, էջ 63):

Այս տեսության մասին դիպուկ է արտահայտվել Յու.Դ. Ապրեսյանը, շեշտելով, որ «գարմանալի գեղեցիկ» այս վարկածը չափազանց դժվար է ապացուցել:

Լեզվաբանական պատճառաբանվածության փորձարարական ստուգում

Սեպիր-Ուորֆի վարկածի ապացուցման համար լեզվական «արտացոլումը» շատերի կողմից դիտարկվել է հիմնական գունանվանումների համակարգում:

Եթե մի շարք լեզուներում, օրինակ՝ ռուսերենում, բելո-ռուսերենում, առկա է 7 հիմնական գունանվանում (ըստ ծիածանի գունափնջի), ապա հայերենում, գերմաներենում, անգլերենում՝ 6, իսկ ռոդեզիական շոնա լեզվում՝ 4, Լիբերիայի բասա լեզվում՝ 2:

Ներկայացնում ենք գունաբաշխման աղյուսակն ըստ նշված լեզուների.

Աղյուսակ 3

ռուսերեն	красный	оранже- вый	желтый	зеленый	голубой	синий	фиоле- товый
անգլերեն հայերեն	red կարմիր	orange նարնջա գույն	yellow դեղին	green կանաչ	blue կապույտ	purple մանուշա- կագույն	
շոնա	cipswuka		Cicena	citema		guvina	
բասա	ziza			hui			

Կախվածությունը ճանաչողական գործընթացներում և լեզվի բառային կառուցվածքների միջև չափազանց դժվար է հիմնավորել:

Ըստ էության լեզվի և մտածողության կախվածությունը շատ ավելի ցայտուն երևում է ոչ թե բառապաշարում, այլ քերականության մեջ: Այդուհանդերձ, լեզվի և մշակույթի փոխազդեցության, կապերի հարցը շարունակում է հուզել

հանրալեզվաբաններին, ընդ որում դրանցից որևէ մեկը գերիշխող չէ, մյուսը՝ ստորադաս:

Լեզվամշակութային համապատասխանությունների փնտրտուքում

«Արդի լեզվաբանությունը լեզու և մշակույթ հիմնախնդրին անդրադառնալով՝ ձգտում է հեռու մնալ պատճառաբանվածությունից և չլուծել այն հարցը, թե ի՞նչն է առաջնայինը և ինչը երկրորդայինը՝ լեզուն, թե՛ մշակույթը», - գրել է Ն. Մեչկովսկայան (էջ 66): Պատճառաբանվածությունը նրանց միջև, ինչ խոսք, փոխադարձ է: Եվ այդ փոխադարձ պայմանավորվածությունները նախընտրելի է դիտարկել շատ ավելի լայն ընդգրկմամբ, լեզուների և մշակույթների ըստ հնարավորին լայնամասշտաբ դիտարկմամբ՝ հաշվի առնելով պատմական, աշխարհագրական, ծագումնաբանական բավականին լայն տեսադաշտ: Ըստ էության միայն նման պայմաններում է հնարավոր խոսել «լեզվամշակութային տիպ» հասկացության մասին, ինչն առաջարկվել է Վ. Գասպարովի կողմից իր «Հանրաբերականության ներածություն» աշխատանքում (Гаспаров В. Введение в социогрматику, 1977):

Հետևելով Բ. Ուորֆի եզրաբանությանը՝ Վ. Գասպարովը մասնավորապես առանձնացնում է լեզվամշակութային երկու տիպ՝ արևմտաեվրոպական ստանդարտ և արևելաեվրոպական ստանդարտ: Լեզվամշակութային նշված երկու տիպերից առաջինը հատկացվում է եվրոպական մշակութաբանական ոլորտին, երկրորդը՝ ասիական: Անշուշտ, բավական հարաբերական են նման մոտեցման չափորոշիչները, ինչպես որ ակներև որոշ պայմանականությամբ են բնութագրվում եզրահանգումները: Ընդ որում այս առումով չափազանց հետաքրքրական օրինակ է (չասելու համար՝ բացառիկ) արդի հայերենն իր երկու համաժամանակյա վիճակով գործառոդ գրական լեզուներով՝ գրական արևմտահայերեն և գրական արևելահայերեն: Դրանցից առա-

ջինը, հետևելով Վ. Գասպարովի դասակարգմանը, հատկացվելով արևմտաեվրոպական ստանդարտին, շատ ավելի մերձակից է ֆրանսիական (հմա՝ եվրոպական) լեզվամշակութային ստանդարտին՝ իր քերականական կառուցվածքով (հմմտ., օրինակ, մեկ ժխտում՝ **ոչ ոք** ըստ - **ոչ ոք** չասաց, **ոչինչ** ըրաւ - **ոչինչ** չարեց և այլն), ոճաբանությամբ, շարահյուսական տիպերի բազմազանությամբ և այլն: Երկրորդը՝ գրական արևելահայերենը, հարում է լեզվամշակութային ասիական տիպին՝ շատ ավելի ընդհանրություններ ի հայտ բերելով ռուսերենի հետ (վերջինս՝ գերմաներենի, ի տարբերություն ֆրանսերենի), կառուցատիպերի չորությամբ, ոճական համեմատաբար «միապաղաղությամբ», լեզվական արտահայտության ավելի մեծ կաղապարվածությամբ և այլն: Այս բոլորը ըստ էության տակավին որոշապես մերկապարանոց դատողություններ են, որոնցում բացակայում են ապացուցողական անհրաժեշտ հիմքերը: Չմոռանանք, որ առայժմ գոյություն չունի մշակութային տիպաբանություն առարկան, ըստ որի վերջապես պարզ կարող է դառնալ, թե ինչն է բնորոշում լեզվամշակութաբանական տիպ ասվածին, ինչ բաղադրիչներից է այն կազմված, ինչն է մշակութային տիպ հասկացության մեջ նշույթակիր միավորը: Այդ կապակցությամբ հանրալեզվաբանական գրականության մեջ նշվում է նաև, որ նախադասության շարահյուսական կառուցվածքային տիպերի ուսումնասիրությունը կարող է բացահայտել նրանց բաշխվածության աստիճանը, զարգացման ուղղվածությունը և այլն: Ա. Սարգսյանի «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» գուգադրական-տիպաբանական հետազոտության մեջ դիտարկվել են շարահյուսական տիպերը նշված լեզուներում ըստ թեմայի և ռեմայի: Ստացված տվյալները կարելի է դիտել իբրև այդ ուղղությամբ ձեռք բերած նախնական արդյունքներ, ըստ որի արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական տարբերությունները պայմանավորված են լեզվամշակութային հնարավոր տիպերի (տվյալ դեպքում՝ շարահյու-

սական կառուցատիպերի) տարբեր ընտրություններով, ասույթի արտահայտության միջուկների բաշխման առանձնահատկությամբ և այլն (հմմտ. արևմտահայերենին նախընտրաբար հատուկ «Մանկապարտեզի ամենէն մտերիմ ընկերս Յովհաննէսն է» կառույցը «Հովհաննէսը մանկապարտեզի ամենամտերիմ ընկերս է» արևելահայերենի կառույցի հետ:

Ապագային է վերաբերում նորագույն գիտական վերլուծությամբ ազգային լեզուների և մշակույթների փոխազդեցության եղանակներն ու չափերը պարզելը: Այնպես որ մշակույթի վրա լեզվի ազդեցության խնդիրը տակավին կարոտ է համապարփակ հետազոտության:

ԳԼՈՒԽ 4.
ԼԵԶՈՒ ԵՎ ԿՐՈՆ

**ԱԶԳԵՐԸ ԵՎ ԿՐՈՆՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ՝
ՊԱՏՄԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՒՄ
(ԱՆՑՑԱԼՈՒՄ ԵՎ ԱՅԺՄ)**

Եթե նկատի ունենանք, որ ազգի մտածելակերպը (կենսակերպը) բնորոշվում է նրա աշխարհընկալմամբ, վարքականոններով, հոգեկան կերտվածքով և այլն, այս երկու հիմնական գործոնները կանխորոշում են վերոհիշյալ հատկանիշները: Դրանք են՝ լեզուն և կրոնը: Ինչ խոսք, կրոնը և լեզուն միանգամայն տարբեր ձևով են ներագրում ժողովուրդների ազգային ճակատագրերի վրա և անգամ նույն ժողովրդի բախտի վրա՝ պատմական այս կամ այն որոշակի ժամանակահատվածում:

Հայերի շրջանում տարածված է մի թյուր ըմբռնում, որն առնչվում է Ավ. Իսահակյանի «Մեր լեզուն մեր հայրենիքն է» ձևակերպմանը (հմտ. Հր. Աճառյանի քննադատությունը): Լեզուն բնավ էլ էթնոսի պարտադիր հատկանիշը չէ: «Մեկ ազգ, մեկ եկեղեցի» կարգախոսը նույնպես այդպիսին լինելուց բացի իրական դարձնելու հավանականությունից հեռու է ոչ միայն առանձին վերցրած որևէ ազգի (ազգության) սահմաններում, առավել ևս մարդկային հասարակության տարբեր կտրվածքների առումով:

Լեզուների, ազգերի, կրոնական ճյուղավորումների և պետությունների սահմանները էապես խախտված են ոչ միայն պատմական տարբեր դարաշրջանների ընդգրկման սահմաններում, այլև համաժամանակյա դիտարկման դեպքում:

Նախնադարյան հասարակարգում ցեղային խմբավորումների սկզբնական փուլում էթնոսի և կրոնական համայնքի սահմանները համընկնում էին: Հետագայում մարդկությունը

ստեղծել է նորանոր կրոնական հավատալիքներ, կրոններ (բուդդայականություն, գրադաշտ, քրիստոնեություն, իսլամ և այլն), որոնք դուրս եկան էթնոագգային, պետական սահմաններից: Ընդ որում յուրաքանչյուր կրոն ամրագրվում է սրբազան տեքստերի որևէ լեզվով, այդ լեզուն դարձնելով բացառիկ հարգանքի և մանրակրկիտ բանասիրական քննության առարկա՝ ինչպես, վեդաների լեզուն՝ սանսկրիտը (հին հնդկերենը) Հնդկաստանի ժողովուրդների համար, գրադաշտականության համար՝ ավեստան (հին պարսկերենը), Եվրոպայի քրիստոնյա ժողովուրդների համար՝ հին հունարենն ու լատիներենը, որոնցով գրված է Նոր Կտակարանը, գրավոր-գրական արաբերենը, որով գրված է Ղուրանը՝ իսլամների սուրբ գիրքը, ուղղափառ ռուսների և ռումինացիների համար՝ եկեղեցական սլավոներենը:

Հազարամյակներ շարունակ մարդկությունը ինքնառջնչացնող պատերազմների մեջ է՝ գերազանցապես կրոնական հիմքով ծագած խնդիրների պատճառով: Լավագույն օրինակ կարող է ծառայել խաչակիրների արշավանքների ամբողջ պատմությունը, որի ընթացքում Քրիստոսի խաչը կրող զինվորների նկրտումների գոհ դարձավ նաև Կիլիկյան Հայաստանի քրիստոնյա հավատացյալ հայությունը:

Եթե 20-րդ դարի սկզբում կարծես թե մի պահ կրոնական խնդիրները մղվեցին հետին պլան, անաստվածությունը աթեիզմը սկսեց իր արշավանքը հատկապես համայնավարական երկրներում, ապա նույն դարի վերջում և մանավանդ 21-րդ դարի սկզբում կրոնականը վերստին մղվում է առաջին պլան: Կրոնական հավատալիքների մեջ առանձին տարատեսակներ ստեղծում են արմատական հակադրություն, ռազմաշունչ ընդդիմություն կրոնական բոլոր մյուս տեսակների հավատացյալների շրջանակների դեմ և անգամ սկսում սպառնալ մարդկային ողջ քաղաքակրթությանը, որն իր արմատներով գերազանցապես քրիստոնեական է: Գլուխ է սկսում բարձրացնել իսլամ արմա-

տականությունը, որին հետևող ծայրահեղական կազմակերպությունները (մասնավորապես ալ-Ղաիդան) ջիհադ են հայտարարում անհավատ աշխարհին (**անհավատ** ասելով հասկանալով իրենց հավատը չընդունողներին):

Այդ կրոնական կազմակերպությունները այնքան խոր արմատներ են ձգել եվրոպական տարբեր երկրներում (մասնավորապես՝ Անգլիայում), Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներից հետո համայն մարդկությունը թևակոխեց մի նոր դարաշրջան:

Ըստ էության ժամանակակից քաղաքակիրթ ողջ մարդկությունը ստիպված եղավ ոչ միայն բախվել տվյալ դեպքում իսլամ ծայրահեղականության մերժելի սկզբունքներին, այլև վերաբժնորել մարդկային, կրոնական բոլոր հիմնական սկզբունքները: Այդտեղ է, որ հրապարակ հանվեց ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշ երկրորդի «ով մեզ հետ չէ, մեր դեմ է» հրատապ կարգախոսը, որը ձգտում է, ի թիվս այլ նպատակների, ահաբեկչական ուժերի դեմ պայքարը կտրել կրոնական գետնից, այն դարձնելով հավատքի հարցերից դուրս գտնվող խնդիր: Շնորհիվ այդպիսի մոտեցման՝ հակաահաբեկչական շարժման մեջ նույն ճամբարում հայտնվեցին քրիստոնյա Անգլիան, իսլամական Պակիստանը, Թուրքիան և այլն:

Եթե նկատի ունենանք, որ շուրջ մեկուկես դար առաջ Ֆրիդրիխ Նիցշեն իր «Քրիստոնեության մայրամուտը» և «Աստվածների աղջամուղջը» գործերում արդեն կանխատեսում էր քրիստոնեական կրոնի ազդեցության թուլացումը և, ի հակակշիռ դրա, իսլամականության հզորացումը, ապա կարելի է շեշտել, որ 2001 թվականի սեպտեմբերյան դեպքերը եկան ընդգծելու համաշխարհային քաղաքակրթության մեջ կրոնի խաղացած դերի վերաբժնորման անհրաժեշտությունը (ամբողջ աշխարհում միլիոնավոր տպաքանակով շատ կարճ

Ժամանակում վաճառվեց Ղուրանը՝ անգլերեն լեզվով, ընդ որում գնորդները չնչին բացառությամբ քրիստոնյաներ էին):

Հյուսիսային Իռլանդիայում միննույն քրիստոնեական կրոնի շրջանակներում տասնամյակներ շարունակ անհաշտ պայքար է մղվում կաթոլիկների և բողոքականների միջև՝ պատճառ դառնալով բազում զրկանքների և գոհերի:

Մարդկային քաղաքակրթության պատմության մեջ վերջին երկու դարը (1789-ի ֆրանսիական մեծ հեղափոխությունից մինչև Խորհրդային Միության համայնավարական բռնապետության փլուզումը) սկսել էր տիպաբանական մի ընդհանուր գործընթաց՝ աշխարհիկ և կրոնական կյանքի առանձնացում, եկեղեցու և պետության տարանջատում, հավատքի և անհավատության հարցում մարդու իրավունքների ամրագրում: Թվում, էր, թե այս գործընթացը բացարձակ անհավատության կհասցնի երրորդ հազարամյակի սկզբում, սակայն 20-րդ դարի վերջին տասնամյակում սկսեց գործել հակառակ գործընթացը՝ նորից շարժում սկսվեց դեպի կրոնական նախասկիզբը: Կրոնական գաղափարները վերագարթնում ապրեցին և այլն: Նորանկախ պետությունների ընտրված նախագահները սկսեցին երդում տալ Ավետարանի կամ Ղուրանի վրա: Ընդ որում դեպի կրոնական արմատները ուղղված շարժման մեջ իսլամականությունը ցույց տվեց հավատացյալ զանգվածների վրա ունեցած իր կենդանի ուժը: Ներկայիս Մեծ Բրիտանիայում բնակվում է շուրջ մեկ ու կես միլիոն մահմեդական: Համեստ հաշվարկումներով, 2020 թվականին նրանց թիվը կկազմի 15-20 միլիոն:

Ժամանակակից իսլամական շատ երկրներում տարածված է հետևյալ կարգախոսը. «Իմ կյանքը ջիհադի համար է»: 2001 թվականի սեպտեմբերի 11-ը քաղաքակիրթ ամբողջ աշխարհին սթափ կերպով ներկայացրեց մարդկության ամենահրատապ խնդիրը՝ հավատքի-կրոնականի-լեզվի և քաղաքակրթության հանդուրժողական գոյակցության, կրոնա-

կան առկա հակամարտությունների թուլացման հնարավորության կամ անհնարինության երկրնտրանքը: Միայն հանդուրժողականության, կրոնական տարբեր համայնքների խաղաղ գոյակցության պայմաններում կարող են գոյատևել մարդկային համայնքները և քաղաքակրթությունն առհասարակ:

Իսլամը տարածում է գտնում ոչ միայն Ասիայում և Մերձավոր Արևելքում, ուր շուրջ 5 տասնյակ երկրներ գուտ կրոնական հատկանիշով են առանձնացվում, նրանցից շատերը հենց պետական անվանումների մեջ անպայման մատնանշում են իսլամականը՝ Իրանը, Պակիստանը, Աֆղանստանը, Մավրիտանիան և այլն: Մինչդեռ Եվրոպայի և Ամերիկայի բոլոր երկրների պետական անվանումների մեջ կրոնական մատնանշումը իսպառ բացակայում է, քանի որ հավատքը այդ երկրներում մարդու մասնավոր, անձնական իրավունքն է:

Արդի աշխարհի քարտեզում, ըստ պետական կազմավորումների, կրոնական և լեզվական չափորոշիչները չեն համընկնում: Կրոնական միևնույն ուղղվածությունը տրոհվում է մի շարք պետությունների և առավել ևս՝ էթնիկ կազմավորումների, ժողովուրդների միջև: Այդ առումով կարելի է նշել գոնե 3 բացառություն, երբ կրոնական/հավատքային հատկանիշը պատկանում է միայն մեկ ազգի: Դրանք են՝ հուդայականությունը Հրեաստանում, սինտոիզմը՝ Ճապոնիայում, հայ ռաքելական լուսավորչական եկեղեցին՝ Հայաստանում:

Կրոնական համայնքների խայտաբղետությամբ աչքի է ընկնում ԱՄՆ-ը, որտեղ գրանցված է 260 եկեղեցի, որոնցից 86-ը 50 հազարից ավելի հետևորդներ ունի (Ս.Բրուկ, Население мира, Этнодемографический справочник, М., 1986, էջ 115):

Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո (1991թ.). բացի կրոնական համայնքային դաշտի ընդարձակումից, լայն տարածում սկսեցին գտնել ադանդները. դրանցից շատերը օրինական գրանցում չեն էլ ցանկանում ստանալ ՀՀ կրոնի գործերի վարչության կողմից:

Թեև ընդունված ճշմարտություն է, որ գրապատմական մեր դարաշրջանում կրոնը էթնոձևավորող գործոն չի հանդիսանում, և ազգերն ու պետությունները եկեղեցու հավատքային հատկանիշներով չեն տարանջատվում, այդուհանդերձ հենց Եվրոպայի սրտում միևնույն լեզվական պատկանելության ազգային հատվածները դասվելով տարբեր կրոնական համայնքների, ոչ միայն տնական բախումների, պատերազմական իրավիճակում են հայտնվել, այլև իրենց միանգամայն տարբեր էթնիկական խմբերի են դասում: Այսպես, Բոսնիան և Հերցեգովինան (լեզվով՝ սերբ) նախկին Հարավսլավիայի բաղկացուցիչ մասը, մուսուլմանները իրենց համարում են բոսնիացի-մուսուլման, այսինքն՝ առանձին էթնոս, որը նշանակում է, թե կրոնահամայնքային հատկանիշն է դառնում վճռորոշ: Խորվաթները, որ կաթոլիկ են, նույն ձևով լարվածության մեջ են ուղղափառ սերբերի հետ, կաթոլիկ իռլանդացիները՝ բողոքական անգլիացիների դեմ՝ Օլսթերում: Լիբանանում շուրջ երկու տասնամյակ տևած կռիվներն ընթանում էին կրոնական հենքի վրա՝ քրիստոնյա արաբական համայնքների և պաղեստինյան ու լիբանանյան իսլամական համայնքների միջև:

Կրոնական գիտակցության վերէթնիկական բնութագիրը

Որպես հասարակական գիտակցության ձև՝ կրոնը սոցիումի (հանրույթի) կարևորագույն և խորացված ըմբռնումներից մեկն է՝ աշխարհի, մարդու, կյանքի և մահվան, բարու և չարի մասին և այլն: Հատկապես միջնադարում կրոնական պատկերացումները գերիշխել են մարդկային հասարակության գիտակցության և մշակույթի վրա:

Քանի որ իրականում ամեն ազգ չի պատկանում միայն իրեն հատուկ կրոնական համայնքի, կրոնական որևէ համայնք մի շարք էթնոսների, ազգային միավորների է տրոհվում, և միևնույն էթնիկ միավորումը մի քանի կրոնական համայնքների է

բաժանվում, կրոնական-համայնքային պատկանելությունից բխող ազգային ինքնատիպության, բացառիկության, այլ ազգություններից տարբերակվածության մասին գիտականորեն խոսել չի կարելի:

Մինչև 2001 թվականի սեպտեմբերի 11-ը ընդունված էր ասել, որ ինչպես անցյալի, այնպես էլ նորագույն ժամանակներում «կրոնական ավանդույթները» ոչ այնքան տարանջատում, որքան համախմբում են ժողովուրդներին և արդի մշակույթի աշխարհները: 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, Նյու-Յորքի երկու երկնաքերերի կործանմամբ համաշխարհային հանրությունը բնեռվեց մեկ հատկանիշի նկատմամբ ունեցած վերաբերմունքով՝ ահաբեկչության դեմ մղելիք պայքարի կազմակերպման վրա՝ անկախ կրոնական, պատկանելությունից, լեզվից և մաշկի գույնից:

Յուրաքանչյուր ազգի ինքագիտակցություն, չլինելով հանդերձ գուտ կրոնական հատկանիշով պայմանավորված, մի շարք ազգակերտիչ գործոնների շարքում, ծանրակշիռ դեր է խաղում: Այդպիսի դեր ունեն և ազգի անցած պատմական ուղին, և կրոնական հավատալիքների զարգացման պատմությունը:

Լեզու, կրոն և ժողովրդի մտածելակերպ

Կրոնը և լեզուն, ինչպես և բոլոր մյուս նշանային համակարգերը, որոշակի բովանդակություն ունեն, որը կազմում է ժողովրդի հասարակական գիտակցությունը, արտացոլումն է արտաքին աշխարհի:

Կրոններն իրենց ձևավորման փուլում հասարակական գիտակցության ամենանշանակալից ձևերն էին: Մինչդեռ լեզուն պատմական զարգացման բոլոր փուլերում էլ եղել է հասարակական գիտակցության «հանրամատչելի թաղանթ» (Մեչկովսկայա, էջ 72) է: Ընդ որում եթե լեզուն ուղղակի պարտադիր պայման է տվյալ հանրության բոլոր անդամների

համար, ապա կրոնը նույն այդ պարտադրելիությունը չունի: Ինչպես, ասենք, Բեյրութի արաբը, խոսելով հանդերձ նույն արաբերեն լեզվով, կարող է լինել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա: Ուստի եթե կրոնը կարող է և չճառայել որպես ազգային ինքնություն խորհրդանիշ, ապա լեզուն շատ ավելի հաճախ է հանդես գալիս այդ դերով, անմիջականորեն աղերսներ ունենալով ազգային բանահյուսության, գրականության և հասարակական գիտակցության այլ ձևերի հետ:

«Միրում եմ քեզ, հայոց լեզու,

Մայրիկիս պես անուշ ես դու» ... կամ գերմանացի բանաստեղծ Շիլլերի «Մայրենի լեզու, մայրենի բարբառ» բանաստեղծության թարգմանությունը, կատարված Ստեփանոս Նազարյանի կողմից, ուղղակի վերագրվում է նրան, իբրև հեղինակային ստեղծագործության, և ծառայում որպես մայրենի լեզվի հանդեպ առկա ժողովրդական անսահման սիրո վկայության փայլուն օրինակ:

Նկատելի է, որ եթնիկ զանգվածները խանդավառ սիրո ցույցեր են անում մայրենի լեզվի նկատմամբ, որն, ինչպես նկատում են շատ հանրալեզվաբաններ, որոշապես չափազանցված է: Այդուհանդերձ, լեզուն ազգային գիտակցության ամենագորավոր խթանն է:

Լեզվական նշանի մեկնաբանությունը Սուրբ Գրքերում

Գրեթե բոլոր կրոնական համայնքների առջև լեզվական լուրջ հարց է ծագում և հենց լեզվի նկատմամբ առավել մեծ ուշադրության խնդիր առաջացնում: Կրոնները, որպես կանոն, ավետումի, ավետաբերության հետ են կապվում, ինչը Աստված անում է գլխավորապես հատուկ տեքստերի (գրքերի, կավե աղյուսների միջոցով), որոնք թելադրված կամ ներշնչված են ի վերուստ: Հմմտ., օրինակ, Սուրբ գրոց Աստծո շունչ լինելը: Սուրբ գրքերի ցանկը ճշտվում է աստվածաբանների կողմից: Այդպիսիք

անվանվում են կանոնական, որոնք կազմում են տվյալ հավատքի տեքստային մասի հիմքը:

Ինչպես վեդաները ինդուիզմում, Հին Կտակարանն ու Թալմուդը՝ հրեականության համար, Ավեստան՝ զրադաշտականության, Նոր Կտակարանը՝ քրիստոնեության, այնպես էլ Ղուրանը իսլամի համար անձեռնմխելի են:

Կրոնական գիտակցությունը բացարձականացնում է սրբազան տեքստը՝ նրան հատկացնելով գերբնական ուժ ու հնարավորություն, պաշտամունքի առարկա: Ոչ միայն սրբազան տեքստերում, այլև առհասարակ կրոնական գրականության մեջ լեզվական նշանի գործածության մեջ հատուկ զգուշավորություն, խնամք ու «նրբանկատություն» է պահանջվում: Այսպես, օրինակ, 11-12-րդ դարերում լատիներեն լեզվով գրված մի աշխատության մեջ Աստծո (Deus) անվան հոգանակի կիրառությունը համարվել է զազրելի, «զիջում բազմաստվածությանը», քերականությունը որպես սատանայի հորինվածք. «Իսկ չի ուսուցանում, արդյոք այդ քերականությունը Աստված բառը հոլովել հոգնակի թվով» (Ն. Մեչկովսկայա, էջ 74): Հայերենում, սկսած 5-րդ դարից, Աստված բառը միայն եզակի է կիրառվում, իսկ հեթանոսական աստվածները անվանվում էին չաստվածներ, բուն կիրառությամբ՝ դիք:

Առհասարակ շատ կրոնների հատուկ է Աստծո անունը տալու արգելանքը: Սովորաբար բերվում է աֆրիկյան իզբո պաշտամունքի օրինակը, որտեղ փոխանակ ասելու Աստված, ասում են՝ Նա: Վաղ քրիստոնեության լատինական ավանդույթի համաձայն՝ Աստված չի կարող արտահայտվել տառերով: Այդ արգելանքը տարբեր դարաշրջաններում անգամ սկսում են վերազրել աստվածացված մարդկանց, ինչպես, օրինակ՝ Ստալին, Լենին անունները 20-րդ դարի 40-50-ական թվականներին արգելվում էր տողադարձել:

Սրբազան տեքստերում նշանի բացառիկության հանգամանքով պայմանավորված նաև, որ Սուրբ Գրքի, Ղուրանի և

այլնի թարգմանությունը այլ լեզուներով եղել է բավական պատասխանատու երևույթ: Սրբազան իմաստներ բովանդակող տեքստերում ցանկացած բառի համարժեքը այլ լեզվով ներկայացնելը համարվել է վտանգավոր երևույթ: Ահա թե ինչու սրբազան գրքերը, շատ լեզուներով չէին էլ թարգմանվում: Ոչ միայն չթարգմանելը, այլև սրբազան բնագրերի լեզուն, ուղղագրությունն ու ուղղախոսությունը հատուկ ուշադրության, գուրգուրանքի առարկա է եղել դարեր շարունակ: Անհասկանալի կամ դժվարըմբռնելի բառերի ու արտահայտությունների թարգմանությունը դարերի ընթացքում եղել է հայրաբանների, աստվածաբանների քննության առարկա: Ընդ որում միշտ, որպես տիպաբանական ընդհանրույթ, ծառայել է հետևյալ մոտեցումը. իսկ ի՞նչ է ասում ավանդությունը, հին լեզվական ձևը, «սրբազան հնություն»: Այդպես Նարեկացուց մինչև Շնորհալի ընկած ժամանակահատվածում բազում մեկնաբաններ են եղել, որոնք կազմել են մեկնություններ, հարց ու պատասխաններ: Դասական նմուշը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցն» է, որն առ այսօր հայոց եկեղեցու սպասավորների համար ծառայում է որպես հոգևոր աշխարհի հանրագիտարան:

Սրբազան ծեսերի և ժողովրդական լեզուների գործառական երկլեզվությունը

Միաստվածային կրոնների տարածման ընթացքում, Սուրբ Գրքի, Ղուրանի նոր լեզուներով չթարգմանելու պահանջներով նույնպես պայմանավորված, ստեղծվում է բավական խայտաբղետ կրոնամշակութային մի բարդ պատկեր, որտեղ գործում են կրոնական ինքնատիպ աշխարհներ՝ բուդդայականության, ինդուիզմի, իսլամի, քրիստոնեության: Յուրաքանչյուր կրոնական «աշխարհի» համար գործում են «իրենց հատուկ» սրբազան լեզուներ: Այսպես չինացիների, կորեացիների, ճապոնացիների, և այլոց համար այդ լեզուն

վենյանն է (հին չինարենը), ինդուիզմի համար՝ հին հնդկերենը (սանսկրիտը), իսլամական աշխարհի համար՝ գրական արաբերենը և դասական պարսկերենը, քրիստոնեական աշխարհի համար՝ հին հունարենը, լատիներենը, գրաբարը, եկեղեցական սլավոներենը և այլն:

Արդեն վաղ միջնադարից սկսում է ձևավորվել գործառական երկլեզվությունը, երբ պաշտամունքի վայրում (սրբազան տաճարում) կիրառվում է Սուրբ Գրքի լեզուն (այն կարող է լինել կենդանի կամ մեռած), իսկ առօրյա հաղորդակցումը կատարվում է տեղական որևէ լեզվով կամ քարքառով: Նշված համապատկերում հայերենն առանձնահատուկ տեղ է գրավում, եթե այլ լեզուների դեպքում, որպես առօրյա հաղորդակցման միջոց, հանդես է գալիս միանգամայն այլ, հաճախ՝ օտար լեզու, ապա հայերենի դեպքում այդ գործառույթը կատարում է ժամանակակից հայոց լեզվի համաժամանակյա կտրվածքով գործառող երկու տարբերակներից մեկը՝ արևելահայերենը կամ արևմտահայերենը: Ընդ որում այս դեպքում անգամ հարկ է շեշտել, որ գրաբարը կոնդակների լեզվում մնում է որպես «սրբազան լեզվական մասունք»: Աշխարհաբար խոսքում ազգային հոգևոր առաջնորդները, որպես յուրահատուկ ոճական հնարանքի, հաճախ դիմում են գրաբարյան քարացած կապակցությունների, հոլովական ձևերի և այլն: Այսպես, ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսը իր բանավոր խոսքում և քարոզներում հաճախ է օգտագործում **գավակաց** գրաբարաշունչ հոլովաձևը:

Կրոնական գործոնները լեզուների սոցիալական պատմության մեջ

Սուրբ Գրքի այլ լեզուներով թարգմանություններ, այնուամենայնիվ, կատարվել են: Հաճախ հենց այդ թարգմանությունները հիմք են ծառայել նոր գրային մշակույթների ստեղծմանը,

ինչպես 405-431թթ. Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ հիմք դրվեց դասական գրաբարի գրական լեզվամշակույթի:

863 բվին սալոնիկցի երկու քարոզիչ՝ Կիրիլն ու Մեֆոդիոս (Կյուրեղն ու Մեթոդիոսը) հայտնի դարձան որպես սլավոնական գրի հիմնադիրներ և եկեղեցական սլավոներենի առաջին ուսուցիչներ: Սուրբ Գրքի թարգմանության ճանապարհով ստեղծված այբուբենների հեղինակները նույնպես սրբագործվել են: Սույն գործընթացը տիպաբանական մի շարք ընդհանրություններով է բնութագրվում: Այդ երևույթը հայկական և սլավոնական գրական աշխարհների համար դիտարկել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Մարկի Գրիգորյանը (տե՛ս Վ. Գրիգորյան, Վարքագրության տիպաբանական-գուգադրական ուսումնասիրություն, ձեռագիր):

Գ. Ֆլորովսկին ժամանակին ճիշտ է նկատել, որ Ռուսիան Բյուզանդիայից չստացավ միայն Աստվածաշունչը, ընդամենը մի գիրք: Աստվածաշնչի թարգմանությունը պարզապես սխրանք էր՝ սլավոնիներին նոր, քրիստոնեական հոգևոր աշխարհ պարզնելու առումով:

Այդպես հայ առաջին թարգմանիչները ոչ թե սոսկ մի գիրք (թեկուզ և Սուրբ Գիրք) թարգմանեցին, այլ հիմք դրեցին գրավոր-հոգևոր լեզվական մի հսկայական ավանդության: Ուստի պատահական չէ, որ ավելի քան 15 դար հայ ժողովրդի նշած սուրբ տոներից մեկը Թարգմանչաց տոնն է: Ամբողջ աշխարհի մակարդակով բացառիկ երևույթ է, երբ ազգովին սրբացվում է թարգմանության գործը:

Աստվածաշնչի կանոնական օրինակները դարերի ընթացքում, դարձան ուղղագրության տիպար, գրական լեզվի ճիշտ կառույցներ նմուշ, կանոնական բառարանների և քերականությունների հիմք:

Հոգևոր գրականության ժանրերի ստորակարգությունը և նրա ազդեցությունը գրավոր մշակույթի վրա

Հանրահայտ է, որ հրեաների համար հոգևոր սրբազան գիրքը Հին Կտակարանն է (այն դեպքում, երբ քրիստոնյաների համար Սուրբ Գիրքը ներառում է ինչպես Հին Կտակարանը, այնպես էլ Նոր Կտակարանը) և Թալմուդը, որը Հին Կտակարանի մեկնությունն է: Ընդ որում հավատացյալ հրեաների համար Հին Կտակարանում Հնգամատյանին ավելի մեծ արժեք է տրվում, որն ըստ ավանդության կոչվում է Թորա: Ներկայումս էլ սինագոգներում Թորայի ընթերցումները կատարվում են ոչ թե տպագիր, այլ մագաղաթյա փաթեթներով:

Ղուրանը, որ մահմեդականների Սուրբ Գիրքն է, թելադրված է Ալլահի կողմից: Նրան ստորադաս են հաղիսները, որոնք պարունակում են Մարգարեի ասույթներն ու արածները (գոյություն ունեն 6 հիմնական և մի շարք երկրորդական հաղիսներ): Հրապարակի վրա առկա են նաև Ղուրանի աստվածաբանական բազում մեկնաբանություններ:

Թեկուզ և աշխարհիկ գրականության մեջ, Մարգարեի թեմային անդրադառնալիս, խիստ զգուշավոր պետք է լինել, այլապես վիրավորանքի աննշան կասկածի դեպքում իսկ իսլամական հոգևորականությունը կարող է հեղինակին դատապարտել մահվան (ինչը եղավ անգլիացի գրող Սալման Ռուշտիի հետ):

Ն. Տոլստոյը միջնադարյան ուղղափառ գիրքը ներկայացրել է հետևյալ ստորակարգությամբ.

Ա. **Ջուտ կրոնական** գրականություն

1. Ծիսագիտություն (ժամագիրք և այլն)

2. Կանոնական գրքեր (Ս. Գիրք)

2.1. Սաղմոս, Գործք Առաքելոց

2.2. Ավետարան, Հին Կտակարանի գրքերը

3. Քարոզչություն

4. Վարքագրություն (Վարք Սրբոց)

5. Դիդակտիկ (ուսուցողական) գրականություն

Բ. Կրոնական-աշխարհիկ գրականություն

1. Եկեղեցական-ճարտասանական գրականություն

2. Հակաճառական գրականություն

Գ. Աշխարհիկ գրականություն

Հավատացյալ մարդիկ չեն տարակուսում, որ միայն «ճիշտ» գրքերով (նկատի ունեն՝ կանոնականացված) կարելի է փրկել հոգիները, ուստի բացառիկ տևական ուշադրություն են դարձնում լեզվին: Քանի որ խոսքը հատկապես գրավոր լեզվին է վերաբերում, ուստի ձևավորվում է բանասիրական բառաքննական հարուստ գրականություն: Ինչպես, օրինակ, վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանի հարազատ եղբայր, Երուսաղեմի պատրիարք Եղիշե Դուրյանի Ս. Գրքի բառաքննական հոդվածները (տե ս Ե. Դուրյան, Լիակատար երկեր, հ. 5, Երուսաղեմ, 1935 թ.):

Եթե քրիստոնեական աշխարհը գիտի Ս. Գրքի թարգմանություններ արտոնելու մի շարք բացառություններ (հայերենի, վրացերենի, եկեղեցական սլավոներենի և այլն), ապա իսլամն առ այսօր ոչ մի բացառություն թույլ չի տվել Ղուրանի թարգմանության թույլտվության համար: Եվ ամբողջ իսլամական աշխարհում, բոլոր մզկիթներում (արաբների, թուրքերի, աֆրիկացիների և այլն) Ղուրանն ընթերցվում է միայն գրական արաբերեն կամ դասական պարսկերեն, ընդ որում մոզական իմաստ է տրվում նրա հնչմանը: Մուսուլմանական աշխարհի բոլոր կրթական հաստատություններում Ղուրանը սովորեցնում են անգիր անել: 8-րդ դարում Ղուրանի կանոնականացումից հետո դասական արաբերենում, հակառակ այն իրողության, որ ժամանակի ընթացքում այն հեռացել է կենդանի խոսքից, սրբազան հնչմանը տրվել է հսկայական նշանակություն: Գրավոր տեքստի հնչման օրինակելի ձևերը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրվել և ներկայացվել են ճշգրիտ հնչումներով: Արաբ հնչյունաբանները յուրաքանչյուր հնչյունի, վանկի արտաբերման, հնչման

մասին հստակ մեկնաբանություններ են տվել (լեզվի դիրքի, շուրթերի շարժումների, քթի և կոկորդի դերի նկարագրությամբ): Պետք է անվարան ասել, որ արաբական բանասիրությունը բացառիկ հաջողության է հասել: Ավելացնենք, որ խոսքը միայն արտասանական-հնչյունական խնդրին չի վերաբերում, այլև առաջին հերթին Ղուրանի իմաստային կողմին: Գոյություն ունի Ղուրանի յուրաքանչյուր բառի միանշանակ ընկալման համար անհրաժեշտ մեկնաբանության հսկայական գրականություն:

Քրիստոնեական սուրբ գրական ավանդույթների համաձայն, մեկնողական (հուն. **էքզեգետիկոս**) կոչվում են «արտաքին» պատմական մեկնությունները, զուտ լեզվական «ներքին» մեկնությունները՝ անծանոթ բառերի և դարձվածքների, կոչվում են բացատրա-լուսաբանական (հուն. **հերմենևտիկա**): Անծանոթ բառերի մեկնությունները գրիչները, մատենագիրները գրում էին Ավետարանի լուսանցքներում և տողամեջերում: Այդպիսի բառերի մեկնությունները (հուն. գլոս), դասավորվելով այբբենական կարգով և թեմատիկ մոտեցմամբ, կազմում էին Սուրբ Գրքի բառարանները (գլոսարիաները): Սուրբ Գրքի մեկնիչները հատուկ ուշադրություն էին դարձնում Ավետարանի «մութ», դժվարըմբռնելի հատվածներին, քննելով եղած տեքստերը՝ փորձում էին վերականգնել նախասկզբնական սրբազան տեքստերը: Ըստ Ավերինցևի, ահա հենց այս նախասկզբնական իմաստների ճշգրտման, վերականգնողական և պահպանման ջանքերն էլ հիմք ծառայեցին բանասիրության հիմնադրման, որպես «հասկանալու ծառայություն»:

Սկսած մ.թ. 3-րդ դարից, երբ աստվածաբան և իմաստասեր Օրիգենեսը (ապրել է Ալեքսանդրիայում և Պաղեստինում) զուգադրական հսկայական աշխատանք է կատարել Աստվածաշնչի 6 զուգահեռ քննական տեքստերի հին եբրայերեն, դրանց հունական տառադարձման և հունական բնագրի տարբեր թարգմանությունների համադրությամբ: Այդպես սկսվում է

Ս. Գրքի բանասիրական քննությունը, որը շարունակվել է հետագա 17 դարերի ընթացքում:

20-րդ դարի կեսերին Կումրանի (Բսրայել) քարայրներում բացառիկ դիպվածի շնորհիվ ի հայտ են եկել 1-ին դարի Ս. Գրքի նախասկզբնական պատառիկներ, որոնք, այսպես կոչված, կումրանյան գրականության հիմք են դարձել և բանասիրությանը նոր լիցք տվել: Հիսուս Քրիստոսի ասույթները, ի հայտ բերված մագաղաթյա բազում այդ պատառիկներում, ոչ միայն լայնամասշտաբ գիտաբանասիրական քննության են ենթարկվել, այլև այդ տեքստերը թարգմանվել են մի շարք լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն և այլն):

Աստվածաբանական գրականության մեջ սկսել է արժանին մատուցվել և հայալեզու Նոր Կտակարանին: Աստվածաբանական համաշխարհային մի շարք կենտրոններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում Ս. Գրքի հայերեն հին թարգմանությանը, քանի որ այնտեղ ի հայտ են բերվում մի շարք «բանալիներ»՝ հունարեն, լատիներեն, եբրայերեն բնագրերի առանձին «մուր» կետերի լուսաբանության համար:

Վերջապես, արդեն պատրաստ է հայերեն Աստվածաշնչի քննական գիտական բնագիրը, որը կազմվել է եղած հազարավոր օրինակների մանրակրկիտ քննությամբ՝ Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ղեկան, աստվածաբանության և փիլիսոփայության դոկտոր Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի գիտական ղեկավարությամբ:

Պատմականագրական ուրվագիծ, երազմ Ռոտերդամցին (1469-1536) բանասեր

Երազմ Ռոտերդամցին ընթերցող ամենալայն շրջանակներին քաջ ծանոթ է որպես «Գովք տխմարության» և «Դյուրին գրույցներ» սրամիտ երգիծական գրքերի հեղինակ, մինչդեռ իր ժամանակի մեծանուն մարդասերն ու աստվածաբանը կյանքի

մեծագույն մասը նվիրել է Աստվածաշնչի ուսումնասիրությանը ու հրատարակությանը:

1519 թվին, հայատառ առաջին տպագիր գրքի լույս ընծայումից 7 տարի անց, Ռոտերդամցի էրազմը տպագրում է էականորեն ճշգրտված Նոր Կտակարանի լատիներեն թարգմանությունը: Նրա ջանքերով և մասնակի մեկնաբանությամբ լույս տեսան երանելի Հերոնիմոսի ինը հարցերը (Հերոնիմոսը «Վուլգատայի»՝ Աստվածաշնչի առաջին լատիներեն թարգմանության ստեղծողն է. նույն թվականին՝ 405-ին, երբ Մաշտոցը ստեղծեց հայերեն այբուբենը, թարգմանությունը սկսվեց «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»-ն՝ Ս. Գրքի Սողոմոնի առակներից):

Բառընկալման, հստակ և ճշգրիտ բացատրություն, մեկնաբանություն տալու գործում Է. Ռոտերդամցին մեծ ավանդ ունի: Նրա խրատական հրովարտակները համարվեցին քննական, ինչը մեր օրերում համարժեք է ակադեմիականի: Է. Ռոտերդամցու առջև իր բնագրագիտական ողջ գործունեության ընթացքում ծագել է երկու հիմնական խնդիր, ա) որքանով է «ճշգրիտ» սրբազան տեքստի այս կամ այն բառը և բ) որքան հարագատ է ներկայացնում այդ բառի իմաստը թարգմանության համարժեքը: Եվ նրան տևականորեն հետապնդել է բնագրից խոտորվելու, շեղվելու վտանգը:

Այդ կապակցությամբ արժե հիշել 14-րդ դարում Ռուսիայի թագավոր Վասիլ 3-րդի հրավերով բյուզանդացի բանասեր Մաքսիմ Գրեկի թարգմանած եկեղեցական գրքերից մեկում ընդամենը մի բայաժամանակում թույլ տված բնագրային «շեղումը»՝ անցյալ ժամանակաձևերից մեկը (աորիստը) նույն անցյալ ժամանակներից մեկ ուրիշով (պերֆեկտով) փոխարինելը: Դրա մեջ տեսան հերձվածողություն, քանի որ անցյալի այդ ժամանակաձևով Քրիստոսին որպես անցումային, ժամանակավոր հատկանիշ է վերագրվում, և ոչ թե հավերժական (հմմտ. Ն. Մեչկովսկայա, էջ 84): Այդ «ահավոր մեղքի» համար

թարգմանիչը կրկնակի անեծքի ենթարկվեց և իր կյանքի մնացած մասն անցկացրեց մենաստանի բանտում: Այդ համայնապատկերում ինչպիսի տիտանական աշխատանք է կատարել էրագմ Ռոտերդամցին համընդհանուր ճանաչում գտնելու համար՝ որպես եվրոպական հումանիստների պարագլուխ և առաջամարտիկ:

Լեզվի հայեցակարգերի կրոնական նախահիմքերը

Լեզվի փիլիսոփայության բոլոր հիմնահարցերը ըստ էության դրվել են աստվածաբանական գրականության մեջ լեզու և միտք, ձևն ու բովանդակությունը լեզվում, լեզվի արարչական ուժը և այլն:

Լեզվի ծագման գիտությանը հայտնի հնագույն վարկածները աշխարհի կրոնական քարտեզի մաս են կազմում: Համաձայն քրիստոնեական իմաստասիրության, աշխարհը ծագել է բառի միջոցով, «ի սկզբանէ էր բանն»: Աստված արտաբերում է բառը և դա դառնում է արարման հիմք: Աստվածաշունչը նաև ներկայացնում է լեզվի ծագման և լեզուների բաբելոնյան խառնակության դրվագները (տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, Ե., 1960, հ. Ա):

Ադամին ստեղծելով՝ Աստված խոսում է նրա հետ դրախտում եղած ժամանակ: Այսինքն, լեզվին աստվածային ծագում է ընծայվում: Ապա Աստված, Ադամի մոտ բերելով կենդանի բոլոր արարածներին (թռչուններին ու կենդանիներին), հրամայում է անուններ դնել նրանց. «Աձ գնոսա առ Ադամ՝ տեսանել զի՞նչ կոչեսցէ գնոսա, եւ ամենայն շնչոյ կենդանոյ, զինչ եւ անուանեաց Ադամ, այն անուն է նորա: Եվ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնից և ամենայն գազանաց վայրի» (Ծննդոց, Բ., 19-20):

Ապա, ինչպես վկայում է Հին Կտակարանը, Ադամ նախամարդու լեզուն մնաց իբրև միասնական, ընդհանրական լեզու՝ մինչև Բաբելոնի խառնակությունը:

Ո՞րն է եղել Ադամի բնիկ լեզուն: Վաղուց ի վեր վեճեր են եղել այս հարցի շուրջ: Բայերի կարծիքով այդ լեզուն եղել է եբրայերենը, մահմեդականների կարծիքով, դա եղել է արաբերենը: Գիտական հիմքից զուրկ մի կարծիք էլ է հայտնի, թե այդ լեզուն եղել է... հայերենը: Միջնադարի հայ մեծ մտածող Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի համաձայն՝ Ադամի լեզուն եղել է «քաղղեացին, որ է **արապյն**» (ընդգծումը մերն է. -Ս. Ս.)

Պատմահայր Հերոդոտոսը իր նշանավոր «Պատմության» մեջ (Բ. 2) նկարագրում է մի դրվագ, թե ինչպես Եգիպտոսի փարավոն Փսամետիքը, պարզելու համար, թե հնագույն լեզուն և ժողովուրդը, որ մեկն է, մի այսպիսի փորձ է դրել, առանձնացրել է մի փոյուզացի և մի եգիպտացի նորածինի: Ոչ ոք նրանց հետ ոչ մի խոսք պիտի չարտասաներ: Մի քանի ամիս անց երեխաներից մեկն իբր արտասանել է փոյուզերեն *bekos* բառը, որ հաց է նշանակում: Ինչ խոսք, սուտ տվյալներ են ներկայացված Հերոդոտոսի մատյանում: Շատ ավելի ստույգ է պարսից Շահ-Աբաս թագավորի կատարած փորձը: Այս մասին վկայում է 18-րդ դարի հայ պատմիչ Խաչատուր Ջուղայեցին (տես Խ. Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 136-138): Ըստ վկայության, Սպահան քաղաքում եղած բոլոր ազգերի նորածիններից առանձնացնում են հայ, հույն, լատին, ասորի, վրացի, աղվան, տաճիկ, պարսիկ, մար, լեզգի, ուզբեկ, հրեա, հնդիկ և այլ ազգերից ու պահում են որոշակի ժամանակ, առանց շփումների: Երեխաները մեծանում են, խաղում, կռվում, ծիծաղում ու լացում, սակայն ոչ մի հողաբաշխ լեզու էլ չեն խոսում. «Վասն որոյ հրամայեաց շահն առ ժամայն կոտորել զմանկունս զամենայն, զի մի ասէ արմատացեալ աճեսցի զբարբառոյ այդ»: Այս նույն պատմությունը գտնում ենք նաև Ջաքարիա Մարկավագի մատյանում (Ջ. Մարկավագ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 53-56) մի հավելյալ մանրամասնությամբ: Ըստ էության շահի հրամանը չեն կատարում: Կոտորելու փոխարեն՝ երեխաներին վերադարձնում են իրենց ծնողներին, և որոշ ժամանակ անց

նրանք «փութով ուսան գհայրենի լեզուն» (այսինքն՝ արագորեն սովորեցին մայրենի լեզուն): Հայ երեխան, որ ենթարկվել էր Շահ-Աբասի այս փորձությանը, եղել է Հավուց թառի առաջնորդ Մարկոս վարդապետի հորեղբայրը (հմմտ. Հր. Աճառյան, էջ 184):

Աստվածաշնչի թարգմանություններն ու ծիսակատարությունները

Երբ 5-րդ դարի սկզբին, մաշտոցյան գրերի գյուտից անմիջապես հետո, սկսվեց Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, գլխավոր նպատակը Աստծո խոսքը ժողովրդին հասկանալի, մատչելի լեզվով մատուցելն էր: Եվ օրվա խոսակցական լեզվով՝ գրաբարով «վերարարվեց» Ս. Գիրքը, սակայն դարերի ընթացքում լեզուն հեռացավ «կանոնականացված» գրաբարից, շարունակեց իր կենդանի ընթացքն. իսկ գրաբարը վերածվեց գրքի լեզվի (հմմտ. էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, սինխրոնիա, Ե., 1963) և դարեր շարունակ, արգելք հանդիսացավ աշխարհիկ լեզվով վերաթարգմանվելու: Եվ միայն կաթոլիկ և բողոքական միախոններների ջանքերով Սուրբ Գիրքը ներկայացվեց աշխարհաբարով, որը բավական հնացած և «անհաղորդ» էր իր քերականական ձևերով, հոլովական վերջավորություններով և այլն: XX դ. վերջին տասնամյակում է, որ վերջապես ստեղծվեց աշխարհաբարյան օրինակելի թարգմանություն: Ինչ վերաբերում է ծիսակատարություններին, պատարագին, կաթողիկոսական կոնդակներին և այլն, ապա այսօր էլ եկեղեցիներում գրաբարը մնում է որպես սրբազան շունչ հաղորդող լեզու: Ե՛վ քարոզների, և՛ կոնդակների, և՛ արարողակարգի մեջ գրաբար լեզվին դիմելը, առանձին նախադասություններ գրաբարով ներկայացնելը դիտվում է որպես ազգային հոգևոր-լեզվական արմատներին հավատարմության ապացույց:

Գրեթե նույն տիպաբանությունն է առկա ուղղափառ սլավոնների Սուրբ Գրական ավանդույթում (հմմտ. Վ. Մ. Գրիգորյան, Սուրբ Գրական տիպաբանության): Երբ բուլղարների,

սերբերի, չերնոգորցիների և հարավային սլավոնների համար թարգմանվեց Աստվածաշունչը, այն բոլորին հասկանալի սուրբ լեզու էր: Ժամանակի ընթացքում լեզվի բնականոն զարգացման արդյունքում, այն դադարեց ընդհանուր հասկանալի լեզու լինելուց: Այնպես որ բավական դժվարությամբ ստեղծվեցին ուղղափառ սլավոնների համար նոր լեզուներով թարգմանություններ՝ 1820 թվին հրատարակվեց Նոր Կտակարանը բուլղարերեն, քսան տարի անց 1840 թվին՝ ամբողջական Աստվածաշունչը, 1847 թվին՝ սերբերեն Ավետարանը, իսկ 1868-ին՝ Հին և Նոր Կտակարանները:

Աստվածաշունչը ամբողջությամբ նոր ռուսերեն լեզվով հրատարակվեց 1876 թվին; Այնուհանդերձ այսօր էլ ուղղափառ ռուսաց (այդ թվում նաև՝ բելոռուսական) եկեղեցում եկեղեցական ծեսերը, պատարագը տարվում է միայն եկեղեցասլավոնական լեզվով: Եվ մինևույն մոտեցման մեջ մեկը կարող է տեսնել «բացառիկ պահպանողականություն», մեկ ուրիշն՝ «արմատներին հավատարիմ մնալու» օրինակ, «հուսալի կայունություն»: Կրոնական ոլորտում ազգային-լեզվական խնդիրները այսօր էլ հատուկ, նրբին մոտեցման անհրաժեշտություն են առաջացնում և զուսպ, ոչ հապճեպ քաղաքականության հետևելու պահանջ:

ԳԼՈՒԽ 5.

ԱՇԽԱՐՀԻԿ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐՆ ԸՆԴ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՈՒՍՍԱՆԵՐ, ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼԵԶՈՒՆԵՐ

Ուսանողները մարդկային խմբերի դասակարգումն է ըստ ժառանգական, կենսաբանական հատկանիշների (գանգի կառուցվածքի, մաշկի գույնի, շրթունքների ձևի, աչքերի գույնի և ձևի և այլն): Անշուշտ, մարդկային հնչյունական լեզուները ավելի հին են, քան ռասաները:

«Ժողովուրդ» և «ազգ» իմաստները մի շարք լեզուներում նույնանում են, հատկապես հնդեվրոպական լեզուներում: Այդպես է նաև աֆրիկյան շատ լեզուներում, թուրքերենում, ֆիններենում, հունգարերենում, բայց ոչ հայերենում: Էթնիկական և լեզվական սկզբունքները հակադրվում են մարդաբանականին:

Լեզուների արդի ծագումնաբանական դասակարգումը (ըստ մերձակցության) ենթադրում է ընդհանուր լեզվական նախասկզբի՝ նախալեզվի առկայություն: Մարդաբանական հատուկ «հակվածություն» չկա դեպի այս կամ այն լեզվաընտանիքը: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում անգլերենը մայրենի լեզուն է և՛ սպիտակամորթների, և՛ սևամորթների: Ղազախստանում ղազախների ավելի քան մեկ տոկոսը մայրենի լեզու է համարում ռուսերենը:

Համընկնման բարդ պատկեր են ներկայացնում աշխարհի լեզուների և ժողովուրդների քարտեզները: Առանձին կոնկրետ լեզվագոյացություններ որպես առանձին լեզու են դիտվում (ոչ որպես բարբառ) այն դեպքում, երբ սպասարկում են առանձին, ամբողջական ժողովրդի (հմմտ. Ա. Մարգարյան, Գրական արևմտահայերենը, ԼՈՂ, պրակ 3):

Հայտնի է, որ ճակատագրի բերումով աշխարհաբարի ձևավորման ժամանակ հայոց նոր գրական լեզուն ներկայացավ երկփեղկված՝ գրական արևելահայերեն և գրական արևմտահայերեն վիճակներով: Պատասխանելու համար այն հարցին, թե

ինչ հարաբերության մեջ են գտնվում նշված լեզվավիճակները, ամենից առաջ անհրաժեշտ է հստակորեն տարբերակել 2 կարգի չափանիշներ արտալեզվական և բուն լեզվական: Կարող են, արդյոք, որոշիչ լինել արտալեզվական այնպիսի գործոններ, ինչպես տվյալ ժողովրդի տարբեր պետությունների կազմի մեջ մտնելը, դրա հետևանքով առաջացած քաղաքական, տնտեսական, մշակութային տարբեր պայմաններում գտնվելը, աշխարհագրական դիրքով անջատվածությունը և այլն: Մի շարք լեզուների ընձեռած փաստերը վկայում են, որ նշված հանգամանքների բավական երկար գոյատևումը կարող է վճռորոշ դեր խաղալ, մերձակից լեզուները կարող են աստիճանաբար հեռանալ իրարից, բնութագրվել զարգացման տարբնթաց միտումներով, ձգտել բացարձակ ինքնուրույնության: Նման պայմաններում միանգամայն հնարավոր է, որ մեկ լեզվի երկու տարբերակների միջև, երկար ժամանակահատվածում բավարար կապի և շփման բացակայության հետևանքով, առաջանա այնպիսի «բացվածք», որ ձևավորվեն երկու ինքնուրույն լեզուներ:

Արևելահայերենի և արևմտահայերենի անգամ թռուցիկ գուգադրությունը ակնբախ է դարձնում նրանց միջև եղած շփման կետերի ոչ թե նվազեցումը, այլ ընդհակառակն՝ աճը: Մանավանդ 20-րդ դարի կեսերից սկսած երկու գրական վիճակներում էլ շոշափելի են դարձել փոխներթափանցման երևույթները՝ արևելահայերենի ազդեցությունը արևմտահայերենի վրա և հակառակը: Լեզվական իրակությունների կենդանի սերտաճման հետաքրքիր փաստեր կարող է տալ ծագումով արևմտահայի արևելահայերենը և արևելահայի՝ արևմտահայերենը: Այդ առումով հիանալի նմուշներ են Վ. Փափազյանի, Լ. Շանթի և Կ. Զարյանի լեզվաոճական կառուցվածքները:

Լեզվաբանության համար վճռորոշ են ոչ թե արտալեզվական երևույթները, այլ զուտ լեզվական գործոնը: Արևելահայերենի և արևմտահայերենի հնչյութային, քերականական կառուցվածքների, բառապաշարի ոլորտներում եղած տարբերու-

թյունները արևելահայերենը բնավ անհասկանալի չեն դարձնում արևմտահայի համար և հակառակը: Ընդ որում առկա լեզվական տարբերությունները հաճախ պայմանավորված են հայերենին ընդհանրապես հատուկ համանշալին շարքերի մրցակցության մեջ տարբեր ընտրություններով, հնարավոր մի շարք ձևերից մեկին կամ մյուսին նախապատվություն տալու հանգամանքով (հմմտ., օրինակ ախոյան-մրցորդ-մրցակից, սպիտակ-ճերմակ, վատ-գեշ և այլն):

Չի կարելի լեզվական ինչ-ինչ տարբերությունների վրա հիմնվելով՝ շուտափույթ եզրակացնել, թե գործ ունենք տարբեր ազգային լեզուների հետ: Հանրալեզվաբանությանը հայտնի են դեպքեր, երբ մեկ լեզվի երկու տարբերակների միջև եղած տարբերությունները շատ ավելի են, քան երկու տարբեր, բայց ցեղակից լեզուների միջև (օրինակ՝ ռետոռոմաներենի էնգադին և սելվի տարբերակների միջև անհամապատասխանություններն ավելի մեծ թիվ են կազմում, քան իսպաներենի և պորտուգալերենի միջև (Ս. Բորոդինսա, К вопросу о различии между близкородственными языками и вариантами одного языка М., 1969): Հեռու չգնալով՝ օրինակներ կարելի է բերել հենց հայերենից: Հիմնվելով եղած տարբերությունների վրա հայոց լեզվի բարբառների մեծ մասը, նույն մոտեցմամբ. անհնար կլիներ մեկ լեզվի մեջ մտցնելը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մեկ բարբառի ներկայացուցիչը կարող է մեկ այլ բարբառով խոսողին բնավ չհասկանալ: Անհասկանալիությամբ հանդերձ, դրանք չեն դադարում նույն հայոց լեզվի բարբառները լինելուց:

Վերոհիշյալ հարցին, թե ինչ կարգի երևույթների հետ գործ ունենք՝ լեզվի՞, տարբերակի՞, թե արևելահայ գրական լեզվի, իսկ արևմտահայ գրական տարբերակի և վերջապես՝ երկու հավասարազոր գրական լեզուների, հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել (տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948): Այժմ ընդունելի է հետևյալ տեսակետը, աշխարհաբար կամ արդի

հայերեն լեզուն ունի երկու գրական դրսևորումներ, որոնք «մեր ազգային գրական լեզվի գոյության երկու ձևերն են» (Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 7):

Անժխտելի է, որ թե՛ արևելահայերը, թե՛ արևմտահայերը երբեք էլ չեն ընդունում երկու տարբեր ազգային լեզուների գոյությունը, հայոց ազգը մեկ ազգային լեզու ունի՝ ժամանակակից հայոց լեզուն իր երկու գրական դրսևորումներով, որոնց գրական լեզու հորջորջումը որոշ պայմանականություն ունի: Միսալ կլինի նրանցից որևէ մեկին առավելություն տալով՝ մյուսը մասնակիորեն կամ լիովին անտեսելը:

Արևելահայ գրական լեզուն 1936 թ. սահմանադրորեն բարձրացել է պետական լեզվի աստիճանի՝ լայնորեն ընդարձակելով իր գործառական ոլորտները, մինչդեռ արևմտահայ գրական լեզուն, ցեղասպանությունից հետո շարունակելով գոյատևել իբրև սփյուռքահայության հաղորդակցման հիմնական միջոց, աստիճանաբար նահանջ է ապրել՝ նեղացնելով գրական լեզվին հատուկ գործառույթների շրջանակը:

Պետական լեզվի աստիճանի բարձրացած արևելահայերենի զարգացման համեմատաբար լայն հնարավորությունները, ինչպես նաև արևմտահայերենի գոյատևման անորոշ հեռանկարը առիթ են տվել որոշ հայ լեզվաբանների պնդելու, որ գրական արևելահայերենը զարգանալու է դեպի համազգային լեզվի բարձունքը (տե՛ս Է. Աղայան, նույն տեղում, էջ 8): Արևմտահայերենի «մահախոսականը» կարդալը ոչ միայն շատ շուտ է, այլև խիստ վիճարկելի, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ներկա պայմաններում կողք կողքի գործառող երկու գրական լեզուները փոխադարձաբար համալրվում են և ապավինում իրար:

Հանրալեզվաբանության, ինչպես և առհասարակ հայերենագիտության համար, խիստ կարևոր է ուսումնասիրել այն հարցը, թե ինչ աստիճանի, կոնկրետ տվյալներով, ընդհանրություններ և տարբերություններ կան արևելահայ և արևմտահայ

գրական լեզուներում, առկա տարբերությունները ինչպիսի բաշխվածություն ունեն ըստ լեզվական մակարդակների: Այս հարցի լուծումը կարող է մեծապես նպաստել նշված լեզվավիճակների ոչ թե մեխանիկական մերձեցմանը կամ ձուլմանը, որն անհնար է, այլ վերջիններիս համար զարգացման ընդհանուր ուղիներ և ուղղվածություն մշակելու գործին:

Էթնոսի որոշիչ հատկանիշը Էթնիկ ինքնագիտակցությունն է

Հաճախ է առաջանում հետևյալ հարցը, լեզուն, արդյո՞ք, էթնոսի պարտադիր հատկանիշ է: Այն, որ էթնիկականը և լեզվականը կապված են իրար, պարզ է, բայց որ նրանց միջև զուգահեռականությունը պարտադիր դրսևորում չունի, իրողություն է: Կարելի է անվարան պնդել, որ նման կապը միշտ չէ, որ առկա է, ինչպես որ միշտ չէ, որ ուղղագիծ կապ կա լեզվի և հայրենիքի միջև, ինչին միամտաբար հավատում են ոմանք:

Հանրալեզվաբանության համար հետաքրքրական հարց է, թե ո՞ր միջավայրում է լեզուն ավելի պահպանողական՝ իր բնօրրանում, թե՛ բնավայրից հեռու: Գիտական միտքը այն տեսակետն է պնդում, թե իր բնօրրանում լեզուն ավելի անխաթար է մնում. ինչքան այն հեռանում է բնօրրանից, այնքան ձևափոխվում և հեռանում է նախասկզբնական վիճակից: Լեզու և հայրենիք զուգահեռը, ազգ և լեզու զուգահեռի հետ միասին, ավելի հաճախ զգացմունքային գնահատականի են արժանանում: Հր. Աճառյանը խիստ, բայց տեղին է նկատել. «Չխոսենք վերջին անհեթեթության մասին, որովհետև... ազգ և լեզու, ինչպես նաև ցեղ և լեզու ո՛չ մի կապ չունեն իրար հետ: Ազգ և ցեղ կարող են ընդունել որևէ լեզու և միշտ պատրաստ են փոխելու իրենց խոսած լեզուն և յուրացնել մի ուրիշ (նույնիսկ բոլորովին օտար) լեզու: Եթե միջավայրը կամ հանգամանքներն այդպես տնօրինեն: Բայց լեզու և հայրենիք նույնպես չունեն որևէ կապ իրար հետ» (Հր. Աճառյան, ՀԼԼՔ, հ. 5, էջ 417):

Պարզվում է նաև, որ քիչ չեն դեպքերը, երբ բնօրրանից հեռանալով հանդերձ՝ լեզուն շատ ավելի «պահպանողական» է դարձել: «Որքան լեզուներ փոխադրվել են տեղից-տեղ, երկրից-երկիր, նույնիսկ կիսագնդից-կիսագունդ (այսպես՝ անգլերենը, իսպաներենը, պորտուգալերենը և այլն) և դեռ շարունակում են իրենց գոյությունը միննույն ձևի տակ» (նույն տեղում): Հր. Աճառյանը բերում է հայերենի, թուրքերենի և ադրբեջաներենի օրինակները: Հայաստանից հեռու Մուսա լեռան (Սվեդիայի) բարբառը և հեռավոր Ավստրիայում «ծվարած» Մուչավայի բարբառը անադարտորեն պահել են գրաբարյան հայցականի զ մասնիկը, իսկ բնօրրանի, ասենք, Արարատյան բարբառն այն վաղուց ջնջել է: Հին Գողթան երգիչների հայրենիք Ագուլիսի բարբառը անհասկանալիության աստիճանի ձևափոխվել է, մինչդեռ բնօրրանից հազարավոր կիլոմետր հեռու գտնվող Պուլսի, Զմյուռնիայի, Նիկոմեդիայի բարբառները շատ ավելի հարազատ են պահել լեզվի պատմական վիճակը:

Միջին Ասիայից մինչև Ադրբեջան ու Բալկաններ գործառուում է թուրքերենը: Ադրբեջանում ու Պարսկաստանում ապրող ազերիների լեզուն նույնպես պատկանում է նույն ընտանիքին: Թեև ազերիները ավելի մոտ են հայրենիքին, Անատոլիայի և Պուլսի թուրքերենը շատ ավելի մոտ են իրար, քան ազերիների լեզուն: Հր. Աճառյանը, որպես ապացույց ասվածի, բերում է հետևյալ օրինակը. «Ես դերանունն ազերի լեզվով ունի mǎn ձևը, Պուլսում՝ ben: Այս երկուսը միննույն բառերն են: Ո՞րն է սրանցից նախնականը: Որովհետև երկրորդ դեմքի դերանունն է ազերի sǎn, Պուլսի sen «դու», որի հոգնակին է հավասարապես siz «դուք», ուստի առաջին դեմքն էլ «biz» - «մենք»: Մեր ասածը վերջ ի վերջո հաստատում է bi ձևը, որ տունգուսերեն ու մոնղոլերեն նշանակում է «ես»:

«Ես» դերանվան Պուլսի թուրքերեն ben և ազերի լեզվով mǎn ձևերի նախնականը կարող է լինել ben: Երևույթը նույնն է, ինչպես

Պոլիս bin «հազար», ադրբեջաներեն min

Պոլիս burun «քիթ», կիրգիզերեն murun

Պոլիս mahana «պատրվակ», պարսկերեն bahane.,» (նույն տեղում):

Այսպիսով, ինչպես համոզվում ենք, Անատոլիայի թուրքերենը ավելի հարազատ է Պոլսի թուրքերենին, քան ազերիների լեզուն:

Շատ են օրինակները, երբ միևնույն ժողովուրդը միաժամանակ գործածում է մեկից ավելի լեզուներ: Այսպես՝ Շվեյցարիայում, որպես պետական լեզու, միաժամանակ գործածում է չորս լեզու՝ գերմաներենը, իտալերենը, ֆրանսերենը և ռետոռոմաներենը: Իռլանդացիները միաժամանակ օգտագործում են անգլերենն ու իռլանդերենը:

Մորդովացիները խոսում են կառուցվածքով իրարից չափազանց հեռու ուզրոֆիննական երկու լեզուներով՝ մոկշաներեն և էրզտաներեն: Կան ազգեր, որոնք խոսում են մեկ ընդհանուր լեզվով և հակառակը՝ մեկ ազգի «սպասարկում են» մի շարք լեզուներ: Աֆրիկյան 19 երկրներում անգլերենը պաշտոնական լեզու է, չենք խոսում այլևս անգլիացիների, ամերիկացիների, ավստրալիացիների, կանադացիների մասին: Հնդկաստանում, հինդիից հետո, անգլերենն ունի պաշտոնական լեզվի կարգավիճակ: Պորտուգալերենը պետական լեզու է և՛ Պորտուգալիայում, և՛ Բրազիլիայում, իսկ իսպաներենը, բացի «մայր» երկրից, նաև Լատինական Ամերիկայի 20 երկրների պետական-պաշտոնական լեզուն է: Վերջապես, գերմաներենը պաշտոնական լեզու է և՛ Գերմանիայում, և՛ Ավստրիայում: Այս շարքը կարելի է շարունակել: Բայց մի բան պարզ է, որ ազգամիջյան բախումների, տարածքային վեճերի լուծման ժամանակ լեզվական գործոնը վճռորոշ դեր չի կարող խաղալ, քանի որ «մեկ ազգ, մեկ լեզու» կարգախոսը իրեն արդարացնող չափորոշիչ չէ:

Այդ դեպքում հարց է առաջանում, ի՞նչն է էթնոսի որոշիչ հատկանիշը:

Էթնոսը բնութագրող հասարակական կյանքի բաղկացուցիչ հատկանիշներից են՝ 1) տարածքային ընդհանրությունը, 2) միասնական հասարակական-պետական կառուցվածքը, 3) տնտեսական ընդհանուր կենսակերպը, 4) լեզվի, կենցաղի, կրոնի, մշակույթի, հոգեկերտվածքի ընդհանրությունը և այլն: Սակայն նշված հատկանիշներից և ոչ մեկը վճռորոշ դեր չունի: Ասենք, կորեական ազգը տակավին երկու պետություն ունի: Չենք խոսում այլևս մշակույթի ընդհանրականության մասին, քանի որ դրացի ազգերն ու ազգությունները կարող են ավելի մոտ լինել մշակույթով, քան նույն էթնոսի քաղաքային և գյուղական բնակչությունը:

Էթնոսի պարտադիր հատկանիշներից է էթնիկ ինքնագիտակցությունը. այսինքն՝ ազգ կազմող մարդկային խմբերի գիտակցումը, որպես մեկ ազգ:

Ժամանակակից յուրաքանչյուր ազգ ունի իր ազգանունը (էթնոնիմը): Ընդ որում ազգի անունը կարող է ե փոխվել, և կարող է տվյալ ազգը ինքը մի անունով իրեն «նշել», մյուս ազգերը՝ մեկ այլ: Այդպես է հայերի, վրացիների դեպքում՝ հայ-արմեն, Հայաստան-Армения, Грузия - Վրաստան - Georgie, վրացի - грузин և այլն:

Բազմաթիվ երկրներում մարդահամարի ժամանակ ազգության մասին հարցը փոխարինվում է ազգային լեզվի մասին հարցով: Ի միջի այլոց, այդպես էր նաև ցարական Ռուսաստանում, որտեղ 1897 թ. մարդահամարի ժամանակ ազգային պատկանելիության մասին հարց չկար: Այդ հարցը դրվեց 1920-ին, Խորհրդային երկրի առաջին մարդահամարի ծրագրում:

Ինչպե՞ս տարբերել լեզուն բարբառից

Կան լեզուներ, որոնց տարածքային բարբառների միջև եղած տարբերություններն այնքան մեծ են, որ մի բարբառակիր չի հասկանում մեկ այլ բարբառակիր: Նման դեպքերում նրան օգնության է հասնում գրական լեզուն կամ կոյնեն: Այդպիսին է գերմաներեն լեզվի ստորին-սաքսոներեն և բավարական բարբառների միջև եղած «անջրպետը», լիտվերենի ժեմայտի և աուկշայտի բարբառների, կամ՝ չինարենի հյուսիսային և հարավային բարբառների միջև եղած տարբերությունը:

Հաճախ առկա է նաև հակառակ պատկերը, երբ տարբեր լեզուներով խոսողներն իրար ավելի լավ են հասկանում, քան նույն լեզվի տարբեր խոսվածքներով հաղորդակցվողները: Այսպես, առանց «միջնորդի» իրար հիանալի հասկանում են բոլոր թյուրքալեզու հաղորդակցվողները՝ ուզբեկները, թուրքերը և այլն:

Ի վերջո ո՞րն է լեզվի և բարբառի տարբերակման ստույգ չափանիշը: Որպես չափանիշ մնում է հանրության լեզվական ինքնագիտակցությունը: Միայն խոսողների ինքնաբնութագրումն է վճռորոշը, թե ինչ լեզվով են իրենք խոսում:

Լեզվի կարգավիճակը ճշգրտելու հարցում հանրալեզվաբանական գրականության մեջ հաճախ է շեշտվում, որ կառուցվածքա-լեզվաբանական չափանիշներն այնքան էական չեն, որքան տվյալ հանրային խմբի անդամների «ըմբռնումը» իրենց լեզվական որակի մասին: Թե քաղաքագետները, թե լեզվաբանները ստիպված են ընդունել մարդկային այս կամ այն խմբակցության իր իսկ հաղորդակցման միջոցին տրված գնահատականները՝ առանձին լեզու է, բարբառ, թե՞ խոսվածք: Այս հարցը դիտարկվել է նաև Ա. Մարգայանի «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» մենագրության առաջաբանում՝ կախված այն խնդրից, թե արևելահայերենը, արևմտահայերենը գրական լեզուներ են, գրական լեզու՝ և բարբառ են, թե գրական

լեզվի երկու տարբերակներ (Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, էջ 6-8, հմմտ. նախորդ բաժինը):

Նիգերիայում, որ Աֆրիկայի ամենամեծ բնակչությունն ունեցող երկիրն է (բնակչության թիվն անցնում է 80 միլիոնից), նվազագույնը գործառույթ է 200 լեզու, իսկ որոշ հաշվարկներով լեզուների թիվը հասնում է 500-ի, սակայն երկրի հիմնական լեզուները երեքն են՝ յորուբա, իբո և հաուսա: Այս երեք լեզուներով խոսում է Նիգերիայի բնակչության ուղիղ կեսը: Հենց յորուբան, իբոն և հաուսան գրական ավանդույթներով, գրավոր մշակույթ ունեցող համազգային լեզվի կարգավիճակի են ձգտում: Ներկայումս անգլերենը Նիգերիայի պետության պաշտոնական լեզուն է: Իսլամական կրոնի պայմաններում երկրում գործառույթ է նաև դասական արաբերենը: Հետաքրքրական է, որ այդքան խայտաբղետ լեզվական պատկեր ունեցող երկրում շրջանառության մեջ է դրված «մեկ պետություն - մեկ ազգ - մեկ լեզու» կարգախոսը:

Իմիջիայլոց, առ այսօր ճշգրտված չէ աշխարհում գործառող լեզուների թիվը: Այն տվյալները, որ բերված են Հր. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների» բազմահատորյակում և Է. Աղայանի «Լեզվաբանության ներածություն» դասագրքում՝ շուրջ 2500 լեզուներ, այսօր խիստ ճշգրտման կարիք ունեն: 30 տարի առաջ Մոսկվայում լույս տեսած «Աշխարհի լեզուներն ու բարբառները» ուղեցույցում տրված է 30000 լեզու և բարբառ թիվը: Ս. Բրուկի այս տեղեկատուն ապացույց է այն բանի, որ լեզուն, իրոք, դադարում է էթնիկ բնութագրման վճռորոշ գործոն լինելուց: Ասվածի ապացույց կարող է ծառայել նաև «Խորհրդային մեծ հանրագիտարանի» երրորդ հրատարակության մեջ բերված տվյալը, ըստ որի աշխարհի լեզուների թիվը հասցվում 15000-ի: Մինչդեռ ըստ Ա. Բրուկի տեղեկատուի, աշխարհի ժողովուրդների թիվը տատանվում է 1300-ի շուրջ: Մասնագետները կարծում են նաև, որ հետագայում ավելի ևս մեծանալու է ազգերի և

ժողովուրդների թվային անհամապատասխանության աստիճանը, քանի որ էթնիկ խմբավորումները դրսևորում են տևականորեն «խոշորանալու» միտումներ:

Ավստրալիայում և Հյուսիսային Կովկասի լեռնային տարածքներում հանդիպում ենք հետևյալ հետաքրքրական պատկերի: 19-րդ դարում Ավստրալիայի 300 հազար տեղաբնիկներ խոսել են շուրջ 500 լեզվով, միջին հաշվով 600 մարդուն մեկ լեզու, գրեթե այնքան, ինչքան առկա է կովկասյան լեռնցիների աուլներում, որտեղ յուրաքանչյուր աուլ իր հատուկ լեզուն ունի: Թերևս մասամբ դա է պատճառը, որ մեծավաստակ գիտնական Նիկոդայոս Մառը, երբ հրատարակում է «Լազերենի քերականություն» գիրքը, պարզվում է, որ այս սվաներենի քերականություն է (գիտնականը պարզապես աուլն էր խառնել...):

Լեզվամշակութային ներթափանցումներին նպաստում են զանգվածային հաղորդակցման միջոցները: Այդուհանդերձ, երրորդ աշխարհում գերակշռում են բազմալեզու և տարալեզու պետությունները, որոնցում մեր ժամանակներում ազգամիջյան բախումները գլուխ են բարձրացնում: Խոսքը ոչ միայն անդրկովկասյան և այսրկովկասյան տարածքների մասին է, այլև, ասենք, Աֆրիկայի, որտեղ թրայբոլիզմը (ցեղային թշնամանքը), Հնդկաստանի՝ անջատողականությանը տևականորեն ազգամիջյան մակարդակի են բարձրանում՝ պատճառ դառնալով նորանոր հրահրումների և թեժ կետերի ստեղծման: Ինչպես շեշտվում է հանրալեզվաբանական գրականության մեջ, միջէթնիկական հակամարտություններում ճակատագրական անխուսափելիություն գոյություն չունի: «Ազգային բնակարաններում» տարանջատվելը դժվարացել է. թե՛ աշխարհն է «փոքրացել», թե՛ մեծացել է բնակչության տեղաշարժը, փոխպայմանավորվել շրջակա միջավայրի և էթնոսների գործունեությունը: Ուստի առաջանում է փոխզիջումների, համբերատարության անհրաժեշտություն «մրցակից» ազգերի միջև՝ ներառելով թե՛ առհա-

սարակ տարբեր մշակույթներ, թե՛ լեզվական մշակույթի տեր մարդկային համայնքներ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), Հելսինկյան ակտը (1975 թ.), Նոր Եվրոպայի փարիզյան խարտիան (1990 թ.) գերապատվությունը տալիս են մարդու իրավունքներին, այն վեր դասում ազգերի և պետությունների իրավունքից: Յուրաքանչյուր անհատ պետք է չեզոք դիրք որդեգրի այլ ազգությունների ներկայացուցիչների հանդեպ, այլապես ամեն ինչ կուղղորդվի դեպի սովորական ֆաշիզմ, որը դուռ կբանա նոր արյունահեղությունների և առհասարակ մարդկությանը կտանի դեպի վերջնական փակուղի:

Էթնոլեզվական ինքնատիպությունը ստանդարտացման և գլոբալացման դեմ

2-րդ հազարամյակի ավարտին և նոր դարաշրջանի սկզբում հատկապես Եվրոպայում թափ առավ ազգային-էթնիկական խմբերի «զարթոնքը»: «Թափանցիկ» պետական սահմանների առկայությունը, ապակենտրոնացված կառավարումը, տեղերի՝ փոքրաթիվ ազգերով և ազգություններով բնակեցված վայրերի ձեռք բերած կարևորությունը հանգեցնում են «եվրոպական պետություններ»-ի փոխարեն նոր՝ «եվրոպական շրջաններ» ըմբռնման իշխելուն: Էթնոլեզվական իրավունքների պաշտպանությամբ առաջին հերթին հանդես են գալիս մտավորականները, ազգային լեզվին քաջահմուտ տիրապետողները, մշակույթի աշխարհի մարդիկ: Շատ դեպքերում բարձրանում է լեզվի կարգավիճակը: Այդպես, Իսպանիայում կատալոներենն ու գալիսերենն են բարձրացրել իրենց լեզվական կարգավիճակը՝ իսպաներենի համեմատությամբ, ֆարյերենը՝ Ֆարերյան կղզիներում (Դանիա), ֆրիզերենը (Նիդեռլանդներում): Ա.Դուլյչենկոն Հարավսլավիայի տասնյակ լեզուներում նույն երևույթը գնահատելիս կիրառում է «գրական միկրոլեզուներ» տերմինը: Առհասարակ մեր օրերում փոքրաթիվ խոսողներ ունեցող լեզուները

ճգնում են գոյատևել երկլեզվության պայմաններում: Այդ վիճակն է առկա բասկերենի պարագայում, որ հնդեվրոպականին ոչ ցեղակից հնագույն լեզուներից է (բռնապետ Ֆրանկոյի իշխանության շրջանում բասկերենն արգելված էր, ուստի բասկերի մի զգալի մաս կորցրեց իր մայրենի լեզուն): Միայն 1978 թ., իսպաներենին զուգահեռ, բասկերենը բասկերի ինքնավար երկրամասում ստացավ պաշտոնական լեզվի կարգավիճակ:

Հատուկ պաշտպանության տակ են առնված բրետոներենը՝ Ֆրանսիայում, վալլերենը՝ Ուելսում, գելլերենը՝ Շոտլանդիայում:

Առանձնահատուկ դեպք է այն, որ որևէ ազգային փոքրամասնության էթնիկ լեզու մեկ այլ հանրություն կարող է հանդես գալ իբրև մեծամասնության լեզու: Տիպական օրինակ է Կանադայի Քվեբեկում ֆրանսերենը, ԱՊՀ երկրներում՝ ռուսերենը, շվեդերենը՝ Ֆինլանդիայում և այլն:

Հանրալեզվաբանության համար բացառիկ օրինակ է իվրիտի վերակենդանացումը Իսրայելում: Դասական եբրայերենը «կենդանացավ» հատուկ ծրագրված լեզվաքաղաքականության միջոցով, ընդ որում միանգամայն այլ լեզվաընտանիքից, քան իդիշն էր: Իվրիտը երկրորդ կյանք ստացավ, թեև ոչ թե ծնողների «մայրական» լեզու էր, այլ պապերի գրքի լեզու: Շուրջ երկու հազար տարի առաջ դադարելով լինել խոսակցական լեզու՝ իվրիտը 20 դար անց՝ 1948-ին դարձավ Իսրայել պետության պաշտոնական լեզուն:

Լեզվավիճակներ, բազմալեզվություն, միջնորդ լեզուներ.

Լեզվական իրավիճակների տարբերակիչ հատկանիշները

Ամբողջ աշխարհում ծավալվել են ստանդարտացման և գլոբալացման երևույթները, որոնք, թվում է, պիտի նպաստեին ոչ միայն նեղ-տարածքային լեզուների ձուլմանը, այլև ազգային-պետական լեզուների թուլացմանը, տկարացմանը, մինչդեռ այդ

գործընթացներին ի հակակշիռ անհատական, մշակութային առանձնահատուկ, դեպի «արմատներ» տանող զարգացումները աստիճանաբար ավելի ու ավելի են ծավալվում: «Մայրենին» առաջին պլան է մղվում աշխարհի տարբեր հատվածներում, և դա բնական է, քանի որ մարդու աշխարհընկալումը սկսվում է մայրական կաթից, մայրենի բարբառից: Ըստ Մ. Հայդեգերի՝ «կեցության, տուն» հանդիսացող մայրենի լեզուն դառնում է էթնիկ ինքնությունության խորհրդանիշ, նույն լեզվով խոսող զանգվածը միավորելու միջոց, սերունդների հաղորդակցման «շղթան» ամուր պահող պայման:

Լեզվական իրավիճակները սահմանվում են որպես լեզվական կազմավորումների, իմա՝ լեզուների և լեզվական տարբերակների (բարբառ, գործառական ոճեր, ժարգոններ և այլն) ամբողջություններ, որոնք սպասարկում են այս կամ այն հանրույթը (էթնոսը, բազմաէթնիկ կազմավորումը) որոշակի տարածքի, քաղաքական-տարածքային միության կամ պետության սահմաններում (տե՛ս Ն. Մեչկովսկայա, էջ 101):

Լեզվական իրավիճակը հանրալեզվաբանության քննության առարկաներից է և, որպես երևույթ, բազմահատկանիշ և բազմապլան է, ընդ որում հատկանիշները ոչ ստորակարգային են և տարամետ: Ասվածից բխում է, որ գրեթե անհնար է աշխարհի լեզուները բնորոշող բոլոր իրավիճակների բազմահատկանիշ դասակարգումը, որ հաշվի առնի միասնական դասակարգման մոտեցումը: Դա բնավ չի նշանակում, թե հնարավոր չէ նրանց լուսաբանումը տիպաբանական էական հատկանիշների հիմքով. N4 աղյուսակից հետո տրվում են մի շարք լեզուների և պետական կազմավորումների փոխհարաբերությունների տիպական օրինակներ:

Աղյուսակ 4

(Աղյուսակը բերվում է ըստ Ն.Մեչկովսկայայի դասագրքի, էջ 101)

N	Լեզվական իրադրության (ԼԻ) տիպաբանական հատկանիշը և նրա հանրալեզվաբանական իմաստը	Տիպի հակադրությունը և օրինակը
1	Լեզվական գոյացությունների քանակը՝ լեզվական բազմազանության աստիճանը	Միաբաղադրիչ ԼԻ (Բսլանդիա), բազմաբաղադրիչ (Հունգարիա, Ֆինլանդիա)
2	Էթնիկ լեզվական կազմավորումների քանակը, որոնք կազմում են ԼԻ (լեզվական իրադրություն, էթնոլեզվական բազմազանություն)	Միալեզու բազմաբաղադրիչ (Հունգարիա), բազմաբաղադրիչ երկ-եռա-քառա-հնգալեզու լեզվական իրադրություն (Ֆինլանդիա)
3	Յուրաքանչյուր լեզվով խոսող բնակչության տոկոսը, իմա՝ լեզուների ԼԻ հարաբերական ազգագրական հզորությունը	ԼԻ ազգագրական հավասարակշռություն (Բելգիա), ազգագրական անհավասարակշռություն (Բսպանիա)
4	Հաղորդակցական գործառույթների քանակը, որ իրականացվում է ամեն մի լեզվակազմավորմամբ՝ հարաբերությամբ այնպիսի գործառույթների ընդհանուր ք. այսինքն՝ ԼԻ բաղադրող լեզվական գոյացությունների հարաբերական հաղորդակցային հզորությունը	Հավասարակշռված (հաղորդակցային հավասարակշիռ) ԼԻ (Բելգիա), չհավասարակշռված (հաղորդակցային առումով անհավասարաբաշխ, ԼԻ (Բսպանիա)
5	Լեզուների իրավաբանական կարգավիճակը, այսինքն՝ պետական ռեգլամենտացիան, նրանց հարաբերությունների բնույթը	Համարժեք իրավաբանական կարգավիճակ (Շվեյցարիա, Բելուռուս), տարբեր կարգավիճակ (Կատալոնիա)
6	ԼԻ կազմող լեզուների ծագումնաբանական մերձակցության աստիճանը	Մերձցեղակից երկլեզվություն (Բելուռուս, Ուկրաինա, Չեխիա, Սլովակիա, Հարավսլավիա՝ բելուռուս-լեհական երկլեզվություն), Լեհաստանում-ոչ մերձցեղակից (Բելգիա) և ոչ ցեղակից (Ֆինլանդիա)
7	Տվյալ ԼԻ-ում հարգի լեզվի էթնիկ հիմքը հանդիսանում է, արոյք, տեղական լեզուներից մեկը, այսինքն՝ բնիկ բնակչության մի մասի մայրենի լեզուն	Էնդոգլոտիան ԼԻ-ի (եկեղեցանական սլավոնական լեզուն բուլղարների և մասամբ սերբերի մոտ մինչև 17-րդ դարը Եվրոպայում)-էկզոգլոտիան (լատիներենը միջնադարյան Եվրոպայում, եկեղեցասլավոնական լեզուն հարավային սլավոնների մոտ մինչև 17-րդ դարը)

8	<p>Հանրույթի կողմից գոյակցող լեզուների վարկի գնահատում: Տարբեր վարկեր - հարաբերաբար հավասար վարկեր</p>	<p>Դիզլոսիա, այսինքն՝ այնպիսի միջավայր, որի հատկանիշներից մեկը հանդիսանում է լեզուների հակադրությունը ըստ վարկի (եկեղեցապալա-վոնական - ռուսական երկլեզվությունը Մոսկովյան Ռուսիայում մինչև 16-րդ դար)- ոչ դիզլոսիա հանդիսացող երկլեզվություն (Ֆինլանդիա)</p>
---	--	--

1. Իսլանդերեն խոսում է երկրի բնակչության 99 տոկոսը, ընդ որում բարբառներ գրեթե չկան, գրական և առօրյա-խոսացական լեզուների միջև տարբերություններ գոյություն չունեն: Այսպիսով՝ մեկ ազգային լեզուն ունի մեկ գոյաձև: Իհարկե, կա, այսպես կոչված, նվազագույն երկլեզվություն, հատուկ կրթությամբ մարդիկ լայնորեն կիրառում են անգլերենը:

2. Հունգարերեն խոսում է Հունգարիայի բնակչության 99,4%-ը: Հունգարերենն ունի գրական լեզվին հակադրվող 8 բարբառ:

3. Ֆինլանդիայում առկա է երկու պետական լեզու՝ ֆիններենը և շվեդերենը, ըստ որում երկրի բնակչության 91%-ը ֆիններ են և միայն 6%-ը՝ շվեդներ:

4. Բելգիայում երկու պետական լեզու կա՝ ֆրանսերեն և ֆլամանդերեն (նիդեռլանդերեն):

5. Իսպանիայում կա մեկ պետական լեզու (իսպաներեն) և երեք պաշտոնական (կատալոներեն, գալիսերեն, բասկերեն), որով խոսում է երկրի բնակչության ընդամենը 2,4%-ը:

6. Շվեյցարիայում կա չորս պետական լեզու (գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, ռետոռոմաներեն):

7. Բելոռուսում երկու լեզու է գործում նույն կարգավիճակով ռուսերեն, բելոռուսերեն:

8. Գանայում պետական լեզուն անգլերենն է:

9. Կամերունում երկու պետական լեզու կա՝ ֆրանսերեն և անգլերեն:

10. Հնդկաստանում պաշտոնական լեզուները երկուսն են՝ անգլերենն ու հինդիին: Անգլերենը ժամանակավոր պաշտոնական լեզու է:

11. Տանգանիայում երկու պետական լեզու կա՝ սուահիլին և անգլերենը:

Հանրալեզվաբանական մոտեցումները Անդրկովկասի երեք հանրապետություններում:

Հանրալեզվաբանական մոտեցումներով Անդրկովկասի պետական կարգավիճակ ունեցող լեզուների փոխհարաբերության, մրցակցության, երկլեզվության և բազմալեզվության հարցերը դիտարկվել են մի շարք լեզվաբանների աշխատանքներում. ադրբեջաներենի և տարածաշրջանում առկա լեզուների փոխհարաբերության հարցերը ներկայացվել են Ա. Սալանովի «Азербайджанский язык в орбите языкового взаимодействия» հանրալեզվաբանական հետազոտության մեջ: Գրքում նախ և առաջ դիտարկվում են Ադրբեջանում պատմական տարբեր դարաշրջաններում լեզուների գործառության իրավիճակները և կատարված գործընթացներն ու զարգացումները: Հեղինակը հատկապես ուշադրություն է դարձնում խորհրդային շրջանում հանրապետությունում ազգամիջյան հարաբերությունների հարցերին, հատկապես՝ ազգային լեզու-ռուսերեն երկլեզվության և բազմալեզվության տարբեր դրսևորումներին; Ընդ որում ազգային լեզու-ռուսերեն երկլեզվության տակ Ա. Սալանովը նկատի է ունենում ադրբեջաներեն-ռուսերեն, հայերեն-ռուսերեն, լեզգիերեն-ռուսերեն, ուտիերեն-ռուսերեն, ցախուրերեն-ռուսերեն երկլեզվության դրսևորումները: Գրային մշակույթից զուրկ լեզուների դեպքում ադրբեջանցի հանրալեզվաբանը առանձնացնում է բազմալեզվության հետևյալ տիպերը, բուդուխերեն-ադրբեջաներեն-ռուսերեն, թաթերեն-ադրբեջաներեն-ռուսերեն, ուտիերեն-հայերեն-ադրբեջաներեն-ռուսերեն և այլն: Հեղինակը պարզում է այն գործընթացները, որոնք հանգեցրել են

բազմալեզվության տարբեր տիպերի կրճատման: Ընդ որում գրային մշակույթ չունեցող լեզվակիրները գերազանցապես անցում են կատարել դեպի աղբրեջաներեն:

Ա. Ասլանովը դիտարկել է փոքրաթիվ ազգությունների մասնակցության տեղն ու դերը լեզվահամալսման գործընթացներում: Հետաքրքիր է հեղինակի այն եզրակացությունը, ըստ որի՝ լեզվական համակենտրոնացման գործընթացը շատ ավելի դանդաղ է կատարվել, քան էթնիկականը:

Անցյալ դարի 20-ական թվականներից Աղբրեջանում լայնորեն գործառում էին նաև ռուսերենը, հայերենը, վրացերենը, լեզգիերենը և այլն: Աղբրեջանում, համաձայն խորհրդային հանրապետության սահմանադրության պետական լեզուն աղբրեջաներենն է: Ինչպես նշում է Ա. Ասլանովը. «Աղբրեջաներենի զարգացման հիմնական առանձնահատկությունը նշված փուլում ներկառուցվածքային զարգացումն է և աստիճանական ազատումը թուրք-օսմանական և արաբա-պարսկական ազդեցությունից» (Ա. Ասլանով, նույն տեղում, էջ 66):

Գրական աղբրեջաներենի ներկառուցվածքային զարգացումը իր հերթին ներագդել է այդ հանրապետության տարածքում գործառող թալիշերենի, թաթերենի, ուտիերենի, ավարերենի, քրդերենի և այլ լեզուների վրա: Հաշվի առնելով փոքրաթիվ լեզուների բարդ պատկերը՝ աղբրեջանցի հանրալեզվաբանը հատկապես դիտարկում է հանրապետության տարածքում գործառող լեզուների երկու տիպ՝ ա) բուն գրական լեզուների փոխհարաբերություն և բ) գրական-գրավոր և այբուբեն չունեցող լեզուների փոխհարաբերություն: Ա. Ասլանովի որդեգրած մոտեցմամբ Աղբրեջանում գործառող 4 գրական լեզուները՝ աղբրեջաներեն, ռուսերեն, հայերեն, վրացերեն, բաժանվում են երկու խմբի՝ ա) հնագույն գրավոր մշակույթ ունեցող լեզուների՝ հայերեն և վրացերեն, բ) հին գրավոր լեզվական մշակույթ ունեցող լեզուների՝ ռուսերեն և աղբրեջաներեն: Ընդ որում, էթե հայերենը և վրացերենը պատկանում են քրիստոնեական

մշակութային դաշտին, ապա ադրբեջաներենը ենթարկվում է իսլամական ավանդույթին:

Հետաքրքիր է նաև հետևյալ դիտարկումը, թեև դարերի ընթացքում հայերենը, վրացերենը և ադրբեջաներենը գործառնվեն միևնույն հարավկովկասյան տարածքում, նրանց միմյանց վրա թողած ազդեցությունը ավելի փոքր է, քան ռուսերենի ազդեցությունը այդ երեքի վրա: Թեև հայալեզու և վրացական գրական հուշարձանները շատ ավելի հին են ադրբեջանականից, սակայն, ինչպես կարծում է Ա. Ասլանովը, նրանց ազդեցությունը ադրբեջաներենի վրա ավելի թույլ է արտահայտվել, քան հակառակը: Իրոք, նշված լեզուների միջև կատարված փոխառությունների տեսակարար կշիռը բոլոր դեպքերում զիջում է ռուսերենից կատարված փոխառությունների քանակին: Երեք հանրապետություններում էլ գոնե խորհրդային յոթ տասնամյակների ընթացքում անվիճելի է համարվել այն դրույթը, որ ռուսաց լեզուն ոչ միայն հարստացրել է հայերենը, ադրբեջաներենը և վրացերենը, այլև ծառայել է որպես ազգամիջյան հաղորդակցական լեզու:

Ադրբեջանում գործառող փոքրաթիվ լեզուները դասակարգվում են հետևյալ ցեղակից լեզվախմբերի միջև՝ իբերոկովկասյան լեզվախմբին պատկանում են ցախուրերենը, ուտիերենը, բուդուխերենը, խինալուխերենը, ավարերենի զաքաթալական բարբառը, հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանում են՝ թալիշերենը, թաթերենի Ղուբայի բարբառը, քրդերենի բարբառները: նշված փոքրաթիվ լեզուները, լեզվաքաղաքականության մշակված ծրագրով՝ աստիճանաբար զիջել են ադրբեջաներենին: Եթե համեմատենք 1959, 1979 և 1999 թվականների Ադրբեջանում անցկացված մարդահամարի տվյալները, ապա կտեսնենք, որ փոքրաթիվ էթնիկ միավորումները պարզապես վերացել են: Ընդ որում նախորդ մարդահամարում ներկայացված շուրջ 200 հազար քրդերից «ոչ մեկը չի մնացել» (տե՛ս մարդահամարի տեղեկատուները):

Իրերոկովկասյան լեզուներ

Իրերոկովկասյան լեզուները հիմնականում գիր չունեցող են և նրանից շատերի (անդական, բուդուխական, ուբրխական, սվանական և այլն) քերականությունը քիչ թե շատ ծավալուն ակնարկների ձևով ռուսերենով տրվել է առաջին անգամ «Языки народов СССР»-ի 4-րդ հատորում, որը նվիրված է իրերոկովկասյան լեզուներին «Иберийско-кавказские языки, М., 1967):

Իրերոկովկասյան կամ պարզապես կովկասյան լեզուների մեջ չեն մտնում, բնականաբար, ոչ հնդեվրոպական լեզուները (հայերենը, քրդերենը, թալիշերենը, թաթերենը, օս(ետին)երենը), ոչ թյուրքական լեզուները (ադրբեջաներենը, կարաչանո-բալկարերենը, կումիկերենը, նոգայերենը), ոչ էլ առանձին, Կովկասում տարածում գտած լեզուները:

Իրերոկովկասյան բոլոր լեզուները բաժանվում են չորս ճյուղի, ա) աբխազ-ադրգեական, բ) քարթվելական, գ) նախական, դ) դադստանյան: Մեկ այլ մոտեցմամբ՝ վերջին երկու ճյուղերը միավորվում և կազմում են մեկ՝ նախա-դադստանյան կամ հարավկովկասյան լեզվաճյուղը՝ ի հակակշիռ քարթվելականի, որը կոչվում է նաև հարավկովկասյան, և աբխազադրգեականի կամ արևմտակովկասյանի: Աբխազադրգեական նախա-դադստանյան լեզուները պայմանականորեն կոչվում են նաև լեռնային կովկասյան լեզուներ՝ ինչպես նաև հյուսիսկովկասյան լեզուներ, տարբերակվելով քարթվելական լեզվաճյուղը կազմող լեզուներից, որոնք կոչվում են նաև հարավկովկասյան լեզուներ:

Կովկասյան լեզուները ժամանակի ընթացքում այնքան են հեռացել իրարից, որ, հակառակ նրանց զուգադրական, պատմա-համեմատական բազմաթիվ հետազոտությունների, ցեղակցությունը գիտական բարձր մակարդակով արտացոլող աշխատանքներ տակավին հրապարակի վրա չկան: Եվ դա օրակարգային ամենահրատապ հարցն է կովկասյան լեզուների քննությամբ զբաղվող գիտության համար, որն իրականացնելու համար ամենից առաջ ոչ միայն ջանքեր են պետք, այլև, առաջին հերթին,

հետազոտության հատուկ մշակված մեթոդիկա, ծագումնաբանական ընդհանրությունն ապացուցող «կորած» օղակները վերականգնող մեթոդներ և այլն:

Ինչպես նկատել են Ե. Ա. Բոկարեն և Գ. Ա. Կլիմովը, շատ ավելի աղոտ են պատկերանում կովկասյան լեզուների արտաքին ցեղակցային կապերը: Միշտ չէ, որ կոնկրետ այս կամ այն լեզվի որևէ խմբի մեջ մտցնելը ընդունվում է բոլոր կովկասագետների կողմից հավասարապես: Այս հարցում միասնական ավանդույթներ չկան: Այսպես, օրինակ, լուրջ կասկածներ և առարկումներ են հայտնվել Ռ. Շահումյանի, Յու. Դեշերինի կողմից:

Աբխազ-ադրգեական լեզուները բաժանվում են երկու հիմնական խմբի ա) աբխազ-աբազինական (աբխազերեն և աբազիներեն լեզուների) և բ) ադրգեական (ադրգեերեն, կաբարդիներեն և չերքեզերեն լեզուների): Կարծես թե միջակա դիրք է գրավում աբխազերենը, որը երբեմն դիտվում է իբրև առանձին ենթախումբ:

Քարթվելական խմբի մեջ ներառվում են երեք լեզուներ՝ վրացերեն, զաներեն (կամ մեգրելա-զաներեն) և սվաներեն: Ն. Մառը, Կ. Դոնդուան և ուրիշներ այն կարծիքն են հայտնել, թե զաներենը մեգրելերենի և զաներենի ամբողջականությունն է:

Նախերեն խմբի մեջ մտնում են չեչեներենը, ինգուշերենը, ինչպես և Վրաստանի տարածքում գտնվող բիցբիերենը: Այս խմբի դասակարգման, ենթախմբերի կազմի և անվանումների հարցում մեծ են տարակարծությունները: Երբեմն առանձին լեզվի կարգավիճակով հանդես եկող լեզուները դիտվում են որպես մեկ լեզվի բարբառներ: Եթե աբխազ-ադրգեերեն լեզուներով երեքուկես տասնամյակ առաջ խոսում էր ընդամենը 400 հազար մարդ, ապա քարթվելերեն լեզուներով խոսողների թիվը նույն ժամանակ կազմում էր 2 միլիոն 600 հազար մարդ: Իր քանակով միջին դիրք են գրավում նախերեն-դադստանյան լեզուները (շուրջ 1,5 միլիոն մարդ): Այս լեզուներով հաղորդակց-

վում են Չեչնիայում, Ինգուշեթիայում, Դաղստանում, ինչպես նաև հարակից Ադրբեջանի և Վրաստանի տարածքներում:

Կովկասյան լեզուների մեջ, բացի վրացերենից, մյուս լեզուները գրավոր հնագույն ավանդույթներ չունեն:

Լեզվական իրադրությունները ինչու՞ են հազվադեպ հավասարակշռված

Ե՛վ մենալեզու, և՛ բազմալեզու իրավիճակները հազվադեպ են պատահում հավասարակշռված: Գրական լեզվի ձևավորած վիճակը կազմում է լեզվական ենթակա համակարգերից բաղկացած մի ստորակարգություն, որի գագաթին լեզվի կանոնարկված գրական տարբերակն է:

Իրավաբանական հավասարագորությունը դեռ չի նշանակում, տվյալ լեզուների փաստացի հավասարագորություն: Շվեյցարիայում ռետորոմաներեն խոսում է երկրի բնակչության 1 %-ը (50 հազար մարդ), սակայն այն պետական լեզու է, մինչդեռ հարևան Իտալիայում 720 հազար ռետորոմանցի է ապրում, բայց ռետորոմաներենը համարվում է իտալերենի բարբառ:

Ա. Մարտինեի, Բ. Հավրանեկի և այլոց կարծիքով երկու լեզուների լրիվ և ինքնուրույն (առանց լեզուների խառնման) տիրապետելը գերազանցում է սովորական մարդու հոգեկան հնարավորությունները (տե՛ս Новое в лингвистике, պրակ 6, 1972, էջ 84-85): Թեև լեզվաբանությանը հայտնի է, ի թիվս այլ հետազոտությունների, ֆրանսիացի գիտնական Ժ. Ռոնժայի շուրջ 90 տարի առաջ լույս ընծայած մի չափազանց ուշագրավ աշխատանքի արդյունքը (այս աշխատանքին հանգամանորեն անդրադարձել է Հր. Աճառյանը իր նշանավոր «Չայոց լեզվի լիակատար քերականության» ներածության հատորում. տե՛ս անդ): Այս հետազոտությանը երկլեզվության բնույթը բացատրող հիանալի օրինակ կարող է ծառայել: Ժ. Ռոնժան իր արու գավակի հետ միշտ խոսել է ֆրանսերեն, առանց «խառնելու» այն գերմաներենով, որն իր կնոջ մայրենի լեզուն էր: Գերմանախոս

մայրն էլ իր հերթին որդու հետ հաղորդակցվել է միմիայն գերմաներենով: Եվ փոխնիփոխ, մեկ այս, մեկ այն լեզվով խոսող միջավայրի փոխարեն, երեխան մեծացել է իդեալական երկլեզվության շրջանում: Արդյունքում երեխան կատարյալ ճշգրտությամբ և անթերի մաքրությամբ խոսել է երկու լեզուներով հավասարապես: Տղայի ուղեղում այդ լեզուները առանձին-առանձին ունեցան իրենց ձևերը՝ յուրահատուկ բառարանով և քերականությամբ: Հր. Աճառյանն, անդրադառնալով այս բացառիկ փորձին, եզրակացրել է. «Երկու լեզուների միասնական ուսուցումը ոչ ուշացրեց և ոչ էլ դանդաղեցրեց. «երկու լեզվի ուսուցում»: Եվ երեխան երկու լեզուներն էլ սովորեց այնքան ժամանակում, որքան որ պետք էր մի լեզու սովորելու համար: Այսպիսով հաստատվում է, որ՝ 1) բազմալեզու անձանց մոտ ամեն մի լեզու առանձին տեղ ունի և մյուսների ազդեցության ենթակա չէ, 2) լեզուների խառնուրդ գոյություն չունի, 3) եթե երկու լեզուներից մեկն ու մեկը տեղի է տալիս կամ ջնջվում է, գա արդյունք է հասարակական պայմանների» (Հր. Աճառյան, ԼՔՀԼ, Ներածություն, էջ 421):

Տարածված կարծիք է, որ երկլեզվությունը մտքի ծանրաբեռնում է, քանի որ հասարակական պահանջմունքին համապատասխան նրանցից մեկը ի վերջո պետք է իր տեղն ու դերը զիջի մյուսին:

Խոսողի լեզվագիտակցության մեջ առանձին գծեր սխալմամբ նմանեցվում են մայրենի (հիմնական) լեզվի կառուցվածքին: Տեղի է ունենում երկու լեզվական համակարգերի վտիներթափանցում (ինտերֆերենցիա), այսինքն նրանց մասնակի նմանեցում և խառնում, որը հանգեցնում է սխալների (երբեմն՝ մեկ, երբեմն՝ երկու լեզուներում):

Փոխներթափանցումը կարող է դրսևորվել լեզվի բոլոր մակարդակներում. այսպես՝ հնչյունաբանության մեջ՝ արտասահմանյան առոգանությամբ, ձևաբանության, շարահյուսության, բառապաշարի մեջ: Ընտանիքում, որպես երկլեզվյան

միջավայր, սովորաբար գերակշռում է մեկ լեզու, հակառակ այն բանի, որ ընտանիքի բոլոր անդամները կարող են հավասարապես խոսել թե մեկ, թե մյուս լեզվով: Հաղորդակցման ժամանակ կարող է ընտրվել երկլեզվյան տարբերակներից մեկն ու մեկը՝ կախված իրադրությունից, թեմայից, գրուցակցից: Հր. Աճառյանն այս կապակցությամբ վկայում է սրանից շուրջ մեկ դար առաջ պոլսահայերի երկլեզվության հետևյալ ինքնատիպ երևույթը. «Երբ իրար որևէ հեքիաթ կամ անեկդոտ էինք պատմում... խոսակցությունները լինում էին երկու լեզվով: Երբ խոսակիցները սովորական անձեր էին և կամ հատկապես հայ (տերտեր, վարդապետ և այլն), խոսում էինք հայերեն լեզվով, իսկ եթե նրանք թյուրք էին (օրինակ՝ մուլլա, տերվիշ, զինվոր...), խոսում էինք թյուրքերեն, որի հետ միաժամանակ տալիս էինք հայերեն թարգմանությունը օրինակ. «Թագավորը կըսէ քի - Սէն քիւ սեն, տուն վո՞ւ էս»: Ան ալ կըսէ քի՝ Պէն սէնին քըզըն ըւ - էս քուկիդ աղջիկն էմ» և այլն» (Հր. Աճառյան, էջ 423): Այդպիսով տեղի է ունենում լեզուների տարբերակայնացում:

Մերձցեղակից երկլեզվության ստորջրյա «խութերը»

Մերձցեղակից երկլեզվության իրադրության դեպքում անհատը դյուրությամբ է յուրացնում ոչ մայրենի լեզուն, այն էլ բավական ընդգրկուն ծավալով: Հայտնի փաստ է, որ նման տիպի տարբեր լեզուներով խոսողներն առանց թարգմանչի հասկանում են իրար: Տիպական է այս առումով Բելոռուսի օրինակը: Այս երկրի ազգային ժողովում երկլեզվյան հաղորդակցումը սովորական երևույթ է: Մամուլն անգամ երկլեզվյան է: Թերթերը («Народная газета», «Добрый вечер» և այլն) լույս են տեսնում երկու լեզուներով՝ ռուսերեն, բելոռուսերեն:

Մերձցեղակից լեզուների ուսուցումն արդյունավետ իրագործելու համար պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնել նրանց տարբերությունների բացահայտմանը: Ինչքան մոտ են ցեղակից լեզուները, այնքան ավելի մեծ կարևորություն են ձեռք բերում անգամ աննշան լեզվական տարբերությունները:

Դիզլոսիան որպես «անհավասարակշիռ» երկլեզվության հատուկ տեսակ

Դիզլոսիայի երևույթը ռուսաց գրական լեզվի պատմության մեջ հատկապես ուսումնասիրել են Բ. Ուսպենսկին, Ա. Իսաչենկոն և ուրիշներ: Ուսումնասիրողներն առանձնացնում են երկու տեսակ. 1) Գործառույթների այնպիսի բաշխում, երբ մի լեզուն գործածվում է «բարձր» ոլորտում (եկեղեցի, գիտություն, կրթություն և այլն) և չի գործառվում առտնին հաղորդակցման մեջ, 2) Երկրորդ լեզուն ընդհակառակը, հանդես է գալիս միայն առօրյա խոսակցության ժամանակ: Դիզլոսիան հատուկ է մանավանդ արաբական երկրներին: Գրական բարձր արաբերենը հանդես է գալիս զուտ գրավոր տարբերակով: Ղուրանի լեզուն ընդհանրապես բարձրագույն կրթությամբ և մասամբ միջնակարգ առանձին հաստատությունների շրջանավարտներն են յուրացնում, որոնք կազմում են հասարակության հագիվ 25-30 տոկոսը: Առօրյա խոսքում, անգամ ռադիո-հեռուստատեսության զանգվածային հաղորդումները կազմակերպվում են արաբերենի մի շարք բարբառներով՝ եգիպտական, ալժիրյան, եմենյան, իրաքյան և այլն:

Աֆրիկյան շատ երկրներում դիզլոսիան վերածվում է բազմալեզվային վիճակի՝ տեղական լեզու-արաբերեն, անգլերեն կամ ֆրանսերեն:

Դիզլոսիան, սակայն, չպետք է շփոթել **խառնածին** լեզու հասկացության հետ, որն իրականում գոյություն չունի: Արգի իրանական Ադրբեջանում ազգաբնակչությունը կրոնով արաբ է, լեզվով՝ ազերի, պետականությամբ՝ պարսիկ: Լեզուն միևնույն է՝ ազերի է և ոչ խառնածին: Ուտիերենը մինչև վերջերս հանդես էր գալիս Նուխիի շրջանում, որ հին Աղվանից աշխարհի մաս էր: Դարերի ընթացքում աստիճանաբար ուտիերենը տեղի տվեց: Թեև Հր. Աճառյանը պնդում է, որ անցյալ դարի 50-ական թվականներին Գանձակի շրջանում «ոչ մի գյուղի և ոչ մի անկյունում ուտիերենի ոչ մի հետք չի մնացել» (Հր. Աճառյան,

էջ 466), այնքան էլ ճիշտ չէ քանի որ ընդամենը երկու տասնամյակ առաջ նույն Նուխիի շրջանում մի ամբողջ գյուղ (Կուտկաշեն) տանը, առօրյա խոսակցության ժամանակ կիրառում էր ուտիերենը:

Միջէթնիկական հաղորդակցման լեզուներ, կոյնե, լինգվա ֆրանկա, փիջիններ

Միջէթնիկական հաղորդակցման համար գործում է մի լեզու, որը «յուրացվում է» շուկաներում և նավահանգիստներում: Լինգվա ֆրանկյան (բառացի՝ ֆրանկների լեզու) գերազանցապես առևտրական լեզու է: Հր. Աճառյանը գրում է, որ իսպանական, հոլանդական և ֆրանսիական գաղութների ստրուկները «ուզենալով խոսել իրենց տերերի լեզվով, կազմել են կրեոլ կոչված լեզուները, որոնք նույն ֆրանսերենը, հոլանդերենը կամ իսպաներենն են, միայն քերականությունը ջնջված, բառարանը կրճատված և արտասանությունը վերածված նեգրականի» (Հր. Աճառյան, նույն տեղում, էջ 415): Խոսելով Միջերկրականի նավահանգիստներում կիրառվող «աղավաղված» լեզուների մասին՝ Հր. Աճառյանը հիշատակում է դրանցից *sabir* կամ *lingua franca*-ն և բերում մի հետաքրքիր փաստ. «Այսպիսի մի ֆրանկլեզվով խոսում էր մի հայ դոմինիկյան, Փարիզում. Լայբնիցը. որ ապրել է Փարիզում, 1672-1676 թվերին տեսել ու խոսել է նրա հետ: Լայբնիցը ասում է, թե այդ լեզուն կազմված էր լատիներենից, որից հանված էին հոլովները, ժամանակները և մյուս թեքումները, այս լեզուն բավական հեշտությամբ հասկացվում էր, ինքը հայ դոմինիկյանը դյուրությամբ խոսում էր այդ լեզվով» (Հր. Աճառյան, էջ 416): Կոյնեն (հունարեն բառացի բառը նշանակում է **ընդհանուր**, կիրառական) ցեղակից էթնոսների վերբարբառային բանավոր հաղորդակցումն է:

Փիջինները (անգլերեն **business-գործ** բառի աղավաղված ձևն է), այն լեզուներն են, որոնց հնչյունաբանությունը, քերականությունը «տեղական» է, իսկ բառապաշարը՝ եվրոպական:

Եվրոպացիների հետ Հեռավոր Արևելքի ժողովուրդները հաղորդակցվելիս կիրառում են անգլերեն բառերով հազեցած, սակայն չինարեն արտասանությամբ փիջին-անգլերեն:

Համաշխարհային և միջազգային լեզուներ. տարբեր պետությունների ժողովուրդների հաղորդակցման ժամանակ կիրառվող լեզուները կոչվում են միջազգային լեզուներ: Լինգվա ֆրանկները կամ փիջինները էթնիկական լեզուներ են, այսինքն մի իրական էթնոսի հիմնական հաղորդակցական միջոց են: Միջնորդ լեզու լինելու գործառնությունը դրանց համար երկրորդական է: Միջազգային և Ասորեստանում միջազգային լեզու էր ակկադերենը, արաբահրեական աշխարհում՝ արամեերենը, հելլենական աշխարհում՝ հին հունարենը, հռոմեական կայսրության մեջ՝ լատիներենը, միջնադարյան Մերձավոր Արևելքում՝ արաբերենն ու պարսկերենը:

Արդի միջազգային լեզուները, հեռուստատեսության, համակարգչային տեխնոլոգիաների լայն տարածմամբ, վերաճում են համաշխարհային (գլոբալ) լեզուների: Այդպիսի լեզուների թիվը, կարծես թե, չի անցնում մոզական 7 ± 2 թիվը, ընդ որում հաճախ «համաշխարհային լեզուները» նույնացվում են ՄԱԿ-ի աշխատանքային լեզուների հետ՝ անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն, ֆրանսերեն: Ոմանք կարծում են, թե հակառակ այն իրողությանը, որ չինարեն խոսում է աշխարհի բնակչության մեկ քառորդը, միննույն է այդ լեզուն «փակ» հասարակության հաղորդակցման միջոց է:

Արհեստական միջնորդ-լեզուներ և միջլեզվաբանություն

Հին Կտակարանից սկսած, տարալեզու աշխարհի համար այդքան խառնիխուռն լեզուների առկայությունը դիտվում է իբրև Աստծո պատիժ: Միջէթնիկական հաղորդակցության համար արդեն խոր հնադարից մարդիկ մտածել են ստեղծել արհեստական լեզուներ: Այդպիսի փորձեր արել են Կլավդիոս Գալենը (մ.թ.ա. 130 թ., Պերգամ), արաբ շեյխ Մոխիեդդինը (11-րդ

դար), կատալոնցի իմաստասեր Ռեյ- մոնդ Լյուլլին (1235-1315), Թոմաս Սորը (1478-1535) և Թամազո Կամպանելլան (1568-1639): Արհեստական լեզուների ուսումնասիրությամբ են զբաղվել Ֆ. Բեկոնը, Ռ. Դեկարտը, Գ. Լայբնիցը, Ի. Նյուտոնը: Իմիջիայլոց, առանց ավելորդ մեծամտության պետք է նշել, որ Լայբնիցը ամենայն հավանականությամբ լինգվա ֆրանկա ստեղծած հայ դոմինիկյանից ազդվելով է մտահղացել համաշխարհային լեզու ստեղծելու գաղափարը: Այս մասին գրել է Մաթորեզը (Mathorez) REA ամսագրի 2-րդ հատորում տպագրած իր հոդվածում (պրակ 1, էջ 89): Այս մասին տեղեկացնում է Հր. Աճառյանը (նույն տեղում, էջ 416):

Ողջ մարդկության համար ընդհանրական լեզու ստեղծելու փորձերը փիլիսոփա Լայբնիցի կողմից (և հետագայում) որակվեց *назрания* տերմինով, հայերեն՝ համրախոսություն: «Միջազգային լեզվի մասին ժամանակակից բուրժուական լեզվաբանության մեջ երկու սկզբունք կա, ոմանք կողմնակից են մի նոր արվեստական (իմա՝ արհեստական – Ա.Ս.) լեզվի ստեղծման, ուրիշներ՝ մի որևէ կենդանի լեզու ընդհանուր միջազգային լեզու դարձնելուն» (Հր. Աճառյան, ԼՔՀԼ, Ներածություն, Ե., 1955, էջ 146):

Արհեստական լեզուներ ստեղծողների մեջ չէր կարող որևէ հայ չլինել: Իրոք, ինչպես նշում է Հր. Աճառյանը (նույն տեղում) զվյուռնացի մի հայ կազմել է, այսպես կոչված, սահլեռայ (սահլե-աշխարհ, ռայ-լեզու՝ իր ստեղծած համաշխարհային լեզվով) արհեստական լեզուն: Շլայեր ազգանունով գերմանացի մի հոգևորական հորինել է վոլայյուկը (1878թ.), Մուլենարը՝ ունիվերսալը, լանգ-բլուն (Langue-bleue)՝ Բոլլաքը (1900թ.): Մեծանուն լեզվաբան Օ. Եսպերսենը 1900 թվին ստեղծեց նովիալ արհեստական լեզուն, շուրջ կես դար անց (1947 թ.) Սորբոնի պրոֆեսոր Մարտինեի կողմից ԻԱԼԱ (IALA) և այլն: Ներկայումս, ինչպես նշվում է գրականության մեջ, աշխարհում կան շուրջ

1000 արհեստական լեզուների նախագծեր (տե՛ս Մեչկովսկայա, էջ 114):

Առաջին լայն տարածում գտած արհեստական լեզուն վոլապյուկն է, թեև առ այսօր ամենահաջողված արհեստական լեզուն Լ. Չամենհոֆի ստեղծած էսպերանտոն է (լատիներեն *esperant* հուսացող): Էսպերանտոյի գրավիչ կողմերը կարելի է ներկայացնել երկու հիմնական հատկանիշով՝ 1) Յուրացման դյուրությունը, որին նպաստում է միջազգային արմատական ձևերի հարստությունը, 2) Քերականության «տրամաբանվածությունը»:

Հայ էսպերանտիստների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ակադեմիկոս Գ. Սևակը: Նա 1930 թվականին հայերեն լեզվով կազմել է «Ձեռնարկ էսպերանտո միջազգային լեզվի» դասագիրքը: Գ. Սևակը երկար տարիներ եղել է էսպերանտիստների համաշխարհային միության նախագահության անդամ, Հայաստանի էսպերանտիստների միության նախագահ: Անվանի լեզվաբանը հայերենից էսպերանտերեն է թարգմանել Ավ. Իսահակյանի «Բռու լալա Մահարի» պոեմը, Ա. Բակունցի, Ե. Չարենցի, Ն. Չարյանի մի շարք գործեր:

Այսօր աշխարհի 56 երկրներում գոյություն ունեն էսպերանտիստների ազգային միություններ, 10 ռադիոկայաններ կանոնավոր կերպով հեռարձակում են էսպերանտերեն հաղորդումներ, հրատարակվում են 140 պարբերականներ: Այնուամենայնիվ, ցավոք, այսօր էսպերանտոն չունի այն մոզական ուժը, ինչը վերագրվում էր նրան նախանցյալ դարի կեսերին: Այդ ժամանակ էսպերանտոյի մասին ոգևորությամբ էին արտահայտվում Լ. Տոլստոյը, Մ. Գորկին, Ա. Բարբյուսը և ուրիշներ:

Անգլերենի հիմքի վրա ստեղծված պարզեցված լեզուն բեյսիկ ինգլիշը, որ հորինել է անգլիացի Օգդենը, պարունակում է ընդամենը 850 բառ և մի քանի կանոն: 1930 թվին լույս տեսած այս լեզվի դասընթացը Ամերիկա ներգաղթած օտարականներին

կարող էր նախնական փուլում օգտակար լինել, սակայն ազգամիջյան ավելի լայն հաղորդակցման համար այն պիտանի չէ:

Բեյսիկի առավելություններից է այն, որ գործ չունենք հնարավոր լեզվի հետ. նրա քերականությունն ամբողջությամբ, ինչպես և ուղղագրությունն ու ուղղախոսությունը, անգլերեն է: Սկզբնական փուլում ստեղծված լինելով զուտ առևտրական նպատակներով, հետագայում այդ լեզուն ընդգրկում է գործածության ավելի լայն շրջանակ՝ գրավելով բնական և արհեստական լեզուների միջակա գոտին:

20-րդ դարի առաջին տասնամյակում, գրեթե մեկ դար առաջ, Վենետիկի Մխիթարյան հայր Աթանաս Տերոյանի ջանքերով ստեղծվեց արհեստական-մաթեմատիկական մի լեզու՝ «Հանրագրութին որ է համազգային կրթութեան նոր ոճ մը», Վենետիկ, 1907թ.: Այն նախատեսված էր կիրառել բոլոր լեզուների նկատմամբ, ընտրված էր խոսքամասային դասակարգմամբ շուրջ 3999 գոյական բառ պարունակող մի ցանկ, դասակարգված 39 խմբի: Յուրաքանչյուր բառ ուներ իր կարգահամարը, որը պիտի համընկներ բոլոր լեզուներում: Բառացանկերին կից տրվում էին քերականական գործողությունների մաթեմատիկական նշանակումները՝ հոգնակիակազմություն, ժխտում և այլն: Բավական է որևէ լեզվից կենդանի բառապաշարը «փոխադրել» մաթեմատիկական համապատասխան արժեքների և գործն արդեն պատրաստ է թարգմանվելու աշխարհի ցանկացած լեզվով: Բնականաբար այդ թարգմանության ժամանակ բնագիր լեզվի իմացությունը բոլորովին անհրաժեշտ չէ: Վենետիկի հայրերի ստեղծած այդ արհեստական-մաթեմատիկական լեզուն այնքան «գերծանրաբեռնված» էր մաթեմատիկական նշաններով, որ, ասենք, *տներից* բառի մաթեմատիկական համարժեքը կազմում էր գրեթե մի ամբողջ տող՝ կոտորակների, քառակուսի արմատների, փակագծերի

կիրառությամբ և այլն: Բնական է, որ այդ արհեստական լեզուն ևս տարածում չգտավ:

Ինչու՞ են աշխարհում երկլեզվային երևույթներն օրավուր աճում

Լեզուների աշխարհագրությունը, աշխարհի ժողովուրդների և պետաքաղաքական միավորների բաշխվածությունը թե՛ սերտորեն կապված են իրար, թե՛ անընդհատ փոփոխությունների մեջ են: Միալեզվությունը աստիճանաբար իր տեղը զիջում է երկլեզվությանը: Երկլեզվության միջոցով մայրենի լեզվի վերջնական ձուլման հարցում սեռերի դերը ներկայացնելիս Հր.Աճառյանը բերում է Պոլսի և Համշենի բարբառներից հետևյալ օրինակները, «Գիտենք, որ կինը առհասարակ պահպանողական է, զարմանալի չէ, եթե ասենք, թե կինն է, որ ավելի է պահում լեզուն իր վաղնջական ձևի տակ. այն ձևերը, որ դրսի աշխարհում կորած և սովորությունից դուրս են ընկած, կինը դեռ գիտե: Պոլսում այրերը հնչում են **քիր քրեյ**, կանայք՝ **գիր գրել**» (Հր. Աճառյան, էջ 403): Այնուհետև Աճառյանը բերում է համշենահայերի լեզվական հետևյալ պատկերը. «Համշենում, ուր հայերը մահմեդականություն ընդունելով՝ թյուրքացել և հայերենը թողնելով՝ թյուրքերենն են սկսում գործածել, կանայք դեռ հայախոս են: Եվ համշենցի թյուրքացած հայերը իրենց խոսած այդ հայերեն բարբառը կոչում են «կնկա» լեզու» (էջ 404):

Երբեմն էթնիկական հաղորդակցման համար ընտրվում է ազգային փոքրամասնություններից մեկի լեզուն: Այսպես Տանզանիայում որպես այդպիսի լեզու է ընտրվել սուախիլին, Ինդոնեզիայում՝ մալայերենը: Այդպես անցյալ դարի 60-ական թվականներին տարածվեց մի առաջարկ, ըստ որի՝ միջազգային հաղորդակցման միջոց էր առաջարկվում հայերենը: Հաշվի էր առնվում մի քանի էական պայման՝ հարուստ քերականական կառուցվածք ունենալը, գրական ավանդույթների առկայությունը, կենդանի լեզվի հանգամանքը և մանավանդ՝ քաղաքական

ասպարեզում չի շխելը: Այդուհանդերձ առ այսօր որևէ բնիկ լեզու չի հասել համընդհանուր ճանաչման, որպես միջէթնիկական ընդհանրական- հանձնարարելի լեզու:

Իվան (Յան) Բողունեն դե Կուրտենեի (1845 -1929) ազգային-լեզվական քաղաքականության սկզբունքները

Ռուս (սույն հաջողությամբ՝ լեհ) լեզվաբան Ի.Բողունեն դե Կուրտենեն 19-րդ դարի խոշորագույն տեսաբան-լեզվաբաններից էր: Խաչակիրների ժառանգը Երուսաղեմի հանրահայտ Բոլդուին թագավորի սերնդից էր: Վիկտոր Շկլովսկին իր «Жили-были» գրքում (Մ., 1966, էջ 95) պատմում է մի զավեշտական պատմություն: Կազանում ոստիկաններն այնքան են զզվացրել Բողունենին՝ իր անվան ծագման վերաբերյալ, որ Բողունեն դե Կուրտենեն հատուկ այցեքարտ է պատվիրում՝ վրան տպագրված. «Ի. Բողունեն դե Կուրտենեն-Երուսաղեմի թագավոր» (այս մասին տե՛ս նաև Ն. Մեչկովսկայա, էջ 127): Հանրահայտ լեզվաբանն նախակարապետն է հոգելեզվաբանության, հանրույթների լեզվաբանության, կառուցվածքային լեզվաբանության: Ահա մի գիտնական, որ թե՛ Կազանի, թե՛ Պետերբուրգի, թե՛ Վարշավայի լեզվաբանական դպրոցների հիմնադիրն է: Հանրալեզվաբանության առումով անկյունաքարային արժեք ունի 1906-ին գրված, սակայն միայն 1913-ին հրատարակած «Ազգային և տարածքային հատկանիշը ինքնավարության մեջ» աշխատանքը: Այս գրքի համար նա «ճաշակում է» պետերբուրգյան բանտի պայմանները: Արժե հիշել նաև, որ սույն գիրքը խորհրդային իշխանության տարիներին երբեք չի հրատարակվել, թե ինչու, դա կերևա գրքում ներկայացված սկզբունքային դիրքորոշումից:

Ստորև ներկայացնում ենք այդ դիրքորոշման ենթակետերը.

1. Մարդու ազգային պատկանելությունը սոցիալական և մշակութային (և ոչ կենսաբանական) երևույթ է:

2. Լեզուն արդի աշխարհում մարդու ազգային պատկանելության չափանիշ չէ: Հիշենք, օրինակ, որ Վ. Դալը իր արյան մեջ ոչինչ ռուսական չունենալով հանդերձ՝ մնայուն արժեքներ կայացնող «Վելիկոռուսների բացատրական բառարանի» հեղինակն է:

3. Պետությունը պետք է լինի ոչ ազգային, ոչ կրոնական, ոչ կուսակցական:

4. «Մաքուր (մենազգային) ազգային-տարածքային ինքնավարությունների ձգտումը «վտանգավոր երազանք է»: «Լեհաստանը լեհերի համար», «Լիտվան լիտվացիների համար» և այլն պետք է փոխարինվի «Լեհաստանը բոլոր նրանց համար, ովքեր ապրում են այնտեղ», «Լիտվան բոլոր նրանց համար, ովքեր ապրում են այնտեղ»:

5. Տարածքային ինքնավարությունների սահմանների հարցը չի լուծվում ոչ գիտնականի գրասեղանի առջև, ոչ սեփական աշխատասենյակում, ոչ էլ պատահաբար հավաքվածների ցույցերով:

6. Անհեռանկար և վտանգավոր է քաղաքացիական աշխարհում մարդկանց բաժանել «տեղաբնիկների» և «եկվորների»:

7. Յուրաքանչյուր դպրոցի լեզու որոշվում է տվյալ ինքնավար միավորի մեծամասնության ցանկությամբ:

8. Միջլեռնակական և միջկրոնական աշխարհը «համամարդկային և համահանգստացուցիչ» հայեցակետով դաստիարակության անհրաժեշտություն է առաջացնում:

9. Պետության պաշտամունքը հանուն սոսկ պետության պետք է իր տեղը զիջի նրանում ապրող անհատների և հավաքականության զարգացման և բարգավաճման պահանջին:

10. Մարդկային իրավունքի զագաթնակետում դրվելու է մարդկային արժանապատվության իրավունքը և մյուս կողմից՝

ինքնորոշվող մարդկային ազատ անհատականության իրավունքը:

Շուրջ 100 տարի առաջ՝ 1922-ին Լեհաստանում, թերևս նաև հաշվի առնելով վերոհիշյալ սկզբունքները, ազգային փոքրամասնությունների խումբը առաջադրեց Բողունեն դե Կուրտենենին Լեհաստանի նախագահի թեկնածու:

Լեզվի զարգացման վրա հասարակության գիտակցված ազդեցության հնարավորության մասին

Հասարակությունը փոխվում է, կարելի է ասել՝ զարգանում է, փոխվում է և լեզուն: Թե ինչ են ուզում մարդիկ առաջին հերթին փոխել լեզվում, հարց է, ինչպես որ լուրջ խնդիր է պարզել, թե ինչքանով է հասարակությունը գիտակցաբար ազդում լեզվի վրա: Բազմալեզվությունը, ինչպես նշվել է, Աստծո պատժի արդյունք է համարվում Ս. Գրքում: Համամարդկային լեզվի երազը պետք է, կա և կլինի: Այս երազի իրագործման ճանապարհին մարդկությունը ստեղծել է շուրջ 1000 արհեստական լեզու: Անգամ ամենահաջողվածներից՝ էսպերանտոն, միևնույն է, չդարձավ քիչ թե շատ ընդունելի կենդանի հաղորդակցման միջոց:

Գիտակցաբար լեզվի պահպանումը, խաթարման չենթարկելու տարակուսանք է առաջացրել շատերի մտքում, առաջին հերթին հենց լեզվաբանների:

Անհատը և լեզուն (անհատի կամքը լեզվի մեջ)

Լեզվի հասարակական դերը շեշտելով հանդերձ՝ հարկ է ճշտել անհատի «միջամտության» աստիճանը, կամքի դրսևորումը լեզվի մեջ: Անհատական կամքը հաջողության է հասնում այն դեպքում, երբ այն ներդաշնակ է հասարակության պահանջումներին: Ըստ էության անհատի կամքը տվյալ

դեպքում դադարում է անհատական կամք լինելուց: Լեզվում անհատական կամքի դրսևորման լավագույն ասպարեզը բառաշինության, նոր բառերի կերտման ոլորտն է: Ըստ Հր. Աճառյանի, **սավառնակ** և **սավառնորդ** բառերը ստեղծել է արևմտահայ գրող Երկանդ Սրմաքեշխանյանը: Ապար բառը ստեղծել է Մանուկ Աբեղյանը՝ ապառաժ բառի վերջին երկու տառը ջնջելով և ուն դարձնելով ր: Ռուսերենի *образ*-ից Աբեղյանը ստեղծել է կերպար բառը (կերպարանք-ի անք-ը ջնջելով): Բառի մեջ անք-ը վերջածանց չէ: Լեզվում անհատական միջամտությունը հաջողություն ունենալու համար որոշ երբեմն քողարկված գործունեության անհրաժեշտություն է ծագում: *Колготки* բառի հայերեն համարժեքը **զուգագուլպա**, տարիներ առաջ հորինվեց մեր կողմից և լայն տարածում գտավ: Երբ անցյալ դարի 20-ական թվականների կեսերին ստեղծվեց ելույթ բառը ոմն Հովիկ Մելիքյանի կողմից, Մանուկ Աբեղյանի պես հայտնի լեզվաբանը ծաղրեց այն, համարեց անհեթեթ, քանի որ ելույթը ցույց է տալիս սոսկ ելնելը, ճիշտը պետք է լինի՝ մտույթ: Այսօր, սակայն, ոչ ոք դրան ուշադրություն չի դարձնում և ավելին, ծիծաղելի կոիտվի մտույթ-ի գործածումը ելույթ-ի փոխարեն: Վերելակ բառը շատ սովորական է դարձել, թեև այն և վերելակ է բառիս բուն իմաստով, և վարիջակ: Անհատի ազդեցությունը լեզվի քերականական կառուցվածքի վրա չափազանց աննշան է: Հիշենք թեկուզ նե-ի, իբրև իգական սեռի հատուկ ձևի, տարածման անհաջող փորձը Պետրոս Դուրյանի կողմից:

Ուղղագրական ռեֆորմները: Մարդու «միջամտությունը» լեզվի վրա առաջին հերթին կապվում է ուղղագրության փոփոխման հետ, թեև ուղղագրության հարցում պահպանողականությունը հայտնի է բազմաթիվ օրինակներով: Այսպես, անգլերենի ուղղագրության հարցը ակնհայտ պահպանողականության նմուշ է: Ուղղագրության հարցում հայերենը մեկ ամբողջական «շեղում» և գրեթե կես քայլ հետնահանջ է ապրել: Պահպանելով հանդերձ մաշտոցյան այբուբենի տառային

«կերպարանքը», 1922-ին կատարվեց Աբեղյանական ուղղագրական ռեֆորմը, որը «վերնից» տրված հրահանգի արդյունք էր: 1940-ին որոշ բարեփոխումներ կատարվեցին այդ ռեֆորմում հետնահանջ կատարելով դեպի ավանդական ուղղագրությունը: Առ այսօր չի դադարում բանավեճը՝ վերադառնալ ավանդական ուղղագրությանը, թե շարունակել կիրառել աբեղյանական ուղղագրությունը:

Ադրբեջաներենը մինչև 1929 թվականը օգտագործում էր արաբական այբուբենը: 1929-ի սկզբին արաբական այբուբենը փոխարինվեց լատինականով, այնուհետև անցում կատարվեց դեպի ռուսականը (կիրիլիցան): 20-րդ դարի 90-ական թվականների վերջում դարձյալ կատարվեց ադրբեջաներենի ուղղագրական ռեֆորմ, այս անգամ ռուսական համակարգից անցում կատարվեց դեպի լատինատառ այբուբենը (տե՛ս Н. Гаджиев, *Азербайджанский язык, ЯН СССР. т. 2, էջ 66*):

Վրացերենը գրային փոփոխություն կատարել է 12-13-րդ դարերում: 18-րդ դարում Վրաց կաթողիկոս Անտոն 2-րդը կատարում է վրաց գրական լեզվի բարեփոխում (ռեֆորմ)՝ երեք ոճերի տարբերակման սկզբունքով: Կաթողիկոսի կազմած քերականությունը ձևված էր հայերեն, հունարեն, արաբերեն քերականությունների հիման վրա (տե՛ս К. Лернер, *Социальная природа языка и процесс языкового взаимодействия. Тбилиси, 1989, էջ 83*): Վրաց կաթողիկոսի նորամուծությունը շուրջ մեկ դար մնաց իբրև քերականական ավանդույթի իրողություն: 1889-ին Պետերբուրգում Դ. Դիվիանին հրատարակում է «Գործնական քերականություն նոր վրացերենի»-ն, որում խնդիր է դրվում «լեզվին չփայթել նորամուտ օրենքներ, այլ բացահայտել դրանք» (տե՛ս Կ. Լեոներ, նույն տեղում, էջ 85): Խնդիրը վերաբերում է այլ լեզուներից վրացերենի ունեցած առանձնահատկություններին և պահանջ է դրվում վրացերենի քերականությունը չձևել հնդեվրոպական լեզուների քերականական կաղապարների հիման վրա:

Ռուսասանում ռուսերենի գրաֆիկայում կատարված Պետրոս Առաջինի (1708-1710 թթ.) ռեֆորմից հետո ուղղագրական մեծ ռեֆորմ կատարվեց 1918-ին, հեղափոխությունից անմիջապես հետո, լուսժողկոմ Ա. Լունաչարսկու ղեկընկերությամբ: Ընդ որում ինչպես հայերենի ուղղագրական ռեֆորմի դեպքում, որը թեև ընդունվել էր 1922-ին, սակայն Աբեղյանի կողմից պատրաստվել էր 1913-ին՝ հայոց գրերի ստեղծման 1500-ամյակի տոնակատարությունների ընթացքում, այդպես էլ ռուսերենի ուղղագրական ռեֆորմը նախապատրաստվել էր հեղափոխությունից 5 տարի առաջ՝ 1912 թվականին:

Ի տարբերություն սովորական բառապաշարի, որի վրա ներգործության աստիճանը մեծ չէ, տերմինաբանության ոլորտը հնարավորություն է տալիս լեզվի վրա մարդու անմիջական մեծ ազդեցության: Այդ է վկայում նաև հայերենի և վրացերենի տերմինաբանական ենթադրատների քննությունը: Գրական արևելահայերենի տերմինաբանական ոլորտի վրա միշտ էլ մեծ է եղել հին գրական հայերենի՝ գրաբարի ազդեցությունը: Աղբյուրների բառապաշարի վրա (հատկապես տերմինաբանության ոլորտում) ազդեցության նշանակալից շերտերն են՝ արաբերենը և պարսկերենը: Արաբերենը գիտության, պոեզիայի, նաև կենցաղային ոլորտի բառապաշարի հարստացման աղբյուր էր. հմմտ, աջըգ-«սիրահար», հագիգյաթ- «ճշմարտություն» և այլն: Իրանաբանությունները աղբյուրներնում դարավոր կապերի և փոխհարաբերության արդյունք են:

Արդի գրական աղբյուրներն են ժամանակին պարսկերենից և արաբերենից փոխառած բազմաթիվ բառեր աստիճանաբար դուրս է մղում՝ փոխարինելով դրանք թյուրքական համարժեքներով. հմմտ. նազիկ (պարս.)-ինջե (թրք.«նուրբ»), օլչու «չափ» արաբերենի մուգաս համարժեքի փոխարեն:

Չայերենում և վրացերենում վերջին տասնամյակում լեզվի վրա ներգործման (հատկապես բառապաշարում) տիպաբանական ընդհանրույթ է դրսևորվում, եթե անցյալ դարի 20-ական

թվականներից սկսած երկու գրական լեզուներում նորաբանություններ էին դիտվում սոցիալ- քաղաքական կյանքի պայմանների պատճառով բառապաշարի մեջ մտած ռուսերեն բազմաթիվ բառեր՝ **կոմունիզմ, բոլշևիկ, ռեպրեսիա, չեկա** և այլն, ապա ներկայումս երկու լեզուներում էլ դրանք համարվում են հնաբանություններ:

Որոշելով լեզվի կանոնը կազմող միջոցների ողջ համալիրը, ինչպես նաև դաստիարակելով որոշակի լեզվական ճաշակ՝ հանրույթի հատկապես մտավորական խավը (գիտնականներ, դերասաններ և այլն) այս կամ այն չափով ներգործում է լեզվական պրակտիկայի վրա, ներագդելով գրական լեզվի ավանդական կանոնի վրա:

ԳԼՈՒԽ 6.
ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ԼԵԶՈՒՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Լեզվի զարգացումը մեծապես կախված է արտալեզվական իրակությունից՝ ազգի հանրային-քաղաքական և մշակութային վիճակից, հոգեկերտվածքից, կենսակերպից և այլն: Հանրությունը ազդում է լեզվի վրա: Հանրահայտ է, որ լեզվի զարգացումը առաջին հերթին պայմանավորված է հասարակության զարգացմամբ: Ակադ. Էդ. Ադայանը իր «Լեզվաբանության ներածության» մեջ հանգամանորեն ներկայացնում է նախնադարյան հասարակության մեջ, ավատատիրական հասարակարգում, հետավատատիրական կացութաձևում լեզուների առանձնահատկությունները, զարգացման ուղղվածությունները: Նախնադարյան համայնական հասարակարգում լեզուները բնութագրվել են «տարանջատվածությամբ» և նրանց միջև խիստ սահմանների բացակայությամբ: Երկու մերձակա լեզուները շատ ավելի են նման իրար, քիչ ավելի հեռու գտնվողների ընդհանրության աստիճանը նվազ է. ինչքան հեռանում է կապը, այնքան փոքրանում է նրանց ընդհանրության աստիճանը: Այս երևույթը ոչ թե հատուկ է եղել միայն նախնադարյան հասարակարգին, այլև ընդհուպ մինչև 18-19-րդ դարերը քաղաքակրթության տեսադաշտից դուրս մնացած մայրցամաքային առանձին հատվածների և հանրահայտ կղզիների: Այդպիսի պատկեր է գտել Միկլուխտ-Մակլայը Նոր Գվինեայում 18-րդ դարի 70-80-ական թվականներին կատարած ուղևորության ժամանակ: Բնութագրական է ճանապարհորդի հուշերում հետևյալ գրառումը. «Գրեթե ամեն գյուղ ունի իր լեզուն, իր խոսվածքը» (Миклухо-Маклай Н., Путешествие, 1948., М.-Л.): Արդի Աֆրիկայում նույն պատկերն է մեր օրերում: Անգիր լեզուների շրջանում լեզվական տեղաշարժերը և զարգացումները շատ արագ են տեղի ունենում: Այդ շրջանին բնորոշ են այրերի և կանանց տարբերակված

լեզուները, աղջիկների և պատանիների լեզուները: Եթե առաջինները տարբերակվում են գերազանցապես բառապաշարով (ինչպես, օրինակ՝ որսորդական, զինարվեստի, բնակարանաշինության բառապաշարում), ապա առտնին, տնային տնտեսության բառապաշարը հատուկ էր կանանց: Վերջիններիս հատուկ էր նաև հուզագագացական խոսքը, փաղաքշական մասնիկների գերակշիռ գործածությունը: Զարգացման այս փուլում գտնվող էթնիկ լեզուները առավելապես կոնկրետ առարկայական բառապաշար ունեն, քան վերացական:

Նախնադարյան հասարակության լեզվում գերակշռում են ժեստերը, ինչպես գրել է Վիգոտսկին. «Պարզունակ մարդու լեզուն երկակի բնույթ ունի - մի կողմից՝ բառերի լեզու, մյուս կողմից՝ ժեստերի լեզու» (Л. Выготский, А. Лурья, Примитив. Ребенок М., 1992): Բացի ժեստերից, այդ փուլում գտնվող լեզուներին հատուկ է եղել տաբու հանդիսացող բառերի մեծ քանակ: Վերջապես, նախամարդը լեզուն ավելի հաճախ դիտել է ոչ այնքան իբրև հաղորդակցման միջոց, որքան կախարդանքի հնարանք, մոգական ուժ:

Լեզվական «պրիմիտիվիզմին» բնորոշ գծերից մեկն էլ՝ բառախմաստաբանությամբ «լպրծուն», անկայուն լեզուն է: Այդ հատկանիշը տարբեր լեզուներում ցայտուն դրսևորում է գտնում նաև գողերի լեզվում, բանտարկյալների շրջանում: Ռուս նշանավոր գրականագետ, ակադեմիկոս Դ. Լիխաչևը XX դ. 30-ական թվականներին, գտնվելով Սոլովեցկի ճամբարում, կազմեց և կես դար հետո տպագրեց «Բանտա-ճամբարային ժարգոնի բառարան»: Պարզվում է, որ այդ լեզվում գոյականները, ձայնարկությունները և բայաձևերը «խառնվում են»:

Ավատատիրական շրջանի լեզուն

Ավատատիրական դարաշրջանում լեզուների բարբառային տարբերակվածությունը հասնում է ծայրահեղ աստիճանի: Մասնատվածության պատճառով գոյություն ունեցող բարբառ-

ները ավելի են «հեռանում» իրարից, առաջանում են նորանոր խոսվածքներ:

Հանրալեզվաբանական տիպաբանության ընդհանրույթ է բազմաթիվ պետությունների պատմության այն գիծը, որ բարբառների սահմանները գերազանցապես համընկնում են իշխանական-ավատատիրական կալվածքների սահմանների հետ:

Միջնադարում լեզվի կառուցվածքում ամենամեծ կշիռն ու կարևորությունը տրվում է բառին: Բառն ու աշխարհը ընկալվում են փոխկապակցված միջավայրում: Բառի, իբրև նշանի և բովանդակության համատեղման միավորի, քննությամբ զբաղվել են հայ և վրացի միջնադարյան աստվածաբանները, փիլիսոփաները: Տակավին անտիկ աշխարհից եկող իմաստասիրական վեճը հարավկովկասյան ոլորտում ձեռք է բերել աստվածաբանական բնույթ: Աստվածաշնչի մեկնություններում բառին բացառիկ տեղ է տրվում: Պատահական չէ, որ միջնադարը բնութագրվում է նաև իբրև «տեքստի դարաշրջան»: Ս.Ավերիհնցի այդ դարաշրջանին տրված սահմանումը իբրև «գրիչների և թանաքի դարեր» (Ս. Ավերիհնց, *Поэтика ранневизантийской литературы*, Մ., 1977) շատ ավելի բնութագրական է կովկասյան տարածաշրջանի համար, մանավանդ եթե նկատի ունենանք միջնադարյան Հայաստանն ու Վրաստանը: Հենց այդ ժամանակաշրջանում հսկայական ձեռագրական գանձեր են ստեղծվել Անդրկովկասում (հմմտ. Ցուցակ ձեռագրաց, հ.Ա, Բ, Վրացերեն ձեռագրերի լիակատար կորպուս, հ. 1-15 և այլն):

Հետավատատիրական շրջանի լեզուն

Հետավատատիրական կամ դրամատիրական շրջանին ամենից առաջ բնորոշ են հետևյալ գծերը.

1. Բարբառային տարբերությունների նվազում, ընդհուպ վերացում: Ինչքան հզոր է կենտրոնացված իշխանությունը, այնքան արագ է տեղի ունենում բարբառների վերացումը:

Այնտեղ, որտեղ ավատատիրական կառավարման եղանակը տակավին ավանդույթներ ունի, բարբառների վերացումը ավելի դանդաղ է տեղի ունենում (սովորաբար բերվում են Գերմանիայի և Իտալիայի օրինակները):

Ճապոնիայում հետաքրքիր գործընթացներ են տեղի ունեցել սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, եթե մի ժամանակ պայքարում էին ճապոներենի բարբառների դեմ, ապա հիմա հակառակը՝ լրջորեն ծրագրեր են մշակում պահպանելու բարբառների յուրահատուկ «համն ու հոտը»: Անգամ ռադիո-հեռուստատեսային հաղորդումները «համեմվում են» տեղական կոլորիտ ստեղծող բարբառային արտահայտություններով: Խնդիրը չափի մեջ է և մանավանդ բարբառի ու ժարգոնի, բարբառի ու գոեհկարբանության տարբերակման: Այլապես վերջին տասնամյակում Հայաստանում ստեղծված շատ հեռուստաֆիլմեր (նկատի ունենք առաջին հերթին «Մեր բակը») այդքան խիստ քննադատության չէին ենթարկվի: Խնդիրը «ժողովրդախոսակցական լեզվի» և «բարբառի» քողի տակ գոեհկարբանությանը լայն տեղ տալու մեջ է:

2. Լեզվի հետավատատիրական փուլի նորագույն շրջանին հատուկ է մի հատկանիշ ևս. գրական կանոնարկված լեզուն գրավոր «չոր» ստանդարտից դուրս է գալիս և խոսակցական ոճի տարրերն ավելի ու ավելի են շատանում գրական լեզվում: Այդպես է նաև հայերենում: Դրա դեմ ոմանք փորձում են անգամ պայքարել, ուրիշները գոհանում են պարզապես դժգոհելով, իսկ հանրալեզվաբանների խնդիրն է՝ բացահայտել լեզվի նկատմամբ հանրության ունեցած չափորոշիչների փոփոխման ներքին մեխանիզմներն ու պատճառները:

Հեղափոխությունները և լեզուները

Ինչպես որ հեղափոխություն ասածը ենթադրում է զարգացման «պայթյունային» եղանակ, այդպես էլ ոմանք

կարծում են, թե լեզվի զարգացումն էլ կարող է զուգահեռաբար նույն տեմպերով ընթանալ: Իհարկե, լեզվի պայթյունային զարգացումը բնական երևույթ չէ. իրականում այդպես չի էլ լինում: Թեև բնական է նաև, որ հազարավոր նոր արտահայտություններով ու բառերով համալրվում է լեզվի բառապաշարը, նույնչափ էլ հնանում են բառապաշարի առանձին շերտեր, սակայն քերականական կառուցվածքում քիչ թե շատ զգալի տեղաշարժեր, այնուամենայնիվ, չեն կատարվում:

Համեմատենք, օրինակ, ակադեմիկոսներ Ստեփանոս Մալխասյանի և Էդուարդ Աղայանի բառարանները, երկրորդը առաջինի բառացանկից դուրս է դրել շուրջ 50 հազար բառ՝ համարելով դրանք հնացած, միաժամանակ ավելացրել է 57 հազար նոր բառ և իմաստ, որոնք բացակայում են Մալխասյանի բառարանում: Ստացվում է, որ շուրջ երեք ու կես տասնամյակի ընթացքում լեզվի ընդհանուր բառապաշարում ավելի քան 100 հազար բառ-միավոր կամ փոխել է իր կարգավիճակը, կամ նոր կարգավիճակ է ստացել: Այս իրողությունը, սակայն, բոլորովին էլ չես կարող որակել իբրև հեղափոխական, քանի որ լեզվի զարգացման սովորական ու բնական իրավիճակի արդյունք է: 20-րդ դարի սկզբից մինչև 21-րդ դարի սկիզբը, հակառակ տեղի ունեցած հեղափոխությունների, անկախացումների և այլն, լեզվի քերականական կառուցվածքում էական փոփոխություններ, այնուամենայնիվ, չեն կատարվել:

1917-ի ռուսական հեղափոխությունից հետո ռուսաց լեզվում մուտք գործած բազմահազար հապավումները, օտարաբանությունները էական չափով մտան նաև կովկասյան բոլոր երեք գրական լեզուների մեջ: Ընդ որում նրանց մեծ մասը ինչպես որ հեշտությամբ մտել էր, նույնպիսի դյուրությամբ էլ դուրս մղվեց և տակավին մղվում է անցյալ դարի 90-ական թվականներից սկսած:

Ռուսաց լեզուն, որ հարկի ու անհարկի փոխառությունների հարցում միշտ «լայնախոհ» է եղել, 1917-ի հեղափոխությո-

յունից հետո այնքան է լայնորեն իր դռները բացել փոխառյալ ձևերի դեմ, որ անգամ հեղափոխության առաջնորդ Վ.Ի. Լենինը հատուկ քննադատական խոսք է ասել փոխառյալ **դեֆեկտ** բառի դեմ: Իմիջիայլոց, ոչ միայն այդ բառը դուրս չնդվեց, այլև ստեղծված նոր գիտությունը կոչվեց **դեֆեկտոլոգիա**:

Հասարակական կյանքի արագ տեղաշարժերը նորագույն շրջանում ստեղծեցին նախկին խորհրդային տարածքի գրեթե բոլոր հանրապետություններում նոր որակված ազգային ներկայացուցիչների՝ նոր ռուսի, նոր հայի, նոր վրացու, նոր ադրբեջանցու կերպար յուրաքանչյուրին հատուկ լեզվական «կադապարով» և այլն: Այդ «նորագոյացությունները» բնութագրվում են թե՛ ինքնատիպ հասարակական վարքով, թե՛ նույնքան ինքնատիպ լեզվական «մտածելակերպով» և արտահայտության եղանակներով: Ըստ էության հասարակական կյանքի կայծակնային փոփոխությունների ընթացքում «ջրի երեսին» հայտնված այդ անհատների լեզվի գուտ հանրալեզվական քննությունը առաջիկայում իրագործելիք խնդիրներից է:

Գրավոր հաղորդակցումը մեծապես նպաստում է լեզվում բարդ շարահյուսական կադապարների ձևավորմանն ու տարածմանը, գրավոր խոսքի՝ տեքստի ծավալուն կառուցվածքների արմատավորմանը: Եթե գրավոր ավանդույթներ չունեցող որևէ լեզվի բառապաշար պարունակում է հազիվ 10 հազար բառ, ապա գրավոր ավանդույթների առկայության դեպքում լեզվի բառապաշարը կարող է գերազանցել 500 հազար բառ-միավորը:

Ժամանակին Ա. Պեշկովսկին նշել է, որ գրային համակարգը գրականության լեզուն դարձնում է ավելի ճկուն, բայց միննույն ժամանակ լեզվի արագ փոփոխությունների արգելք է հանդիսանում: Որպես ասվածի հիմնավորում՝ ռուս լեզվաբանը բերում է հետևյալ սրամիտ համեմատությունը, լեզվական նորման այն ամբարտակն է, որը լեզվական հոսանքները վերածում է կանգուն լճի:

Այդուհանդերձ գրավոր խոսքի նկատմամբ ազգերի բացառիկ հարգանքը, պատկառանքը «վավերացված է» զանազան ասույթներում և առածներում, հմմտ. «Ինչ որ գրված է գրիչով, չես կտրի տապարով»՝ ռուսերեն, «Բառերը թռչում են, գրվածը մնում է»՝ լատիներեն և այլն:

Ինչպես որ տպագրության գյուտից հետո մարդկային ողջ քաղաքակրթությունը զարգացման մի նոր փուլ մտավ, այդպես էլ համակարգիչների հաղթարշավը, կամա, թե ակամա, քաղաքակիրթ աշխարհից կարծես թե դուրս է մղում գիրքը՝ նախորդ դարերի մեծագույն նվաճումը:

Կրթօջախների դերը

Լեզվական գրավոր մշակույթի տեր հասարակության համար պահպանման հիմնական կենտրոնները դպրոցներն են: Մանավանդ գրական լեզվի կանոնի համար դպրոցը հենց այն քուրան է, որտեղ ձուլվում, կենսական ձև է ստանում գրական լեզվի «կողային» համակարգը: Այդպիսի համակարգեր Անդրկովկասի երեք հանրապետություններում էլ գործել են՝ Հայաստանում և Վրաստանում վաղ միջնադարից սկսած, Ադրբեջանում՝ շատ ավելի ուշ: Եթե Հայաստանում և Վրաստանում՝ քրիստոնեական կրոնաբարոյական-մշակութաբանական հիմքի վրա, ապա Ադրբեջանում՝ մահմեդական ավանդույթներին համաձայն: Դպրոցներին կից գործել են գրչության կենտրոններ, որոնք սկզբում մագաղաթի վրա, հետագայում նաև թղթի, ընդօրինակել են նախորդ դարերից ավանդված ձեռագիր մատյանները: Այդ ընթացքում կատարվել են տառերի արտաքին գծագրումների փոփոխություններ (հին երկաթագիր, միջին երկաթագիր, նոտրգիր, շղա և այլն): Միայն մի գիշերվա ընթացքում Սյունիքի Բաղաբերդ ամրոցում ասպատակող ցեղերի կողմից հրո ճարակ է դարձել շուրջ 10 հազար ձեռագիր մատյան: Միջնադարում քանի՞ այդպիսի գիշերներ են ապրել մեր գրչության մշակները:

Եվ եթե այսօր աշխարհում հայերեն ձեռագիր մատյանները 30 հազարից ավելի պատկառելի թիվ են կազմում, ապա, անտարակույս, դրանց քանակն առնվազն տասն անգամ ավելի է եղել: Արժե այդ կապակցությամբ հիշել, որ մեկ գրիչը(մարդը) իր ողջ կյանքի ընթացքում սովորաբար կարողանում է ընդօրինակել ընդամենը մի քանի տասնյակ մատյան: Այդտեղից կարելի է եզրակացնել, թե դարեր շարունակ գրիչների ինչպիսի հսկա բազմություն է տքնաջանորեն աշխատել՝ լեզվական գրավոր մշակույթը պահպանելու և հետագա սերունդներին փոխանցելու համար:

Ներքին և արտաքին փոփոխությունները. ինչու՞ և ինչպե՞ս են տեղի ունենում դրանք

Սովորաբար տարբերակվում են փոփոխությունների երկու տիպ՝ ներլեզվական (լեզվում կատարվող, ներքին) և արտալեզվական (արտաքին՝ սոցիալական գործոններով պայմանավորված): Երկրորդ դեպքում փոփոխությունները վերաբերում են լեզվի գործառույթների ծավալների փոփոխություններին (ընդարձակմանը կամ նեղացմանը): Ինչ խոսք, լեզուների պատմության մեջ այդ երկու տիպերը սովորաբար հանդես են գալիս փոխկապակցված:

Ինչպե՞ս են լեզվում արտացոլվում տարիքային վերացարկումները և մտածողության տրամաբանական կապվածությունը

Միջնադարյան Եվրոպայում գրաճանաչություն սկսում էին սովորել տասը տարեկանից: Եկեղեցասլավոներեն կարդալը, օրինակ, սովորեցնում են երկու տարի: Հինգերորդ դարի հայ վարքագիր Կորյունը գրում է նույնպես գրագիտություն սովորեցնելու Մաշտոցի առաջին փորձի մասին, որը տևել է «ամս երկու», հայագիտության մեջ շատ վեճեր առաջացրած «երկու՞ տարի»,

թե՞ «Երկու ամիս» մեկնաբանությամբ: Էրազմ Ռոտերդամցին Ցիցերոն (Կիկերոն) ճարտասանին համարում է երկարաբան: Մեզանից երկու դար առաջ այդպես էին համարում նաև էրազմին: Մեր օրերում երկարաբան են դիտվում նաև անցյալ դարի գրողները: Ժամանակի ընթացքում լեզվական հաղորդակցումը ձգտում է նվազագույն միջոցներով առավելագույն իրազեկում ապահովել: Բնական է, որ դա իրականացվում է լեզվական նշանի՝ բառի, առավելագույնս խնայողաբար գործածելու միջոցով:

Ինչքան զարգանում է լեզուն, այնքան նրանում հստակ անվանումներին փոխարինելու են գալիս վերացական հասկացությունները: Հայտնի է, օրինակ, որ գրեթե բոլոր լեզուների բանահյուսական կտորներում բացակայում են բարդ ստորադասական տիպի նախադասությունները; Անշաղկապ կառույցները կամ համադասականի շաղկապները լեզվի զարգացման հետագա փուլերում իրենց տեղը զիջում են բարդ ստորադասական կառույցներին: Վերջիններս բնորոշ են գրական-գրավոր լեզվին: Անգամ զարգացած լեզվի խոսակցական տարբերակում բարդ ստորադասական կառույցները դուրս են մղվում: Այսպես, օրինակ, արդի ֆրանսերենում, ինչպես նկատել է Ֆրեդերիկ Ֆեյդին (տե՛ս «Հայագիտական միջազգային 2-րդ գիտաժողովի նյութեր»), բանավոր խոսքում ֆրանսիացին ստորադասականի առանձին տիպեր գրեթե չի օգտագործում: Այդ նշանակում է, որ բնական լեզուները, ինչքան էլ ձգտեն վերացական մտածողության, լեզվական «բարձր» ոճերին, միևնույն է, նախընտրում են «բանահյուսական» լեզվի պարզությունը, մինչդեռ վերացական իմաստներ, կենսական բարդ հարաբերություններ և այլն արտահայտելու համար դիմում են զանազան նշանային-ձևային համակարգերի, ինչպես՝ երթևեկության նշանների, քիմիական տարրերի անվանումների, գրադարանային կոդային դասակարգումների և այլն:

Լեզվական շփումներ

Լեզուների փոխազդեցությունը հանրալեզվաբանության մեջ սովորաբար դիտվում է որպես լեզվական բարեշրջման գլխավոր գործոն: Ինչպես նշում են շատ լեզվաբաններ, այս կամ այն լեզվի ինքնատիպությունը գերազանցապես պայմանավորված է երկու գործոնով ա) նրա ծագմամբ և ցեղակից լեզուների շրջանում գրաված դիրքով և բ) լեզվական շփումներով, այսինքն՝ ինչ կարգի ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ է հարաբերվում: Որևէ լեզվի այլ լեզուների հետ ունեցած շփումների պատմությունը տվյալ լեզվի իրական պատմության հայելին է: Աշխարհում գրեթե բոլոր լեզուները կրել են, ներկայումս կրում են և ապագայում էլ կկրեն ամենատարբեր լեզուների ազդեցություններ:

Լեզվական շփումները կարելի է դիտարկել երեք մակարդակով՝ ա) զուտ լեզվաբանական, բ) հանրալեզվաբանական և գ) հոգելեզվաբանական:

Առաջին դեպքում, երբ դիտարկումը կատարվում է զուտ լեզվաբանական հայեցակետով, քննվում են երկու կամ ավելի ինքնուրույն լեզվական համակարգերի փոխազդեցության և փոխներթափանցման երևույթները: Երկրորդ դեպքում, երբ հիմք է ընդունվում հանրալեզվաբանական մոտեցումը, քննվում են տարալեզու հանրույթների փոխազդեցության երևույթներն իբրև լեզվական հստակ իրադրություններ: Վերջապես երրորդ մոտեցման դեպքում հիմք է ծառայում հոգելեզվաբանականը, երբ դիտարկվում են խոսողների ինչ-որ խավի երկլեզվության երևույթներն իբրև անհատական դրսևորումներ: Որ լեզուն է հզոր, ո՞ր լեզուն է հաղթում: Արդյո՞ք միշտ հաղթող ազգի լեզուն է ստանում գերապատվություն: Պատմությունը վկայում է, որ տարբեր են լեզուների և ազգերի ճակատագրերը: Քիչ չեն դեպքերը, երբ հաղթական ժողովրդի լեզուն ի վերջո չի հաղթում: Ահա թե ինչու հանրալեզվաբանները շեշտում են, որ ազգի գինվորական հաղթարշավը լեզվի նույնպիսի հաղթանակներ

տակավին չի ակնկալում: Ավելին, շատ հարուստ և մշակված լեզուն չէ, որ պայքարից դուրս է գալիս հաղթանակած: Գիտական գրականության մեջ բերվում են սովորաբար հետևյալ օրինակները, որպես հռոմեական արշավանքների արդյունք, Գալիան, Դակիան, Պիրենյան թերակղզու էթնիկ խմբավորումները «դարձան» լատինալեզու, ռոմանական, իսկ ահա բրիտների լեզուն այդպիսի ձուլման չենթարկվեց: Որպես բացատրություն բերվում է հետևյալ փաստարկը, տեղաբնիկների և եկվորարշավողների թվային անհամամասնությունը հոգուտ առաջինների էր. շփումների ոչ այնքան ինտենսիվ լինելը հիմք հանդիսացավ տեղաբնիկների լեզվի պահպանման:

Պատմական Ադվանքում տեղի ունեցած գործընթացները նման են Գալիայի և Դակիայի ռոմանացմանը: Ազերիների լեզվական մշակույթը հաղթող է ճանաչվում, թեև այս դեպքում ադվանների պատմա-էթնիկ առանձին «կղզյակներ» մնում են մինչև 20-րդ դարի վերջը՝ Նուխիի Կուտկաշեն, Վարդաշեն գյուղերում: Հայաստանում նման էթնիկ կղզյակներ գոյություն ունեն Արզնի գյուղում (գերազանցապես ասորիների բնակեցմամբ), Զովունիում (գերազանցապես՝ եզդիների): Հոգելեզվաբաններին հուզող ամենակարևոր հարցն այն է, թե նույն մարդու «գլխում» ինչպես են տեղավորվում, «գոյակցում» երկու լեզու, ինչպես են մրցակցում երկլեզվության բաղադրիչները: Շատ ավելի լայն խնդիրներ են հանդիսանում լեզվամիությունների կազմումը, աշխարհաքաղաքային տեղաշարժերը ու դրանց հետևանքով լեզվական իրադրությունների փոփոխման գործընթացները:

Լեզվական փոխներթափանցումները (ինտերֆերենցիա) և թարգմանչի «կեղծ բարեկամները»

Ցանկացած երկու լեզվի շփում հար և նման է երկու մարդու խոսքային փոխգործունեության: Ոչ մի արդյունք չի

ստացվի, եթե նրանցից մեկը չգնա փոխզիջման: Ինչպե՞ս է դա դրսևորվում, եթե խոսողներից մեկին նկատի ունենանք, ապա գոնե մի քանի բառ ու արտահայտություն պիտի սովորի խոսակցի լեզվից: Լեզուների դիտարկման դեպքում, նրանք նույնպես պետք է ընդառաջ քայլեր կատարեն: Երկլեզվության երևույթները սկզբում անհատական բնույթ են կրում: Մարդ յուրացնում է դրացիների լեզվից ինչ-ինչ ձևեր: Տարբերակվում է երկլեզվության երկու տեսակ՝ ինքնավար և համատեղվող:

Երբ առաջին լեզվով խոսողը մասնակիորեն յուրացնում է 2-րդ լեզուն, խոսքային գործունեության ժամանակ երբեմն դիմում է այդ 2-րդ լեզվի առանձին բառերին՝ դրանք համարելով ավելի արտահայտիչ: Այդ գործընթացը շարունակվում է և ստեղծվում է այնպիսի վիճակ, որ այդ երկու լեզուների գործածությունը հավասար բաշխում է ձեռք բերում: Լեզվական փոխներթափանցման երևույթը ունի տիպական մի հատկանիշ ևս. ինչպես էլ խոսողը արտահայտվի 2-րդ լեզվով՝ միևնույն է, նա գերազանցապես հենվում է առաջին՝ մայրենի լեզվի փորձառության վրա:

Թարգմանչի «կեղծ» բարեկամները այնպիսի բառեր են, որոնք իրենց արտաքին թաղանթով նույնացված են, սակայն միանգամայն տարբեր իմաստներ են արտահայտում, օրինակ՝ դեկադե բառը անգլերենում նշանակում է «10 տարի», ռուսերենում «10 օր», գենիալ բառը անգլերենում ունի «բարի, ուրախ» իմաստը, իսկ ռուսերենում՝ «հանճարեղ»: Խոքը դիտարկման ժամանակ լեզուներում ըստ էության չենք գտնի այնպիսի բառեր, որոնց իմաստները լիովին «ծածկեն» իրար: Ռուսերենում և ադրբեջաներենում առկա են, օրինակ, նույն **սարայ** և **բաշկա** բառերը: Եթե ադրբեջաներենում սարայը պալատն է, ապա ռուսերենում այն ունի «ցախատուն» իմաստը:

Պատահական չէ, որ ֆրանսիացի մեծ մտածող Վ. Հյուգոն ասել է. «Որևէ օտար լեզու կարելի է սովորել մի քանի ամսում, բայց մայրենի լեզուն՝ ողջ կյանքում»: Այդ մի քանի ամիսը

նկատի ունի պարզապես ինտերֆերենցիայի հիմք դնելը, հետո սկսվում է լեզվի բուն յուրացման գործընթացը: Ակնհայտ է, որ մերձցեղակից լեզուները յուրացվում են ավելի հեշտ, քան հեռու եղողները: Մեր դիտարկումները, սակայն, վկայում են հակառակ երևույթի ճշմարտացիության մասին: Այսպես՝ բարբառակիր որևէ անհատ տվյալ գրական լեզվի նորմը յուրացնում է ավելի լավ, եթե իր մայրենի բարբառը շատ ավելի հեռու է - գրական լեզվից: Ինչքան մայրենի բարբառն ու գրական լեզուն մոտ են իրար, այնքան առաջին հայացքից հեշտ է «յուրացվում», գրական լեզուն, սակայն, բարբառային հետքերը բանավոր հաղորդակցման մեջ մինչև վերջ չեն հաղթահարվում-օրինակ Արարատյան բարբառը, կրողը գրական արևելահայերեն չի կարողանում խոսել անթերի, քան, ասենք, Ղարաբաղի բարբառի կրողը, քանի որ Ղարաբաղի բարբառը իր կառուցվածքով անհամեմատ ավելի հեռու է Արարատյան բարբառից: Ամեն դեպքում հարցը հանրալեզվաբանական արժեք ունի և պետք է այլ լեզուներ ևս քննության առարկա դարձնել: Այսպես, ադրբեջաներենի Բաքվի բարբառն ընկած է գրական ադրբեջաներենի հիմքում: Հետաքրքիր է պարզել նույն կտրվածքով, ասենք, Նուխիի բարբառակրի և Բաքվի բարբառակրի կողմից գրական ադրբեջաներենի նորմի յուրացման առանձնահատկությունները (տե՛ս М. Ширалиев, К вопросу об изучении и классификации азербайджанских диалектов, Изв. Азерб. фил. АН СССР, 1941, N4: Ինչպես նաև՝ Н.Гаджиев, Азербайджанский язык, Тюркские языки, ЯН СССР т.2, М.1965):

Ինչպես յուրաքանչյուր լեզվի, այնպես էլ կովկասյան երեք գլխավոր գրական լեզուների (հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն) զարգացման պատմական կտրվածքն ընթացել է երկու ուղղությամբ՝ ա) այնպիսի զարգացումներ, որոնք ավելի են մեծացրել լեզվագոյացությունների միջև եղած տարբերությունների աստիճանը և բ) զարգացումներ, որոնք մերձեցում են ապահովել լեզուների և բարբառների միջև: Ընդ որում այդ երկու

հիմնական գործընթացները հաճախ տեղի են ունենում ոչ միայն փոխնիփոխ, այլև զուգընթաց: Հանրալեզվաբանության մեջ առանձնացվում է երկու փուլ՝ դիվերգենցիայի (լատիներեն *differentia* -տարբերություն), որի ընթացքում տեղի է ունենում լեզուների, բարբառների հետագա հեռացում, անջատում իրարից և կոնվերգենցիայի (լատիներեն *convergera* - մերձենալ), երբ տեղի են ունենում հակառակ գործընթացները՝ մերձեցում, ձուլում, երբ այնքան են մոտենում, որ ձուլվում են, դառնում մեկ: Պատմական բարբառների և արդի այդ նույն բարբառակիրների ապրած տարածքները հաճախ չեն համընկնում: Այսպես, Երևանի տարածքում գործող բարբառների մեծ մասը պատկանում է արևմտյան բարբառների խմբին Վանի, Հաճրնի, Արաբկիրի, Կիլիկիայի և այլն:

Անցյալ դարի կեսերին բարբառների դեմ մղված ուղղակի և անուղղակի, հաճախ ծայրահեղացված պայքարի հետևանքով Անդրկովկասում ևս գրական լեզվի հիմքերն ամրապնդելու միտումով թուլացան բարբառները, հաճախ՝ նաև վերացան: Ավելի պահպանողական եղան գրական լեզվից բավական հեռու գտնվող բարբառները (այսպես՝ Հայաստանում Գյումրիի բարբառը), մինչդեռ Արարատյանի մի շարք խոսվածքներ պարզապես վերացան:

Աղբբեջաներենի բարբառային 4 հիմնական խմբերի 1) արևելյան (Բաքվի, Շամախիի), 2) արևմտյան՝ Գանձակի, Այրումի, 3) հյուսիսիս՝ Նուխիի, Զաքաթալայի, Կախիի, 4) հարավային՝ Թավրիզի, Օրդուբադի և այլն զարգացման ուղղվածության մեջ գերիշխել է մերձեցումը (հատկապես՝ Բաքվի, Շամախիի, Ղուբայի բարբառների և գրական աղբբեջաներենի միջև) (տե՛ս Ն.Գաջիև, Աղբբեջաներեն, նույն տեղում, էջ 66):

**Լեզուների տարժամանակային փոխներթափանցումները
(Սուբստրատ, սուպերստրատ, ադստրատ)**

Լեզուների «միախառնումը» հաճախ ոչ թե մի երրորդ լեզու են մեջտեղ բերում, այլ դրանցից մեկն անհետանում է, մյուսում թողնելով որոշակի «հետքեր»: Ահա այդ «նստվածքային» հետքերը լեզվաբանության մեջ բաժանում են երեք տիպի, ա) սուբստրատային (լատիներեն՝ substratum- sub-տակը, ենթա, stratum-շերտ, բառացի՝ ենթաշերտ), բ) սուպերստրատ (մակաշերտ), գ) ադստրատ (լատիներեն ադ-շուրջը, մերձակա): Առաջին դեպքում նկատի են առնվում ենթաշերտի տեղական դուրս մղված լեզվի հետքերը հաղթած եկվորների լեզվի մեջ (ասենք, օրինակ, աղվաներենի հետքերը ազերիների լեզվում): Օսերենը հայտնի է որպես իրանական լեզվախմբին պատկանող հնդեվրոպական լեզու, թեև ունի կովկասյան լեզուներին հատուկ բոլոր հնչյունները: Այն կարծիքն է իշխում, թե դրանք «ժառանգություն» են կովկասյան լեզուներից: Հայոց լեզուն, լինելով հանդերձ հնդեվրոպական լեզվարնտանիքի անդամ, «ձեռք է բերել» կովկասյան լեզուներին հատուկ բաղաձայնական համակարգը: Ենթադրություն է արտահայտվել, թե հայոց լեզուն «ազդված է իսալդերից, որոնց հետ միախառնվելով, մեկ ժողովուրդ ենք կազմել» (Հր. Աճառյան, էջ 406): Ինքը՝ Հր. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» երկհատորյակի առաջին հատորում, անդրադառնալով հայերին միախառնված մի շարք ցեղերի հարցին, ցույց է տվել, որ յուրաքանչյուր ցեղ իր հետ բերել է այնպիսի շերտեր, որոնք էլ հայերենի ենթաշերտերից են: Եթե դժվար է վաղուց ձուլված մի շարք լեզուների (աղվաներենի, իսալդերենի և այլն) ենթաշերտային հետքերը պարզել, ապա դյուրությամբ դա կարելի է անել կենդանի լեզուների դեպքում: Այդպես՝ փարսի, ոչխար բառերը վրացերենից են, տղա, շղթա, ձեթ՝ ասորերենից և այլն: Գիտնական Դիոը ներկայացրել է ուտիացի մի երեխայի լեզվական հետևյալ «խառնուրդը», դիմելով մորը՝ երեխան ասել է. «za hac tada (ինձ հաց տուր): Անմիջապես

երեխան «ուղղում» է իր սխալը, inj sum tur (ինձ շում տուր): Ճիշտը ուտիերեն՝ za sum tada է: Մի երեխա (օրինակը բերվում է ըստ Աճառյանի) պապի держи կանչին ի պատասխան ասել է. «Դերժում եմ...»: Մանուկը, որ երկլեզու էր, իսկապես ճիշտ էր հասկացել բառի բուն իմաստը՝ բռնում եմ: Աճառյանը եզրակացնում է. «Մենք էլ այսօր ասում ենք պեչատում եմ, բժշկում եմ... Ռուսերենի և հայերենի մի իսկական խառնուրդ է ռուսախոս մի կնոջ. «Պեպելնիցու տուր» նախադասությունը, որ ռուսաց լեզվի քերականությամբ է «ձևված» (Հր. Աճառյան, էջ 411): Երկրորդ (սուպերստրատ) դեպքում եկվորների լեզվի հետքերն են հաղթանակած տեղաբնիկների լեզվում (եկվորները յուրացնում են տեղական լեզուն, որը դառնում է եկվորների համար մայրենի լեզու): Ադստրատի (մերձաշերտի) դեպքում նկատի են առնվում երկու դրացի լեզուների տևական շփումների արդյունքում յուրաքանչյուր լեզվում առաջացած լեզվական շերտերը: Ադստրատի դեպքում երկու լեզուների ձուլում տեղի չի ունենում: Ադստրատի երևույթներ կարելի է գտնել Վրաստանում հայերի և վրացիների տևական շփման արդյունքում, հատկապես Հավլաբարում (Կիկաբիձեի մի հարցազրույցում նշվում է, թե ինչպես հայերը վրացիների բազմաթիվ բառեր ու արտահայտություններ էին յուրացրել և հարաբերաբար ավելի քիչ թվով, բայց, այնուամենայնիվ, նաև հայերենի առանձին արտահայտությունները տեղ էին գտել թաղամասի վրացիների լեզվում): Հետաքրքիր կլիներ այս առումով ժամանակին դիտարկել Բաքվում ապրող հայերի լեզվում ադրբեջաներեն և ռուսերեն բառերի ու ոճերի ընդհանուր տեսակարար կշիռը, ինչպես նաև Երևանում ապրող ադրբեջանցիների բառապաշարում հայերենից փոխառած ձևերն ու ոճերը: Նկատի ունենք մինչև անցյալ դարի 90-ական թվականները: Օրթաղ (համակիր), ադաշ (ընկեր), դոստ (բարեկամ), դուշման (թշնամի) Ադրբեջանում ապրող հայի խոսքում և **լիագոր, տեղեկանք** և այլն Հայաստանում ապրող ադրբեջանցու խոսքում:

Մուբստրատային երևույթ է թրակերենի շերտը նոր քաղկանյան լեզուներում ալբաներենում, ռումիներենում և այլն: Մուպերստրատային երևույթներ են թյուրքական խոսվածքների ազդեցության հետքերը Վոլգա-կամյան բուլղարների լեզվում: Հարավսլավոնական բուլղար ժողովրդի էթնոնիմը (ազգանվանումը) թյուրքական սուպերստրատային երևույթներից է:

Մուպերստրատային ծագում ունի նաև Ֆրանսիա էթնոնիմը. գերմանալեզու ֆրանկները մ.թ. 5-6-րդ դարերում գրավեցին Գաղիան, ստեղծեցին ֆրանկների պետությունը, սակայն որդեգրեցին տեղական գալլերեն-ռոմաներեն լեզուն: Փաստորեն ֆրանսիացիների ինքնանվանումը գերմանական սուպերստրատայի օրինակ է:

Ադստրատի լավագույն օրինակներ են հանդիսանում լեհերեն-բելոռուսերեն, բելոռուսերեն-լիտվերեն լեզվական փոխազդեցությունները՝ նշված պետությունների սահմանամերձ գոտիներում: Միջնադարում (9-11-րդ դդ.) ադստրատային երևույթներ էին առկա անգլերենում՝ սկանդինավյան ազդեցությամբ:

Ի տարբերություն հին հայերենի թեքահամադրական բնութագրի, աշխարհաբարի վերլուծականությունը Հր. Աճառյանի կարծիքով արդյունք է թյուրքական անալիտիզմի (հմմտ. Հր. Աճառյան, ԼՔՀԼ): Արտեմ Սարգսյանը իր «Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը» աշխատանքում դիտարկելով այս հարցը, բազմաթիվ օրինակների հիման վրա ցույց է տվել, որ աշխարհաբարի վերլուծականությունը ոչ թե դրսի (տվյալ դեպքում՝ թյուրքական լեզուների), այլ լեզվի ներքին կառուցվածքի զարգացման ընդհանուր ուղղվածության արդյունքն է. հմմտ., օրինակ, զմտաւ ւ ածել - մտածել, ի կիր արկանել - կիրառել և այլն: Նույն ձևով թյուրքերենի ազդեցությամբ է մեկնաբանվում խոսակցական արևմտահայերենում ձևավորված շարունակական ներկան կ'ուտէ կոր, կ'երթայ կոր և այլն: Անգլերենի շարունակական ներկայի իմաստին համարժեք այս

ձևը, թեև գրական արևմտահայերենում իր կայուն տեղը չի գտել, այնուամենայնիվ մնում է իբրև ժողովրդախոսակցական ոլորտի բնորոշ հատկանիշներից մեկը: Այդպես պետք է ընդունել թյուրքապարսկական մի շարք բառաձևերի առկայությունը հայոց լեզվի երկու ճյուղերի լոկ բարբառային կամ ժողովրդախոսակցական ոլորտներում:

Վերջապես, արժե նշել, որ լեզուների փոխհարաբերության պատկերը շատ ավելի բարդ և փոխկապակցված է, քան այն, ինչ ներկայացվում է հաճախ: Մաքստրատային, սուպերստրատային և ադստրատային երևույթները ժամանակն է դիտարկել ոչ թե մակերեսային, այլ ըստ հնարավորին խորքային քննությամբ: Մի կարևոր կետ ևս արժե նշել, որ, ի տարբերություն լեզվակիրների բախումների, լեզվական շփումները «խաղաղ» բնույթ են կրում և լեզուների խաչավորման կամ ձուլման մասին կարելի է խոսել միայն բացառիկ դեպքերում:

Լեզվամիություններ

Ժամանակակից Բալկաններում ստեղծվել է, այսպես կոչված, բալկանյան լեզվամիությունը, որը ներառում է ոչ միայն ցեղակից, այլև ոչ ցեղակից մի շարք լեզուներ:

Ծագումնաբանորեն իրարից բավական հեռու գտնվող այնպիսի լեզուներ, ինչպիսիք են՝ հունարենը, ալբաներենը, սերբերենը, խորվաթերենը, բուլղարերենը և այլն, կազմում են մեկ լեզվական միություն:

Լեզվական միություն տերմինը առաջին անգամ կիրառել է իշխան Ն. Տրուբեցկոյը իր «Բաբելոնյան աշտարակն ու լեզուների խառնումը» աշխատանքում, որը առաջին անգամ լույս է տեսել 1923 թվականին (տե՛ս սույն աշխատանքի վերահրատարակությունը Ն. Տրուբեցկոյի ընտիր երկերում և՝ Вавилонская башня и смешение языков, Известия АН СССР, серия лит. и языка, т. 49, 1990, N 2-ում):

Թե ինչպես են ձևավորվում լեզվամիությունները, հանրալեզվաբանությունն այս հարցին տալիս է հետևյալ պատասխանը. տևական, զանգվածային և հավասարավարկանշային շփումների և բազմալեզվության պայմաններում ստեղծվում է մի նորագոյացություն, որը կոչվում է լեզվական միություն:

Բալկանյան լեզվամիության առանձնահատուկ գծերից են՝ հոլովական համակարգի պարզեցումը, որոշյալ հոդի անունից հետո դրվելը, թվականների կազմության ընդհանուր մոդելի՝ 11-ից 19-ը որդեգրումը, անորոշի փոխարինումը ստորադասական նախադասության կառուցվածքով և այլն: Չենք խոսում այլևս ընդհանուր բառապաշարի ձևավորման մասին:

Ռ. Յակոբսոնը, հիմնվելով լեզուների հնչունաբանական տիպաբանական հատկանիշների վրա, առանձնացնում է «եվրասիական լեզվամիությունը»: Բ. Հավրանեկը «համաեվրոպական գիծ է» դիտել շեշտի կայունացումը որոշակի վանկի վրա՝ անգլերենում, ֆրանսերենում, գերմաներենում, լեհերենում, չեխերենում, հունգարերենում:

Մշակութագաղափարական գետնի վրա ներկայումս տեղի են ունենում լեզուների շփման ազդեցության երևույթներ նաև մեծ հեռավորության վրա. ինչպես՝ անգլերենը բազմաթիվ լեզուների վրա ներգործելով՝ ստեղծում է նորանոր լեզվամշակութային միություններ:

Աշխարհի գլոբալացումը աստիճանաբար ուղեկցվում է «մշակութային երկլեզվության» գերիշխանության տարածմամբ: Փոխառությունների հեղեղը «թափվում է» վերնից՝ զանգվածային լրատվամիջոցների, թարգմանիչների, մեկնաբանների, միջազգայնագետների միջոցով, մարզական, զբոսաշրջության, գիտատեխնիկական օրավուր աճող շփումների արդյունքում: CNN-ի, Ռոյտերի, Ֆրանսս պրեսի և այլնի առկայությունը լեզվական շփումներին առավելագույն մեծ սահմաններ է ընձեռում, ուր անգլերենի «էքսպանսիայի» դեմ հակաքայլեր են փորձում մշակել արդեն ոչ թե համեմատաբար սահմանափակ բնակչություն

ունեցող պետություններն ու լեզուները, այլև Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի պես հզոր պետությունների համապատասխան մարմինները: Ահա թե ինչու, հատկապես վերջին երկու տասնամյակներում ֆրանկոֆոնյան, գերմանական համապատասխան կազմակերպությունները արտերկրում, ներառյալ հարավ-կովկասյան տարածքում, փորձում են զանազան միջոցներով պահպանել գերմաներենի և ֆրանսերենի մրցունակ լինելը՝ անգլերենի ներկա հաղթարշավի պայմաններում:

Լեզվափոփոխություն, թե՞ կատարելագործում

Ինչպե՞ս բնութագրենք լեզվի պատմական զարգացման արդյունք հանդիսացող փոփոխությունները՝ առաջընթաց, թե՞ հետընթաց, նահանջ: Միջնադարում նկատվող լեզվական փոփոխությունները համարվում են լեզվի «փչացում», աղճատում: Բանն այն է, որ կար յուրօրինակ տիպար, որի անաղարտ պահպանումը համարվում էր գերխնդիր: Միայն պատմահամեմատական լեզվաբանությունը ապացուցեց, որ լեզվական փոփոխությունը հարատև գործընթաց է, ուստի այդպիսի փոփոխությունները պարզապես լեզուների կենսաձև են:

Լեզուների զարգացման միասնական օրենքներ շատերն են փորձել ձևակերպել (Ա. և Ֆ. Շլեգելներ, Վ. Հումբոլդտ, Ա. Շլայխեր, Ն. Մառ և այլք), սակայն լեզուների զարգացումները միազիժ և կաղապարված չեն (հմմտ. **տիպաբանություն** բաժինը): Լեզվական տիպերը պետք է ներկայացնել իբրև զարգացման տարբեր փուլերի արդյունք, մարդկության պատմության միասնական, ուղղորդված գործընթաց: Տակավի՛ն երիտքերականները հրաժարվեցին լեզուների պատմության գնահատողական արատավոր գծից: Զգուշավոր այս մոտեցմանը հակադրվեց Ն. Մառը, որի քառատարր վերլուծության մեթոդը «միասնական

գլոտոգոնիական մեթոդ» որակմամբ, նույնպես կես դար առաջ լիովին մերժվեց:

Լեզվի առաջընթացը կամ կատարելագործումը քերականության այս կամ այն կառուցատիպի հետ ուղղակիորեն կապելը վաղուց մոռացված բան է: Սակայն, եթե էդ. Մեայիրը կամ Ժ. Վանդրիեսը այդպիսի փորձության չեն ենթարկում իրենց, ապա Օ. Եսպերսենը, այդուհանդերձ, կարծում է, թե վերլուծականությունը լեզվի առաջընթացի վկայությունն է: Թե այդ, թե Խ. Գաբելենցի «լեզվի սպիրալաձև զարգացման» տեսությունները նույնպես ընդունելություն չգտան: Մեր կարծիքով, ճիշտ է Վ. Սկալիչկան, որ շուրջ 7 տասնամյակ առաջ, ուսումնասիրելով լեզվի կոնկրետ տիպի հետ մշակութային զարգացման ուղիները, ի վերջո եկավ այն եզրահանգման, որ «չենք հաստատում, թե այդպիսի կապեր բնավ գոյություն չունեն, այլ պարզապես դրանք տակավին հայտնի չեն» ("Новое в лингвистике", 1963, էջ 25):

Առայժմ ինչպես հանրալեզվաբանությունը, այնպես էլ բուն լեզվաբանությունը և նրա բաժին հանդիսացող լեզվատիպաբանությունը շատ անելիքներ ունեն լեզուների զարգացման առարկայական ուղղվածությունները նախանշելու ասպարեզում: Մինչ այժմ կատարված փորձերը, ըստ էության, գրեթե գիտության ներածությանն են պատկանում: Քանի որ առայժմ պարզված չէ, թե առհասարակ ինչն է հնարավոր և ինչն է բացառվում լեզուներում, ինչպիսի ընդհանրությային շարքեր են առկա կենդանի լեզուներում և այլն: Ինչ խոսք, այդ հարցերի պատասխանները պետք է տա լեզուների տիպաբանությունը (հմմտ. համապատասխան հատվածը):

Մարդկային լեզուների զարգացման պատմությունը վկայում է, որ եթե մի շարք լեզուներ «շարժվել են» թեքականությունից դեպի կցականության, ապա այլ լեզուներում գործել է հակառակ ընթացքը, այսպես՝ չինարենում, տիբեթերենում և այլն, վերլուծական կառուցվածքների շարժումն ընթացել է դեպի համադրականություն: Այդ առումով հայերենը հանրալեզվաբա-

նության համար հիանալի օրինակ է այն բանի, թե ինչպես լեզվի զարգացման տարբեր փուլերում տեղի են ունենում միանգամայն հակոտնյա զարգացումներ՝ մեկ դեպի համադրականություն, մեկ դեպի վերլուծականություն, երբեմն՝ համաժամանակյա կտրվածքով՝ երկու ուղղությամբ միաժամանակ: Խնդիրը դրանց տեսակարար կշիռը պարզելու մեջ է: Իսկ դա լեզվաբանական տիպաբանության կարևորագույն խնդիրներից է: Որպես եզրակացություն՝ կարելի է շեշտել, որ լեզվում կատարվող ամեն փոփոխություն կատարելագործում չէ, թեև հարց է, թե ի՞նչ ենք հասկանում կատարելություն ասելով: Ըստ էության, կատարելագործում ասելով նկատի է առնվում ոչ թե բուն քերականական «տեխնիկան», հնչյունական կառուցվածքը, այլ եղած լեզվական նյութի բովանդակային հստակեցումը, հարստացումը, ճշգրտումը: Իսկ դա կատարվում է բառապաշարի, հատկապես՝ տերմինաբանության ոլորտում: Կարելի է հետևյալ գուգահեռն անցկացնել. հարուստ և աղքատ լեզուն ծավալուն և սեղմ բառարանների մեջ չէ, այլ բառիմաստների հստակեցման, ոճերի տարբերակման բարձր մակարդակի մեջ: Մի խոսքով, կարևորը լեզվի ձևը չէ, այլ այդ ձևի արտահայտած բովանդակությունը: Հասարակության անընդհատ կատարելագործումը ինքնաբերաբար բերում է լեզվի բովանդակային կողմի հարստացման, հետագա հստակեցման և ճշգրտման:

Լեզվական փոփոխությունների օրինաչափությունները

Աշխարհի վրա ներկայիս գոյություն ունեցող ավելի քան 4000 լեզուները, հակառակ իրենց բոլոր տարբերություններին, ազգային ինքնատիպ «տարագներին», ներկայացնում են մեկ մարդկային լեզվի միասնական տիպը: Լեզվական ընդհանրությունների և տարբերությունների խորը քննությունը հաճախ բացահայտում է արտաքնապես անկրկնելի ազգային լեզուների միջև եղած խորքային ընդհանրությունները:

Սովորաբար առանձնացվում է լեզվական հանրույթների երկու տիպ՝ ա) լեզվական փոփոխությունների և սկզբունքների խնդրում եղած հանրույթներ և բ) հանրույթներ՝ փոփոխությունների բովանդակության մեջ, այսինքն՝ տարբեր լեզուների զարգացման միտումները բացահայտող հանրույթներ:

Առաջին դեպքում պատասխան է տրվում այն հարցին, թե ինչու՞ և ինչպե՞ս են զարգանում լեզուները: Փոխվում է հասարակությունը, փոխվում է և լեզուն: Ի՞նչ աստիճանի են այդ փոփոխությունները փոխկապակցված, մանավանդ ինչպե՞ս է մեկը «արձագանքում» մյուսի փոփոխությանը, ահա այն հարցերը, որոնք առաջին հերթին հուզում են հանրալեզվաբանությանը: Ինչպես արդեն շեշտվել է, ցանկացած լեզվի բառապաշար փոխվում է շատ ավելի արագ, զրեթե կայծակնային, քան քերականական կառուցվածքը, որի զարգացումը բնութագրվում է խիստ ընդգծված պահպանողականությամբ:

Երկրորդ տիպի դեպքում հարցը ոչ թե վերաբերում է **ինչու**ին կամ ինչպեսին, այլ **դեպի ուր**-ին, լեզուների զարգացման ուղղվածությանը: Լեզվական հարաձուն փոփոխությունների մեջ ընդհանուրի և մասնակիի, մասնավորի փոխհարաբերությունների քննությունը նույնպես հանրալեզվաբանական կարևորագույն խնդիրներից է:

Լեզուների հանրային բարեշրջման ուղիների դիտարկումը բերում է այն առանցքային եզրահանգման, որ լեզվի կառուցվածքը դառնում է ավելի բարդ համակարգերի համակարգ, լեզվական միջոցների գործառական տարբերակումը ավելի է հստականում, մեծանում են ոճային զանազանությունները, առաջանում են արտահայտության պլանի նոր, «երկրորդային» տարբերակներ, մեծանում են լեզվի հաղորդակցային հնարավորությունները և, ի վերջո, ավելի է կարևորվում լեզվի դերը հասարակության կյանքում:

ՄԱՏՆԱՆՇՎԱԾ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

Աբրահամյան Ս., Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Ե., 1973:

Ադայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1976:

Ադայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:

Ադայան Է. Բ., Լեզվի գոյության տարբերակային ձևերը, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1973, N2;

Ադայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1-6, Ե., 1953-1978:

Այտրնեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վ., 1866:

Ավոյան Ռ., Լեզվական նշանը, Ե., 1975:

Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե. 1953:

Բարսեղյան Հ., Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1978:

Գրիգորյան Վ. Մ., Վարքագրության տիպաբանական-գուգադրական ուսումնասիրություն, ձեռագիր:

Դուրյան Ե., Լիակատար երկեր, հ. 5, Երուսաղեմ, 1935:

Չաքարյան Հ., Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում //Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Երևան, 1981:

Չաքարյան Հ., Սոցիոլինգվիստիկան, նրա արդի վիճակը և խնդիրները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, N 2:

Զաքարյան Հ., Երևան քաղաքի լեզվավիճակը, Ե., 1979:
Թոխմախյան Ռ., Ժամանակակից հայոց լեզվի բառային շեշտի
բնույթը, Երևան, 1972:

Թոխմախյան Ռ., Հայերենի շեշտաբանությունը, Երևան,
1983: Խաչատրյան Ա., Թոխմախյան Ռ. Զաքարյան, Հ. Հայերենի
խոսքի տեմպը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974,
N 6:

Ղազանճեան Յ., Նոր քերականութիւն արդի հայերէն
լեզուի, Իսթանպուլ, 1958:

Ղարագոյլյան Թ., ժամանակակից հայերենի ուղղախո-
սություն, Երևան, 1974.

Մուրադյան Կ., Բարսեղ Կեսարացի, Երևան, 1985:

Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական
ձևաբանության, Երևան, 1975:

Չահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ. Ա, Ե.,
1960: Չահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը,
Երևան, 1969:

Չահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածության,
Երևան, 1972:

Ջուղայեցի Խ., Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ,
1905: Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական
լեզուներ, Ե., 1985:

Սարգսյան Ա., Գրական արևմտահայերենը, ԼՈՀ, պրակ 3,
Ե., 1975:

Սարգսյան Ա., Դասական գրաբարի տիպաբանական
բնութագիրը // Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975:

Սարկաւազ Զ., Պատմութիւն, Վաղարշապատ, 1870:

Սևակ Գ., Ձեռնարկ էսպերանտո միջազգային լեզվի, Ե.,
1930: Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ
պատմության, Երևան, 1948:

Տէր-Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Տոնիկեան Փ. Հայոց
լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1967:

Տերոյեան Ա., Հանրագիտութիւն որ է համազգային կրթութեան նոր ոճ մը, Վենետիկ, 1907:

Аверинцев С. Поэтика ранневизантийской литературы, М., 1977,

Аветян Э, Г. Природа лингвистического знака. Ереван, 1968. Аврорин В. А. Проблемы изучения функциональной стороны языка.—Л., 1975.

Акуленко В. Вопросы интернационализации словарного состава языка. М. 1972.

Апресян Ю. Д. К вопросу о структурной лексикологии, ВЯ, 1962, N3.

Асланов А. Азербайджанский язык в орбите языкового взаимодействия, Баку, 1988.

Бабунашвили Е. А. Антоний I и вопросы грузинской грамматики. — Тб. 1970 (на груз. яз.).

Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955.

Баскаков Н. А. Структура слова в тюркских языках //Исследования по сравнительной грамматики тюркских языков. Ч. I. Фонетика. М., 1955.

Белл Р. Т. Социолингвистика: цели, методы и проблемы. М., 1980.

Бенвенист Э. Общая лингвистика. М., 1974.

Березин Ф. М. Русское языкознание конца XIX — начала XX века. -М., 1976.

Березин Ф. М., Головин Б.Н. Общее языкознание. М., 1979.

Березин Ф. М. История лингвистических учений, 2-е изд., испр. и доп. — М.: Высшая школа, 1984. — Гл. 14 ("Советское языкознание").

Бетиашвили А. Ф. Философия и поэзия. Философские проблемы поэтической речи. Тб. 1972.

Библер В. С. Мышление как творчество. М., 1975.

Бодуэн де Куртенэ И. А. Языкознание как лингвистика XX века. — В кн.:

Бодуэн де Куртенэ И. А. Языкознание // Избранные труды по общему языкознанию. — М. 1963. — Т. I, II.

Бондалетов В. Д. Научно-технический прогресс и язык // Русская речь. — 1978. — №3.

Бондалетов В. Д. Ономастика и социолингвистика // Антропонимика. — М., Наука, 1970.

Бондалетов В. Д. Условные языки русских ремесленников и торговцев. Словопроизводство / Под ред. и с предисл. чл.-корр. АН СССР Ф.П.Филина. — Рязань. 1980.

Бондарко А. В. Грамматическое значение и смысл. Л. 1978.

Бондарко А. В. Опыт лингвистической интерпретации соотношения системы и среды. — ВЯ, N1, 1985.

Бородина М. А. К вопросу о различии между близкородственными языками и вариантами одного языка. Генетическое родство и структурные различия между языковыми системами..., Тезисы докладов. М., 1969.

Брайт У. Введение: параметры социолингвистики // Новое в лингвистике. М., 1975. Вып. 7,

Брук С. Население мира. Этнодемографический справочник, М., 1986.

Брутян Г. А. Гипотеза Сепира-Уорфа, Ереван, 1968.

Брутян Г. А. Очерки по анализу философского знания, Ереван, 1979.

Будагов Р. А. О предмете языкознания. ИАН ОЛЯ, 1972.

Будагов Р. А. Что такое развитие и совершенствование языка? — М., Наука, 1977.

Будагов Р. А. Язык — реальность — язык. — М.: Наука, 1983.

Вайнрайх У. Одноязычие и многоязычие // Новое в лингвистике. М., 1972. Вып. 6.

- Вандриес Ж. Язык. М, 1937.
- Вартазарян С. Р. От знака к образу. Ереван, 1973.
- Вико Дж. Основания новой науки об общей природе нации. Л., 1940.
- Винер Н. Кибернетика и общество. М., 1968.
- Виноградов В. В. Методы типологии. М., 1973.
- Выготский Д. С. К вопросу о многоязычии в детском возрасте //Хрестоматия по возрастной и педагогической психологии. М., 1980.
- Выготский Л. С. Избранные психологические исследования, М., 1956.
- Выготский Л., Лурия А. Примитив. Ребенок М., 1992.
- Гаджиев Н. Азербайджанский язык. Тюркские языки. АН СССР, т. 2, М., 1966.
- Гаджиева Н. З. Внешние и внутренние причины языкового изменения. — II Всесоюзная научная конференция по теоретическим вопросам языкознания. "Диалектика развития языка". —М., 1980.
- Гак В. Г. Сравнительная типология русского и французского языков, Л., 1977.
- Гаспаров В. Введение в социограмматику, М., 1977.
- Гофман А. Б. Французский социологизм и его эволюция (Историко-критический анализ).— Автореф. дис. канд. философ, наук.— М., 1974.
- Григорьев В. П. Культура языка и языковая политика //Вопросы культуры речи. М., 1963. Вып. 4.
- Гумбольдт В. О различии строения человеческих языков и его влиянии на духовное развитие человечества. — В кн.: Гумбольдт В. Избранные труды по языкознанию.—М., 1984.
- Дешериев Ю. Д. Проблемы функционального развития языков и задачи социолингвистики //Язык и общество. М., 1968.

Дешериев Ю. Д. Проблемы двуязычия и многоязычия. М., 1972.

Дешериев Ю. Д. Ступени развития двуязычия // Развитие национально-русского двуязычия. М., 1976.

Дешериев Ю. Д. К методологии теории билингвизма и методике билингвистических исследований // Методы билингвистических исследований. М., 1976.

Дешериев Ю. Д. Социальная лингвистика: К основам общей теории. М., 1977.

Дешериев Ю. Д. Введение в кн.: Взаимоотношение национальных языков и национальных культур. М., 1980.

Дешериев Ю. Д., Протченко И.Ф. Развитие языков народов СССР в советскую эпоху. — М.: Просвещение, 1968.

Дешериев Ю. Д. Теоретические проблемы социальной лингвистики. — М., 1981.

Домашнев А. И. Заметки по поводу социолингвистической концепции У. Лабова. — ВЯ, N2, 1982.

Дюркгейм Э. Метод социологии. — Киев— Харьков, 1899.

Жирмунский В. М. Национальный язык и социальные диалекты. — Л.: Художественная литература, 1936.

Жирмунский В. М. Проблема социальной дифференциации языка. — В кн.: Язык и общество. — М., 1968.

Журавлев В. К. История языка и диахроническая социолингвистика. — В сб.: Теоретические проблемы социальной лингвистики. — М., 1981.

Звегинцев В. А. О предмете и методах социолингвистики // Изв. АН СССР, Сер. лит. и яз. 1976. Т. 35.

Звегинцев В. А. Социальное и лингвистическое в социолингвистике. — Известия АН СССР. Серия языка и литературы, т. 41, N 3, 1982.

Исаев М. И. Социолингвистические проблемы языков народов СССР. — М.: Высшая школа, 1982.

Исаев М. И. Языковое строительство в СССР. М., 1979.

Кацнельсон С. Д. Типология языка и речевое мышление, Л., 1972.

Колб У. Изменение значения понятия ценностей в современной социологической теории.— В кн.: Современная социальная теория. Под ред. и сост. Г.

Беккер, А. Босков. —М., 1981.

Кондрашов Н. А. История лингвистических учений. — М.: Просвещение, 1979. —Гл. 9. — #42; гл. 14. — #53; гл. 15 (“Развитие советского языкознания”).

Косериу Э. Синхрония и история: Проблема языкового изменения //Новое в лингвистике. М., 1963. Вып. 3.

Косериу Э. Синхрония, диахрония и история.— НА, в. III.- М., 1963.

Лабов У. Исследование языка в его социальном контексте //Новое в лингвистике. М., 1975. Вып. 7.

Лapidус Б. А. Интенсификация процесса обучения иноязычной устной речи: (пути и приемы). М.г 1970.

Леви- Брюль Л. Первобытное мышление. М., 1980.

Леонтьев А. А. Язык, познание и общество. М., 1962.

Леонтьев А. А. Язык, речь, речевая деятельность. М., 1969.

Леонтьев А. А. Психология общения. Тарту, 1974.

Лернер К. Социальная природа языка и процесс языкового взаимодействия, Тб., 1989.

Лосев А. Ф. Введение в общую теорию языковых моделей. М.# 1968.

Лосев А. Ф. Знак. Символ. Миф. М., 1982.

Макаев Э. А. Отбор констант для построения типологической грамматики германских языков,— В сб.: “Структурно-типологическое описание современных германских языков”, М., 1966.

Мачавариани М. В. Две основные тенденции в философии языка и проблема знака в языкознании. — В сб.: Вопросы современного общего языкознания, в. V.—Тб., 1980 (на груз, яз., резюме на рус. яз.).

Меликян Н. А. К вопросу левосимметричности синтаксической структуры простого предложения в армянском языке. — В сб.: "Сопоставительный анализ русского и армянского языков", вып. 2, Ереван, 1982.

Мельников Г. П. Системология и языковые аспекты кибернетики. М., 1978.

Мечковская Н. Б. Социальная лингвистика, М., 2000.

Методы билингвистических исследований. М., 1976.

Миклухо-Маклай Н. Путешествие, М.-Л., 1948.

Милевский Т. Предпосылки типологического языкознания, — В сб.: "Исследование по структурной типологии", М., 1963.

Миллер Д., Галантер Ю., Пробрам К. Планы и структура поведения. М., 1965.

Михальченко В. Ю. О некоторых приемах изучения билингвизма в полевых условиях //Методы билингвистических исследований. М. 1976.

Моррис Ч. Отношения теории знаков. В кн.: Семиотика. М., 1983.

Неверов С. В. Об одном направлении лингвистической науки в Японии // Вопросы языкознания. 1963. — N 6.

Никольский Л. Б. Синхронная социолингвистика: теория и проблемы. М. Наука, 1976.

Новое в лингвистике, вып. 3. М., 1963.

Общее языкознание: Формы существования, функции, история языка. М.: Наука, 1970.

Педагогика, 1984. Проблемы двуязычия и многоязычия. М., 1972.

Поливанов Е. Д. Статьи по общему языкознанию. — М.: Наука, 1968. —Раздел IV.

Петерсон М. Н. Язык как социальное явление. — Ученые записки. Институт языка и литературы. 1 (Лингвистическая секция) РАНИОН. М., 1927.

Рабочая книга социолога /Отв. ред. Г.В. Осипов. М., 1976.

Развитие национально-русского двуязычия. — М.: Наука, 1976.

Развитие социальной структуры общества в СССР. —М., 1985.

Ревзин И. И. О соотношении структурных и статистических методов в современной лингвистике, —В сб. "Вопросы статистики речи", ЛГУ, 1958.

Семичасный С. М. Динамика воздействия внешних и внутренних стимулов в развитии языка.— II Всесоюзная научная конференция по теоретическим вопросам языкознания. "Диалектика развития языка". —М., 1980.

Сепир Э. Язык. М,- Л., 1934.

Скворцов Л. И. Культура языка —достояние социалистической культуры. — М.: Просвещение, 1981.

Слюсарева Н. А. Некоторые полузабытые страницы истории языкознания (Соссюр и Уитни). В кн.: Общее и романское языкознание, 1972.

Слюсарева Н. А. Теория Ф. де Соссюра в свете современной лингвистики. М., 1975.

Современная социальная теория. Под ред. и сост. Г. Беккер, А. Босков. — М., 1981.

Соссюр Ф. Курс общей лингвистики, — М., 1933.

Соссюр Ф. Курс общей лингвистики. — В кн.: Соссюр Ф. Труды по общему языкознанию.— М., 1977.

Социальная и функциональная дифференциация литературных языков. — М.: Наука, 1977.

- Социально-лингвистические исследования. М., 1976.
- Стеблин-Каменский М. И. Спорное в языкознании. Л., 1974.
- Степанов Ю. Основы языкознания, М., 1963.
- Степанов Г.В. Типология языковых состояний и ситуаций в странах романской речи. — М.: Наука, 1976.
- Теоретическое проблемы социальной лингвистики. — М.: Наука, 1981.
- Трубецкой Н. С. Основы фонологии. М, 1960.
- Трубецкой Н. С. Вавилонская башня и смешение языков, Известия АН СССР, серия лит. и языка, т. 49, 1990, N2.
- Туманян Э. Г. Артикли в современном армянском языке. — Москва—Ереван, 1963.
- Туманян Э. Г. Армянский язык. Языки народов СССР. т. 1, М., 1966.
- Туманян Э. Г. Язык как система социолингвистических систем. — М., 1985.
- Уорф Л. Лингвистика и логика. НА, 1, 1960.
- Фант Г. М., Якобсон Р., Халле М. Введение в анализ речи // Новое в лингвистике. М., 1962. Вып. 2.
- Фелингер А. Ф. Статистические характеристики социолингвистического исследования//Сбор и разработка материалов социолингвистических исследований в Сибири: Материалы к региональной конференции. Новосибирск, 1969.
- Филин Ф. П. Очерки по теории языкознания. — М.: Наука, 1982. —Разделы "Общие вопросы", "Язык и общество".
- Флоренский И. А. Стрoение слова. В кн.: Контекст. М., 1972.
- Хрестоматия по истории языкознания XIX —XX вв. Сост. В. А. Звегинцев. — М., 1956.

Чесноков В. Н. Послесловие. —В кн.: Современная социальная теория. Под ред. и сост. Г. Беккер, А. Босков. — М., 1981.

Чикобава А. С. Грузинский язык. -В кн.: Языки народов мира, т. IV. — М., 1967.

Шарадзенидзе Т. С. Проблема взаимоотношения языка и речи. -Тб., 1971.

Шарадзенидзе Т. С. Лингвистическая теория Бодуэна де Куртенэ и ее место в языкознании XIX—XX вв. — М., 1980.

Шарадзенидзе Т. С. История языкознания и современное языкознание. —В сб.: Вопросы современного общего языкознания, в. V. — Тб., 1980 (на груз. яз.резюме на рус. яз.).

Шарадзенидзе Т. С. История взаимоотношения языковых типов и вопрос прогресса в развитии языка. —В сб.: Вопросы современного общего языкознания, в. VI. — Тб., 1981 (на груз, яз., резюме на рус. яз.).

Швейцер А. Д. Современная социолингвистика. — М., 1976.

Швейцер А. Д., Никольский Л. Б. Введение в социолингвистику. — М., 1978.

Ширалиев М. К. К вопросу об изучении и классификации азербайджанских диалектов, Известия Азерб. фил. АН СССР, 1941.

Щерба Л. В. Избранные работы по русскому языку. М., 1957.

Щерба Л. В. О тройном аспекте языковых явлений и об эксперименте в языкознании. ИЯ, 1, 1960.

Языки народов СССР. Иберийско-кавказские языки, М., 1967,

Якобсон Р. Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание. НА, 1963, III.

Якобсон Р. Поэтика и лингвистика. В кн.: Структурализм: "за" и "против". М., 1975.

- Якобсон Р. Мозг и язык, Изб. труды, М., 1985.
- Cahier Ferdinand de Sossure, v. 19., 1962.
- Calve L —I. Pour et contre Sossure. —Paris, 1975.
- Chomsky N. Cartesian linguistics. N.Y. L. 1966.
- Fishman J. A. (ed.). Advances in the sociology of language. I. Basic concepts, theories and problems: Alternative approaches. Hague, 1971.
- Fishman J. A. (ed.). Readings in the sociology of language, Hague, 1972.
- Fishman J. A. Language in sociocultural change. Stanford, 1972.
- Gardiner A. The theory of Speech and Language. —Oxford, 1963.
- Juhasz J. Probleme der Interferenz. Br. 1970.
- Labow W. The social stratification of English in New-York city.
— Washington, 1966.
- Labow W. Crossing the gulf between sociology and linguistics. -American Sociology, v. 13. N2, 1978.
- Lévy-Valens E.A. La communication. P. 1967.
- Martinet, Language et fonction, P., 1969.
- Mears P. Structuring Communication in Group// Journal of Communication. 1977. Vol. 24.
- Meillet A. Etudes de la linguistique générale. Meillet A. Linguistique historique et linguistique générale, II ed. -Paris, 1926.
- Milewski T., Comparaison de systèmes phonologiques des langues caucasiennes et américaines, "Lingua Poznaniensis". N5, 1955.
- Romain S. Socio-historical linguistics: Its status and methodology. -Cambridge University press, 1982.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

-Սրբազան հայր, դուք ունե՞ք Էջմիածնում աշխարհագրական որևիցե քարտեզ, որի վրա նշանակված լիներ թե ո՞րտեղ են բնակվում հայերը:

-Մի այսպիսի քարտեզ,- պատասխանեց սրբազանը,- մինչև այսօր չէ հրատարակված, բայց բավական է գնել ամենահասարակ քարտեզներ և նրանց վրա կարմիր աստղանիշներով նշանակել, որտեղ որ հայեր կան:

-Այդ շատ դժվար է, որովհետև մեզ հայտնի չէ, թե Հայաստանից դուրս այլևս ո՞ր երկրներում հայեր են գտնվում:

-Ընդհանուր հայոց հովվապետը պետք է գիտենա, թե իր հոտը որտեղ է գտնվում, որ նրանց վրա խնամք տանելու դյուրություն ունենա:

-Մենք ըստ մեր կամաց հովվում ենք մեր հոտը, որ մեզ մոտ է, իսկ հեռավորների համար ինքը Տերը հոգ կտանե:

-Բայց Հիսուս Քրիստոսը հովիվներին այսպես պատվիրեց. Նա հրամայեց թողնել 99 ոչխարները և գնալ մի հատ կորած ոչխարին որոնելու: Չանազան խուլ և անձանոթ երկրներում գտնվում են հայեր, որոնք ազգային ամբողջությունից բաժանված, հայրենի երկրից հեռացած, այլ խոսքով, հոտի ընդհանրությունից անջատված ոչխարներն են, պետք է այդ կորածներին որոնել, պետք է դրանց համար մտածել:

-Մարդիկ չունենք,- եղավ սրբազանի պատասխանը, - հովիվներ չունենք...

Բաֆֆի, Հայերը Քաբուլի մեջ,
«Մշակ». 1880 թ., N 101, էջ 1

Այս գիրքը, եթե ինչ-որ չափով նպաստի այդ մարդկանց, այդ «հովիվներին» պատրաստելու գործին, իր առաքելությունը կատարած կլինի...

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի բազմաթիվ գիտական կենտրոններում և բարձրագույն ուսումնական հաստատությունների բանասիրական ֆակուլտետների լեզվի ամբիոններում արդեն մի քանի տասնամյակ է, ինչ հսկայական ծրագրեր են իրականացվում լեզվաբանական աշխարհագրության բնագավառում: Մի շարք լեզուների բարբառային ատլասների կազմման աշխատանքները բարեհաջող ավարտվել են (օրինակ՝ ֆրանսերենի, գերմաներենի, ռուսերենի, մոլդավերենի և այլն բարբառային երբեմն մեկից ավելի ատլասներ արդեն հրատարակվել են), այլ լեզուների գծով քարտեզագրման գործընթացը հաջողությամբ մոտենում է ավարտին: Այդ լեզուների թվում է հայերենը, որն աչքի է ընկնում բարբառային մեծ տարբերակվածությամբ (ավելի քան 40 բարբառներ, շուրջ 200 խոսվածքներ և այլն): Տակավին երեք տասնամյակ առաջ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առջև խնդիր դրվեց կազմել հայոց լեզվի բարբառային ատլասը: Մշակվեցին այն սկզբունքները, որոնցով առաջնորդվելու են բարբառային բաժնի աշխատակիցները, կազմվեցին լեզվական առանձնահատկությունները բացահայտող հատկանիշների ցանկերը և այլն: Այժմ մեր ձեռքի տակ կա ոչ միայն Եվրոպայի լեզվաբանների կուտակած հսկայական փորձը, այլև ռուս լեզվաբանների շոշափելի ձեռքբերումները (հմտ. Ռ. Ավանեսովի կազմած բարբառագիտական ատլասի մասին զեկուցումը. "Лингвистическая диалектология и история языка" ժողովածուի մեջ և այլն): Այդ բնագավառում հատկապես հարկ է շեշտել ՀՀ ԳԱԱ սկադեմիկոս Գ. Ջահուկյանի «Ներածություն հայ բարբառագիտության» արժեքավոր մենագրությունը, որն ըստ էության լեզվաբանական աշխարհագրության համընդգրկման և բազմահատկանիշ մեթոդի կիրառման անդրանիկ փորձն է ոչ միայն հայ, այլև ընդհանուր լեզվաբանության մեջ:

Այդուհանդերձ, լեզվաբանական աշխարհագրության հատուկ դասընթաց առ այսօր գոյություն չունի այսրկովկասյան ողջ տարածաշրջանի (ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի և Վրաստանի) բահերում, որը մասնավորապես նկատի ունենար տարածաշրջանի գլխավոր գրական լեզուների և խոսվածքների փոխհարաբերությունները: Միաժամանակ հարկ է նշել, որ ադրբեջաներենի և վրացերենի բարբառների քննության ասպարեզում շոշափելի աշխատանքներ են կատարվել Ադրբեջանի և Վրաստանի գիտությունների ակադեմիաների լեզվաբանության ինստիտուտների կողմից:

Ներկա մենագրությունը առաջին փորձն է, որը ներկայացնում է լեզվաբանական աշխարհագրություն առարկայի խնդիրներն ու նպատակները, հայոց լեզվի բարբառային տարբերակվածության իրական պատկերն ըստ վիճակագրական ճշգրիտ տվյալների, առկա բարբառային զուգաբանությունների քարտեզներ և այլն:

Աշխատանքին զուգընթաց խմբագրվել և հրատարակության են պատրաստվել «Հայոց լեզվի բարբառային բառարանի» առաջին յոթ հատորները (Ա. Մարգարյանի խմբագրությամբ):

Ներկա դասընթացում, որն արդյունքն է բաց հասարակության ինստիտուտի բուհապեշտյան գրասենյակի կողմից տրամադրված դրամաշնորհի, ներկայացվում են լեզվաբանական նորագույն այդ բնագավառի սկզբունքներն ու մեթոդները, հարակից գիտությունների հետ նրա ունեցած կապերն ու աղերսները, ցայժմ ձեռք բերած նվաճումները, ներկա փուլում նրա առջև ծառայած խնդիրները: Առաջին անգամ ի մի են բերվում և դասընթացի ծրագրով ներկայացվում լեզվաբանական աշխարհագրության հիմնարար սկզբունքները, ցույց են տրվում այն նոր հնարավորությունները, որ ներառում է իր մեջ հատկապես XX դարում բուռն զարգացում ապրած այդ առարկան:

Հատուկ դիտարկման նյութ են դառնում ոչ միայն գուտ ազգային բարբառային քարտեզները, այլև տարածքային ավելի նեղ ընդգրկում ունեցող լեզվական երևույթները; Այսպիսով առաջին անգամ ներկայացվում են միկրո- և մակրոքարտեզների կազմման նպատակները, խնդիրները, կազմման հետ կապված դժվարությունները՝ ձեռնարկներին բնորոշ ամփոփիչ և գնահատողական հայացքով:

Բնականաբար, սույն ձեռնարկում հաշվի են առնվել տվյալ բնագավառում կատարված ինչպես վիճակագրական (հմմտ. հայերենի նյութի նկատմամբ Ի. Աբուլաձեի, Գ. Ջահուկյանի, Ա.Սարգսյանի կողմից կիրառված մեթոդների) արդյունքները այնպես էլ փորձառական (հմմտ. Ա. Խաչատրյանի, Ռ. Թոխմախյանի, Մ. Աղաբեկյանի) հետազոտությունների տվյալները, բարբառների ձևայնացված նկարագրության առաջին փորձերը (հմմտ. Ա. Մանուկյանի, Ռ. Ուռուտյանի հետազոտությունները)

Ձեռնարկը մեծապես կնպաստի տվյալ բնագավառում շարունակվող, ինչպես նաև նոր ծրագրվող բարբառագիտական աշխատանքների խթանմանը՝ այդ ոլորտ ներգրավելով նաև բանասիրական ֆակուլտետների լեզվագիտական բաժինների ուսանողներին, ասպիրանտներին, բոլոր նրանց, ում հետաքրքրում են բարբառների, խոսվածքների ուսումնասիրման, նկարագրման, պահպանման խնդիրները:

ԳԼՈՒԽ Ա
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1.01. Լեզվաբանական աշխարհագրությունը (կամ՝ լեզվաշխարհագրությունը) լեզվաբանության այն բաժինն է, որը զբաղվում է լեզուների, լեզվական մի խումբ կամ մասնակի երևույթների տարածքային բաշխվածության հարցերի քննությամբ ինչպես ամբողջ երկրագնդում, այնպես էլ առանձին աշխարհամասերում և կամ ավելի փոքր տարածքային միավորներում: Ըստ այդմ էլ առաջին դեպքում «լեզվաբանական աշխարհագրություն» հասկացությունը կիրառվում է լայն առումով, մյուս դեպքում (սահմանափակ շրջանակների հաշվառմամբ) նեղ առումով, իբրև արեալային կամ տարածքային լեզվաբանության հոմանիշ:

Լեզվաբանական աշխատանքներում հաճախ «լեզվաբանական աշխարհագրություն» և «արելալային լեզվաբանություն» տերմինները հստակորեն չեն տարբերակվում, ինչը խոցելի է: Վերջին ժամանակներս ավելի հաճախ այդ տերմինները կիրառվում են հետևյալ իմաստային սահմանազատմամբ. «լեզվաբանական աշխարհագրություն» տերմինը կիրառվում է այն դեպքում, երբ նկատի է առնվում «լեզվական երևույթների տարածական բաշխումը» (հմմտ. *Д. Эдельман. Основные вопросы лингвистической географии, М., 1968, էջ 3*): «Արեալային լեզվաբանության» տերմինը կիրառվում է «ժամանակակից լեզվական երևույթների բաշխման հիմքի վրա հնագույն արեալների քննության» դեպքում (տես ն.տ.):

Ներկա դասընթացում դիտարկում են «լեզվաբանական աշխարհագրություն» հասկացության ինչպես լայն, այնպես էլ նեղ առումները: Ներկայացնելով «լեզվաբանական աշխարհագրություն» ըմբռնման տարբեր հայեցակետերը, լեզուների աշխարհագրական բաշխման ճիշտ պատկերը հնարավորինս

լայն առումով, դասընթացում շեշտը հատկապես դրվում է հարավկովկասյան տարածաշրջանի լեզվական բարդ պատկերի բացահայտման և լուսաբանման վրա, գերազանցապես հիմք ունենալով հայոց լեզվի բարբառային, ենթաբարբառային և խոսվածքային խայտաբղետ տարբերակների բաշխումը, գրական լեզուների և բարբառների մերձակցության աստիճանը և հարակից բազմաթիվ այլ խնդիրներ:

1.1.02. Կարծում ենք, կարիք չկա հիմնավորել այն թեզը, թե ինչքան կարևոր են աշխարհագրական գործոնները լեզվական այլազան երևույթներն ի հայտ բերելու և նկարագրելու, գնահատելու և դասակարգելու գործընթացներում: Ընդունված իրողությունն է, որ բացառիկ է աշխարհագրական գործոնի խաղացած դերը լեզվական երևույթների մեկնաբանության առումով:

Տարածված կարծիք կա, ըստ որի աշխարհագրական միջավայրը վճռորոշ դեր է խաղում լեզուների և բարբառների փոխհարաբերությունների և զարգացման ընդհանուր ուղղվածության վրա: Եթե մի հայացք գցենք պատմական Հայաստանի քարտեզի վրա (լեռների, բնական արգելքների ու խոչընդոտների, ջրային սահմանների գետերի ու լճերի), կհամոզվենք, որ բարբառային սահմանները գերազանցապես ձևավորվում են ըստ աշխարհագրական առանձնահատկությունների (հմտ., օրինակ, Արարատյան բարբառ, Վանի բարբառ, Խոյի բարբառ և այլն): Լեզվաբանության մեջ որպես տիպական օրինակ սովորաբար բերվում է Օվկեանիայի (Օվկիանյան) ավստրոնեզիայի լեզվախումբը, որի լեզուները բաշխվում են ըստ առանձին կղզիների: «Պ. Վ. Շմիդտ (P.W.Schmidt) գիտնականը, համեմատելով Ավստրալիայի զանազան լեզուները իրար հետ, գտնում է, որ նրանք կազմում են մի ամբողջական ընտանիք» (տես՝ Հր. Աճառյան, ԼՔՀԼ, Ներածություն, էջ 548):

Շաշվի առնելով պատմական Հայաստանի աշխարհագրական մասնատվածությունը, տարանջատված բնական դիրքը,

թերևս դրանով նույնպես կարելի է բացատրել, թե ինչու է հայոց լեզուն այդքան հարուստ բարբառային տարբերակներով (շուրջ 40 բարբառ և ավելի քան 200 ենթաբարբառ ու խոսվածք): Լիտվերենի քերականական պահպանողականությունը (կոնսերվատիզմը) հնդեվրոպական ցեղակից այլ լեզուների համեմատությամբ մեծամասամբ հիմնավորվում է նրանով, որ երկար դարերի ընթացքում այլ լեզուների հետ շփման նվազ հնարավորություններ է ունեցել, քանի որ լիտվացիները գտնվել են աշխարհագրականորեն տարանջատված ոլորտում: Ընդհակառակն, եթե գործ ունեք աշխարհագրական այնպիսի միջավայրի հետ, ուր գերազանցապես առկա են հարթավայրեր, լեռների չկտրտված տարածություններ, այդպիսի տարածքներում բարբառային «համակեցություններ» կամ միություններ են առաջանում: Մերձակից տարածքների բնակիչները, որպես կանոն, շատ լավ են հասկանում իրար: Հեռավոր բնակավայրերի բնակիչների լեզուն ըստ հեռավորության՝ նվազ ընդհանրություններով է բնութագրվում: Որպես օրինակ բերվում են էսկիմոսյան լեզուները: Ոչ ցեղակից լեզուները երկար ժամանակ միևնույն տարածքում գոյակցելու ընթացքում առաջացնում են լեզվական նորագոյացություններ, որոնք դարձյալ բնութագրվում են աշխարհագրական գործոններով: Այդ տեսակետից տիպական օրինակ են ծառայում թյուրքական լեզուները: Ի տարբերություն թյուրքական մյուս լեզուների, բուն թյուրքերենը, սեմական և իրանական լեզուների ազդեցությամբ, բայանուն + անորոշ դերբայ կառույցները փոխարինել է կախյալ բայաձևերի գործածությամբ, մինչդեռ գազաուզերենը, դարձյալ թյուրքական լեզվաընտանիքին պատկանելով հանդերձ, սլավոնական և ռոմանական լեզուների շփման աշխարհագրական միջավայրում այնպիսի հզոր ազդեցության է ենթարկվել վերջիններիս կողմից, որ համաթյուրքական «ենթակա + խնդիր + ստորոգյալ» բառերի ընդունված կարգի փոխարեն ձևավորել և կիրառության մեջ է դրել «ենթակա + ստորոգյալ + խնդիր» բառերի կարգը: Ուստի

կարելի է ասել, որ բուլղարերենը, ռումիներենը և գազաուզերենը միավորված են «ենթակա + ստորոգյալ + խնդիր» զուգաբանությամբ, հակառակ որ նրանցից վերջինը պատկանում է թյուրքական լեզվաընտանիքին, ռումիներենը՝ ռոմանական, իսկ բուլղարերենը՝ սլավոնական լեզվաճյուղին:

Թյուրքական լեզուների կովկասյան տարածքը, ինչպես նկատում է Նինել Հաջիևան, դժբախտաբար բավարար ուշադրության չի արժանացնել, մասամբ պայմանավորված նաև նրանով, որ «թյուրքալեզու արեալների վերլուծությունը չափազանց բարդ խնդիր է» (տես Н. З. Гаджиева, Тюркоязычные ареалы Кавказа, МН 1979, էջ 6): Քառորդ դար հետո էլ միանգամայն այժմեական է և ճիշտ Ն. Հաջիևայի պնդումը. «Կովկասի թյուրքալեզու արեալները լեզվաբանական աշխարհագրության հարաբերությամբ մինչև այժմ մնացել են գրեթե չուսումնասիրված, թեև որոշ անհրաժեշտ նախադրյալներ այդպիսի հետազոտության համար ներկայումս արդեն ստեղծվել են» (ն. տ., էջ 6): Այսպես, 1945-85 թթ. ընթացքում, շուրջ չորս տասնամյակ, Ադրբեջանում հսկայական աշխատանք է կատարվել ադրբեջաներենի բարբառների և խոսվածքների ուսումնասիրության բնագավառում (հմմտ. գրականության ցանկի համապատասխան նշումները): Մեթոդաբանական տեսակետից, սակայն Ն. Հաջիևան ինքն էլ շեշտում է բարբառագիտական այս աշխատանքների թերությունները՝ բարբառային համակարգի ամբողջական նկարագրության բացակայությունը, ընդհանուր տիպաբանական փոփոխությունների անտեսումը և այլն: Այդուհանդերձ ակադեմիկոս Մ. Շիրալինի ընդհանուր դեկավարությամբ պատվաստվել է ադրբեջաներենի բարբառների ատլասը, և այդ տեսակետից տվյալ հատվածի տարածքային տարբերակների լեզվաաշխարհագրական քննությունը մեկ քայլ առաջ է Անդրկովկասի հատկապես իբերոկովկասյան լեզուների տարածքային տարբերակների ուսումնասիրությունից:

Հետազոտողները հատկապես մանրակրկիտ քննության են ենթարկել տևական ժամանակաշրջանում կովկասյան, իրանական և հայկական լեզուների հետ շփումներ ունեցած բարբառներն ու խոսվածքներ (հմմտ., օրինակ՝ Ղուբայի բարբառի Դերբենտի և Թաբասարանի խոսվածքները, որոնք երկար ժամանակ գտնվել են իբերա-կովկասյան լեզուների հետ սերտ շփումների մեջ, Շեքիի բարբառը, Ջաբաթալակախի, Վարդաշենի և Կուտկաշինի խոսվածքները՝ ուտիերենի, լեզգիերենի, հայերենի և վրացերենի հետ ունեցած երկարատև շփումներով, Բաքվի բարբառը, որ փոխազդեցության մեջ է գտնվել թաթերենի, թալիշերենի հետ, Լաչինի շրջանի խոսվածքը՝ քրդերենի հետ և այլն (տե՛ս А.Велиев, Переходные говоры азербайджанского языка, թեկն. ստենախոսության սեղմագիր, Բաքու, 1975 թ.):

Աղբրեջաներենի վրա դրացի ցեղակից ու ոչ ցեղակից լեզուների ազդեցությունների բազում օրինակներ են նշվում վերոհիշյալ «Կովկասի թյուրքալեզու արեալները» (ռուսերեն) գրքում, որից բերենք մեկ նմուշ, այն վերաբերում է բառերի կարգին: «Սահմանամերձ շրջաններում, որտեղ աղբրեջանական բնակչությունը շփման մեջ է. վրացական, հայկական, իրանական բնակչության հետ, դիտվում է զուգաբանական երևույթների խտացում, որը կապված է բառերի սովորական կարգի խախտման հետ, թեև շրջուն կարգի այս երևույթը դիտվում է խոսակցական թյուրքական լեզուներում» (ն.տ., էջ 161): Որպես լուսաբանություն Ն.Հաջինան բերում է Բասարգեչարի շրջանի խոսվածքների վրա հայերենի ազդեցությամբ առաջացած բառերի ոչ սովորական կարգի հետևյալ նմուշը. "Олар бир мудбдт галыфлар бурада" — «Նրանք որոշ ժամանակ մնում են այստեղ» (ն.տ.):

1.1.03. Լեզվաբանական աշխարհագրությունը, ինչպես նշված է Հ. Զ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» (Ե., 1987, էջ 132) «բարբառագիտության ընդերքում ձևավորված գիտակարգ է»: Հեղինակն այն բնութագրում է իբրև բարբառա-

գրություն *диалектография*): Եթե պատմականորեն դիտարկենք երևույթները, ապա պետք է շեշտենք, որ բուն լեզվաբանական աշխարհագրություն առարկան ծնունդ է առել հնդեվրոպաբանության ընդերքում: Յեղակից (նախընտրաբար՝ հնդեվրոպական) լեզուների ընդհանրությունները վեր հանելու գործընթացում, երբ դիտարկվում էին ոչ միայն ժամանակակից լեզուները (գրական և բարբառային ճյուղավորումներով), այլև մերձցեղակից լեզվական դրսևորումների տարածքային բաշխվածությունը, ակնհայտ դարձավ, որ XIX դարի լեզվաբանական տեսություններից մեկը՝ ծննդաբանական ծառը իր ոչ ճկունությամբ և սխեմատիզմով ի վիճակի չէ ներկայացնելու լեզվական իրական համապատկերը, քանի որ հանդիսանամ է իրականության չափազանց մակերեսային և ոչ ճշգրիտ արտացոլումը:

Հր. Աճառյանը տակավին 70 տարի առաջ (1953 թ.) հրատարակած իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության «Ներածություն» հատորում, ներկայացնելով լեզուների և լեզվախմբերի ծննդաբանական ծառը, գրել է. «Ծառը ներկայացնում է ամբողջ մարդկությունը, ծառից բխած յուրաքանչյուր ճյուղ ներկայացնում է մի ընտանիք, իսկ ճյուղից բխած ոստերը և ոստիկները ներկայացնում են նույն ընտանիքին պատկանող լեզվաճյուղեր և առանձին լեզուներ: Բնականաբար բարբառները նշանակել կարելի չի եղել» (ընդգծումը մերն է, տե՛ս ն. տ., էջ 570): Ծննդաբանական ծառի թերություններից մեկն էլ այն է, որ նրանում հաշվի չի առնվում աշխարհագրական մերձակցության գործոնը, որ բավական մեծ դեր ունի: Դա փորձում է ինչ-որ չափով նկատի ունենալ Շուխարդտի և Շմիդտի «Ալիքների տեսությունը»:

Ինչպես ջրի մեջ նետած քարն առաջացնում է ալիքներ, որոնք կենտրոնից տարածվելով՝ աստիճանաբար մեծացնում են իրենց շրջանակը և գնալով մարում, այդպես էլ լեզվական նորագոյացությունը կենտրոնից աստիճանաբար սփռվելով ավելի լայն շրջաններ ընդգրկելով՝ դրսևորվում է նվազման և

մարելու միտումներ: Կենտրոնի և ծայրամասի նման ըմբռնումը նույնպես չկարողացավ մինչև վերջ բացայայտել լեզվական միջավայրի փոխհարաբերությանը, լեզու/բարբառ/խոսվածք հարաբերության՝ ճշգրտման իրական պատկերը, ցեղակից լեզուների ազդեցության և փոխազդեցության բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները փորձում է տալ այն գիտաճյուղը, որը կոչվում է լեզվաբանական աշխարհագրություն: Մերձակից լեզուների և բարբառների տևական շփումների և փոխազդեցությունների արդյունքում լեզվի տարբերակների սխեման սահմանագծելը դառնում է խախուտ, անհստակ, և տարբեր լեզուների մեջ ի հայտ են գալիս այնպիսի ընդհանրություններ, որոնք պարզ ծագումնաբանական գործոնով չեն կարող բացատրվել, մեկնաբանվել: Տարբեր լեզուների և բարբառների քննությամբ պարզ է դառնում, որ բարբառները չունեն որոշակիորեն, «խստորեն սահմանագծված տարածք և նրանց իրողությունները հաճախ թափանցում են բարբառախոս այլ տարածքներ» (տե՛ս Ն. Պետրոսյան, ն.տ., էջ 132):

1.1.04. Լեզվաբանական աշխարհագրության, որպես առանձին գիտաճյուղի, ձևավորումը գերազանցապես կապում են XIX դարի վերջին և XX դարի սկզբին գերմաներենի և ֆրանսերենի բարբառագիտական ատլասների ստեղծման հետ: Ահա թե ինչ է գրել այս մասին Հր. Աճառյանն իր «Լիակատար քերականության» ներածություն հատորում. «Լեզվաբանական ատլասը նոր երևույթ է գիտության մեջ, պատկանում է վերջին քսանամյակին: Նա ներկայացնում է մի որոշ լեզվի համար բազմաթիվ քարտեզների մի հավաքածու, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մի բառի կամ քերականական մի ձևի վիճակագրության: Մի առ մի նշանակված է, թե այդ բառը կամ ձևը երկրի զանազան կողմերում (քաղաքներում և գյուղերում) ի՛նչ ու ի՛նչ ձևով է հնչվում:

Առաջին անգամ Վենկերը մտածեց կազմել Գերմանիայի լեզվաբանական ատլասը, պատրաստեց 40 կարճ նախադասու-

թյունների մի ցանկ և առաջարկեց բոլոր դպրոցների ուսուցիչներին, ստացավ 40.736 տեղից պատասխան, որոնց վրա Մարբուրգում պիտի պատրաստվեր ատլասը: Այս ծրագիրը չիրականացավ» (տես Հր. Աճառյան, ն. տ. էջ 571):

Իրականում Գ. Վենկերի ծրագիրը, որը սկսվել էր 1876 թվականին, ավարտվել 1926 թվականին Վրեդեի կողմից, կրճատված հրատարակվել է 13 սովարածավալ պրակներով, որոնք լույս են տեսել 1926-ից 1951 թվականներին (այսինքն՝ Հր. Աճառյանի «Լիակատարի» լույս տեսնելուց գրեթե 30 տարի առաջ այդ ծրագիրն ավարտված էր): Անշուշտ, Հր. Աճառյանը կարող էր և տեղյակ չլինել ատլասի արդեն հրատարակված տասնյակ պրակներից. բանն այն է, որ 1937թվականից հետո «երկաթե վարագույրի» տասնամյակներում խորհրդային լեզվաբանները զրկված էին արտասահմանյան գիտական հրատարակությունների փոխանակումներից, նոր լույս տեսած աշխատություններ ձեռք բերելու հնարավորությունից:

Ժամանակագրական առումով ֆրանսերեն բարբառների ատլասի կազմման աշխատանքները թեև սկսվեցին մի փոքր ավելի ուշ (1902 թ.), սակայն արդեն 1910 թվականին Ժ.Ժիլերոնը և Է.Էդմոնը ավարտին հասցրին 1920 քարտեզի կազմումը: Ֆրանսիական ատլասի հրատարակումը գրեթե ավարտվեց 1912 թվականին և կազմեց 7 սովար հատորներ: Հր. Աճառյանը նշում է 1750 քարտեզի մասին, «որ պարունակում է Ֆրանսիայի և Բելգիայի ու Շվեյցարիայի ֆրանսիական մասերը», դրանցում նկարագրության հիմք է ընդունվում այս կամ այն բառի տարածման աշխարհագրությունը (ն.տ, էջ 571):

Կ. Յուբերգի և Յու. Յուդի կազմած Իտալա-շվեյցարական ատլասի կազմումը տևեց 12 տարի (1928-40 թթ.) և կազմեց ութ հատոր: Այդ հատորներում ներառված են նաև ազգագրական առանձին տվյալներ: Իտալական լեզվաբանական ուղղության մեջ, որը հանրահայտ է իբրև նեոլինգվիստիկա (հմմտ. Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. II) կիրառության

մեջ է դրվում «արեալային/տարածքային լեզվաբանություն» տերմինը (Մ. Բարտոլի, 1925 թ., 1943 թ.): Լեզվաբանական աշխարհագրության, որպես առանձին գիտաճյուղի, կազմավորման գործընթացում մեծ է եղել Ա. Դոզի (1922 թ.) և Է. Կոսերիուի (1956 թ.) հիմնարար աշխատանքների դերը: Դրանք երկուսն էլ նույն խորագիրն են ունեցել՝ «Լեզվաբանական աշխարհագրություն»:

1.1.05. Ռուսական կայսրությունում բարբառագիտական հետազոտությունները մեծ կարևորություն են ստացել XIX դարի երկրորդ կեսից (Ի. Սրեզնևսկի, Ա. Սոբոլևսկի, Ք. Պատկանյան):

Քերովբե Պատկանյանը (1833-1889թթ.) հայ անվանի լեզվաբան, գրող, բարբառագետ էր, որ հիմնավոր կրթություն էր ստացել Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա Դորպատում և Պետերբուրգում: 1861 թվականից նա դասավանդել է Պետերբուրգի համալսարանում: Հիանալի տիրապետում էր բազմաթիվ լեզուների և տակավին 43 տարեկանում ընտրվում է գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Հայոց լեզվի ծագումը և մերձցեղակցությունը որոշելու հիմնահարցում Ք. Պատկանյանը չափազանց կարևոր է համարում բարբառների համընդգրկուն քննությանը: Ըստ նրա, շուրջ 16 դար առաջ էլ եղել են հայերեն մի շարք բարբառներ, որոնցից մեկը բարձրացել է գրական լեզվի աստիճանի և անվանվել **գրաբար** (հին գրական հայերեն): Չափազանց ուշագրավ է Ք. Պատկանյանի "Исследование о диалектах армянского языка" աշխատանքը (Спб. 1869г.): Նա հատկապես «ուշադրություն է հրավիրել հայ-փոքրասիական, հայ-թուրքական լեզվական ընդհանրությունների դիտարկման վրա» (տե՛ս Հ.Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 514):

Լևոն Մսերյանը (1867-1933) անվանի հայ լեզվաբաններից է, որի մագիստրոսական ավարտաճառը նվիրված էր «Մշո բարբառի համեմատական ձայնաբանությանը՝ գրաբարի ձայնաբանության հետ»: Հեղինակն իր աշխատության նյութն անձամբ է

հավաքել: Նա 1894-95 թթ., շրջագայելով Անդրկովկասում (Թիֆլիս, Բաթում, Էջմիածին), գրի է առել մշեցիների բարբառային առանձնահատկությունները: Լ. Մսերյանը մեծ ցանկություն է ունեցել լինել Արևմտյան Հայաստանում և հենց Մուշ քաղաքում ու շրջակա հայ բնակավայրերում ուսումնասիրել բարբառն իր անադարտ վիճակում: Այդ ցանկությանը մերժվել է: Իր նյութը նա հավաքել է երկու ամառվա ընթացքում՝ հիմք ունենալով Անդրկովկասի մշեցիների խոսքը:

Լեզվաբանին չեն գոհացրել մինչ այդ Մշո բարբառի հնչյունական կառուցվածքը ներկայացնող մասնակի ուսումնասիրությունները: Իր հավաքած նյութի հիման վրա Լ. Մսերյանը կազմել է 1000 բառից քիչ ավելի պարունակող մի բառացանկ: Բառացանկում ներկայացված բառերը համեմատության մեջ են դրվել ինչպես գրաբարի, այնպես էլ այլ բարբառների հետ:

1897 թվականին տպագրած այս աշխատանքի երկրորդ գիրքը՝ «Этюды по армянской диалектологии» ընդհանուր խորագրով լույս է տեսել 1901 թվականին: Այս հատորում քննվել է Մշո բարբառի համեմատական ձևաբանությունը՝ գրաբարի և միջին հայերենի ձևաբանական կառուցվածքների բաղդատությամբ: Այս աշխատությամբ Լ. Մսերյանը ձեռք է բերել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1905 թ. նա Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր էր: Նույն թվականից 10 տարի Լ. Մսերյանը եղել է Վարշավայի համալսարանի ամբիոնի վարիչ: Անվանի լեզվաբանը բարբառագիտական զեկուցումներով հանդես է եկել Փարիզի, Հռոմի, Համբուրգի, Աթենքի և մի շարք այլ քաղաքներում կազմակերպված միջազգային համաժողովներում:

Ի տարբերություն հայ բարբառագիտության մեջ տիրապետող ընդհանուր կարծիքին՝ Լ. Մսերյանը փորձել է Մշո բարբառն իր հնչյունաբանական առանձնահատկություններով մտցնել հայ բարբառների արևելյան խմբի մեջ: Դա, անշուշտ, ոչ միայն առարկությունների տեղիք է տվել, այլև պարզապես

մերժվել է. «Նախ և առաջ՝ վտանգավոր է որևէ բարբառի դիրքը մյուս բարբառների մեջ որոշել միայն նրա ձայնաբանության հիման վրա, անտես անելով քերականական ձևերը, որոնք ինչպես լեզվի, նույնպես և բարբառի գլխավոր տիպն են կազմում, - գրել է Ստ. Մալխասյանը 1901թ. «Մուրճ»-ում տպագրած իր մատենախոսության մեջ,- բայց թողնելով այս՝ նույնիսկ մշերենի ձայնաբանության մասին հեղինակի անպայման վկայությունը շատ տարակուսելի է. մի՞թե մշեցին «բան», «գործ», «արդար» բառերը նույնպես է արտասանում, ինչպես օր. թիֆլիսեցին, ագուլեցին և այլն» (տե՛ս «Մուրճ» ամսագիր, 1901, էջ 250-256):

Ստ. Մալխասյանը միանգամայն ճիշտ պահանջ է դնում. «Պետք է նախ կատարելապես հետազոտել այդ բարբառը բուն տեղում..., որովհետև տնտեսական պատճառներով մշեցիք վաղուց ի վեր սովոր են պանդխտելու Պոլիս, Թիֆլիս և ուրիշ տեղեր, և երկար տարիների պանդխտության մեջ մնալով՝ յուրացնում են օտար բարբառների հնչյուններ ու ձևեր և վերադառնալով իրենց գավառը՝ որոշ չափով ազդում են իրենց բնիկ բարբառի վրա» (տես ն. տ.):

Այդտեղից արվում է միանգամայն ճիշտ եզրահանգում. «Ուրեմն նույնիսկ Մուշ քաղաքում և շրջակայքում ամեն մի մշեցու բարբառն ու հնչյունը դեռ իսկական մշերենը չէ. պետք է երկար համեմատություններով գտնել անխառն, իսկական մշերենը և ապա միայն որոշել նրա դիրքը ըստ ձայնաբանության և ձևաբանության» (տե՛ս ն. տ.):

Իրոք, ցանկացած լեզվի, բնականաբար՝ նաև հայերենի բարբառների գիտականորեն մշակված հետազոտությունների արդյունքում միայն հնարավոր է կատարել բարբառների ճիշտ դասակարգում: Բարբառագիտական հստակ ծրագրված հետազոտությունները ոչ թե 1-2 տարվա ամառային արշավախմբերով պետք է սահմանափակվեն, այլ երկարաժամկետ ու հիմնավոր հավաքչական գործունեությամբ, քարտեզների կազմման տքնաջան աշխատանքով:

Ռուսաց լեզվի բարբառների ծրագրված հետազոտությունները Մոսկովյան բարբառագիտական հանձնաժողովի կողմից սկսվել են 1903 թվականին, հատկապես Ա. Շախմատովի եռանդուն նախաձեռնությամբ: Արդեն 1915-ին, Առաջին աշխարհամարտի թոհուրոհում լույս է ընծայվում «Եվրոպայում ռուսաց լեզվի բարբառագիտական քարտեզի փորձ, ռուսական բարբառագիտության ուրվագծերի հավելվածով» աշխատանքը (հեղինակներ՝ Ն. Դուրնով, Ն. Մոկոլով, Դ. Ուշակով): Տասը տարի անց, 1925-ին հայազգի Ռուբեն Ավանեսովը ընտրվում է Մոսկովյան բարբառագիտական հանձնաժողովի անդամ, որն այն ժամանակ ղեկավարում էր հայտնի բառարանագիր Դ. Ուշակովը:

Ռուբեն Ավանեսովը (1902-1982 թթ.) տասնամյակներ շարունակ գործուն մասնակցություն է բերել բարբառային արշավախմբերում սկզբից որպես անդամ, ապա որպես անփոխարինելի ղեկավար: 1945 թվականին լույս են տեսել Ռ. Ավանեսովի հանրահայտ երկու աշխատանքները. «Լեզվաբանական հիմնարար հիմունքները» և «Ռուսաց լեզվի բարբառագիտական ատլասի կազմման համար հավաքվելիք տեղեկությունների ծրագիր»: Նրա անմիջական ծրագրով սկսվել է ռուսաց լեզվի խոսվածքների հավաքման ահռելի աշխատանքը: Ռ. Ավանեսովի և Ս. Բերնշտայնի գիտական ղեկավարությամբ պատրաստվել է «Համասլավոնական լեզվաբանական ատլասը»:

Ակադեմիկոս Հր. Աճառյանը ոգևորությամբ գրել է իր հայտնի աշխատանքի «Ներածություն» հատորում. «Այժմ կազմվում է ռուսերենի բարբառագիտական ատլասը, ինչպես հայտարարեց SUՄՍ-ի հաղորդագրությունը (10 մայիսի). ատլասը պիտի բաղկանա 11 հատորից և պիտի պարունակի ավելի քան 3000 քարտեզ:

Այսպիսի խոշոր ձեռնարկությունների մասին մենք միայն այժմ կարող ենք մտածել: Հայերենի համար կա բարբառների մի պարզ քարտեզ, որ հրատարակել եմ նախ ֆրանսերեն (տե՛ս իմ

«Classifiacation des dialectes arméniens» և հետո հայերեն (տե՛ս իմ «Հայ բարբառագիտությունը»): (Հր. Աճառյան, ն.տ., էջ 573):

1.1.06. Արդեն 1958 թվականից Ռ. Ավանեսովի ղեկավարությամբ սկսվել է ռուսաց լեզվի աստլասի հրատարակության պատրաստման աշխատանքը: Դրան նախորդել էին «Մելիգեր լճի շրջանի լեզվաբանական աստլասը» (1949 թ.), որի հեղինակներն էին Մ. Մալցևը և Ֆ. Ֆիլինը և «Մոսկվայից հարավ գտնվող կենտրոնական շրջանների ռուսական ժողովրդական խոսվածքների աստլաս» աշխատանքները:

Ռ. Ավանեսովը նշանավոր դեմք էր ոչ միայն կիրառական լեզվաբանության ոլորտում, այլև բարբառագիտության տեսության բնագավառում: Ռուս լեզվաբանության մեջ ընդունված է պնդել, որ Ռ. Ավանեսովի գրած «Ռուսական խոսվածքների աստլասի» առաջաբանն ըստ էության դարձավ Մոսկվայի լեզվաբանական աշխարհագրության դպրոցի տեսական հիմունքները: Այդ հենց նրա մշակած ծրագիրն է, ըստ որի ռուսական խոսվածքները քարտեզագրվեցին, մշակվեցին և վերածվեցին աստլասի՝ մի այնպիսի հսկայական տարածության հաշվառմամբ, որն ընդգրկում է Արխանգելսկից մինչև Դոն, Նովգորոդից մինչև Անդրվոլգյան տարածքները: Ի վերջո, Ռ. Ավանեսովի «Ռուսական բարբառագիտություն» դասագրքով (հեղինակակից Վ. Օռլովա) են առ այսօր դասավանդում Ռուսաստանի Դաշնության համալսարանների բանասիրական ֆակուլտետներում:

Ռ. Ավանեսովի և հեղինակակիցների «Համասլավոնական լեզվաբանական աստլասը» դարձավ Եվրոպայի լեզուների աստլասի անհրաժեշտ բաղկացուցիչ մաս:

Բարբառագիտության քարտեզներ են կազմել բելոռուսները, մոլդավները, թուրքերը՝ մի շարք բաբառների նյութի հաշվառմամբ: «Բելոռուսերենի բարբառագիտական քարտեզը» 1963 թվականին արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

20-րդ դարի կեսերից սկսած մինչև դարավերջ խորհրդային լեզվաբանության մեջ լեզվաբանական աշխարհա-

գրության հիմնախնդիրներին են անդրադարձել Է. Մականը, Մ. Բորոդինան, Դ. Էդելմանը, Բ. Սերեբրեննիկովը և ուրիշներ:

Հայ բարբառագիտության պատմության մեջ բարբառագիտական քարտեզագրման փորձեր են կատարել (Հր. Աճառյանից հետո) Ռ. Բադրամյանը («Դերսիմի բարբառային քարտեզը» Երևան, 1960 թ.), Կ. Դավթյանը («Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (Եր., 1966 թ.), Ա. Վարդանյանը («Նախիջևանի բարբառային քարտեզը», Վիեննա, 2000 թ.) և այլն;

Արտակ Վարդանյանը երկու տասնամյակ առաջ հրատարակել է «Վայոց ձորի խոսվածքի հնչյունաբանությունը» գիտական հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի», 1983 թ., N 1): Այնուհետև տարիներ շարունակ նա ուսումնասիրել է Նախիջևանի բարբառային բավական բարդ վիճակը: Սույն ձեռնարկում ներկայացվում է Վիեննայում տպագրված «Նախիջևանի բարբառային քարտեզը» ամփոփիչ աշխատանքից երեք քարտեզ: Ստորև համառոտ կերպով անդրադառնանք այն հիմնադրույթներին, որոնք ձևակերպվել են Ա. Վարդանյանի կողմից նշված աշխատանքում:

Ի՞նչ տարածք է ընդգրկում Նախիջևանը: Այն ընդգրկում է Վասպուրականի Գողթն, Նախճավան, Այրարատի Շարուր, Սյունիքի Ջահուր-Շահապունիք, Երնջակ գավառները: Անցյալ դարասկզբին Նախիջևանն ընդգրկում էր շուրջ 70 հայաբնակ բնակավայրեր, որոնց գերակշիռ մասը (38 բնակավայր) խոսում էր Խոյի բարբառի խոսվածքներով» (տե՛ս Ա. Վարդանյան, ն. տ., 468): Տարածքում պահպանվել էին «բնիկ» խոսվածքներ ևս՝ Ագուլիսի և Ջուղայի բարբառները, Աստապատի ենթաբարբառը, Վայոց ձորի խոսվածքը, Արցախի և Մեղրու բարբառների խոսվածքները:

Հայ բարբառագիտությանը Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրու, Խոյի բարբառները քաջաձանոթ են թե՛ առանձին, մենագրություններով, թե՛ բազմաթիվ գիտական հոդվածներով:

«Համեմատաբար «նորահայտ» բարբառ է Վայոց ձորի խոսվածքը» (տես Ա. Վարդանյան, ն. տ.):

Վերջինս «գուտ Արարատյան բարբառի խոսվածք չէ. այն իր հատկանիշներով հավասարապես տարբերվում է ինչպես Արարատյան, այնպես էլ Արցախի և Վասպուրականի հարակից խոսվածքներից» (ն.տ.):

Նախիջևանի բարբառային քարտեզը կազմելիս հեղինակը առանձնացրել է երեք հիմնական ժամանակագրական փուլեր.

1. 1918-20 թթ. նախօրեն, երբ Նախիջևանի հայ բնակչությունը կազմում էր մեծամասնություն:

2. 1924 թ. վիճակ, երբ հայ բնակչությունը կազմում էր շուրջ 20%:

3. 1988 թ., երբ Նախիջևանը վերջնականապես հայաթափվեց:

Ա. Ոսկանյանի կազմած քարտեզները՝ տարածամասակյա կտրվածքով հստակորեն ցույց են տալիս Նախիջևանում, հայ բնակչության նկատմամբ կիրառած «ճերմակ ջարդը»:

Վաղուց հասունացել է անհրաժեշտությունը ստեղծելու այս կամ այն գավառի, բարբառային քարտեզների հավաքածուն, այլև ամբողջ Հայաստանի (պատմական և արդի վիճակներով) քարտեզների շտեմարանը:

Որքան էլ որ հայերենի բարբառների ատլասի ստեղծումը հայենագիտության հրատապ հիմնախնդիրներից է, այնուհանդերձ այս ասպարեզում թափած ջանքերը տակավին ցանկայի արդյունք չեն տվել: Մինչդեռ քառորդ դար առաջ (1977 թ.) մշակվել և հրատարակվել է «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը» (Ե., 1977 թ.), հինգ տարի անց լույս է տեսել «Հայերենի բարբառագիտական ատլաս» 1 պրակը, իբրև նախափորձ (Ե., 1982 թ.): Անցած երկու տասնամյակների ընթացքում այնքան հարուստ նյութեր են կուտակվել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում, որ այդ նյութերի մշակումը

պահանջում է համակարգչային հզոր ցանցերի օգտագործում, վերջնական արդյունքները բուն քարտեզների տեսքով մշակելու համար: Թեև ոչ ոք կասկածի տակ չի դնում այն իրողությունը, որ «գիտականորեն մշակված, կազմված ատլասը կօգնի պարզելու հայ ժողովրդի պատմության, ազգագրության, բանագիտության, տեքստաբանության, գրական հայերենի կազմավորման և այլ բնագավառների հետ կապված շատ հարցեր» (տե՛ս Հ. Պետրոսյան, ն.տ., էջ 132-133), այդուհանդերձ չափազանց հրատապ է հարավկովկասյան տարածքի հայ բարբառների և խոսվածքների ատլասի կազմումը, որն անհետաձգելի գործ է:

Ներկա մենագրական աշխատանքը թերեւս իրօան կհանդիսանա հայերենի բարբառային ատլասի աշխատանքներում ապագա բանասերներին նույնպես ներգրավելու համար:

ԳԼՈՒԽ Բ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ
ՀԱՐԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Լեզվաբանական աշխարհագրություն առարկան անմիջական կապի մեջ է լեզվաբանական, լայն առումով՝ բանասիրական մի շարք գիտակարգերի հետ.

1.2.01. ա) Լեզվաբանական աշխարհագրությունը սերտ կապի մեջ է պատմահամեմատական լեզվաբանության, հատկապես հնդեվրոպաբանության հետ՝ ըստ էության այն ծագել է վերջինիս հուզող խնդիրների շրջանակում (տվյալ դեպքում անտեսում ենք բուն բարբառագիտության հետ տվյալ առարկայի ունեցած մերձավորագույն կապը): Հաճախ լեզվաբանական աշխարհագրություն տերմինին փոխարինում է (հատկապես անցյալում) բարբառագրություն (*диалектография*) տերմինը: Բարբառային երևույթների տարածական ընդգրկումները պարզելուն միտված մեթոդիկական և սկզբունքները հաջողությամբ կիրառություն էին գտնում նաև հնդեվրոպական հիմք լեզվի բարբառների տարածքային շփումների և փոխհարաբերությունների պատկերը պարզելու գործընթացում: Ինչպես հնդեվրոպաբանության «զավակ» արեալային լեզվաբանության մեջ, այնպես էլ լեզվաբանական աշխարհագրություն առարկայում հիմնական հասկացություններից մեկը **լեզվատարածքն** (*языковой ареал*) է: Հաճախ տարբերվում են մեծ և փոքր տարածքներ (ըստ Պետրոսյանի՝ տարածույթ, հմմտ. Շ. Պետրոսյան, ն. տ., էջ 132): Փորձեր են արվել ամբողջ աշխարհը բաժանել երեք մակրոտարածքի՝ Հին աշխարհ, Նոր աշխարհ և Օվկեանիա: Այնուհետև ավելի փոքր բաժանումներով տարբերակում են բազմաթիվ միկրոտարածքներ, ընդհուպ մինչև որևէ կոնկրետ բարբառի, ենթաբարբառի կամ խոսվածքի ընդգրկման նեղ սահմանները: Ներկա դասընթացն էլ հենց այդ սահմաններում փորձում է ներկայացնել հատկապես հարավկովկասյան տարածքում

հայերեն բարբառների բաշխումն ու տարածվածությունը, առկա ազդեցություններն ու փոխազդեցությունները:

Բարբառային տարածքների բացահայտման և նկարագրության առումով կարևոր է ամերիկացի լեզվաբան Ջ. Նիկոլսի առանձնացրած տարածքային տիպերի հետևյալ տեսակները՝ ա) այսպես կոչված ձգված (spread) և բ) ներփակ (residual) գոտիները: Առաջին դեպքը գերազանցապես հատուկ է հարթավայրային տեղանքներին, բնակլիմայական չկտրտված գոտիներին, որտեղ ծագումնաբանական բազմազանության մասին խոսք լինել չի կարող: Երկրորդ՝ ներփակ գոտիների դեպքում առկա են լեռնազանգվածներ, օվկիանոսներ, զանազան տիպի բնական արգելքներ, որոնց դեպքում չափազանց մեծ է ծագումնաբանական խայտաբղետությունը: Հետաքրքիր է, որ իբրև ներփակ գոտու տիպական օրինակ հիշատակվում է Կովկասը իր լեզվական, բարբառային խիստ տարբերակված համայնապատկերով: Առաջին դեպքի (ձգված գոտու) դասական օրինակ է ծառայում Եվրասիական տափաստանը, ու առկա է լեզվական անհամեմատ համասեռ պատկեր:

Սկզբնապես լեզվաբանական աշխարհագրությունը դիտարկվել է ոչ միայն իբրև պատմահամեմատական լեզվաբանության (հնդեվրոպաբանության) հավելված, լրացում, այլև ինչ-որ չափով իբրև նրա այլընտրանք: Վերջին 3-4 տասնամյակում լեզվաբանության այդ երկու բնագավառների փոխգործակցությունը դարձել է անհամեմատ ավելի արդյունավետ: Միանգամայն նոր հնարավորություններ են ստեղծվել, որոնք հավասարապես կարող են զարգացման նոր խթան հանդիսանալ ինչպես հնդեվրոպաբանության, այնպես էլ լեզվաբանական աշխարհագրության համար: Այսպես, օրինակ համեմատաբանության և լեզվաբանական աշխարհագրության հանգուցակետում հենց վերջերս բուռն զարգացում ապրեց **տարածքի ծագումնաբանական խտության** կոչված նորագույն տեսություններից մեկը:

1.2.01. 1980 թվականին Ռ. Աուստերլիցի կողմից առաջարկվեց մի հասկացություն, որը շուրջ տասը տարի անց ավելի խորացվեց և մշակվեց Ջ. Նիկոլսի կողմից (1990 թ., 1992 թ.): Ի՞նչ է իրենից ներկայացնում տարածքի ծագումնաբանական խտություն հասկացությունը: Այն դիտարկում է միավոր մակերեսում (օրինակ՝ միլիոն կամ հազար քառակուսի կիլոմետրում) առկա ծագումնաբանական ընտանիքների քանակը: Ասենք, որ յուրաքանչյուր տարածք բնութագրվում է ծագումնաբանական խտության իրեն հատուկ արժեքներով, իսկ դա նշանակում է, որ այդ հատկանիշը ձեռք է բերում չափազանց կարևոր բնութագրական արժեք: Տարբեր հետազոտություններով փաստվել է, որ բացարձակապես տարբեր արժեքներով են բնութագրվում երկրագնդի զանազան հատվածներն ըստ տարածքի ծագումնաբանական խտության չափորոշիչի:

Ըստ Ռ. Աուստերլիցի նախնական հետազոտությունների, Ամերիկա աշխարհամասը բնութագրվում է լեզվաընտանիքների շատ ավելի մեծ թվով, քան, ասենք, Եվրասիան: Ընդ որում նկատի պետք է առնել, որ առաջին դեպքում ընդգրկման ծավալով (քառակուսի կիլոմետրերով) Եվրասիան շատ ավելի մեծ տարածք է ընդգրկում քան Ամերիկան: Իսկ ահա թե ինչ քանակական տվյալներ է ստացվել Նիկոլսի դիտարկումներում. Ամերիկան (Նոր աշխարհ) ունի 10,6 ծագումնաբանական խտություն, մինչդեռ Եվրասիան (Հին աշխարհ)՝ ընդամենը 1,3, իսկ ահա այնպիսի ներփակ գոտի, ինչպիսին է Կալիֆորնիան, այդ ցուցիչը կազմում է՝ 34,1: Երկիր մոլորակի վրա, դարձյալ ըստ նախնական հետազոտությունների, ամենամեծ ծագումնաբանական խտության ունեցող տարածքը Նոր Գվինեան է, որտեղ այն կազմում է՝ 88,8:

Ինչպե՞ս բացատրել այսօրինակ տարբերությունները, արժեքների «ցրվածության աստիճանը»: Ըստ Նիկոլսի, դրանք հիմնականում աշխարհագրական պատճառաբանվածություն ունեն՝ ջրային և լեռնային արգելքներ և այլն: Ինչ խոսք, դրանք

այնպիսի գործոններ են, որոնք պատճառ են դառնում համեմատաբար փոքր լեզվական խմբերի ձևավորման, ըստ այդմ էլ լեզվաբարբառային շատ ավելի մեծ տարբերակվածության, սակայն պետք է գտնել նաև հարակից այլ պատճառներ, էական գործոններ, որոնց խթանման արդյունք է ստեղծված իրավիճակը: Ամենայն հավանականությամբ դրան միտված կլինեն այս ասպարեզում ապագայում կատարվելիք հետազոտություններն ու դիտարկումները:

1.2.03. բ) Լեզվաբանական աշխարհագրությունը սերտորեն առնչվում է նաև լեզվաբանական տիպաբանությանը: Եթե լեզվաբանական աշխարհագրության և համեմատական լեզվաբանության հանրագումարում ձևավորվեց տարածքի ծագումնաբանական խտություն տեսությունը, ապա լեզվաբանական աշխարհագրության և լեզվաբանական տիպաբանության «համատեղ գործունեությամբ» առաջացավ լեզվամիության գաղափարը: Ութ տասնամյակ առաջ (1923 թ.) Ն. Տրուբեցկոյի կողմից առաջարկվեց **լեզվամիություն** տերմինը, որը կիրառվում էր այնպիսի լեզուների կառուցվածքային ընդհանրությունների դեպքում, որոնց համար ցեղակցությունը պարտադիր պայման չէ, այլ որպես պարտադիր պայման հանդես է գալիս տարածական մերձակցությունը:

Լեզվամիության մասին հսկայական գրականություն գոյության ունի: Սույն համառոտ շարադրանքում արժե շեշտել միայն մի քանի կարևորագույն կետեր, որոնցով բնութագրվում է լեզվամիություն հասկացությունը: Նախ, ոչ ամեն պատահական, մանավանդ մասնակի զուգադիպում է հիմք ծառայում լեզվամիության: Այդ համընկնումները պետք է լինեն էական և բազմակի: Միայն այդ դեպքում կարելի է խոսել սովյալ լեզուների մեկ լեզվամիության մաս կազմելու մասին: Իբրև լեզվամիության դասական օրինակ հաճախ հիշատակվում է, այսպես կոչված, բալկանյան լեզվամիությունը, որի մեջ են մտնում հնդեվրոպական ընտանիքի չորս տարբեր ճյուղեր՝ հունական,

ռումանական, սլավոնական և ալբանական: Սովորաբար որպես լեզվամիության մեկ այլ օրինակ բերվում են Հարավարևմտյան Ասիայում գործառոդ մեծաթիվ անջատական և վերլուծական լեզուները: Այս միությունն ևս ընդգրկում է նվազագույնը չորս լեզվաընտանիք:

1.2.04. Ի՞նչ գործընթացներ են հանգեցնում լեզվամիությունների ստեղծմանը: Ահա մի հարց, որի պատասխանը տրվում է միանշանակ, փոխառությունները, ընդ որում ոչ թե բառային, այլ քերականական փոխառությունները: Իսկ դրանք արդյունք են միմիայն երկարատև և ավելի սերտ շփումների:

Լեզվամիության գաղափարը, այդուհանդերձ, շատերի մտքում որոշակի տարակուսանքներ է առաջացնում, հատկապես բարբառային ինդիքներին նվիրված բանավեճերում:

Լեզվամիություն գաղափարը վկայում է այդպիսի միության մեջ գտնվող լեզուների անքակտելի կապի մասին: Նման միության մեջ մտնող լեզուների միջև առկա փոխհարաբերությունները շատ ավելի բարդ պատկեր են ներկայացնում: Ահա թե ինչու շատ լեզվաբաններ (ինչպես օրինակ՝ Ու. Վայնրայխը) նախապատվության են տալիս հարամիտային (կոնվերգենտային) գոտի հասկացությանը, ուրիշները (օրինակ Մ.Էմենոն)՝ լեզվատարածքին: Տարբեր լեզուների կառուցատիպերի մերձեցման գործընթացները նորագույն շրջանում որակվում էին քիմիայի ոլորտից վերցված հասկացությամբ՝ «դիֆուզիա»: Բնականաբար, դիֆուզիա հասկացությունը շատ ավելի լայն է քան լեզվամիություն հասկացությունը: Բավականին մեծ ժամանակահատվածում տևական շփումների՝ դիֆուզիայի արդյունքում կարող են ոչ ցեղակից երկու կամ ավելի լեզուներ շատ ավելի մեծ տիպաբանական ընդհանրություններ ունենալ, քան տարբեր արեալներում գտնվող ցեղակից լեզուները:

Թե՛ լեզվաբանական աշխարհագրությանը, թե՛ տիպաբանությանը հուզում է մի կարևոր հարց ևս. ոչ ցեղակից լեզուների զուգահեռ զարգացման ընթացքում առաջացած

ընդհանրությունների մեջ ինչպե՞ս տարբերակել ինքնուրույն զարգացման հետևանքով առաջացածները ներլեզվական հնարավորությունների զարգացման ընդհանուր «ուղղվածությամբ» առաջացած ընդհանրություններից: Այսպես օրինակ, Հ. Աճառյանը աշխարհաբարի շարահյուսության վերլուծականությունն ըստ էության բացատրում է թուրքերենի ազդեցությամբ ձևավորված դիֆուզիայով մինչդեռ Ա. Մարգայանը իր «Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը» աշխատանքում («Հայոց լեզվի կառուցվածքը», Ե., 1975 թ.) դեպի վերլուծականություն միտված հին հայերենի ուղին պարզապես բնութագրում է հնդեվրոպական լեզվատիպի սկզբնական վիճակում առկա հնարավորության իրացմամբ: Դրանով պետք է բացատրել, որ մի շարք արևմտաեվրոպական լեզուներ համադրականությանից անցել են վերլուծականության: Դա բացատրել միմիայն միջլեզվական փոխազդեցությամբ, որոշ չափով կլիներ միակողմանի, քանի որ բացի հայերենի օրինակից, զարգացման նույն ուղղվածությունն ենք գտնում նաև իրանական մի շարք լեզուներում: Ահա թե ինչու առաջանում է լեզվաբանական աշխարհագրության և տիպաբանության գերխնդիրներից մեկը. լեզուներում ընդհանուր գոյացությունների որակման ժամանակ «ներքին միջոցների» արդյունքը հատակորեն տարբերակելն արտաքին ազդեցություններից, բուն դիֆուզ նորագոյացությունից:

Երկարատև շփումների արդյանքում գոյացած ընդհանրական այլևայլ լեզվական մերձակցությունները պայման չէ, որ վերաբերեն զուտ հնչյունական կառուցվածքներին, ինչպես կարծում է Հ. Պետրոսյանը (տե՛ս ն. տ., էջ 373) «Հայերենագիտական բառարանում» այդպիսիք ներկայացվում են իբրև հարամիտում կամ սերտաճում (կոնվերգենցիա): Եթե խոսքը վերաբերի սոսկ սերտաճմանը (ս + հ > փ, այ > է և այլն), թերևս որոշ չափով ճիշտ է տերմինի պատճենումը, սակայն քերականական կառուցվածքների, շարահյուսական կաղապարների և այլնի հաշվառման դեպքում հարամիտումը (կոնվերգենցիան) սերտաճումը չէ, ահա թե ինչու սույն դասընթացում որոշ

վերապահությունը կիրառվում է հարամիտում տերմինը: Այսպիսով, փաստված է, որ նույն տարածքում գտնվող լեզուների կառուցվածքներում հարամիտման (կոնվերգենցիայի) երևույթները շատ ավելի մեծ տեսակարար կշիռ են ձեռք բերում, եթե այդ լեզուները ունեն նաև ցեղակցական, ծագումնաբանական ընդհանրություններ: Մի խոսքով, լեզուների տիպաբանական մերձակցությունը նպաստում է նրանց միջև ոչ միայն կառուցվածքների հարամիտման երևույթների գոյացմանը, այլև բառապաշարային ներթափանցումներին:

Հարկ է նշել, ժամանակակից տիպաբանական հետազոտություններում, եթե խնդիրը չի վերաբերում ոչ թե մասնակի որևէ հարցի, այլ ընդգրկուն դիտարկումների, կատարվում է քննության ենթակա լեզուների ճիշտ ընտրություն, քանի որ ընդգրկել բոլոր լեզուների տվյալները տակավին անհնար է: Այդպես է վարվում, ասենք, Ջ. Գրինբերգը իր առաջարկած բառերի հիմնական կարգի և բառակազմական կաղապարներում: Հետագայում այդ լեզուների տվյալներին ավելացվեց նաև հայերենի (հին հայերեն, ժամանակակից սրևելահայերեն և արևմտահայերեն) համապատասխան արժեքները (տե՛ս Ա. Սարգսյան, Տիպաբանական վերլուծության մի փորձ (Ջ. Գրինբերգի երկու մեթոդների կիրառումը հայերենի նյութի վրա), ԼՀԳ, 1967 թ. N 5): Այսինքն, աստիճանաբար ստեղծվում է լեզվական մի անընդհատ համալրվող շտեմարան, որում թե՛ գուտ տիպաբանական, թե՛ լեզվաբանական աշխարհագրության տվյալները ի մի են բերվում՝ նպաստելով լեզվատիպերի ճշգրտմանը, լեզվաբանական ատլասների նոր սերնդի կազմմանը և այլն:

1.2.05. Այսպիսով բուն տիպաբանության և լեզվաբանական աշխարհագրության սերտ կապը միանգամայն բնական է և անվիճահարույց, իսկ ահա Ջ. Նիկոլսի «Լեզվական բազմազանությունները ժամանակի և տարածության մեջ» աշխատանքում (1992 թ.) նշված երկու բնագավառներին գումարվում է նաև

համեմատաբանությունը: Այսպիսով Ջ. Նիկոլյան առաջին անգամ լեզվաբանական աշխարհագրության, համեմատաբանության և տիպաբանության երեք բնագավառները համադրում է և ներկայացնում իբրև մեկ միասնական լեզվաբանական բնագավառ: Առաջին անգամ ընդհանուր լեզվաբանության պատմության մեջ Ջ.Նիկոլյան է, որ հստակորեն տարբերակում է լեզվակայունության 3 տիպ՝ 1) պատմական լիզվակայունություն, երբ նույն բնութագիրը ընդհանրական է այդ նույն ծագումնաբանական խմբի մյուս բոլոր լեզուների համար, 2) տիպաբանական լեզվակայունություն, երբ մի լեզվական բնութագիր նախանշում, ենթադրում է մյուսը և 3) տարածքային լեզվակայունություն, երբ միևնույն լեզվական բնութագիրն ի հայտ է գալիս, դրսևորվում է միևնույն, որոշակի տարածաշրջանի ոչ ցեղակից լեզուներում:

Ջ. Նիկոլյան վերցնում է լեզվատարածքային կայունության այնպիսի չափանիշներ, որոնք են՝ ձևաբանաշարահյուսական մի շարք հատկանիշներ՝ ձևաբանական բազմաբարդություն (բազմահամադրականությունը), բառերի կարգը (շարադասությունը), հոլովական դրսևորումները և այլն: Նա հանգամանորեն քննության է առնում լեզուներում տարածամասնակյա փոփոխությունների երեք տիպ՝ ա) կայունություն (Եվրոպա, Կենտրոնական և Հարավային Ավստրալիա), բ) տարածությունների մեծացում (Նոր Աշխարհ) գ) լեզուների ձուլում, որը տեղի է ունենում գաղութային նորանոր ձևերի ազդեցությամբ: Ըստ Ջ. Նիկոլյանի, Երկիր մոլորակի հնագույն փուլի լեզվավիճակների վերականգնումը հնարավոր է միայն լեզվական տարածությունների աշխարհագրական բաշխման գործոնի հաշվառմամբ:

դ) Լեզվաբանական աշխարհագրությունը սերտորեն առնչակցվում է նորագույն լեզվաբանական ուղղություններից մեկի՝ հանրալեզվաբանության հետ (տե՛ս Ա. Սարգսյան, Հանրալեզվաբանության դասընթաց, պրակ Ա., Երևան, 2002 թ.): Մի լեզվի ազդեցությունը մյուսի վրա անպայմանորեն կապված չէ մերձակից տարածքներ զբաղեցնելու հետ, այսինքն՝ աշխարհա-

գրական գործոնի հետ: Երկլեզվություն, բազմալեզվություն և հարակից այլ երևույթներ դիտարկվում են լեզվաբանական այն գիտաճյուղի՝ հանրալեզվաբանության կողմից, որի քննած միջլեզվական ազդեցությունների և փոխազդեցությունների մեխանիզմները հավասարապես կարևորվում են նաև լեզվաբանական աշխարհագրություն առարկայի կողմից:

Աշխարհագրականորեն «ցրվածության» աստիճանը միշտ չէ, որ վճռորոշ դեր կարող է խաղալ: Պատահում է, որ սոցիալ-էթնիկական պայմանները շատ ավելի հզոր գործոն են հանդիսանում, քան բուն աշխարհագրական գործոնը: Այդ տեսակետից հետաքրքրական է արևմտահայերենի վիճակը հայկական սփյուռքում: Հսկայական չափերով աշխարհագրականորեն բաժանվածության պայմաններում սփյուռքահայությունը ձգտում է անխաթար պահպանել Հայոց ցեղասպանության նախօրեին արդեն հաստատված լեզվակառուցվածքային հիմնական առանձնահատկություններ: Մովորաբար լեզվաբանական գրականության մեջ իբրև ցայտուն նմուշ հիմնականում բերվում է եբրայերենի (իդիշի) օրինակը, որ տարածված էր գերմանալեզու երկրներում:

1.2.06. Վերջապես, լեզվաբանական աշխարհագրությանը ադերսներ ունի հնագիտության, ծագումնաբանության և հարակից մի շարք այլ գիտակարգերի հետ: Որպես նրանց բոլորին հուզող ընդհանուր խնդիր կարելի է նշել բանական մարդու (*Homo Sapiens*) երկրի վրա տարածման օջախների դիտարկումը: Դա հնարավոր է, անշուշտ, տարածմանակյա մի շարք մեթոդների կիրառմամբ: Ընդունվում է, որ նախամարդու մայր հայրենիքը եղել է Աֆրիկան: Շուրջ 50-90 հազար տարի առաջ մարդ արարածը բնակեցվել է Ասիայում, ապա Նոր Գվինեայում և Ավստրալիայում, շուրջ 40 հազար տարի առաջ՝ Եվրոպայում, իսկ մոտ 20 հազար տարի առաջ Ամերիկայում: Ընդ որում շատ ավելի մեծ վեճերի տեղիք է տալիս Ամերիկայի բնակեցման խնդիրը: Ներկայումս կարծես թե ընդունված է

համարվում այն վարկածը, որ Հյուսիսային Ամերիկայում նախամարդու բնակեցումը տեղի է ունեցել Ասիայից՝ խաղաղօվկիանոսյան ափամերձ տարածքներով, իսկ Հարավային Ամերիկայում Homo Sapiens-ի առաջացումը կապում են Հյուսիսային Ամերիկայից կատարված վերաբնակեցմամբ: Ստացվում է, որ ի վերջո ինչպես Հյուսիսային, այնպես էլ Հարավային Ամերիկաներում մտածող մարդու հայտնվելը կապվում է Ասիա աշխարհամասի հետ:

Լեզվաբանական աշխարհագրության կիրառական, գործնական կողմը համապատասխան լեզվական քարտեզների և ատլասների կազմումն է, սակայն լեզվաբանական աշխարհագրությանը տեսական գիտակարգ է, և պետք չէ այն նույնացնել բարբառագիտության (լեզվաբանական քարտեզագրման) հետ:

ԳԼՈՒԽ Գ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՏԼԱՍ

1.3.01. Լեզվաբանական ատլասը քարտեզների այնպիսի համակարգված հավաքածու է, որը բացահայտում է լեզվական ամենատարբեր երևույթների տարածվածության ձևերն ու աստիճանը, պատկերում է լեզվաբանական երևույթների սփռվածության իրական վիճակը:

Բարբառագիտության մեջ շուրջ մեկուկես դար է, ինչ բացառիկ տեղ է զբաղեցնում լեզվաբանական-բարբառագիտական քարտեզագրությունը: Դրանցում խնդիրը բարբառագիտական նյութը քարտեզների միջոցով ցուցադրելը, ներկայացնելը չէ միայն: Լեզվական (բարբառային) երևույթները այդպիսի քարտեզներում դիտարկվում են նաև պատմականորեն, տարածմանակյա կտրվածքով, այդպիսով լեզվական փաստերը մատուցելով ժամանակագրական կտրվածքով: Ամեն մի բարբառային քարտեզ նվիրվում է մի որոշ լեզվական իրողության՝ նպատակ ունենալով ճշգրտել այդ երևույթի տարածական, սահմանները, ընդգրկման ծավալները: Քարտեզների միջոցով լեզվական այս կամ այն փաստը (գերազանցապես՝ բառը) իրեն հատուկ կենսագրության (պատմության) հետ միասին բացահայտում է իր աշխարհագրությունը:

Լեզվաբանական ատլասների կազմմանը, որպես կանոն, նախորդում են աշխատատար ու դժվարին գործընթացներ, նյութի հավաքչական, դասդասման, զուգադրման փուլեր: Այնպես որ լեզվաբանական ատլասները ի հայտ են գալիս բարբառագիտության զարգացման միմիայն որոշակի մակարդակի հասնելուց հետո: Երբ արդեն հավաքված է տվյալ կոնկրետ լեզվական բարբառային, ենթաբարբառային, խոսվածքային տարբերակների նկարագրման բավարար նյութը, հնարավորության է ստեղծվում տվյալ լեզվական, բարբառային առանձնա-

հատկությունների մասին ընդհանուր և մասնավորված (առարկայական) պատկերացումներ ունենալ:

Լեզվաբանական ասլախի կազմմանը նախորդող նախապատրաստական աշխատանքների փուլում կատարվում է քարտեզագրման ենթակա տարածքների ընտրություն, բնակավայրերի քանակի ճշգրտում, այն ծրագրերի մշակում, որոնց հիման վրա պետք է հավաքվի համապատասխան նյութը: Լեզվաբանական գրականության մեջ միանգամայն հստակ պահանջներ են ձևակերպված. «Քարտեզագրում կատարելուց առաջ անհրաժեշտ է ունենալ ոչ միայն որոշակի ծրագիր և աշխատանքային պլան, այլև առաջադրված նպատակների ամբողջական պատկերացում, քանի որ «բարբառային հետազոտություններ հավաքելիս պետք է դրանք դիտել իբրև համակարգի տարրեր և ոչ թե մեխանիկորեն առնչվող միավորների հավաքածու» (հմմտ. Հ. Պետրոսյան, ն.տ., էջ 132):

1.3.02. Այս կարգի աշխատանքների ձեռնարկման ժամանակ բարբառագետների մտքում սովորաբար ծագում է նույն հարցը, համընկնում են, արդյոք, լեզվական տարբեր երևույթների սահմանները, հնարավոր է, արդյոք, հստակորեն տարբերակել նույն լեզվի բարբառները: Արդեն մեկուկես դար է, ինչ բուն բանավեճեր են ծավալվել այս հարցերի շուրջ, թեև արդեն բավական ժամանակ է, ինչ լեզվաբանությունը, լեզվաբանական աշխարհագրությունը այս հարցերին ժխտողական պատասխան է տալիս: Խնդիրը չի առնչվում սույն լեզվի բարեփոխությանը, լեզվի պատմականորեն կրած փոփոխություններին, այլև տեղաշարժերին, հայերենի դեպքում գերազանցապես բնի կերպով կատարված, որոնք «խառնել» են տոհմիկ բարբառային համայնապատկերը: Հր. Աճառյանը գրել է. «Կան երևույթներ, որոնք մի փոքրիկ տեղում, նույնիսկ մի գյուղի մի թաղում են ամփոփված, այսպես, օրինակ՝ Մանիսայի վերի թաղը խոսում է Խարբերդի բարբառով, իսկ վարի թաղը՝

Զմյուռնիայի բարբառով. Իգդիրում մի թաղը խոսում է տեղի բարբառով, մյուսը՝ պարսկահայ բարբառով (ն.տ.):

Երևանում էլ Կոնդի թաղի բնակիչները արտասանում են $p > պ$, $q > կ$, իսկ մյուս թաղերի բնակիչները դարձնում են շնչեղ ($p > ք$, $q > գ$), ինչպես ասում են նաև քանաքեռցիները և էջմիածնեցիները: Թավրիզի Ղալա թաղը խոսում է տեղի բարբառով, իսկ Լիլավա թաղը Մուժումբարի և Ղարաբաղի բարբառով և այլն» (Հր. Աճառյան, ն.տ., էջ 193-194): Հր. Աճառյանը այնուհետև միանգամայն տեղին նշում է, որ դրանք «լեզվաբանական կոդյակներ են՝ առաջացած գաղթային զանազան հոսանքներից» (ն. տ.):

Առաջին աստիճանները հստակորեն ցույց տվեցին, որ տարբեր լեզվական երևույթների սահմանները ոչ միայն չեն համընկնում, այլև հաճախ խաչաձևվում են, կամ անցնում իրար մոտով՝ առաջացնելով զուգաբանություններ (изоглоссы): Զուգաբանությունը քարտեզի վրա այն գիծն է, որը ցույց է տալիս նույնական երևույթի (հատկանշի) տարածական ընդգրկումը ժամանակային կտրվածքում, ճշգրտում է այդ երևույթի տարածքը (արեալը): Զուգաբանությունների փունջը առանձնացնում է համեմատաբար համասեռ խոսվածքների տարածքը: Տարբեր կողմերից եկող և խաչաձևվող զուգաբանությունների փնջերը ցույց են տալիս տարբեր բարբառների գործածության սահմանները: Բարբառների միջև եղած սահմանները, ճիշտ է, գոյություն ունեն, սակայն դրանք հաճախ հստակ չեն, այլ «լողոված»: Եթե դա ճիշտ է եվրասիական շատ լեզուների ու բարբառների համար, ապա շատ ավելի տիպական է հայերենի նյութի դեպքում: Անդրադառնալով այս հարցին՝ ակադ. Գ. Ջահուկյանը գրել է. «Եթե մենք գործ ունենայինք այնպիսի լեզվի հետ, որը կրող բնակչությունը դարերի ընթացքում արմատական տեղաշարժերի չի ենթարկվել, և որի բարբառների տարբերության (հասկանալիության) աստիճանը գրեթե ուղիղ համեմատական է բնակավայրերի հեռավորության աստիճանին,

ապա աղյուսակի մեջ ընդգրկվող վայրերի ընտրությունը կկատարվեր շատ պարզ սկզբունքով, այդ լեզվի զբաղեցրած տարածությունն արտահայտող թիվը կբաժանեինք աղյուսակում ընդգրկվելիք վայրերի թվի վրա և կստանայինք այն քառակուսի վանդակները, որոնցից յուրաքանչյուրից կառնվեր մեկ (ըստ հնարավորին վանդակի կենտրոնին մոտ գտնվող) բնակավայր: Գործնականում կարելի կլիներ, հիմք ընդունելով երկու վանդակների կենտրոնների հեռավորությունը, սկսել երկրի կենտրոնից կամ սահմանային որևէ բնակավայրից և հաջորդաբար ընդգրկել այդ հեռավորության վրա գտնվող բոլոր վայրերը: Սակայն հայոց լեզուն խիստ հեռու է բարբառների դասավորության այդպիսի իդեալական վիճակից» (Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե, 1972 թ., էջ 30): Այդ դեպքում ինչպիսի հատկանիշներ պետք է հաշվի առնվեն, որոնք լինեն և՛ էական, և՛ բարբառային «ցրվածության» աստիճանը բացահայտող, և՛ բարբառային իրական կենտրոնները պարզաբանող: Գ. Ջահուկյանն իբրև այդպիսի հատկանիշներ ընտրել է վարչատնտեսական կարևորություն ունեցող բնակավայրերի մեծությունը, պատմական հնությունը, նկարագրվածության աստիճանը և այլն:

1.3.03. Լեզվաբանական ատլասի կազմության ժամանակ յուրաքանչյուր բարբառի համար առանձնացված է միջուկ և ծայրամասեր. «Բարբառային լանդշաֆտի միջուկը» գտնվում է այնտեղ, որտեղ նշվում են նրա հիմնական կառուցվածքային առանձնահատկությունները: Տարբեր լեզվական գծերի համատեղության այն գոտին, որտեղ աստիճանաբար իրագործվում է մի բարբառային միջուկից այլ միջուկ փոխանցումը, սահմանվում է որպես «տատանման գոտի» կամ ծայրամաս» (հմմտ. БСЭ «Լեզվաբանական ատլաս» բառահոդվածը):

Հայերենի բարբառագիտական քարտեզի կազմության ժամանակ (ինչպես և հայ բարբառների վիճակագրական քննության ընթացքում) այդ եղանակը անգործադրելի է նկատվել,

քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքական պետության կողմից իրագործած հայերի ցեղասպանության պատճառով և «հայերի հետագա գաղթերը հայաբնակ զանազան վայրերից արմատապես խախտել են այդ դասավորությունը, և այժմ, իկարկե, չի կարելի բառիս բուն իմաստով խոսել Զմյուռնիայի, Տրապիզոնի կամ Զեյթունի բարբառների մասին, որովհետև դրանց կրողները մասամբ բնաջնջվել են, մասամբ էլ ցրվել են աշխարհով մեկ» (Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 30): Ինչ վերաբերում է Անդրկովկասին, ապա Գ. Ջահուկյանը հիմք է ընդունել արդի (իմա XX դ. 70-ական թվականների) վիճակը, որտեղ հայ բարբառների դասավորվածությունը հարաբերաբար քիչ է խաթարվել: Այդ տեսակետից պատկերը փոխվել է նաև Անդրկովկասում, հատկապես Ադրբեջանում, դարաբաղյան շարժման ժամանակ կատարված բռնագաղթերի պատճառով (Գանձակի, Շամխորի, Շամախու, Նուխու և այլ բարբառախոս վայրերից բնակչության տեղահանության պատճառով):

Ինչպես այլ լեզուների, այնպես էլ հայերենի ատլասի կազմման ժամանակ քարտեզագրման նյութը կարելի է հավաքել տարբեր մեթոդներով:

1.3.04. Ատլասի նյութի հավաքման մեթոդներ: 1) Առաջին հերթին լայնորեն կիրառվում է նյութի ուղղակի (դաշտային) հավաքչական մեթոդը, երբ ձայնագրություններն ու գրանցումները իրականացվում են անմիջականորեն ատլասը կազմողների կողմից, հիմք ունենալով տվյալ բարբառը, խոսվածքը կատարելապես տիրապետող տեղեկատու անձանց: 2) Երկրորդ մեթոդը, որ փաստորեն առաջին անգամ կիրառվել է գերմանացի ուսուցիչ Գեորգ Վեսկերի, այնուհետև Ֆերդինանդ Վրեդելի կողմից, միջնորդավորված է հարցման ենթարկվողների կողմից: Այս դեպքում հարցարանը բազմացվում է ուղարկվում է քննության մեջ ներառված բոլոր վայրեր, և ստացված պատասխանների հիման վրա կազմվում է ատլասը: Վերջապես, 3) Երրորդ մեթոդը

նյութի հավաքման խառը ձևն է, երբ առանձին տարածքներ քննվում են ատլասը կազմող լեզվաբանների կողմից, իսկ ատլասի մեջ ներառվող որոշակի տարածքների տեղեկությունները հավաքվում են միասնական ծրագիր-հարցաշարով: Ազգային մեծ և միջլեզվական քարտեզների կազմության ժամանակ սովորաբար դիմում են այս վերջին՝ խառն եղանակին: Ըստ էության այդպես է վարվել նաև ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտական խումբը: Շուրջ քառորդ դար առաջ կազմված բարբառային միասնական հարցաշարին զուգընթաց, բարբառագիտական խմբի անդամները անմիջականորեն հետազոտել և հավաքել են բարբառների և խոսվածքների հսկայական նյութ՝ այդ բոլորը գրանցելով հատուկ տետրակներում: Հավաքված բարբառային նյութը ներկայումս ենթարկվում է համակարգչային մշակման: Հայ բարբառների ատլասը մեծապես կօգնի բարբառների, խոսվածքների, ենթախոսվածքների սահմանները ճշգրտելուն, հայ ժողովրդի դարավոր պատմության, ազգագրության, բնահյուսության հետ կապված մի շարք հարցերի պատասխաններ հստակեցնելուն, այլև գրական լեզվի և բարբառների իրական փոխհարաբերությունը վիճակագրական տվյալներով ստանալու խնդիրը լուծելուն:

Նախնական փուլում, նույնիսկ նյութերի հավաքման և քարտեզագրման աշխատանքները հաջողությամբ ավարտելու դեպքում միևնույն է, բուն ատլասի կազմման ընթացքում, բարբառագիտական նվաճումներին զուգընթաց՝ ատլասի կազմման ծրագրերն անընդհատ ճշգրտվում և կատարելագործվում են: Դա վերաբերում է նաև քարտեզագրության եղանակներին: Հայտնի է, որ առաջին ատլասներում քարտեզների վրա անցկացվում էին գերազանցապես կոնկրետ բառեր կամ լավագույն դեպքում՝ լեզվական կառույցներ: Հետագայում բարբառագետները մշակում են լեզվական նշումների հատուկ համակարգեր, որոնք առավելագույն կերպով ի հայտ են բերում այս կամ այն լեզվական երևույթի բուն էությունը (ըստ այդմ

քարտեզի վրա կարող են «գոյակցել» տարբեր գույների, ձևերի, ընդգծումների, ֆոնների զուգաբանություններ: Առ այսօր մի շարք լեզվաաշխարհագրական ուղղությունների համար (ինչպես օրինակ՝ ռոմանական, գերմանական և այլն) բարբառային երևույթները ներկայացվում են առանձին, կոնկրետ բառերի միջոցով: Այդպիսի մոտեցումը իրեն արդարացնում է հատկապես ցեղակից լեզուների ատլասներ կազմելիս (ինչպես, օրինակ՝ «Համապլովոնական բարբառային ատլասի» կազմության ժամանակ): Իսկ ահա «Ռուսաց լեզվի բարբառային ատլասի» կազմության ընթացքում մոսկովյան լեզվաբանական աշխարհագրության դպրոցը քարտեզագրման այլ սկզբունքներ որդեգրեց (հմմտ, ռուսական մեծ հանրագիտարանի «Լեզվաբանական ատլաս» բառահոդվածը): Այս մոտեցմամբ առանձին բառեր քարտեզագրվում են միայն այն դեպքում, երբ ձևավորվում, են հատուկ արեալներ (տարածքներ): Այդ դեպքում, բնականաբար, հնչյունական կամ քերականական երևույթները բառայնացվում են: Քարտեզագրման ժամանակ մոսկովյան դպրոցի ներկայացուցիչները կարևորում են հետևյալ մոտեցումը. լեզվական գծերի ստորակարգությունը անհրաժեշտ է ներկայացնել նշանների ստորակարգությամբ: Բացի այդ հստակորեն պետք է առանձնացվեն էական գծերը երկրորդական կամ ուղեկցող հատկանիշներից:

Այսպես, օրինակ, մոսկովյան լեզվաբանական դպրոցի կազմած ատլասում բառագիտական քարտեզներում գլխավորը ոչ թե ամբողջական բառն է, այլ արմատը, ընդ որում էապես հաշվի են առնվում բառակազմական կաղապարների հակադրությունները: Ինչ խոսք, լեզվաբանական ատլասները չի կարելի պատկերացնել այնպես, ինչպես ներկայացված է առանձին գիտական հրատարակություններում. «Քարտեզները որոշակի կարգով ամբողջացվում են մեկ ժողովածուի մեջ, որը կոչվում է բարբառագիտական ատլաս (диалектологический атлас) կամ լեզվաբանական ատլաս (հմմտ. Հ. Պետրոսյան): Լեզվաբանական

ատլաս» քարտեզների մեխանիկական հանրագումար չէ: Որպես կանոն, այն ներկայացնում է թե՛ մեկնաբանություններ, թե՛ ուղեկցող տեքստեր, այս կամ այն լեզվական երևույթի անհրաժեշտ իմաստային մեկնաբանություններ և այլն: Վերջիններս առանձին դեպքերում կարող են մատուցվել նաև քարտեզների լուսանցքներամ: Երբեմն դրանք կարող են լինել այնքան հանգամանալից ու մանրամասնված, որ ներկայացվում են առանձին հոդվածների տեսքով: Անշուշտ, դրանք մեծ արժեք են ձեռք բերում ոչ միայն բարբառագիտական ասպարեզում աշխատողների, այլև լեզվի ու ժողովրդի պատմության հարցերով զբաղվող բանասերների, պատմաբանների, ազգագրագետների համար: Վերջիններիս համար չափազանց մեծ արժեք են ձեռք բերում, ատլասի հենց հավելվածները, որտեղ տեղ գտած հատկապես բառային մեկնաբանությունները զուտ լեզվական բովանդակությունից ավելի հեռու են անցնում, ձեռք բերում ազգաբանամշակութային տեղեկությունների հարուստ շտեմարանի բնույթ:

1.3.05. XX դարի երկրորդ կեսին լայն թափ ստացած լեզվաբանական ատլասներ կազմելու գործը ներկայումս տվել է իր որոշակի դրական արդյունքները: Այժմ արդեն կազմվել են աշխարհի լեզուների ավելի քան 300 ատլասներ: Ցավոք, հայ բարբառաքարտագրական գործը նոր է միայն մտել ավարտական փուլ:

Երեք հարյուրից ավելի ատլասների գերակշիռ մեծամասնությունը նվիրված է ազգային լեզուների բարբառային ատլասներին: Բնական է, որ նրանցում հիմնականում ներկայացված է Եվրոպական երկրների լեզվավիճակը: Տարածքային տարբերակների առավել ընդգրկան պատկեր ստանալու համար և լեզվի համակարգի ոչ մասնակի երևույթներով չգոհանալու համար ատլասները դիտարկվել են լեզվական բոլոր մակարդակներում: Ասել, որ կազմելով այս կամ այն լեզվական բարբառագիտական քարտեզ, կարելի է տվյալ բնագավառում աշխատանքներն

ավարտված համարել, ճիշտ չէր լինի, քանի որ ատլասը, հանդիսանալով լեզվի գիտության ոռոշակի փուլի վավերագիր, իրան է հանդիսանում հենց նույն բարբառագիտական ոլորտում նորանոր հետազոտություններ կատարելու՝ թե՛ համաժամանակյա, թե՛ տարածամանակյա կտրվածքներով:

Իբրև ազգային լեզուների բարբառային ատլասի դասական նմուշ կարող է ծառայել Ռ. Ավանեսովի ղեկավարությամբ կազմված եռահատոր ատլասը: Հատորներից առաջինը նվիրված է հնչյունաբանությանը, երկրորդը՝ ձևաբանությանը, երրորդի՝ բառապաշարին:

Գոյություն ունեն լեզվաբանական քարտեզագրության մի շարք տեսակներ: Նրանցից ամենատարածվածները և հաճախ ներկայացվողները, զանազան տիպի հանրագիտարաններից մինչև հանրամատչելի տեղեկատուները, երկու տիպի են: Առաջին տիպը ներկայացնում է աշխարհի լեզուների տարածման քարտեզները: Այդ առումով բազմաթիվ օրինակներից արժե հիշատակել երկուսը՝ շուրջ մեկ դար առաջ Բրոկհաուզ-Եֆրոնի հրատարակած Էլիզե Ռեքլյուի «Մարդը և Երկիրը» բազմահատորյակի (Ս. Պետերբուրգ, 1906 թ.) 2-րդ հատորում տպագրված ազգագրական և լեզվական տարածվածության քարտեզը և դրանից շուրջ հարյուր տարի հետո (սկսած 1999 թ.) լույս տեսնող «Աշխարհի լեզուները» խորագրով հատորներում տպագրված քարտեզները: Դրանցից յուրաքանչյուրը նվիրված է մի առանձին լեզվաընտանիքի կամ լեզվախմբի: Եվ որպես լուսաբանություն տրվում են համապատասխան լեզվական քարտեզները:

Երկրորդ տիպի քարտեզներում ներկայացվում են լեզվական երևույթների տարածքային բաշխման արժեքները: Տարբերակվում են հնչյունական, բառաքերականական, իմաստային զուգաբանություններ:

Ներկայումս հսկայական բառային նյութ է կուտակվել կազմելու համար «Ռուսական ժողովրդական խոսվածքների բառապաշարային ատլասը», որը բազմահատորյակային

բացառիկ գործ է լինելու: Դրան նախորդել է առանձին բնակավայրերի ու գավառների քարտեզների կազմման և հրատարակման գործը: Այսպես, 1994 թվին Լ.Կոմյագինայի կողմից Արխանգելսկում հրատարակվել է «Արխանգելսկի խոսվածքների բառապաշարային քարտեզ»: 1993-1998 թվականներին հինգ հատորով լույս է ընծայվել «Բելոռուսերենի ժողովրդական խոսվածքների բառապաշարային քարտեզ»: Բազմաթիվ լեզուների համար համապատասխան ատլասների գործը կամ ավարտին է հասել, կամ մոտենում է իր ամփոփման փուլին: Այս մասին սպառիչ տեղեկություններ կարելի է գտնել շուրջ 3 տասնամյակ առաջ հրատարակված «Լեզվաբանական աշխարհագրություն, բառագիտություն և լեզվի պատմություն» ժողովածուի մեջ (տե՛ս Лингвогеография, диалектология и история языка, Кишинев, 1973 թ.):

Համեմատաբար սահմանափակ թիվ են կազմում քերականական գուգաբանությունները: Այս դեպքում խնդիր է դրվում պարզելու տվյալ կոնկրետ իմաստի համար առկա քերականական ձևերի, քերականական արտահայտության միջոցների դրսևորման տարածքները: Բարբառների սահմանագծերը որոշվում են՝ պարզելով տարբեր քերականական իրակությունների գուգաբանությունների համընկնման աստիճանը, գուգահեռականությունը, մերձակից տարածքներ զբաղեցրած լինելը և այլն:

Ճիշտ է, ներկայումս կազմված շուրջ 300 լեզվաբանական ատլասների մեջ գերակշռում են զուտ ազգային լեզվական քարտեզները, սակայն քիչ չեն նաև ռեգիոնալ ատլասները: Այս դեպքում դիտարկման առարկան լեզվական այնպիսի լանդշաֆտն է, որը կամ պատմական, կամ ազգագրական, կամ լեզվական (և այդ երեք) հատկանիշներով կարևորություն է ներկայացնում: Այսպես 1985 թ. Կիևում հրատարակվել է Տ. Նազարովայի պատրաստած «Ներքին Պրիպյատի լեզվաբանական ատլասը»: Փաստորեն, ճակատագրի բերումով Չեռնոբիլի ատոմակայանի վթարի տարին լույս է տեսնում Չեռնոբիլի

երկրամասի խոսվածքների ասլասը: Հայտնի է, որ Չեռնոբիլի աղետից հետո այդ խոսվածքներից շատերը դադարեցին իրենց գործառությունը նշված տարածքում: Բնականաբար, տվյալ ասլասը ներկայումս ձեռք է բերել նաև պատմական մեծ արժեք:

Այսօր էլ շարունակվում են կազմվել ամենատարբեր տարածքների բարբառների ու խոսվածքների քարտեզներ: Մանավանդ հետաքրքիր են այնպիսի քարտեզները, որոնք ներկայացնում են այլ լեզուների գերիշխող տարածքներում գործառող բարբառները: Այսպես, օրինակ, 1958 թ. Մոսկվայում տպագրվել է «ԽՍՀՄ-ի բուլղարական խոսվածքների ասլասը»: Հատկապես կարևորվում են այդպիսի խոսվածքները, որոնք բուն մայրենիի գործառության տարածքներից հեռու են, ավելի անաղարտ են պահում տվյալ ազգային լեզվի արխայիկ գծերը, հակառակ, որ գտնվել են այլալեզու մշակույթների ազդեցության տակ: Ահա թե ինչ հետաքրքիր փաստեր է բերում Հր. Աճառյանն իր «Լիակատար»-ի Ներածության հատորում. «Գիտուններից ոմանք կարծում են, թե մի լեզու մնալով իր բուն հայրենիքում, ավելի քիչ է ենթակա ձևափոխության, քան գաղթելով մի ուրիշ երկիր. այսպես՝ լիտվաներենը շատ քիչ փոխված լեզու է, ըստ որում գտնվում է գրեթե հայրենիքում, այսպես նաև արաբերենը: Այս կարծիքը ճիշտ չէ, և երևույթները պատահական են: Հայտնապես գիտենք, որ Սարդինիա կղզու հարավակողմի ժողովուրդը ավելի հարազատ ռոմանական մի լեզվով է խոսում, քան նույնիսկ Հռոմի բնակիչը իր տեղում (Nöldeke, Die Semit. Spr., էջ 11)» (տե՛ս Հր. Աճառյան, ն. տ., էջ 191): Այնուհետև Հր. Աճառյանը բերում է հայերենից օրինակներ. Հայաստանի շատ տարածքների հայերենն ավելի ձևափոխված է, քան, ասենք, Պոլսի հայերենը: Անտարակույս այդ այդպես է, եթե համեմատելու լինենք, օրինակ, Ղարաբաղի կամ Ագուլիսի բարբառները: Աճառյանը բերում է նաև Մուշավայի հայերի օրինակը, որոնք թեև հազարավոր կիլոմետրեր հեռու են հայության հայրենիքից, սակայն պահպանել են, ասենք, գրաբարյան նախդիրը, այն

դեպքում, երբ Արարատի ստորոտի բարբառներում այն իսպառ վերացել է (հմմտ. Հր. Աճառյան, ն. տ.):

Ուստի չափազանց կարևորվում է ռեգիոնալ ատլասների կազմումը: Դրա համար հատուկ մեթոդիկա է մշակել Ռ. Ավանեսովի գլխավորած մոսկովյան լեզվաշխարհագրական դպրոցը: Ռուսաստանի տարբեր միկրոտարածքների խոսվածքների ատլասներից նշենք երկուսը, 1977 թվին Ուֆայում լույս է տեսել Բաշկիրիայի տարածքում գործառոդ ռուսաց լեզվի տարբերակների ատլասը (հեղինակ՝ Ջ. Չոբրնովա), 2000 թ. Սարատովում տպագրվել է Միջին և Ներքին Պովոլժյեի խոսվածքների ատլասը (հեղինակ՝ Լ. Բարաննիկովա) և այլն:

1.3.06. Լեզվաբանական աշխարհագրության խնդիրներից է նաև այնպիսի հատուկ տիպի ատլասների կազմումը, որոնցով հաշվի են առնվում ոչ ցեղակից լեզուների ընձեռած տվյալները: Այդ առումով չափազանց հրատապ խնդիր է հարավկովկասյան արեալի լեզվավիճակը ներկայացնող ատլասի կազմումը: Հայերենի բարբառային մեծ ատլասի կազմում մոտեցել է ավարտին. հսկայական աշխատանք է կատարվել նաև Վրաստանում գործառոդ իբերովկասյան լեզուների նյութի հավաքման ասպարեզում: Մի խոսքով, հասունացել է հարավկովկասյան տարածքի ոչ ցեղակից լեզուների ընդհանուր և մասնավոր ատլասների կազմման անհրաժեշտությունը, որը բացի պատմահամեմատական լեզվաբանության խնդիրներից, ձեռք կբերի նաև լեզվատիպաբանական մեծ նշանակություն:

Ցեղակից լեզուների, խոշորամասշտաբ. դիտարկման փայլուն օրինակ է «Համապլավոնական լեզվաբանական ատլասը», որն ընդգրկում է բոլոր սլավոնական լեզուների կարևորագույն լեզվական երևույթները (ավելի քան 850 բնակավայրի հաշվառմամբ) տարածամանակյա լայն կտրվածքով: Ատլասը երկու շարքից է բաղկացած՝ ա) բառապաշարաբառակազմական և բ) հնչյունա-քերականական: Արդեն յուրաքանչյուր շարքից լույս է տեսել չորսական հատոր: Աշխա-

տանքում ներգրավված են աշխարհի բոլոր հայտնի սլավոնագետները: Շուրջ կես դար է (սկսած 1951 թվից) այն հաջողությամբ շարունակվում է:

Հարավկովկասյան տարածաշրջանի լեզվաբանների ապագա համագործակցության հիանալի օրինակ կարող է դառնալ տվյալ արեալի լեզվական ատլասի կազմումը, որը խթան կհանդիսանա պատմամշակութային, ազգային-էթնիկական, կառուցվածքա-տիպաբանակ անհստակ կադապարներ մշակելիս, հարավկովկասյան տան գաղափարի մարմնավորման ճանապարհին: Այս տարածաշրջանի գիտնականների համար օրինակ կարող է ծառայել եվրոպական բոլոր լեզվաբանների նյութի հաշվառմամբ կազմվող «Եվրոպայի լեզվաբանական ատլասը»: Այդ հսկայական ատլասում տեղ են գտնելու հնդեվրոպական (ներառյալ՝ հայերենը), ուգրոֆիննական, թյուրքական, կովկասյան, սեմական, մոնղոլական լեզուների տվյալները: Դա, իրոք, միջազգային հետազոտական ամենամեծ նախագիծն է, որն իրավամբ որակվում է իբրև ցեղակից- ոչ ցեղակից լեզուների ատլասի կազմման չորրորդ սերնդի նմուշ (ոեգիոնալ-ազգային, ցեղակից և ոչ ցեղակից լեզուների ընդգրկմամբ):

1970 թվականից սկսած այդ ծրագրում ներգրավված են եվրոպական բոլոր երկրների խոշորագույն լեզվաբանները: Անցյալ դարավերջի 15 տարվա ընթացքում արդեն հրատարակվել են հինգ ծավալուն պրակներ՝ մանրակրկիտ մեկնաբանություններով: Նշենք պրակներում տեղ գտած հասկացություններից մի քանիսը՝ **ծնունդ**, **ծիածան**, **տանձ** և այլն ըստ Եվրոպայում գործառող հարյուրավոր բարբառների նյութի: Ցավոք, առ այսօր լայն շրջանակներում ուշադրության առարկա չեն դարձել հարավկովկասյան արեալի ցեղակից և ոչ ցեղակից լեզուների բարբառային նյութերը, մինչդեռ, ասենք, հենց նույն **«Ծիածան** հասկացության բառային դրսևորումները հայ բարբառներում» թեմայով Երևանյան միջազգային գիտաժողովում հետաքրքիր զեկուցմամբ հանդես է եկել բանասիրական գիտությունների

թեկնածու Ա. Հանեյանը (տե՛ս «Միջազգային բարբառագիտական նյութեր», թեզիսներ, 2001 թ., Երևան):

Տարբեր ծագումնաբանական հիմք ունեցող հայերենի (հնդեվրոպական), վրացերենի (իբերո-կովկասյան) և ադրբեջաներենի (թյուրքական) հարավկովկասյան հարաբերաբար փոքր տարածքում գործակցությունը քննելու տեսակետից հետաքրքրական նախօրինակ կարող է ծառայել «Համակարգատյան բարբառագիտական ատլասը» (1987-1994 թթ.), որի չորս պրակներում ցույց է տրվում էթնոլեզվական երկարատև շփումների արդյունքում ավանդական ժողովրդական կենցաղային քառաշերտերի «տեղաշարժերը»: Սա, թվում է, անսպառ աշխատանք է. այսպես կազմվել են շատ ավելի ընդհանուր և մասնակի լեզվաբանական հարցերին նվիրված քարտեզներ: Վերջերս պատրաստվել է «Անձրևում է, անձրև է գալիս» իմաստի արտահայտման քերականական միջոցների պրակը:

1980-ական թվականների վերջում Եվրամիությունը սկսեց ֆինանսավորել Եվրոտիպ (Eurotyp) ծրագիրը: Դա մի աննախադեպ ծրագիր է՝ Եվրոպայից մինչև Ատլանտյան և Ուրալ ընկած լեզուների տիպաբանական, քերականական հատկանիշների քննություն: Մասնավորապես քննվել են բառերի կարգի, մակբայական կառույցների, կերպաժամանակային կարգերին նվիրված մի շարք խնդիրները: Անհրաժեշտ է, որ հարավկովկասյան լեզվական նյութը նույնպես իր արժանի տեղը գրավի կազմվող լեզվաբանական ատլասներում: Վերջապես 1996 թվին մի քանի հարյուր քարտեզ է հրատարակվել «Ասիայի և Ամերիկայի. Խաղաղովկիանոսային տարածքի միջմշակութային հարդորդակցման լեզուների ատլաս» խորագրով (Մ. Վուրմի խմբագրությամբ): Յուրաքանչյուր քարտեզ ուղեկցվում է տվյալ տարածքի լեզվական իրադրությանը նվիրված ծավալուն հոդվածով: Վերջապես, ներկայումս Լայպցիգի Մ. Պլանկի անվան բարեշրջման մարդաբանության ինստիտուտում պատրաստվում է «Աշխարհի լեզուների կառուցվածքների քարտեզ»-ը: Այս դեպքում քարտեզ-

ների վրա արտացոլվելու են տիպաբանորեն էական գուգաձևություններ՝ հարյուրից ավելի չափորոշիչներով:

Ներկա աշխատանքում ներկայացվում են Ջ. Գրինբերգի բառակազմական և շարահյուսական երկու մեթոդների, ինչպես նաև Սվոդեշի մեթոդի հայերենի տարբեր վիճակների նկատմամբ կիրառման նախնական արդյունքները: Մշակված այդ սկզբունքների հետագա ծավալուն կիրառմամբ, հայերենի բարբառների նյութի ներգրավմամբ, կովկասյան դրացի լեզուների տվյալների հաշվառմամբ մոտ ապագայում, ինչպես նշվեց, կարելի է նախաձեռնել «Հարավկովկասյան արեալի լեզվական ատլասի» հրատապ աշխատանքը:

Լեզվաբանական ատլասների հետազոտությունն, անտարակույս, չափազանց հետաքրքրական, իսկապես գրավիչ գործ է, որ ոչ միայն գիտական նորանոր հնարավորություններ է ստեղծում, այլև կենդանի վկայություն է լեզվի պատմության և ժողովրդի անցած ճանապարհի, էթնիկ խմբերի տեղաշարժերի, վտիսարաբերության, մրցակցության և արդի վիճակի իրական պատկերի:

Գ Լ ՈՒ Խ Դ
ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱՓՈՒԼԵՐԸ

Հայերենի բարբառների ուսումնասիրությունն ընդգրկում է շուրջ տասնվեցդարյա մի հսկայական ժամանակամիջոց, որի ընթացքում ձեռնարկվել են բազմաթիվ փորձեր՝ սկզբում հայ բարբառները պարզապես տարբերակելու և մասամբ նկարագրելու, հետագայում, ըստ հնարավորին, խմբավորելու և դասակարգելու նպատակներով:

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը առանձնացնում է հայ բարբառագիտության զարգացման չորս հիմնական փուլ: Այդ դասակարգման մեջ, իբրև առաջին փուլ, առանձնացվում է հայ «բարբառների առանձնակի նկարագրության և աշխարհագրական (տարածքային) դասակարգման» փորձերի շրջանը (5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը (տե՛ս Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 16): Մեր համոզմամբ, այսպիսով առնվազն երկու շրջան միավորվում են, քանի որ եթե V դարից մինչև XVIII դարը ներառյալ, իրոք, կարելի է բնութագրել իբրև բարբառների սուկ առանձնակի նկարագրություն, հետագայում նաև տարածքային դասակարգման նախնական փորձերի շրջան, ապա այդ չի կարելի վերագրել հատկապես Քերովբե Պատկանյանին, Արսեն Այտընյանին. ով ոչ թե սուկ տարբերակում է բարբառների 4 խումբ (այդ մասին տես ստորև), այլև քննության է առնում նրանց ծագման հիմքերը, հնչյունական և ձևաբանական հատկանիշները: Ուստի նպատակահարմար է հայ բարբառագիտության զարգացման հստակ շրջաններ առանձնացնելիս տարբերակել բարբառների առանձնակի նկարագրության և աշխարհագրական դասակարգման նախնական փորձերի շրջանը (V դարից մինչև XIX դարը ներառյալ), հաջորդ՝ XIX դարը ընդգրկող շրջանից, երբ ոչ միայն լուրջ փորձեր են կատարվում ճշգրտելու բարբառային հիմքերը, այլև ստեղծվում են ձևաբանական դասակարգման

նախադրյալներ և հաջողությամբ իրագործվում (հմմտ. ք. Պատկանյանի, Ա. Այտընյանի փորձերը):

Ստորև ներկայացվում է հայ բարբառագիտության զարգացման հիմնական փուլերի համառոտ նկարագրությունը.

1. Հայ բարբառների նախնական նկարագրության և տարածքային (աշխարհագրական) դասակարգման մասնակի փորձերի շրջան (V դարից մինչև XVII դարի վերջը): Այս փուլի հիմքը դրվել է Դիոնիսիոս Թրակացու քերականության «հայերեն թարգմանության և մեկնաբանությունների մեջ»՝ բարբառային թեկուզ և մասնակի երևույթների դիտարկմամբ: Սովորաբար որպես դասագրքային օրինակ, հիշատակվում է հունական բարբառների դիմաց համապատասխան հայերեն բարբառների մատնանշումը, օրինակ՝ դորիական բարբառների դիմաց Գորդայից կամ Կորճայից կոչված բարբառի հիշատակումը (տե՛ս Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 16):

Հայ բարբառների տարածքային դասակարգման առաջին լուրջ փորձը կատարվել է շուրջ հազար երեք հարյուր տարի առաջ հայտնի քերական Ստ. Սյունեցու կողմից: Ճիշտ է նշվել հայ լեզվաբանության մեջ, որ հայ բարբառների տարածքային դասակարգման սույն փորձի մեջ հեղինակը նախընտրաբար մեկնիչ է և պարզապես զուգահեռներ է փնտրում հայերենի սահմաններում՝ համապատասխան հունական բարբառային դասակարգման. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՄիւնիւն և զԱրցախայինն...» (տե՛ս Н. Адонц, Диониссий Фракийский и армянские толкователи, П., 1915, էջ 187):

Չափազանց հետաքրքրական են հետագա դարերում հայ բարբառների վերաբերյալ օտար (գերազանցապես եվրոպացի) ճանապարհորդների (Մարկո Պոլո և ուրիշներ) թեկուզ և կցկտուր հիշատակումները Հայաստան աշխարհի լեզվական վիճակի մասին: Հռոմի կաթուղիկ միսիոներները անցնելով

պատմական Հայաստանով՝ հատկապես Կիլիկիայով, գրի են առել լեզվական մի շարք առանձնահատկություններ, խոսակցական լեզվով (միջինհայերենյան խառնուրդով) պատրաստում հայերեն Աստվածաշունչ, որը պատկանում է երկճյուղ աշխարհաբարյան շրջանին նախորդ ենթափուլին (հմմտ. Ա. Սարգսյանի, Ե. Թադևոսյանի զեկուցումը «Հայոց լեզվի տիպաբանությունը XVII դ. մշակույթում» խորագրով գրականագիտական միջազգային գիտաժողովում)¹:

Այդ հարցերը, ցավոք, տակավին պատշաճ գիտական հետազոտության չեն ենթարկվել:

Արդեն XVI-XVIII դարերում բավական հարուստ բարբառային նյութ ենք գտնում եվրոպացի հայագետների աշխատություններում: 1633 թվականին հրատարակած իր բառարանում Ֆ. Ռիվոլան ուղղակի մեջբերում է բարբառային բառերի մի բավականին սովոր ցանկ: Հատուկ քննության արժանի է Յ. Շրյոդերի «Գանձ արամեան լեզուի»-ն, որը հրատարակվել է 1711 թվականին:

Բարբառագետների գրեթե բոլոր հետազոտությունների պատմական ակնարկների բաժնում անդրադարձ է կատարվում Ֆ. Ռիվոլայի և Յ. Շրյոդերի բերած բարբառային տվյալներին, որոնք տարածքային կամ աշխարհագրական դասակարգման սաղմնային փորձեր լինելով հանդերձ՝ պարունակում են տվյալ ժամանակաշրջանի համար շատ կարևոր փաստեր:

1.4.03.2 Հայ բարբառների տարածքային դասակարգման և ծագումնաբանական հիմքերի ճշգրտման փուլ (XIX դար): Այս դարը հայ բարբառագիտության զարգացման կարևորագույն փուլերից է: Տվյալ ժամանակաշրջանում է, որ բարբառների դասակարգման բնագավառում նշանակալից ձեռքբերումների են հասնում հատկապես Ա. Այտընյանը և Բ. Պատկանյանը:

¹ Ա. Սարգսյան, Ե. Թադևոսյան, Հայոց լեզվի տիպաբանությունը XVII դ. մշակույթում, Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, Ե., 15-19 սեպտ., 1986, զեկուցումների դրույթներ:

Ա.Այտընյանը իր «Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» դասական աշխատության մեջ (Վիեննա, 1866 թ.) առանձնացնում է հայ բարբառների 4 խումբ՝ «ա) միջին գավառական՝ Հայաստան (Վան, Միջագետք և այլն), բ) Փոքր Ասիա-Կոստանդնուպոլիս, գ) արևմտյան՝ Լեհաստան-Առտեալ, դ) արևելյան՝ Ասորախան, Պարսկաստան: Վերջինս, ըստ Արսեն Այտընյանի, աշխարհագրական բավականին լայն տարածք է ընդգրկում՝ «Ռուսաստանէն մինչև Հնդկաստան»: Ա. Այտընյանը սոսկ աշխարհագրական դասակարգում չի կատարում՝ խմբավորելով բարբառները ըստ իրենց գրաված աշխարհագրական դիրքի, այլ փորձում է պարզել նրանց ծագումնաբանական հիմքերը: Ըստ այդմ մեծանուն լեզվաբանը առաջին երեքը խմբավորում է միևնույն հիմքից ծագած լինելու (արևմտյան) հատկանշով և արևելյանը դիտարկում առանձին խմբում: Ինչպէս Ք. Պատկանյանը, Ա. Այտընյանը ևս նշում է մի շարք էական տարբերակիչ հատկանիշներ, ինչպիսիք են՝ ներգոյական հոլովի առկայությունը արևելյան ճյուղում և բացակայությունը արևմտյան բարբառներում, ներկայի դերբայական (մասնիկավոր) կազմությունը արևելյան ճյուղում, երկբարբառների պարզեցումը կամ կորուստը և այլն:

1.4.04.3 Հայ բարբառների դասակարգման մեջ ձևաբանական սկզբունքի գերակայության շրջան (XX դարի սկիզբից մինչև 40-ական թթ.): Բնական է, որ ձևաբանական դասակարգումը գերազանցապես հիմնվում է աշխարհագրական-տարածքային խմբավորման վրա: Ձևաբանական նմանատիպ դասակարգման ամբողջական փուլի հեղինակն է Հր. Աճառյանը, 1919 թվականին Փարիզում ֆրանսերենով լույս տեսած նրա «Հայ բարբառների դասակարգումը» („Classification des dialectes arméniens»), աշխատության և 2 տարի անց Մոսկվա-Նոր Նախիջևանում հրատարակած հայերեն «Հայ բարբառագիտության ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» հիմնարար աշխատություններով: Հր. Աճառյանը տարբերակում է ներկայի

կազմությամբ պայմանավորված 3 ճյուղ՝ ա) ում (Արարատյան, Ղարաբաղի, Ագուլիսի և այլն), բ) կը (Պոլիս, Կարին, Մուշ և այլն) և ել (Խոյ, Արդվին, Մարաղա): Գ. Ջահուկյանը միանգամայն ճիշտ է բնութագրում Հր. Աճառյանի դասակարգման սկզբունքը. «... բարբառների դասակարգումը հիմնելով ձևաբանական որոշակի հատկանիշի վրա՝ Հր. Աճառյանը չի տալիս այս կամ այն ճյուղի մեջ մանող բարբառների տարբերակման որոշ չափանիշներ, այլ այստեղ փաստորեն առաջնորդվում է տարածքային հատկանիշով՝ խառը կերպով այն զուգորդելով հնչյունական ու ձևաբանական ինչ-ինչ հատկանիշների հետ» (Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 19): Հետագայում Ա. Ղարիբյանը, հենվելով Հր. Աճառյանի դասակարգման վրա, հայ բարբառախմբերի թիվը ավելացնում է ևս մեկով՝ ս ճյուղ (Կարճևան, Հաղրութ, Ուրմիա և այլն (տե՛ս Ա. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Երևան, 1939 թ.):

1.4.05.4 Իբրև 3-րդ փուլ Գ. Ջահուկյանի կողմից ընդունվում է 1940-ական թվականներից մինչև XX դարի վերջ ընկած շրջանը (ներկա դասակարգմամբ՝ 4-րդ փուլ), որը բնութագրվում է իբրև գերազանցապես հնչյունաբանական դասակարգման սկզբունքի գերակայության շրջան: Այս ընթացքում, ինչ խոսք, կատարվում են նաև ձևաբանական դասակարգման նախորդ շրջաններում առաջադրված սխեմաների հետագա մանրամասնում և ճշգրտում: Այս փուլի համար հատկապես բնորոշ ամփոփիչ աշխատանք է Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտությունը» (Երևան, 1953 թ.): Բարբառագետը հենվում է հին գրական հայերենի բաղաձայնական համակարգի վրա՝ կարևորությամբ հաշվի առնելով բարբառներում առկա գրաբարի ձայնեղ և խուլ պայթականների ու կիսաշփականների կրած փոփոխությունը (տարբերակելով՝ առաջին տեղաշարժի ենթարկված և ձայնեղների դիմաց խուլ ունեցող՝ (բ - պ, գ - կ և այլն), երկրորդ տեղաշարժի ենթարկված և ձայնեղների դիմաց շնչեղ ձայնեղներ ունեցող՝ (բ -բ^օ, գ - գ^օ և այլն) և տեղաշարժ-

տեղափոխության ենթարկված- խուլերի դիմաց ձայնեղներ և ձայնեղների դիմաց խուլեր՝ պ-բևբ-պ և այլն: Ըստ այդմ, առանձնացվում են 1) երկաստիճան ձայնեղագուրկ՝ Ղարաբաղ, Հաղարոթ, Շամախի, Վան, Խոյ, 2) երկաստիճան խլագուրկ՝ Պոլիս, Ղրիմ, Նոր-Նախիջևան, Տրապիզոն, 3) եռաստիճան խլագուրկ՝ Համշին, Հաջըն, Երզնկա, 4) եռաստիճան-գրաբարատիպ՝ Արդվին, Թիֆլիս, Մեղրի և այլն:

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը ժամանակակից հայ բարբառների բաղաձայնական համակարգերը ուղղագիծ կերպով կապում է հնդեվրոպական հիմքի հետ և փորձում դրանով բացահայտել հայ բարբառների առաջացման «պատմական հաջորդականությունը» (տե՛ս Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 21): Այս կապակցությամբ միանգամայն ընդունելի է արտահայտված հետևյալ դիտողությունը, «Արտաքնապես կուռ թվացող այս մեկնաբանությունը, ինչպես ցույց է տրվել մի շարք լեզվաբանների կողմից, խոցելի է և՛ պատմական պայմանների անբավարար հաշվառման, և՛ հ.-ե բաղաձայնական համակարգի առանձնահատկությունների պարզունակ պատկերացման, և հայերենի բարբառների առանձնահատկությունների սխեմատացման ու միակողմանի ներկայացման առումով» (Գ. Ջահուկյան, ն. տ., այլն՝ "Вопросы языкознания" М., 1959-62 թթ. «Պատմա-բանասիրական հանդես» Ե., 1958-960 թթ.):

Շարունակելով իր աշխատանքները, հայ բարբառների հետազոտության ասպարեզում՝ Ա. Ղարիբյանը շուրջ կես դար առաջ կատարած իր վերջնական դասակարգման մեջ տարբերում է բարբառների 3 խումբ և 7 ճյուղ: Առանձնացման համար հիմք են ծառայել ներկա ժամանակի և անցյալի անկատարի կազմության եզակիում դրսևորվող տարբերությունները: Ըստ այդմ տարբերակվում են դերբայավոր, մասնիկավոր և գրաբարակերպ խմբավորումներ: Այս շրջանի համար (կարելի է որոշ վերապահությամբ ասել, մինչև այժմ) չկան բարբառը ենթաբարբառից և խոսվածքից առանձնացնելու հստակ չափա-

նիշներ: Հաճախ բարբառ է դիտվում մի այնպիսի լեզվական-տարածքային միավոր, որ այլապես որակվում էր որպես խոսվածք (ոչ անգամ՝ ենթաբարբառ) և այլն:

1.4.06.5 Հայ բարբառագիտության հաջորդ փուլը կարելի է որակել իբրև բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի մշակման և կիրառման առաջին փորձերի, ինչպես նաև հայ բարբառագիտական ատլասի կազմման ժամանակափուլ: Այս փուլի սկիզբը սովորաբար ընդունվում է 1964 թ., երբ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը ձեռնարկում է լայնածավալ աշխատանք, նպատակ ունենալով բարբառագիտական արշավախմբերով պատրաստել Արարատյան բարբառի խոսվածքների համընդգրկուն ուսումնասիրությունը (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Գ. Ջահուկյան): Այս շրջանում լուրջ փորձեր են արվում հրաժարվելու բարբառագիտական հետազոտություններում պատմականության սկզբունքի անբավարար հաշվառումից, ձգտելով բարբառային երևույթները հստակորեն տարբերակել ըստ համաժամանակյա և տարաժամանակյա սկզբունքների և այլն:

Համաժամանակյա-տարաժամանակյա սկզբունքների առանձնացմամբ, բազմահատկանիշ վիճակագրական քննության մեջ թվային, ըստ հնարավորին ճշգրիտ տվյալների հաշվառմամբ Գ. Ջահուկյանը մշակել և հայ բարբառագիտության մեջ առաջին անգամ կիրառել է «վիճակագրական բարբառագիտություն» անվանված մեթոդը: Այդ կապակցությամբ մեթոդի հեղինակը հատկապես շեշտել է հետևյալը. «Հարկավոր է հայերենի նկատմամբ կիրառել լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները, բարբառային միավորներն առանձնացնելիս ելնել ոչ թե մեկ կամ երկու հատկանշից, այլ հատկանիշների ամբողջությունից» (ընդգծումը մերն է-Ա. -Ս., տե՛ս Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 23):

ԳԼՈՒԽ Ե
ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ
Գ.ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ՄԵԹՈՂԸ:
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայ բարբառների դասակարգման մինչջահուկյանական փուլը բնութագրվում է որպես գերազանցապես միահատկանիշ (օրինակ՝ ըստ ներկայի կազմության դասակարգվող բարբառային խմբերի կամ ճյուղերի առանձնացման՝ ում, կը և այլն), կամ լավագույն դեպքում հատկանիշների մի փոքրիկ փնջի (շնչեղություն, խլություն, ձայնեղություն, շնչեղ ձայնեղություն և այլն) տվյալների հիման վրա կատարված խմբավորումների շրջան: Առաջին անգամ հայերենագիտության մեջ Գ. Զահուկյանի կողմից ոչ միայն հստակորեն առաջ է քաշվել հայերեն բարբառների նկատմամբ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների կիրառման պահանջը, այլև մշակվել է մի ինքնատիպ մեթոդ, որը հաջողությամբ կարելի է կիրառել ինչպես լեզվաբանական աշխարհագրության, այնպես էլ հնդեվրոպաբանության, լեզուների տիպաբանական հետազոտությունների բնագավառում (տե՛ս Ա. Մարգարյան, Լեզվաբանական տիպաբանություն, ՀՄՀ, հ. 12, Ե., 1976):

Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման անցնելիս Գ. Զահուկյանը նախապես նպատակադրվել էր հայերենի բարբառների նկատմամբ կիրառել լեզվաբանական աշխարհագրության որդեգրած սկզբունքներն ու մեթոդները, սակայն հրնթացս նա զալիս է այն ճիշտ եզրակացության, որ «լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների նույնական կիրառումը հայերենի նկատմամբ նախ՝ կապված է որոշակի դժվարությունների հետ, որովհետև բնակչության պարբերական

տեղաշարժերը խախտել են բարբառային հատկանիշների տեղաբաշխման բնական սահմանները, և երկրորդ՝ չեն տալիս բարբառային միավորների փոխհարաբերությունը որոշելու հստակ և ճշգրիտ չափանիշներ» (Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 13): Ըստ այդմ, հաշվի առնելով ինչպես ուսումնասիրության առարկայի՝ հայ բարբառների կրած պատմական տեղաշարժերը և դրա հետևանքով առաջացած բարբառային, խոսվածքային փոխներթափանցումների բարդ ու խճճված պատկերը՝ Գ. Ջահուկյանը անհրաժեշտ է գտել ստեղծել բառագիտական մի նոր առարկա (դիսցիպլին), որը նա պայմանականորեն անվանել է վիճակագրական բարբառագիտություն:

1969 թվականին բարբառագիտական գիտաժողովում հեղինակն այն անվանել է **բարբառային վիճակագրություն**: Հաշվի առնելով այն իրողությունը, որ, ի վերջո, բարբառային վիճակագրություն անվանված մեթոդը ոչ միայն չափազանց մերձակից է լեզվաբանական աշխարհագրությանը, այլև, ըստ էության, այն լեզվաբանական աշխարհագրության մեջ առաջ քաշված մեթոդներից մեկն է, և կարելի է կոչել վիճակագրական լեզվաշխարհագրություն (статистическая лингвогеография):

Ինչպես լեզվաբանական աշխարհագրությունը, այնպես էլ Գ. Ջահուկյանի գիտաճյուղը նպատակ ունի պարզել հայ բարբառների փոխհարաբերության հստակ պատկերը, նախքան այդ կատարելով բարբառային միավորներին բնորոշ հատկանիշների ճշգրիտ դասակարգում: Այս մեթոդի կիրառման ընթացքում գործ ենք ունենում ոչ թե քարտեզների, դրանց վրա մատնանշված գուգաբանական միավորների հետ, այլ վիճակագրական աղյուսակների և այլն: Ըստ Գ. Ջահուկյանի «Եթե բարբառագիտական քարտեզը ներկայացնում է բարբառների տարածման բնական պատկերի մոդելը, ապա բարբառավիճակագրական աղյուսակը քարտեզի մոդելն է, այսինքն՝ մոդելի մոդելը: Այլ կերպ ասած՝ «աղյուսակի իդեալը քարտեզն է, քարտեզինը՝ օբյեկտը» (Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 14):

1.5.02. Ներկա քննության գործնական մասում ներկայացվում են ինչպես լեզվաբանական աշխարհագրության քարտեզագրման սկզբունքներն ու մեթոդները, այնպես էլ Ջահալյանական վիճակագրական բարբառագիտության արդյունքների հաշվառմամբ կազմված քարտեզները: Այսպիսով, ըստ էության, Գ. Ջահալյանի մեթոդը համալրվում է զուտ բարբառագիտական և լեզվաբանական աշխարհագրության վերոբերյալ մեթոդներով: Դա կարող է նպաստել շատ ավելի խայտաբղետ խոսվածքային իրադրություն ներկայացնող հայ բարբառների դասակարգման ժամանակ ծառացող բարդ խնդիրների հաջող լուծմանը:

Բարբառագիտական արդի հետազոտություններում այս կամ այն չափով ներկայացվում են լեզվաբանական աշխարհագրության հիմնական սկզբունքները, այն էական չափորոշիչները, որոնցով բարբառը առանձնացվում է ենթաբարբառից, վերջինի խոսվածքից և այլն: Բանն այն է, որ ինչպես ժամանակյին նկատել է ակադեմիկոս Ջահալյանը, մի կողմից բարբառային նյութի տակավին ոչ բավարար ուսումնասիրվածության պատճառով, մյուս կողմից չափորոշիչների անհստակ մշակվածությամբ պայմանավորված, դուռ էին բացվում կամայական դասակարգումների, որի արդյունքում «ամեն մի բարբառագետ իր ուսումնասիրած միավորը որակում է ըստ իր հայեցողության» (տե՛ս Գ. Ջահալյան, ն.տ., էջ 5)։

1.5.03. Իսպառ վերացման ճանապարհին գտնվող հայ բարբառներից շատերի նմանօրինակ դիտարկումը՝ բարբառագրության և լեզվաբանական աշխարհագրության ատլասներ կազմելու սկզբունքներով, հնարավորություն կտա ոչ միայն հայերեն բարբառային նյութի խիստ անհրաժեշտ հավելում կատարելու ընդհանուր լեզվաբանական նյութին, այլև հարավկովկասյան տարածքում կրացահայտի հայերեն բարբառների բաշխվածության պատմական և ժամանակակից իրավիճակները և այլն:

Հայտնի է, որ ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական ցանկացած գործընթաց սերտորեն առնչվում է սոցիալական (տեղահանություններ, գաղթ և այլն), ֆիզիկա-աշխարհագրական (բնական աղետներ, երկրաշարժեր և այլն) և այլ կարգի գործընթացների հետ: Դրանք անպայմանորեն կապ ունեն ժամանակային գործոնի հետ: Ուստի լեզվաբանական ցանկացած հայեցակարգ (ներառյալ լեզվաբանական աշխարհագրությունը) ունի իր համաժամանակյա և տարածամասնակյա հետազոտության հայեցակետերը: Ինչպես շատ լեզուների, այնպես էլ հատկապես հայ բարբառների համապատկերը իր տարածական կտրվածքով մի բարդ միասնություն է և դրսևորում է խիստ բազմազանություն: Յուրաքանչյուր տարածքային կետում այն ունի իրեն հատուկ համակարգը:

Ահա թե ինչու մեր կողմից հավասարապես ուշադրություն է դարձվել բարբառների ինչպես պատմական, տարածամասնակյա դիտարկման հարցերին, այնպես էլ ժամանակակից, համաժամանակյա վիճակին: Այդպիսով ավելի ցայտուն են դառնում պատմական հանգամանքների բերումով իրականացված տեղահանությունների, բռնագաղթերի թողած լեզվական ազդեցությունների արդյունքները:

1.5.04. Անշուշտ, լինելով իր տեսակի մեջ նոր քննական-հետազոտական ձեռնարկ, «Լեզվաբանական աշխարհագրություն» դասընթացը չէր կարող լուծել հայերենի դարերի ընթացքում կուտակված բարբառագիտական բոլոր բարդ խնդիրները (այն այդպիսի նպատակ բնավ չէր էլ հետապնդել): Պարզապես խնդիր էր դրվել ըստ հնարավորին մատչելի և գիտության նորագույն նվաճումները հաշվի առնող հատուկ դասընթացով ներկայացնել լեզվաբանական աշխարհագրության անցած ուղին, կիրառած մեթոդները, ձեռք բերած արդյունքները և հայ բարբառների ուսումնասիրության բնագավառում լուծման սպասող հիմնախնդիրները:

Վերջապես, սույն աշխատանքում շեշտը հատկապես դրվում է հարավկովկասյան տարածաշրջանի լեզվական խայտաբղետ պատկերի վրա՝ ուշադրությունը սևեռելով այս տարածաշրջանի բարբառագիտական ատլասների մշակման և հրատարակման խիստ այժմեական խնդիրներին:

ԳՆՈՒՄ Ա
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ
ԲԱՐԲԱՌԱԽՈՍ ՎԱՅՐԵՐ

Հայերենագիտության մեջ սովորաբար շեշտվում է այն իրողությունը, որ լեզվաբանական աշխարհագրության որդեգրած դասական միջոցներն ու մեթոդները հայ բարբառների քննության, ատլասներ կազմելու ժամանակ կիրառելն արդյունավետ չէ: Ընդհանրապես նպատակահարմար չեն գտնում հայկական բարբառախոս վայրերի գուտ աշխարհագրական դասակարգում կատարելը: Պատճառը պարզ է. թեև առաջին համաշխարհային պատերազմից առաջ էլ որոշ չափով արդեն խախտված էին բարբառային վայրերի բնակչության պատմական սահմանները, սակայն 1915-1920-ական թվականներին. Մեծ եղեռնի, և զանգվածային տեղահանության, բռնի տեղաշարժերի պատճառներով եվրոպական ստանդարտների մեխանիկական կիրառումը հայերեն բարբառային միջավայրի վրա ցանկալի արդյունքներ չի տա: Թե՛ Հր. Աճառյանը, թե՛ Գ. Ջահուկյանը ճիշտ են նկատում, որ գուտ բարբառային աշխարհագրական սկզբունքով դասավորվում են միայն բարբառային այն կենտրոնները, որոնց անունով Հր. Աճառյանը կոչել է «խոսվածքների տվյալ խումբը, իսկ մնացած վայրերը, անկախ աշխարհագրական դիրքից, դասակարգվում են այդ կենտրոնների մոտ» (Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 30):

2.1.02. Ինչպե՞ս են դասավորվում բարբառային հիմնական կենտրոնները: Հայերենագիտության մեջ գրեթե միշտ (ներառյալ նաև Գ. Ջահուկյանի վիճակագրական բարբառագիտության մեթոդը) հաշվի է առնվում բարբառների ու խոսվածքների ավանդական բաժանումը, հիմք ունենալով թե՛ պատմաավանդական, թե՛ գուտ լեզվաաշխարհագրական սկզբունքները: Ըստ այդմ առաջանում են երկու մեծ բաժանումներ՝ արևելյան և արևմտյան բարբառային հիմնական կենտրոններ: Այսպիսով

բարբառային կենտրոնները դասավորելիս նկատի պետք է առնել երկու չափորոշիչ՝ արևմուտքից արևելքը և հյուսիսից հարավը (հմմտ. Գ. Ջահուկյան, ն.տ.): Իր բազմահատկանիշ դասակարգման մեջ հեղինակը հայերենի բարբառների կենտրոնների անվանումները տալիս հետևում է Հր. Աճառյանին: Պատճառներից մեկն այն է, որ Հր. Աճառյանը դասակարգում կատարելիս զերծ է մնում հիմք ընդունած հատկանիշների ծայրահեղացումից:

Գ. Ջահուկյանը, համեմատելով Հր. Աճառյանին հետագա շատ բարբառագետների հետ, եզրակացնում է, որ վաստակաշատ Հր. Աճառյանը բոլոր մյուսների համեմատությամբ ունի մի առավելություն ևս. «Նա գրեթե չի խախտում պատմական հեռանկարը հանուն ճյուղային պատկանելիությունը որոշելու ինքնատիպության ... Նորանոր բարբառներ հայտնագործելու, Հ. Աճառյանի կողմից իբրև ենթաբարբառ կամ խոսվածք որակված միավորները առանց բավարար հիմնավորման և միակողմանիորեն, ինքնուրույն բարբառներ համարելու միտումը, կարելի է ասել, համատարած է» (տե՛ս Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 31): Պետք է նշել, որ նմանօրինակ մոտեցումներ դրսևորվում են նաև վրացերենի բարբառների քննության ընթացքում: Երևանում կայացած Անդրկովկասի հանրապետությունների բարբառագետների համաժողովում շեշտվել է այն իրողությունը, որ յուրաքանչյուր նոր ուսումնասիրող փորձում է մայրենի լեզվի հնչույթային համակարգում գոնե մի քանի նոր հնչույթ «ավելացնել»...

2.1.03. Իր վիճակագրական քննության ժամանակ, շահարկումները դյուրացնելու համար, Գ. Ջահուկյանը ընտրել է բարբառախոս 120 վայր (որոշ կլորացումով), ներառելով հայ ավանդական բարբառագիտության կողմից որպես առանձին բարբառ որակված բոլոր միավորները:

Ինչպե՞ս են բաժանվում ընտրված 120 բարբառախոս վայրերն ըստ արևելյան և արևմտյան բարբառների խմբակցությունների դասակարգման: Պարզվում է, որ 1-72-ը կարգա-

համարներով «ընտրվել են «արևմտահայ» բարբառախոս վայրերը, ընդ որում 1-12-ը՝ այն վայրերը, որոնց բարբառային կենտրոնները տեղադրված են Եվրոպայում և Արևմտյան Ասիայում, 13-40-ը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան և հարավ-արևմտյան հարակից շրջաններում, այդ թվում՝ պատմական Փոքր Հայքում, Կիլիկիայում և Սիրիայում, 41 -72-ը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան և հարավ-արևմտյան շրջաններում:

Վայրերից 73-120-ը ընդգրկում են «արևելահայ» բարբառախոս վայրեր, ընդ որում՝ 73-76-ը այն վայրերը, որոնց բարբառային կենտրոնները տեղադրվում են Հյուսիսային Կովկասում և Վրաստանում, 77-89-ը Հայաստանում, 99-116-ը՝ Ադրբեջանում և 117-120-ը՝ Իրանում (հմմտ. Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 32-33):

ԳԼՈՒԽ Բ
ՋՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԿԵՐՊԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բարբառային զուգաբանությունների թիվը շատ ավելին է, քան սովորաբար դրանք ներկայացվում են բարբառագիտական (քարտեզագրական) աշխատանքներում: Անհրաժեշտ է մի քանի հարյուրի հասնող համընդգրկուն այդ հատկանիշներից (զուգաբանություններից) ընտրել որոշակի, բնականաբար, սահմանափակ, բայց վճռորոշ թվով միավորներ: Այսպես, Գ. Ջահուկյանն իր վիճակագրական բարբառագիտության մեջ ընտրել է այդպիսի ընդամենը 100 հատկանիշ (զուգաբանություն):

2.1.04. Ի՞նչ սկզբունքով է կատարվում հատկանիշների ընտրությունը: Սովորաբար նախապատվությունը տրվում է երկու կարևոր հատկանիշի՝ ա) տարածվածության և բ) կարևորության: Եթե առաջինի դեպքում հաշվի են առնվում հատկանիշները տվյալ լեզվի տարածքային հարաբերությամբ, երկրորդ դեպքում նկատի է առնվում հատկանիշի հարաբերությունը լեզվի նկատմամբ «որպես կառուցվածքային ամբողջություն, որպես փոխկապակցված տարրերի համակարգ» (տե՛ս Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 37):

Տարածվածության հատկանիշը կապ ունի գերադասելիության երևույթի հետ, որը պայմանավորված է այն բանով, թե տվյալ երևույթն ի՞նչ տոկոսային ընդգրկում ունի: Ընդ որում, եթե տվյալ հատկանիշը համընդհանուր տարածում ունի տվյալ տարածքում, ապա այդպիսի հատկանիշը դուրս է դրվում ցանկից, քանի որ իրազեկման առումով, այդպիսի հատկանիշը հավասարվում է զրոյի և բնութագրվում է բացարձակ հավելուրդայնությամբ: Գ. Ջահուկյանն այդ առումով մատնանշում է հայ բարբառագիտական շատ աշխատանքներ, որոնցում բերվում են հաճախ հենց այդպիսի նոր բովանդակություն

չպարանակող հատկանիշներ (ասենք՝ հոգնակին կազմվում է ներ-ով, առկա է ուղղական հոլով և այլն): Իդեալական վիճակը, որ նկատի է առնում հատկանիշների «բեռնվածության», տարածվածության հատկանիշը, շուրջ 50 տոկոս է: Ինքը՝ Գ. Ջահուկյանը, չի հետևել այդ չափորոշիչին և ճիշտ է մոտեցել խնդրին, քանի որ, հակառակ առկա բազմաթիվ բարբառագիտական հետազոտությունների (հմմտ. սույն գրքի գրականության լրիվ ցանկը) հայերենի շատ բարբառներ ու խոսվածքներ տակավին բավարար չափով նկարագրված չեն և կարելի է հատկանիշների կարևորության հարցում որոշ թույլատրելի տատանումներ նկատի ունենալ, այդ սահմանն, ըստ Ջահուկյանի, կազմում է +35% (Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 37): Այդ նշանակում է, որ թույլատրելի սահմաններն ընդգրկում են՝ 85-15% միջակայքի արժեքները:

Կարևորության հատկանիշի հետ կապված անհրաժեշտ է պարզել հատկանիշների ընտրության ժամանակ կիրառված մոտեցումը: Ինչպես հայտնի է լեզվաբանական արդի գրականությունից, լեզվական (բարբառային կամ խոսվածքային) համապատասխանությունները հիմք են ծառայում «այն դեպքում, երբ նրանց միջև ընդհանրությունները սահմանափակ են: Հակառակ դեպքում, երբ զուգադրվում են մերձավոր ցեղակից լեզուներ, որոնք բազմաթիվ կառուցվածքային ընդհանրություններ ունեն, ըստ կարևորության հաշվի են առնվում լեզվական տարբերությունները: Ընդ որում ընդհանրությունների աճմանը զուգընթաց՝ կարող են հաշվի առնվել նաև առավել նվազ տարբերությունները, որոնք ընդհանուր լեզվաբնութագրման ժամանակ կարող էին նաև չմատնանշվել» (հմմտ, Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985 թ., էջ 12):

Առաջանում է մի հարց ևս. բարբառային հատկանիշները ի՞նչ ժամանակային կտրվածքով են հաշվի առնվում՝ պատմական (տարածամասնակյա, դիախորոնիկ), թե՞ ստատիկ (համաժամանակյա-սինխրոնիկ): Դժբախտաբար, ճիշտ է այն դիտողու-

թյունը, որ հայ բարբառագիտական աշխատանքներում առկա է երկվություն: Եթե ձևաբանության երևույթները գերազանցապես քննվում են համաժամանակյա կտրվածքով՝ հաշվի առնելով գուտ աշխարհաբարի լեզվավիճակային հատկանիշները, ապա հնչյունաբանությունն ըստ էության տարածամանակյա է (պատմական լայն կտրվածքով, գրաբարի հետ ունեցած զագահեռների մեկնաբանությամբ): Այդ տեսակետից Գ. Ջահուկյանը որդեգրել է «Ժամանակային չեզոքություն պահպանելու» մոտեցումը (հմմտ. Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 38):

2.1.05. Բարբառային հատկանիշների ընտրության ժամանակ ի՞նչը պետք է ծառայի իբրև համեմատության եզր: Հայ բարբառների նկարագրության ժամանակ, որպես կանոն, սկսած Հր. Աճառյանից, համեմատության եզր է ընդունվել հին գրական հայերենը (գրաբարը): Իսկ ահա ենթաբարբառների նկարագրության ժամանակ վաստակաշատ բարբառագետը որպես էտալոն-համեմատության եզր արդեն ընդունում է ոչ թե գրաբարն, այլ որոշակի բարբառային վիճակներ: Մի խոսքով, համեմատության եզրերը ընտրված են համաժամանակյա կտրվածքով: Բանն այն է, որ համեմատության միևնույն եզր-էտալոնը հիմք ընդունելով, ակամա առաջանում է բարբառագիտական «հավելուրդային» տեղեկատվական դաշտ, որն ինքնին՝ իմաստային չնչին բեռնվածություն է կրում: Գ. Ջահուկյանը այս դեպքում նախընտրելի է համարել, այսպես կոչված, վերացական՝ «ոչ բարբառային» վիճակը:

Արդեն նշվել է, որ ատլասներում օգտագործվում են բարբառային հատկանիշները գրանցելու բազմաթիվ եղանակներ՝ զանազան գունանշաններ, ֆիգուրներ և այլն: Վերջապես կարելի է նաև հատկանիշի առկայությունը կամ բացակայությունը գրանցել +/- հակադրությամբ: Այդ դեպքում պարզապես առաջանում է նաև հետևյալ խնդիրը: Ինչպե՞ս վարվել այն իրավիճակներում, եթե քարտեզի (կամ առհասարակ) դիտարկման մեջ ներգրավված այս կամ այն վայրում տվյալ երևույթը

գտնվում է մահացման (վերացման) գործընթացում և կամ հակառակը՝ նոր-նոր է ձևավորվում: Գ.Ջահուկյանի մոտեցմամբ (տես ն.տ., էջ 40), մի դեպքում կիրառվում է +/-, մյուս դեպքում՝ -/+ նշանը: Բիարկե, պատահում են նաև այնպիսի դեպքեր, երբ հանդես է գալիս ? նշանը և այլն:

2.1.06. Վերջապես, հարկ է շեշտել նաև, որ **բարբառային հատկանիշներ** հասկացությունը չի կարելի նույնացնել լեզվակառուցվածքային հատկանիշների հետ: Պետք է որ հաշվի առնել նաև, որ «եթե լեզվի կառուցվածքի ներքին նկարագրության դեպքում հատկանշային բնութագրման սկզբունքը տալիս է մեծ չափի տնտեսում, և նրա կիրառումը նպատակահարմար է ու անհրաժեշտ, ապա բարբառային տարբերությունների նկարագրության դեպքում անհրաժեշտաբար հետազոտողները ստիպված են լինում դիմել «ոչ-հատկանշային բնութագրության» (հմմտ. Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 44): Բանն այն է, որ նույն բարբառային տարածքում հնարավոր է, որ լինեն նույն հատկանիշների դրսևորման հավասարապես երկու տարբերակներ (ասենք և՛ շնչեղ ձայնեղներ, և՛ պարզ խուլեր):

Արդի լեզվաբանական աշխարհագրության էական առանձնահատկություններից է այն, որ լեզուն, բարբառը դիտարկվում է որպես համակարգ, այդտեղից էլ քարտեզագրվում են լեզվական համակարգի տարրեր և ոչ թե պատահական միավորներ: Քարտեզագրման գերխնդիրը կոնկրետ քարտեզների ամբողջությամբ լեզվական համակարգի ամբողջական պատկերի վերականգնումն է:

Լեզվաբանական աշխարհագրության բնագավառում վիճակագրական մեթոդների կիրառման անհրաժեշտությունն անժխտելի է: Մեր շուրջ 40 բարբառների, երկու գրական լեզուների տարածքային մեթոդների քննության ժամանակ վիճակագրական փորձերի կարևորությունն ավելի սուր է զգացվում, որովհետև շատ հաճախ նույն երևույթն առկա է մի շարք բարբառներում, սակայն բնութագրվում է տարբեր

բեռնվածություններով, հաճախականությամբ, ընդգրկման ծավալներով, ուստի և միանգամայն տարբեր արժեքներով:

Ձուգաբանությունների ըստ առանձին ոլորտների բաշխվածության ուսումնասիրությունը կպարզի այն իրական արժեքները, որոնք առկա են տվյալ համակարգերում: Դա էլ կտա ճշգրիտ պատասխանն այն հարցի, թե ինչ ունենք տվյալ բարբառում և մանավանդ՝ ինչից՝ ինչքան:

ԳԼՈՒԽ Գ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐԻ (ԲԱՐԲԱՌՆԵՐԻ) ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.2.01. Ժամանակակից լեզվաբանության մեջ հստակորեն տարբերակում են **հնչյունական** և **հնչույթային** մակարդակները: Հնչյունի և հնչույթի բնորոշումները, այդ հարցում առկա մոտեցումների տարբերությունները (ըստ Լենինգրադյան և Մոսկովյան հնչույթաբանական դպրոցների) դիտարկված են Գ. Ջահուկյանի, Ա. Խաչատրյանի, Ռ. Թոխմախյանի, Ա. Սարգսյանի աշխատություններում (հմտ. Ա. Սարգսյան, Արևմտահայերենի հնչաբանություն. Տեքստ, բառ. նախադասություն, Ե., 1986 թ.): Իր «Լեզվաբանական աշխարհագրությունը և հնչույթաբանությունը» ծրագրային հոդվածում Ն. Տրուբեցկոյը (տե՛ս Խ.Տ. Կրուբեցկոյ, *Фонология и лингвистическая география* (Изб. труды по филологии, М., 1987 г., էջ 31-36) մասնավորապես նշում է որևէ երկու բարբառի միջև հնարավոր հնչյունական տարբերությունների երեք տեսակ՝ երբ այդ տարբերությունները վերաբերում են ա) հնչույթաբանական համակարգին, բ) առանձին հնչույթների հնչյունական իրացումներին և գ) բառերում հնչույթների ստուգաբանական բաշխմանը (տե՛ս Խ.Տ. Կրուբեցկոյ, ն.տ., էջ 31):

Իր հերթին Ն.Տրուբեցկոյը հնչույթաբանական բարբառային տարբերությունները տարբերակում է ըստ ա) գործառնությունից պայմանավորված տարբերությունների և բ) հնչույթային միավորների կազմով (քանակով) պայմանավորված տարբերությունների: Վերջինիս դեպքում խոսքն այն մասին է, որ այս կամ այն բարբառում տվյալ հնչույթը հանդես է գալիս մի որևէ հնչույթային արժեք ունեցող հակադրության (դիրքի) մեջ, ինչը մյուս բարբառին հատուկ չէ: Այդպիսին է, օրինակ՝ բարբառային տարբերությունը հյուսիսվելիկոռուսական և հարավվելիկոռու-

սական տարբերակների միջև: Առաջինն ունի չորս անշեշտ ձայնավոր հնչույթներ՝ ս, օ, ա, ի), մինչդեռ հարավվելիկոռուսականը անշեշտ օ հնչույթ չունի:

Հնչույթաբանական տարբերություններն ըստ գործառույթի վերաբերում են այն դեպքին, երբ որոշ բարբառների հատուկ է՝ տվյալ հնչույթային դիրքը, մյուսներին՝ ոչ: Խնդիրն այն է, որ ինչպես շատ այլ պարագաներում, անհրաժեշտ է հստակորեն տարբերել հնչունական տարբերակները հնչույթաբանական արժեքով բնութագրվող հակադրություններից: Արևմտահայերենի համար (ներառյալ հատկապես բարբառային տարբերակները) ոմանց կողմից փորձ է արվում առանձնացնելու քմայնացած ձայնավոր հնչույթի՝ ու-ի տեսակ (հմմտ. ձին = ցուն), մինչդեռ իրականում խոսքը հնչունական դիրքային տարբերակի մասին է, որ չի բարձրացել հնչույթային մակարդակի: Բարբառագիտական հետազոտությունների թերի կողմերից մեկը հաճախ վերաբերում է հնչունահնչույթաբանական երևույթների միախառնմանը, որի հետևանքով այս կամ այն կոնկրետ բարբառում որոշ հետազոտողներ առանձնացնում են N թվով հնչույթներ՝ ուրիշները՝ $N + 1$ և ավելին: Պատճառը թե՛ չափորոշիչների պակասավոր լինելն է, թե՛ հնչույթային միավորների առանձնացման գործընթացում փորձառական միջոցների, ճշգրիտ սարքերի ոչ բավարար կիրառումը:

2.2.02. Հնչունական տարբերությունները կարող են լինել բացարձակ, եթե հատուկ են այս կամ այն հնչույթի (հնչունի) արտասանությանը բոլոր դիրքերում կամ զուգորդության սահմանափակումների որոշակի դիրքերում (հմմտ. հայերենի թե՛ գրական լեզվի, թե՛ բարբառների յուրահատկությունը բառակզբնային ր-ի թույլ դիրքը և փոխարինումը ո-ով: Ն. Տրուբեցկոյի կողմից առանձնացվում է նաև ստուգաբանական հնչունական տարբերությունների 2 տեսակ՝ ա) գործառական հնչույթաբանական տարբերություններով պայմանավորված ստուգաբանական հնչունական տարբերություններ (երբ որևէ

կոնկրետ բարբառում այս կամ այն հնչույթի գործառույթը սահմանափակված է, ի տարբերություն այլ բարբառների): Նման դեպքերում հաճախականության ավելի մեծ արժեքներ է ձեռք բերում մեկ այլ հնչույթ: Ասենք, արևմտահայերենի մի շարք բարբառներում (պ, տ, կ, ծ, ճ պարզ խուլերի վերցմամբ) ավելի մեծ հաճախականություն են ստացել բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները: Այդօրինակ պարագաներում լեզվաբանության մեջ սովորաբար նշվում է հատուցված ստուգաբանական հնչյունական տարբերությունների մասին: Այլապես գործ ունենք ստուգաբանական հնչյունական այնպիսի տարբերությունների հետ, որոնք իրապես չեն պայմանավորված գործառական տարբերություններով:

Ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, հայերենի համեմատական քերականության բնագավառում լույս տեսած աշխատությունները «գրեթե բոլորովին չեն թափանցում բարբառների բնագավառը» (տե՛ս «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1979 թ., էջ 21): Որպես բացառություն կարելի է նշել Նեկտար Միմոնյանի «Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները» հետազոտությունը, որտեղ առաջին անգամ համակողմանի ուշադրություն է դարձվում հայերենի բարբառների հնչյունական հնաբանություններին:

Մինչև վերջերս բարբառագիտությունը գերազանցապես խարսխվում էր տարածամանակյա մոտեցումների վրա, և ինչպես նշել է Ն. Տրուբեցկոյը «ամեն մի հնչյունական տարբերություն մեկնաբանվել է իբրև տարամետ (դիվերգենտ) հնչյունական զարգացում» (Ն. Տրուբեցկոյ, ն.տ.): Այդպես հնդեվրոպաբան Վ. Վինտերը իր «Վաղ բարբառային տարբերությանների հետքեր հին հայերենում» հոդվածում, հենվելով այն սկզբունքի վրա, որ բարբառներն առաջացել են նախալեզվից՝ ընդհանրական հատկանիշների տարամետ զարգացման արդյունքում, դրանով փաստորեն իբրև նախադրյալ ընդունվում է այն, որ «հակադիր ձևերը մեկ էլակետային ձևի տարբեր զարգացումներն են» (հմմտ. Ն. Միմոնյան, ն.տ., էջ 205):

Վ. Վինտերը քննության է առնում հնդեվրոպական նույն հնչյունների և հնչակապակցաթյունների տարասեռ, հակադիր զարգացումները հայոց լեզվում: Քննության մեջ նա ներառում է բազմաթիվ տիպական օրինակներ թե՛ ձայնավորական, թե՛ բաղաձայնական ենթահամակարգերից: Մասնավորապես բերվում են **վաթսուն** և **վեշտասան**, **աղբիւր** և **աղբեր**, թարշամիւմ և թառամիւմ և այլ նմուշներ, ցույց տալու համար, թե հնդեվրոպական միևնույն հնչյունները ինչպես են տարակերտ արտացոլվել հայերենում (տես W. Winter, *Traces of Eally Dialectal Divesity in Old Armenian, Ancient Indo European Dialects*”, Los Angeles, 1963, էջ 201):

2.2.03. Ժամանակակից բարբառագիտությունը, առաջին հերթին լեզվաբանական աշխարհագրությունը լուրջ չի ընդունում «բացատրություն չճանաչող լեզվական օրենքների» գոյությունը և հավատացած է, որ հնչյունական փոփոխությունների աշխարհագրական սահմանները բնավ չեն կարող բնութագրվել իբրև մեկընդմիջտ տրված և խիստ հուսայի երևույթ: Մանավանդ չպետք է մոռանալ, որ Ն. Տրուբեցկոյի մատնանշած վերոհիշյալ 3 սկզբունքները (ծագումնաբանական, հնչույթային և հնչյունական) բարբառագետ հնչյունաբանների գործերում առ այսօր հստակորեն չեն առանձնացվում: Բարբառային սահմանների խախտության, անկայունության պնդումն այդպիսով արդարանում է, եթե գերազանցապես հաշվի են առնվում ծագումնաբանական հատկանիշները: Վերջիններիս հաշվառման դեպքում ծագումնաբանորեն հնչյունական ամենամեծ տարբերություններ ունեցող երկրամասերը կազմում են «անցումային» գոտիներ:

Հնչյունական տարբերությունների դեպքում, ըստ Ն. Տրուբեցկոյի առկա են, միանգամայն այլ հարաբերություններ. «Եթե երկու բարբառներում նույն հնչույթը իրացվում է հնչյունական երկու տարբեր եղանակներով, ապա դա պետք է տեղի ունենա բոլոր այն բառերում, որոնցում համապատասխան

հնչույթը հանդիպում է միևնույն դիրքով, այլապես հնչյունական իրացման տարբեր եղանակները լեզվական գիտակցության համար ձեռք կբերեն իմաստատարբերակիչ գործառույթ, հետևաբար կօժտվեն հնչույթաբանական նշանակությամբ, այսինքն՝ հնչյունական տարբերությունները կվերածվեն հնչույթաբանականի» (տե՛ս Н. Трыбейкоў, ն.տ., էջ 34): Եթե բարբառային հնչյունական տարբերությունների սահմանները դժվար է գծել, ապա դա տեղի է ունենում այն պատճառով, որ առավելագույն հնչյունական հակադրություններով բնութագրվող տարածքների միջև ընկած են «միջակա» կամ «անցումային» հնչյունական իրացումներով տարածքներ: Մի խոսքով, իրացման մի վիճակից մեկ այլ վիճակի անցումը տեղի է ունենում ոչ կայծակնային, ոչ հանկարծակի, այլ աստիճանաբար, սկզբում որպես հնչյունական կամընտրովի տարբերակների: Իմիջիպյուց, «անցումային գոտի» արտահայտությունը միանգամայն տարբեր բովանդակություն ունի ստուգաբանորեն առաջացած հնչյունական տարբերություններից: Եթե խոսքը վերաբերում է հնչույթաբանական տարբերություններին, ապա այս դեպքում «անցումային գոտի» հասկացությունը վերանում է, քանի որ հնչույթը կամ հնչույթակապակցությունը կամ պետք է լինի տվյալ բարբառում, կամ պետք է չլինի, անցումային երևույթները (կան և չկան՝) բացառվում են: Ինչպես Ն. Տրուբեցկոյն է նշում «tertium non datur» («երրորդը տրված չէ», այսինքն՝ կամ մեկը, կամ մյուսը, ն.տ., էջ 35): Բնարկե, պատահում են դեպքեր, երբ որևէ բարբառի հնչույթային հակադրությունը «նախապատրաստվել է» մեկ այլ բարբառի հնչյունական հակադրությունների հողի վրա:

2.2.05. Ջահուկյանը շուրջ 70 տարի առաջ տպագրած իր «Հայ բարբառագիտության և հայերենի բարբառների ծագման հարցը» խորագրով հոդվածում զարգացնում է այն միտքը, որ հայ բարբառների հնչյունաբանական դասակարգումը էականորեն արտացոլում է սրանից շուրջ հազար տարի առաջ (մինչև XI դ.) եղած բարբառային տարբերությունները, մինչդեռ հայ

բարբառների ձևաբանական դասակարգումը ավելի ուշ շրջանի արտացոլումն է (XI դ. հետո): Այլ խոսքով, հայերենի բարբառների հնչունական տարբերությունները շատ ավելի մեծ հնություն անեն: Ահա թե ինչու միանգամայն ճիշտ է Ն. Միմոնյանը, երբ եզրակացնում է, որ հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունների ուսումնասիրությունը, այդ հնաբանությունների տեղայնացմամբ, աշխարհագրական տեղաբաշխման հաշվառմամբ, կարող է օգտակար լինել ինչպես հայ բարբառների հետագա տեղաշարժերի, այնպես էլ գրաբարի որպես գրական լեզվի, բարբառային հիմքի որոշման» գրաբարի և նախագրաբարյան շրջանի բարբառային տարբերակվածության հարցերի քննության ժամանակ» (Ն. Միմոնյան, ն.տ., էջ 248): Ահա թե ինչու հնչունաբանական հնագայն երևույթների ուսումնասիրությունը հայ բարբառների նյութի հաշվառմամբ մեր օրերում շարունակում էր համեմատաբան Մ. Աղաբեկյանը (տե՛ս գրականության ցանկը):

Բարբառների հնչունական տարբերությունների քարտեզագրման գործը սովորաբար ընթանում է հետևյալ ուղղությամբ. հատուկ քարտեզների վրա գծվում են զուգաբանություններ՝ յուրաքանչյուր բառի համար առանձին վերցրած, եթե այդ բառերում ի հայտ են գալիս համապատասխան հնչունական փոփոխություններ, ապա այդ քարտեզները համատեղվում են և ստացվում են համադրական քարտեզներ, որոնցում հնչունական համընկնող փոփոխությունները ներկայացվում են հատուկ գծանիշերով (շտրիխներով): Երբեմն նախընտրելի է համարվում նաև հնչունական տարբերությունները քարտեզներում ներկայացնելը տարբեր գունային նշանակումներով: Մի խոսքով, հնչունական առանձնահատկությունների և ընդհանրությունների քարտեզագրումը դժվար գործ չէ, քանի որ «անցումային գոտիներ» չեն դրսևորվում:

Հնչունաբանական քարտեզների կազմման ժամանակ հարցադրումը սովորաբար ձևակերպվում է այսպես. «ինչպե՞ս է

հնչվում հետևյալ բառը տվյալ բարբառում/խոսվածքում»։ Այսպիսի հետազոտությունները գերազանցապես ներառում են մերձցեղակից լեզուներ՝ հաշվի առնելով տարածքային նեղ կտրվածքները, միևնույն հնչույթի հնչյունական ամենատարբեր իրացումները։ Բնական է, որ նկատի են առնվում՝ հնչույթաբանորեն որոշակի «բեռնվածություն» ունեցող բառերը, այսինքն այնպիսի միավորները որոնցում տվյալ բարբառը դրսևորում է տվյալ հնչույթը։

Ինչ խոսք, նախքան հնչույթաբանական/հնչյունաբանական երևույթների աստիճան կազմելը, բուն քարտեզագրության աշխատանքին անցնելը, պետք է պարզել տվյալ բարբառի հնչույթաբանական հակադրությունների բնորոշ տիպերը, հնչույթային համակարգի միավորների քանակը, հնչյունական իրացումների ծավալները և այլն։ Այսինքն՝ պետք է անպայմանորեն առկա լինեն «ի՛նչ կա և ի՛նչքան» հարցերի պատասխանները։

Եթե ծագումնաբանական առկա հնչյունական տարբերությունների և նմանությունների բացահայտման համար դիտարկումը սահմանափակվում է ընդհանուր ցեղակցությամբ բնորոշվող լեզվական տարբերակումների միջև, ապա հնչույթաբանական տարբերությունների քննությանը կարելի է կատարել (և հաճախ կատարվում է) դուրս ելնելով մեկ լեզվաընտանիքի սահմաններից՝ ներառելով թե՛ ցեղակից, թե՛ ոչ ցեղակից լեզուները։ Վերջինս հիանալի հնարավորություն է ընձեռում հարավկովկասյան տարածքը նկարագրելու ըստ երեք կարևորագույն լեզվաընտանիքներ ներկայացնող լեզուների (հայերենի, վրացերենի և ադրբեջաներենի) հնչակառուցվածքների։ Հասունացել է ժամանակը նշված տարածքի հնչակառուցվածքների աստիճան կազմելու համար։ Հեռու չգնալու համար կարելի է քննել Ռ. Յակոբսոնի կողմից նկարագրված վոկալիզմի երևույթը կամ կոկորդայնության վարկածը, երևույթներ, որոնք առանձնապես հատուկ են կովկասյան տարածքին և իրենց յուրահատուկ դրսևորումն են գտնում նաև հայերենի առանձին

բարբառներում: Այդ հարցը սրությամբ դրվել է նաև լեզվաբան Ն. Տրուբեցկոյի կողմից. «Կոկորդայնության հատկանիշը տարածում գտավ կովկասյան բոլոր լեզուներում, անկախ ծագումից (ոչ միայն հյուսիսային և հարավկովկասյան, այլև հնդեվրոպական և թյուրքական լեզուների տարածքում), այն դեպքում, երբ նույն երևույթը այլ կերպ է իրականացվում Եվրոպայում և Եվրասիայի հարավային տարածքներում» (Ն. Տրուբեցկոյ, ն.տ., էջ 36): Վերստին հարկ է շեշտել, որ այս կամ այն հնչյունական/հնչույթական երևույթի տարածման սահմանները ճշտվում են միայն հնչույթա-բարբառագիտական հետազոտություններով, և այդ սահմանները հազվադեպ են համընկնում բուն լեզվական սահմանների կետ:

Հնչյունահնչույթային ազդեցությունների սահմանները ճշտելիս ակամա առաջին պլան է մղվում նաև, այսպես կոչված, «առաջատար» լեզվի գաղափարը: Հարավկովկասյան տարածքում գոյակցում են տասնյակ (եթե չասենք՝ շատ ավելի) լեզուներ: Այդպիսի «առաջատար» լեզվական ազդեցության դեր ստանձնած գրական լեզուներն են հայերենը, ադրբեջաներենը և վրացերենը: Վաղուց հասունացել է ժամանակը զանազան մասնավոր հետազոտություններից, վարկածներից գնալ դեպի լեզվական նյութի ամբողջական հավաքման և մատուցման անհրաժեշտությանը: Օրակարգային հարցը հարավկովկասյան լեզվական տարածքում գործառող լեզուների հնչույթաբանական բարբառագիտության ստեղծումն է երեք «առաջատար» լեզուների համար-առանձին- առանձին և համընդգրկուն:

ԳԼՈՒԽ Դ
ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱՅՖԷՆ
ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարբառների ձայնավորային և բաղաձայնական զուգաբանությունները նպատակահարմար է դասավորել որոշակի կարգով (ինչն էլ արվում է նմանօրինակ փորձերում, հմմտ. Գ. Ջահուկյան, ն.ս., էջ 66):

Ձայնավորային զուգաբանություններ: Նախ ներկայացվում են այն հատկանիշները, որոնք վերաբերում են՝ երկբարբառներին: Դիտարկվում են հետևյալ գծերը՝ ա) առկա՞ են, արդյոք, երկբարբառներ և բ) ի՞նչ փոփոխություններ են բնորոշ երկբարբառներին: Այնուհետև հաշվի են առնվում ձայնավորների որակները՝ ա) քմայնացում առկա՞ է, թե ոչ. շրթնայնացում և ապաշրթնայնացում գոյություն ունի՞ ձայնավորային ոլորտում և այլն: Ընդ որում միշտ պետք է ի նկատի ունենալ որ հնչյունական երևույթները փոխկապակցված են. ձայնավորների քմայնացման գործընթացը սերտորեն առնչվում է բաղաձայնների քմայնացման երևույթների հետ: Այլ կերպ ասած, այդ գործընթացները փոխկապակցված են: Առանձին հայ բարբառներում քմայնացման երևույթը ոչ միայն պայմանավորված է լեզվի ներքին մեխանիզմի բնական զարգացմամբ, այլև արդյունք է նաև օտար ազդեցությունների:

2.3.02. Եթե նկատի առնենք վիճակագրական բարբառագիտական իր առաջին փորձում Գ. Ջահուկյանի ընտրած հնչյունական զուգաբանությունների ցանկերը, ապա կարող ենք տեսնել, որ առանձին լեզվական երևույթներ (ինչպես, օրինակ՝ շեշտը) այնտեղ համեմատաբար քիչ է արտացոլվել, հարյուր հատկանիշից միայն երկուսն է, որ հատկացվել է շեշտային զուգաձևություններին: Դա, անշուշտ, քիչ է: Միաժամանակ հարկ է նշել որ մի շարք կարևոր բարբառային երևույթներ բոլորովին չեն արտացոլված զուգաբանությունների ցանկում: Որպես

օրինակ հարկ է նշել շեշտի հետ կապված ռեդուկցիայի (հնչյունական թուլացման) երևույթի բացակայությունը վերոհիշյալ ցուցակում: Այդ մասին մասնավորապես նշում է նաև Գ. Ջահուկյանը, բայց պետք է չանտեսել նաև այն իրողությունը, որ առ այսօր հայ բարբառների շեշտին բավարար կարևորություն չի տրվել: Միայն վերջին շրջանում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության բաժնում սկսել են հանգամանորեն դիտարկել հայ բարբառների շեշտի առանձնահատկությունները: Բնական է, որ սրանից շուրջ երեք տասնամյակ առաջ «նյութի անբավարարությամբ» պայմանավորված (հմմտ. Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 69), շատ հատկանիշներ չէին կարող հաշվի առնվել ինչը, սակայն, խիստ անհրաժեշտ է ներկա պայմաններում կազմվող հայ բարբառների ատլասում (այլևս չենք ուզում նշել, որ առանձին կարևոր խոսվածքային տարածքներ պարզապես դուրս են մնացել Գ. Ջահուկյանի կողմից առանձնացված 120 վայրերից, ինչպես, օրինակ՝ Նուխիի): Հայ բարբառների բաղաձայնական ենթահամակարգերը ճշգրտորեն բնութագրելուն միտված զուգաբանություններ որոշելու համար անհրաժեշտ է քննության մեջ ներառված բարբառային նյութը (խոսվածքներ, ենթախոսվածքներ) ենթարկել փորձառական այնպիսի քննության, երբ հիմքում դրվում է Ն. Տրուբեցկոյի վերը մատնանշած եռաստիճան տարբերակումը՝ ըստ հնչյունական, հնչույթաբանական (համակարգային) և ստուգաբանական (համեմատաբանական) մակարդակների:

Պետք է ընդունել, որ տակավին հայ բարբառների հնչյունական ոլորտի մի շարք երևույթներ ենթարկվում են միակողմանի և անհատական բնութագրման: Ըստ այդմ դիրքային տարբերակների, հնչույթային, թե՛ հնչյունային միավորներ լինելու և կարևոր այլ խնդիրներ պարզաբանելիս անհրաժեշտություն է առաջանում զուգաբանական քննությամբ հասնել գերնպատակին:

2.3.03. Վերջապես, հիմք ընդունելով Գ. Ջահուկյանի վիճակագրական դասակարգումը, բարբառների հնչյունային 50 միավոր գուգաբանությունները խմբավորվել են ըստ ձայնավորային և բաղաձայնական ոլորտների՝ 25 ձայնավորային և 25 բաղաձայնական: Ճիշտ է, թվային նման արժեքները միշտ չէ, որ արտացոլում են համակարգերի իրական ներքին հնարավորությունների սահմանները և մասամբ պարզապես պայմանավորված են «տոկոսային հարաբերությունների հաշվարկումը» դյուրացնելու (հմմտ. Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 36) միտումով:

Հնչյունական գուգաբանությունների կոնկրետ նկարագրությունները և ըստ այդմ կազմված բարբառային քարտեզները (անհրաժեշտ մեկնաբանություններով) տրվում են Գ. Ջահուկյանի նշված աշխատանքում:

Բառապաշար. հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում էլ բարբառային տարբերությունների, բարբառների և խոսվածքների իրարից ունեցած առանձնահատկությունների ձևավորման և զարգացման մեջ որոշակի է եղել օտար ազդեցությունների դերը: Վերջինս հաճախ դրսևորվել է փոխառությունների միջոցով, հատկապես՝ բառապաշարային: Եթե լեզվի զարգացման վաղ շրջանում բարբառային տարբերությունների ձևավորման մեջ գերիշխող են եղել մինչհայկական լեզվական ենթաշերտերը, հետագա դարերում այդպիսի դեր են ստանձնել «իրանական, կովկասյան, ավելի ուշ՝ արաբական լեզվական ազդեցությունները, ապա միջին և նոր շրջանում, կարելի է ասել տիրապետող է դառնում թյուրքական ազդեցությունը» (տե՛ս Գ. Ջահուկյան, ն.տ., էջ 190): Միջին շրջանում թյուրքական ազդեցության մասին ասվածը որոշ չափով գերազանահատված է: Ինչ վերաբերում է նոր շրջանին, ապա, ինչ խոսք, թյուրքական ազդեցությունը որոշակի է բառապաշարի վրա, մանավանդ եթե նկատի ենք ունենում ոչ թե գրական լեզուն, այլ բարբառներն ու խոսվածքները: Բացի այդ, ինչպես ժամանակին նկատել է Հր. Աճառյանը. «Թուրքերենի մեջ, ուր բոլոր բառերի թիվը հաշվեցի 29326, միայն 6812 բառն է

թյուրքական ծագումով, մնացյալը՝ մեծավ մասամբ՝ արաբերեն և պարսկերեն, փոքր չափով՝ հունարեն, իտալերեն, ավելի քիչ՝ ֆրանսերեն, այնպես որ փոխառությունների թիվը մոտ 4,5 անգամ գերազանցում է բնիկ տարրից» (տես Հր. Աճառյան, ն.տ., էջ 373): Ակնհայտ է, որ թուրքերենը իր բառապաշարում շատ բառեր է ներառել իրար անհարիր երեք կարևոր լեզվական համակարգերից (ալբանական, սեմական և հնդեվրոպական): Բարբառների մեջ հատկապես ասիանիկ փոխառյալ բառաշերտ «ներթափանցել» է թուրքական լեզուների ճանապարհով, սակայն պետք է շեշտել, որ դրանք տեսակարար մեծ կշիռ են կազմում ժողովրդախոսակցական մակարդակում և ոչ թե բուն մշակված գրական լեզվում: Այդ գործընթացը միակողմանի բնույթ չի կրել, միայն հայերենի բարբառները չէ, որ փոխառել են թուրքական բառապաշարից առանձին բառեր: «Թյուրքերը փոխառյալ բառեր անեն նաև հայերենից, թեև դրանց թիվը շատ մեծ չէ համեմատությամբ հունարենից փոխառյալ բառերի, ինչպես, օրինակ փեթակ, խաչ, չափ, յուղ և այլն: Գավառական թուրքերենի մեջ հայերեն փոխառությունների թիվը հարյուրների է հասնում (ինչպես **հիմ**, **առաստաղ**, **ավանակ**, **շնորհք** և այլն)» (տե՛ս Հ. Աճառյան, ն.տ., 377):

Հետաքրքիր է Կովկասի տարածքում ապրող ռուսների լեզվում տեղ գտած ազդեցությունների դիտարկումը ադրբեջաներենից և հայերենից: Շուրջ 7 տասնամյակ առաջ ԵՊՀ շրջանավարտ Եղիշե Առուստամյանը Աճառյանին հաղորդել է չափազանց հետաքրքիր փաստեր. «Կովկասի ռուսների մոտ գտնում ենք **մածուն**, **կարաս**, **լավաշ** բառերը: Գանձակի Բորիսով գյուղի մալականները գործածում են ադրբեջաներենից փոխառված **շավտալ** «դեղձ», **ջվալ** «պարկ», **խուրջին** «պարկ», **օրաղ** «մի տեսակ մանգաղ» և հայերենից փոխառությամբ՝ **ցակաս** «ցաքատ», (հմմտ. Հր. Աճառյան, ն.տ., էջ 377, օրինակները բերվում են կրճատումներով):

Հայոց լեզվի պատմության նոր և նորագույն փալերում փոխառությունները գերազանցապես կատարվել են եվրոպական լեզուներից, մինչև 1990-ական թվականներ՝ գերազանցապես ռուսերենից կամ ռուսերենի միջոցով, այժմ՝ նախընտրությունը տրվում է անգլերենին:

Պատմական բառավիճակագրության և բարբառային ժամանակագրության առումով հետաքրքիր տվյալներ կարող է ներկայացնել Սվոդեշի լեզվաժամանակագրական մեթոդը:

2.3.04. Թեև Սվոդեշի լեզվաժամանակագրության մեթոդը խարսխված է որոշ չափով կասկածելի կանխադրույթների վրա, այդուհանդերձ այն շարունակում է փորձարկվել: Գոնե հայերենի նյութի վրա այն կիրառվել է երեք անգամ: Մինչ այդ Սվոդեշի մեթոդը գերազանցապես կիրառվել է գրավոր (գրական) լեզուների նյութերի նկատմամբ: Առաջին անգամ Գ. Ջահուկյանը մեթոդը կիրառել է Լոռու (Գյառգյառի) խոսվածքի նկատմամբ, (տե՛ս Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի նկատմամբ լեզվաժամանակագրության մեթոդը կիրառելու մասին», ԼՀԳ, 1959, N 9):

Ս. Սվոդեշի մեթոդը հայերենի նկատմամբ կիրառել է նաև վրաց լեզվաբան Ի.Աբուլաձեն: (հմմտ. Գ. Ջահուկյան, ն.տ.): Մեր կողմից հիմք է ընդունվել Գ. Ջահուկյանի բառացանկը, որի արևմտահայերենի մասը որոշ ճշգրտումների է ենթարկվել, հատկապես նկատի ունենալով Գ. Ջահուկյանի միանգամայն տեղին դիտողությունը Ի. Աբուլաձեի բառացանկի վերաբերյալ, ըստ որի «հավաստի արդյունքներ ստանալու համար պետք է բանասիրական մանրակրկիտ աշխատանք կատարել՝ ճիշտ բառընտրությունն ապահովելու համար» (տես ն.տ.): Հակառակ դեպքում կարելի է հանգել վիճելի արդյունքների, ինչ որ եղել է Ի. Աբուլաձեի փորձի դեպքում: Ճշգրտելով արևմտահայերենի բառացանկը, ստացվեցին նախորդ փորձերից տարբեր տվյալներ: Այդպես, մեր բառացանկով 5-րդ կետում ներկայացվելիքը ոչ թե **մոտ**-ն է, այլ **քով**-ը: 7-րդ բառը **գեշ**-ը, բայց արևմտահայերենում, առկա է նաև **վատը**. հմմտ. **վատ նկարագրի տեր կին** -

վատահամբաւ տունէ ելած է և ոչ թէ զեշահամբաւ: 22-րդը արևմտահայերենի համար ներկայացվում է երկու տարբերակով՝ **մանուկ** և **մանչ**, իբրև արևելահայերենի **երեխա**, **մանուկ** բառերի համարժեքներ: Ասենք, որ **մանչը** ոչ թէ ընդհանրապես երեխան է, այլ տղան: Երեխայի արևմտահայ համարժեքն է **երախա**, իսկ ահա տղա բառն արևմտահայերենում փոքր տարիքի երեխան է, մանուկը՝ **տղա կամ աղջիկ**: Այնպես, որ ցանկում **մանուկ** և **մանչ** բառերը պետք է փոխարինել **տղա(տղեկ)** և **երախա** ձևերով: 25-րդը՝ ցուրտ ձևը կարելի էր ներկայացնել նաև արևմտահայերենին բնորոշ **պաղ** բառաձևով: 29-րդ բառի իմաստի համար ներկայացվող շարքում՝ **ճչալ**, **պոռալ**, **աղաղակել**, պետք է շարքում տեղափոխություն կատարել, առաջ տանելով արևմտահայերենին հատուկ **պոռալ** ձևը. ճչալ ձևն արևմտահայերենում, պոռալու համեմատությամբ, նվազ հաճախական է: Նույն ձևով 30-րդը երկու հոմանիշների միջև տեղափոխությունն անհրաժեշտ է՝ **կտրել**, **հատել**-ը պետք է շրջել՝ **հատել**, **կտրել**: Արևմտահայերենին ավելի բնորոշ է **հատել** բայը: 77-րդը երկու տարբերակ ունի՝ **այստեղ**, **հոս**: Պետք է առաջին տեղում դնել զուտ արևմտահայերենին բնորոշ **հոս**-ը, իսկ այստեղը այնքան սահմանափակ կիրառություն ունի, որ անգամ չի ներկայացվել «Հայոց լեզվի նոր բառարանում» (Բեյրութ, 1968): 85-րդը ներկայացվում է **սառույց** ձևով: Արևմտահայ գրականին բնորոշ է ոչ թե սառույց, այլ սառ ձևը: Հմնա. «Սառ-սաստիկ ցուրտին պատճառաւ պնդացած ջուր, սառույց» (ն.տ.) 109-րդը ներկայացվել է հետևյալ շարքով՝ **վիզ**, **պարանոց**: Արևմտահայերենի համար մոռացվել է **ճիտ**-ը: Հմնա. Գ. Զոհրապի «Ճիտին պարտքը»: Ուրեմն, շարքը պետք է ներկայացվեր՝ **ճիտ**, **պարանոց** և ապա միայն **վիզ**: 113-րդն է **քիթ**: Արևմտահայերենում տարածված ձև է նաև **ունչը**, հոգնակին՝ **ունչք**: 150-րդ բառը ներկայացվել է երկու հոմանիշով՝ **պզտիկ**, **փոքր**: Գրական արևմտահայերենին՝ ավելի բնորոշ է փոքր –ը փոքրահասակ, փոքրամարմին, «փոքր քոյրը» և ոչ թե «պզտիկ

քոյրը»: **Պզտիկ** բառը բնորոշ է ժողովրդախոսակցական ոլորտին՝ ուրեմն շարքը պետք է սկսել փոքր- ով: 151-րդն է **հոտ առնել**, հոտոտել: Պետք է ասել, որ **հոտ առնել** ձևը բնորոշ չէ արևմտահայերենին, այդ իմաստի համար արևմտահայերենում կա հատուկ բառ՝ **հոտուրտալ**, որ բացակայում է արևելահայերենում: 157-րդ կետում նշվում են **խոսիլ- խոսել** ձևերը: Խոսել-ը չկա արևմտահայերենում և պետք է հանել բառացանկից: 165-րդ կետում **ցուպ, գավազան** բառերին պետք է ավելացնել նաև **մահակը**, որ կա ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում: 169-րդը արևմտահայերենի համար ներկայացվում է միայն արև ձևով, մինչդեռ արևմտահայերենին շատ ավելի, քան արևելահայերենին, բնորոշ է **արեգակն** ձևը (ոչ թե արևելահայ արեգակ, այլ ն-ով՝ արեգակն): Այսպես, արևահար լինելուն արևմտահայերենում ասում են՝ արեգում, արևապաշտին՝ արեգակնապաշտ և այլն: 175-րդ քառաշարքում անհրաժեշտ է տեղափոխություն կատարել՝ այնտեղ, **հոն**-ը դարձնելով՝ **հոն, այնտեղ**: 191-րդ քառաշարքամ **ործկալ**-ի կ-ն պետք է առնվեր փակագծերի մեջ, քանի որ արևմտահայերենին բնորոշ է **ործալ** ձևը (առանց կ-ի): Չենք խոսում այլևս այն մասին, թե չարժեր ցանկում արտացոլել զուտ արևմտահայերենին բնորոշ այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ **ուրկե- որտեղից, քնանալ-քնել, քայլել-քալել, քակել-քանդել, ախպար- եղբայր** և այլն:

Այսպիսով, հայոց գրական լեզուների (այդ թվում՝ գրական արևմտահայերենի) բառային զուգադրությունների աղյուսակը որոշ փոփոխությունների ենթարկելով՝ կստանանք հետևյալ տեսքը: Ստորև ներկայացվում են հայոց գրական լեզուների բառային զուգահեռները (նրանց մերձակցության աստիճանը որոշելուց առաջ): Գրաբարի համար նկատի է առնվել դասական շրջանը, միջին հայերենի համար՝ կիրիկյան շրջանը:

	Գրաբար	Միջին Հայերեն	Արևմտա- հայերեն	Արևելա- հայերեն
1	ամենայն	ամեն	բոլոր	բոլոր
2	եւ,ու	եւ, ու	և (ու)	և
3	կենդանի, անասուն	անասուն, հայվան	կենդանի	կենդանի
4	մոխիր	մոխիր մոծիր	մոխիր	մոխիր
5	առ	խեչ, քով, առ	քով, փօտ	մոտ
6	թեկն, մեջք	թիկունք, կոնակ	կոնակ, թիկունք	թիկունք, մեջք
7	վատ,չար	գեշգեշ	վատ	վատ
8	կեղեւ	կեղեւ,կլեպ,խեճեպ	կեղեւ	կեղև, կճեպ
9	գի, որովհետև	վասնց գի, գի	որովհետև	որովհետև
10	որովայն, փոր	փոր	փոր, որովայն	փոր, որովայն
11	պտուղ	պտուղ	պտուղ	պտուղ
12	մեծ	մեծ, ջոջ(ճոյ)	մեծ, ջոջ	մեծ
13	թոչուն, հաւ	թոչուն, հաւք	թոչուն,	թոչուն
14	խածանել,կծ անել	խածանել	խածնել	կծել
15	սեաւ	սև	սև	սև
16	արիւն	արիւն(արուն)	արիւն	արյուն
17	փչել	փչել	փչել	փչել
18	ոսկր	ոսկոր (ոսկր)	ոսկ(ո)ր	ոսկոր
19	շնչել	շնչել	շնչել	շնչել
20	եղբայր	աղբայր, եղբայր	եղբայր, ախպար	եղբայր
21	այրել,վառել	երել, այրել	այրել, վառել	այրել, վառել
22	մանուկ	մանչ, տղայ, մա- նուկ, երեխայ	երախա, տղա	երեխա, մանուկ
23	հանդերձ,զգե ստ	զգեստ(ըսզեստ)	հագուստ, զգեստ	հագուստ, զգեստ, շոր
24	ամպ	ամպ	ամպ	ամպ
25	ցուրտ	ցուրտ	պաղ,ցուրտ	ցուրտ
26	գալ	գալ	գալ	գալ

27	եփել	եփել	եփել	եփել
28	համարել, թուել, հաշ- ուել	համրել (համբրել)	համրել, հաշվել	հաշվել
29	աղաղակել	ճնչալ, աղաղակել, պօռալ	պոռալ, ճչալ,	ճչալ, գոռալ, աղաղակել
30	հատանել	կտրել, հատնել (հատանել)	հատել, կտրել	կտրել, հատել
31	պար	պար	պար	պար
32	տիւ, աւր	օր	օր	օր
33	մեռանել	մեռնիլ (մեռանիլ)	մեռնիլ	մեռնել
34	փորել	փորել	փորել	փորել
35	աղտեղի	աղտոտ, աղտեղի	աղտոտ	կեղտոտ
36	շուն	շուն	շուն	շուն
37	ըմպել	խմել, ըմպել	խմել(ըմպել)	խմել(ըմպել)
38	չոր, ցամաք	չոր, ցամաք	չոր, ցամաք	չոր
39	բուֆ	բուֆ	բուֆ	բուֆ
40	փոշի	փոշի	փոշի	փոշի
41	ունկն (ականջ)	ունկ(ն) ականջ	ականջ	ականջ
42	հող, երկիր	հող (երկիր)	հող (երկիր)	հող (երկիր)
43	ուտել	ուտել	ուտել	ուտել
44	ձու	հակիրթ(ձու)	հակիրթ(ձու)	ձու
45	ուլթ	ուլթ	ուլթ	ուլթ
46	ակն (աչք)	աչք	աչք	աչք
47	անկանել	ընկնել (անկնիլ, անկանիլ)	իյնալ	ընկնել
48	հեռի	հեռու, ի գատ, ի բաց	հեռու	հեռու
49	ճարպ, ճրագու	ճարպ, եղ(եղ), ճրագու	ճարպ, (եղ),	ճարպ, ճրագու
50	հայր	հայր (հար)	հայր	հայր
51	երկնչել	վախնալ (վախենալ), երկիրդել	վախնալ	վախենալ

52	փետուր	փետուր, փետրիկ, թեպուր, թեպրիկ	փետուր	փետուր
53	սակաւ	քիչ, սակաւ. ճճի (մի ճճու մի)	քիչ, սակաւ	Քիչ (սակաւ)
54	մարտնչել	կռուիլ, պայքարել	կռուիլ, մարտնչել, պայքարել	կռվել, մարտնչել, պայքարել
55	հուր, կրակ	կրակ, հուր	կրակ, հուր	կրակ, հուր
56	ձուկն	ձուկ(ն)	ձուկ	ձուկ
57	հինգ	հինգ	հինգ	հինգ
58	լող	լող	լող	լող
59	հոսիլ	հոսիլ	հոսիլ	հոսիլ
60	ծաղիկ	ծաղիկ	ծաղիկ	ծաղիկ
61	թոչել	թոնուլ(թոչիլ, թոչել)	թոչիլ, թոփիլ	թոչել
62	մեզ, մառախուղ	մեզ, մառախուղ	մեզ, մառախուղ, մշուշ	մառախուղ, մեզ, մշուշ
63	ոտն (ոտք)	ոտ (ք), ոտն	ոտք	ոտք
64	չորք	չորս	չորս	չորս
65	պաղել, սառչել	պաղիլ(պաղանալ) սառիլ (սառչիլ)	պաղիլ, սառիլ	սառչել
66	տալ	տալ	տալ	տալ
67	բարի, լաւ	աղէկ, բարի, լաւ	աղէկ, լաւ	լաւ
68	խոտ	խոտ	խոտ	խոտ
69	կանաչ	կանաչ	կանանչ, կանաչ	կանաչ
70	հեր, մագ	մագ, ծամ, հեր	մագ, հեր, վարս	մագ, վարս
71	աղիք(հոգն)	աղիք	աղիք	աղիք
72	ձեռն (ձեռք)	ձեռ(ք) (ձեռն)	ձեռք	ձեռք
73	նա	նա (ան), անիկ, (այնիկ)	ան, անիկա	նա
74	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ
75	լւել, անսալ	լւել	լւել (անսալ)	լւել
76	սիրտ	սիրտ	սիրտ	սիրտ
77	աստ	hou (հոս), այստեղ, աստ	հոս,այստեղ	այստեղ

78	հարկանել	հարկնել (զարկել, զայնել, քըշտել)	զարնել	խփել (զարկել)
79	ունել	բոնել, պահել	բոնել, պահել	բոնել, պահել
80	զիարդ	զերդ (զերթ), հայնց (հանց), որպէս	ինչպէս (ինտոր)	ինչպէս
81	հարիւր	հարիւր (հարոյր)	հարիւր	հարյուր
82	որսալ	որսալ	որսալ	որսալ
83	այր (ամուսին)	երիկ, (այրիկ), (ամուսին)	(ամուսին), երիկ	ամուսին
84	ես	ես	ես	ես
85	սառն	պար,	սառ, պար	սառույց
86	(ե)թէ	եթէ, թէ, թէ որ	եթէ, թէ որ	եթէ
87	ի	ի, ի մէջ (մէջ)	մէջ	մէջ
88	սպանանել, սատակել	սպաննել, սատակել, (սատկացնել)	սպաննել	սպանել
89	գիտել	գիտնալ (գիտենալ)	գիտնալ	գիտենալ
90	լիճ, լիկ	լիճ	լիճ	լիճ
91	ծիծաղել	խնդալ, ծիծաղիլ	խնդալ, ծիծաղիլ	ծիծաղել
92	տերել	տերել	տերել	տերել
93	ահեակ, ձախ	ձախ, ահեկ (ահեակ)	ձախ, ահեակ	ձախ
94	ոտն (հզն.ոտք)	ոտ (ք), (ոտն)	ոտք	ոտք
95	ըն (կողմանել)	պառկիլ (պառակել)	պառկիլ	պառկել
96	ապրիլ	ապրիլ	ապրիլ	ապրել
97	լեարդ	լերդ (լեարդ)	լեարդ	լարդ
98	երկայն	երկան (երկայն երկար)	երկայն, երկար	երկար
99	ո(ր)ջիլ	ոջիլ (որջիլ)	ոջիլ	ոջիլ
100	մարդ, այր	մարդ, երիկմարդ,	մարդ (այր	մարդ

		այր մարդ	մարդ)	
101	բագում	բագում, շատ	շատ, բագում	շատ (բագում)
102	միս	միս	միս	միս
103	մայր	մայր (մար)	մայր	մայր
104	լեռն	լեռ (լեռն, լեռոն), սար	լեռ, սար	սար
105	բերան	բերան	բերան	բերան
106	անուն	անուն	անուն	անուն
107	անձուկ, նեղ	անձուկ, նեղ	նեղ, անձուկ	նեղ,
108	մերձ, մատ	ի խէշ, մերձ	մօտ	մոտ (իկ)
109	պարանոց	վիզ, փոդ, պարանոց	ճիշտ,	պարանոց (վիզ)
110	նոր	նոր	նոր	նոր
111	գիշեր	գիշեր	գիշեր	գիշեր
112	ինն	ինն (ին)	ինը	ինն, ինը
113	քիթ	քիթ	քիթ, ունչ	քիթ
114	ոչ	ոչ(չ(ը)	ոչ(չ(ը)	ոչ(չ(ը)
115	հին	հին	հին	հին
116	մի	մի, (մին, մէկ)	մէկ, մը	մէկ, մի
117	այլ	այլ, ուրիշ	ուրիշ, այլ	ուրիշ, այլ
118	անձ	անձ, շունչ, հոգի	անձ	անձ
119	խաղալ	խաղալ	խաղալ	խաղալ
120	քարշել	քաշել (քարշել)	քաշել	քաշել
121	մղել	հրել, բթել	հրել, մղել	հրել, մղել
122	անձրեւ	անձրեւ	անձրև	անձրև
123	կարմիր	կարմիր	կարմիր	կարմիր
124	աջ	աջ(աջ)	աջ	աջ
125	գետ	գետ	գետ	գետ
126	ուղիղ	ուղիղ (ուղեղ), շիտակ	ուղիղ, շիտակ	ուղիղ
127	ճանապարհ	ճամբայ (ճանա- պարհ)	ճամբա	ճանապարհ
128	արմատ	արմատ, տակ	արմատ	արմատ
129	պարան	պարան, չուան	պարան, չուան	պարան, թոկ

130	փտեալ, նեխել	փտած (փտել «փտեալ»), նեխած, (նեխել «նեխեալ»)	փտած, նեխած	փտած
131	շփել	շփել, մարձել, տրորել	շփել	տրորել, շփել
132	աղ	աղ	աղ	աղ
133	աւագ	աւագ	աւագ	ավագ
134	ցտել, քերել, մագլ (ցտ)ել	քերել, ճանկոել	ճանկոտել, քերել	ճանկոել, քորել
135	ծով	ծով	ծով	ծով
136	տեսանել	տեսնուլ	տեսնել	տեսնել
137	սերմն	սերմ(ն), հունդ (հունն)	սերմ, հունդ	սերմ
138	ելթն	ելթն (եօթ)	ելթն	յոթ
139	կտրել	կտրել	կտրել	կտրել
140	սուր	սուր	սուր	սուր
141	ձգել, արկանել, արձակել	արձակել (արձակել, արկել)	կրակել, ձգել, արձակել	կրակել, ձգել, արձակել
142	կարճ	կարճ	կարճ	կարճ
143	երգել	երգել	երգել	երգել
144	քոյր	քոյր (քուր)	քոյր	քույր
145	նստել	նստել	նստիլ	նստել
146	վեց	վեց	վեց	վեց
147	մորթ, մաշկ, կաշի	մաշկ, մորթ, կաշի	մորթ, կաշի, մաշկ	մորթ, կաշի, մաշկ
148	երկինք	երկինք	երկինք	երկինք
149	քուն	քուն	քուն	քուն
150	փոքր	փոքր(իկ), պզտիկ	փոքր, պզտիկ	փոքր (իկ)
151	հոտոտել	հոտոտալ	հոտուրտալ	հոտ քաշել, հոտոտել
152	ծուխ	ծուխ	ծուխ, մուխ	ծուխ
153	հարթ	զորկուտ (ըղորկուտ) հարթ, դուր	հարթ	հարթ
154	աւձ	օձ (օց)	օձ	օձ

155	ումն, մի	մի	ումն, մը	ինչ-որ, մի (ումն)
156	ձիւն	ձիւն (ձոյն, ձուն)	ձիւն	ձյուն
157	խաւսել	խօսիլ, գրուցել	խօսիլ	խոսել
158	տեգ, նիզակ	տեգ, նիզակ	նիզակ, տեգ	նիզակ, տեգ
159	թքանել	թքնուլ (թքնել)	թքնել	թքել
160	ճեղքել, ցելուլ	շառտել, ճղքել (ճեղքել)	ճեղքել	ճեղքել, ճղել
161	ճմել	ճգմել, քամել, մգել	ճգմել, քամել, ճմել	ճմել, ճգմել, քամել
162	խոցել, մխել	խոցել, գախմել, խթել	խոցել, խրել	խոցել, խրել
163	կանգնել	կանգնել	կանգնիլ	կանգնել
164	աստղ	աստղ	աստղ	աստղ
165	բիր	բիր, մահակ, պլատիկ, գաւազան	ցուպ, գաւազան, մահակ	մահակ
166	քար	քար	քար	քար
167	ուղիղ	ուղիղ, շիտակ	շիտակ, ուղիղ	ուղիղ
168	ծծել	ծծել	ծծել	ծծել
169	արեգակն, արել	արել (արեգ, արեգակ)	արել (արեգակ)	արն, արեգակ
170	ուռնուլ, այտնուլ	այտնուլ, ուռնուլ (ուռչիլ)	ուռիլ	ուռչել
171	լող	լող	լող	լող
172	ագի, ձետ	ագի, պոչ, ձետ	պոչ, ագի	պոչ, ագի
173	տասն	տաս (ն)	տասը	տաս (ը)
174	այն	այն (ան, այնիկ)	այն (անիկա)	այն
175	անդ	հօն (հոն, հուն- կայ, այստեղ)	հոն, այնտեղ	այնտեղ
176	նոքա	նոքա (այնոք, նոքա)	անոնք	նրանք
177	ստուար	ստուար, հաստ	հաստ (ստուար,)	հաստ (ստվար)
178	նուրբ, ասաւոր	նուրբ, նօսր, բարակ, լատիֆ	նուրբ, բարակ, նօսր	նուրբ, բարակ, նօսր

179	խորհել, զմտաւ ածել	խորհիլ, անդճել	մտածել, խորհիլ	մտածել, խորհել
180	այս	այս (աս, այսիկ)	այս (ասիկա)	այս
181	դու	դու (ս)	դուն	դու
182	երեք	երեք	երեք	երեք
183	արկանել, ընկենուլ, ձգել	ձգել, արկանել, ընկնուլ, նետել	ձգել, նետել	զցել
184	կապել	կապել	կապել	կապել
185	լեզու	լեզու	լեզու	լեզու
186	ատամն	ակոռայ, ատամ (ս)	ակոռայ, ատամ,	ատամ
187	ծառ	ծառ	ծառ	ծառ
188	շրջել, դառնալ, (դարձուցանել)	դառնալ, շրջ(ու)իլ	շրջել(ու)իլ, դառնալ (դարձնել)	շրջել (վել), դառնալ (դարձնել)
189	քսան	քսան	քսան	քսան
190	երկու	երկու	երկու	երկու
191	փսխել, ործ (կ)ալ	փսխել, ործկալ	փսխել, ործկալ	փսխել, ործկալ
192	երթալ, գնալ	երթալ, գնալ	երթալ (գնալ)	գնալ
193	ջերմ	շող «տաք», եղկ, ջերմ	տաք, ջերմ	տաք, ջերմ
194	լուանալ	լուանալ (լուանիլ)	լվալ	լվանալ
195	ջուր	ջուր	ջուր	ջուր
196	մեք	մենք	մենք	մենք
197	խոնաւ	թաց, խոնաւ, ջէճ, (գէճ)	թաց, խոնաւ	թաց, խոնալ
198	զ-ինչ	ինչ (զինչ)	ինչ	ինչ
199	երբ	երբ (ելի)	երբ	երբ
200	ուր	ուր, որտեղ	ուր, որտեղ	ուր , որտեղ
201	սպիտակ	սպիտակ (սպիտաձ) ճերմակ	ճերմակ, սպիտակ	սպիտակ
202	ո (վ)	ով	ով	ով
203	լայն, ընդարձակ	լայն (լան)	լայն, ընդարձակ	լայն, ընդարձակ

204	կին	կին(կնիկ), կնիկ մարդ	կին	կին
205	հողմ	քամի, (ը)ռեհ), հողմ	հով, քամի, հողմ	քամի, հողմ
206	թել	թել	թել	թև
207	մաքրել, սրբել	սրբել, մաքրել	սրբել, մաքրել	մաքրել, սրբել
208	ընդ	(ի) հետ, խէշ	հետ	հետ
209	անտառ	անտառ, մէրի	անտառ	անտառ
210	վաստակել	վաստակիլ, բանիլ աշխատել	աշխատիլ	աշխատել
211	որդն	որդ (ն) , ճճի	որդ	որդ, ճիճու
212	դուք	դուք	դուք	դուք
213	ամ, տարի	տարի, ամ	տարի	տարի
214	դեղին	դեղին	դեղին	դեղին
215	*կին	կին, կնիկ մարդ	կին	կին

Լրացումներ 100 բառանոց ցուցակին

93	կուրծք, լանջք	կուրծ(ք), լանջ(ք)	կուրծք(լանջ)	կուրծք
94	մագիլ	ճանկ, չանչուլ	ճանկ, մագիլ, ճիրան	ճանկ, մագիլ (ճիրան)
95	լի	լի (ի լի)	լեցուն, լի	լի
96	եղջիւր	եղջիւր (եղջե(ւ)ր) (պօզ)	եղջիւր	եղջուր
97	ծունկ	ծունկ, գուճ	ծունկ	ծունկ
98	լուսին	լուսին (լուսնակ, լուսնեակ)	լուսին	լուսին
99	բոլորակ, բոլորշի	բոլոր, կլոր	կլոր, բոլորակ	կլոր
100	ասել	ասել	ըսել	ասել

Ստորև ներկայացնում ենք հայոց չորս գրական լեզուների բառային տարբերությունների արժեքները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Գրական լեզուներ	Տարբերություններ			
	Լրիվ	Մասնակի	Հնչյունա- քերականա- կան	Ընդամենը
Արևմտահայ գրական լեզու և գրաբար	18	13	14.5	45.5
Արևմտահայ գրական լեզու և միջին գրական հայերեն	6	8	7.5	21.5
Արևմտահայերեն և արևելահայերեն	7	11.5	11	29.5

Եթե զանց առնենք զուտ քերականական տարբերությունները, ապա գրական արևմտահայերենի և գրաբարի տարբերությունները կկազմեն 31 միավոր: Գ. Ջահուկյանի համապատասխան տվյալն է՝ 36, որն, անշուշտ, ընդհանուր առմամբ մոտ է մեր ստացած տվյալին: Արժե նշել նաև, որ անկախ ստացած զուտ թվային արժեքից, գրաբարի և արևմտահայ գրական լեզվի միջև եղած տարբերությունները բոլոր մյուս գրական լեզուների համեմատությամբ ավելի մեծ են ստացվել ինչպես Գ. Ջահուկյանի, այնպես էլ հատկապես մեր ստացած տվյալներով՝ 45,5 միավոր 215 բառանոց ցուցակով:

Ճիշտ է, միջին գրական հայերենի և գրական արևմտահայերենի տարբերությունների աստիճանը գրեթե համընկնում է Գ. Ջահուկյանի և մեր քննությամբ՝ համապատասխանաբար 21,5 և 22,5: Մեր ստացած արժեքներով դա հայոց գրական լեզուների բառապաշարի մերձակցության ամենաբարձր աստիճանն է (մյուս գրական լեզուներն իրարից ավելի հեռու են): Գ. Ջահուկյանի հաշվարկներով՝ ամենաքիչ տարբերությունները ստացվել

են արևմտահայ և արևելահայ գրական լեզուների միջև (ըստ 215 բառանոց ցուցակի՝ 16, 5, իսկ 100 բառանոց ցուցակի՝ զարմանալիորն ընդամենը 0.5 միավոր): Այդպիսով, ստացվում է, որ գրական արևելահայերենն և արևմտահայերենը ավելի մոտ են իրար բառապաշարով, քան արևմտահայերենն ու միջին հայերենը: Ըստ մեր տվյալների, արևմտահայ գրական լեզվի բառապաշարը մերձակից է միջին գրական հայերենին (ընդամենը 21,5 միավոր տարբերություն), գրեթե երկու անգամ ավելի մոտ, քան գրաբարին, որից ունեցած տարբերությունները կազմում են 45,5 բառ-միավոր: Իսկ ահա արևելահայերենի նկատմամբ արևմտահայերենի բառապաշարի դիրքն այսպիսին է ժամանակակից հայերենի երկու գրական տարբերակները ավելի մոտ են, քան արևմտահայերենը՝ գրաբարին:

Մվոդեշի մեթոդը, հակառակ իր արդյունքների որոշ պայմանականությանը, մեկ անգամ ևս հաստատեց այն իրողությունը, որ գրաբարին ավելի մոտ է արևելահայ գրական լեզուն, քան արևմտահայերենը, հանրահայտ է, որ արևելահայերենը որդեգրեց գրաբարյան բառաձևերը, չլինելով միջին գրական հայերենի բնականոն զարգացման ժառանգորդը, մինչդեռ արևմտահայերենը միջին գրական հայերենից որդեգրեց ինչպես հնչյունական, այնպես էլ բառաքերականական շատ երևույթներ: Մի կողմ թողնելով կիրարկված մեթոդի ակնհայտ թերությունները կարելի է եզրակացնել, որ այն թվային որոշակի տվյալներով վեր է հանում հայոց գրական լեզուների բառապաշարի զարգացման ընդհանուր ուղղվածության պատկերը և գրական լեզուների մշակման գործընթացում առկա առանձնահատկությունները:

Այսպիսով, բառավիճակագրական նախորդ փորձերի ցանկում մեր կողմից կատարվեց ավելի քան քսան բառի ճշտում և տեղափոխություն: Ներկա ցանկում ճշտվեցին ոչ միայն առանձին բառաձևեր, այլև կատարվեց հոմանիշների շարքի տեղափոխություն, առանձին դեպքերում էլ ավելացվեցին

արևմտահայերենին բնորոշ հոմանիշ ձևերը, որոնք նախորդ ցանկերում բացակայում էին: Բնական է, որ կատարված փոփոխությունների հետևանքով՝ ստացած արժեքները էապես փոփոխվեցին:

Հաշվարկը կատարելիս միանգամայն ընդունելի ենք դիտել Գ. Ջահուկյանի մոտեցումը. «Տարբերությունները գնահատելիս առաջնորդվել ենք հետևյալ չափանիշներով. 1) լիակատար տարբերություն համարենք և որպես մեկ միավորի տարբերություն գնահատենք այն դեպքերը, երբ իրար դիմաց գտնվող բառերը բոլորովին չեն համընկնում, կամ համընկնում են միայն ոչ առաջին բառերը. 2) մասնակի տարբերություն համարենք և, որպես կանոն, կես միավորի տարբերություն գնահատենք այն դեպքերը, երբ մեկ լեզվի միակ բառը կամ առաջին հոմանիշը մյուս լեզվում հանդես է գալիս որպես ոչ առաջին հոմանիշ. 3) համընկնում համարենք, որպես զրո գնահատենք և բացառենք այն դեպքերը, երբ տվյալ մեկ բառի կամ առաջին հոմանիշի դիմաց գտնվում է ստուգաբանորեն նույնական բառ կամ առաջին հոմանիշ» (ն.տ.): Առաջին երկու կետերը բացատրության կարիք չեն զգում: Երրորդ կետի դեպքում հաշվի ենք առել նաև բառի լեզվական ձևավորման առանձնահատկությունները՝ (հմմտ., օրինակ՝ **ըսել-ասել** կայլն), որոնք ակնհայտ են դարձնում բուն բառային՝ բառի հնչյունական ձևավորման բառակազմական տարբերությունները, բառաքերականական առանձնահատկությունները:

Լեզվաժամանակագրության մեթոդը հայերենի նկատմամբ կիրառելիս առանձնացվել են 215, 220 և 100 բառանոց ցուցակներ: Այդ բառացանկերի համեմատությունը ցույց է տալիս, որ պետք է հենվել ավելի ընդարձակ՝ 215 բառանոց ցանկի վրա, որովհետև 100 բառանոց ցանկը անընդունելի է և վիճելի եզրահանգման կարող է հասցնել: Այսպես, եթե ըստ նախկին քննության (տե՛ս Գ. Ջահուկյան, ն. տ., էջ 235) արևելահայ և արևմտահայ գրական լեզուների տարբերություն-

ների արժեքը 215 և 200 բառանոց ցուցակներով կազմում է ընդամենը 16,5 միավոր, ապա 100 բառանոց ցուցակի տվյալներով, տարբերությունները հանկարծ հասցվում են ընդամենը կես տոկոսի (լրիվ տարբերության ոչ մի միավոր չունենալով, ներկայացնելով միմիայն մասնակի տարբերության մեկ նմուշով): Հասկանալի է, որ հարյուր բառանոց ցանկը խիստ պակասավոր է: Այլևս չենք խոսում այն մասին, որ, ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, բառապաշարի միջուկին պատկանող բառերի սվոդեշյան ցուցակը խոցելի է (տե՛ս ն.տ.): Այդուհանդերձ, ցուցակի ելակետային բառերի կազմը թողել ենք անփոփոխ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր տվյալները հետագայում կարելի է համեմատության մեջ դնել այլ լեզուների համապատասխան արժեքների հետ: Մանավանդ չպետք է մոռանալ, որ Սվոդեշի մեթոդը կիրառվել է գերազանցապես գրական լեզուների նկատմամբ: Եվ ահա մեր չորս գրական լեզուները կարող են որոշակի պատասխան տալ այն հարցին, թե կա՞րողոք բառերի համեմատաբար կայուն, փոփոխության չենթարկվող շերտ: Հայ բարբառների տվյալների հիման վրա Գ. Ջահուկյանը եզրակացրել է, որ «մի շարք բառեր համեմատաբար կայուն են և գրեթե չեն փոխարինվում այլ համարժեքներով» (ն.տ., էջ 243): Բերվում են դերանունների թվականների մի շարք նմուշներ: Բարբառների տվյալներով այդ իրոք այդպես է, սակայն նկատի ունենալով մեր արդի գրական լեզուները, կարելի է ասել, որ ինչպես դերանունները (**դու-դան, նրանք -անոնք, սա-աս, նա-ան, անիկա, դա-ադ** և այլն), այնպես էլ թվականները (**երկու-երկուք, տասնմեկ-մետասան** և այլն) մտնում են համեմատաբար անկայուն բառապաշարի մեջ:

Աղյուսակ 2-ում ներկայացվում են արևելահայերենի և արևմտահայերենի բառային (ձևախմբաստային) տարբերությունների տիպերն՝ ըստ քանակային ճշգրիտ արժեքների:

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, երկու գրականների զուտ բառիմաստային տարբերությունները կազմում են բառային

տարբերությունների բոլոր տիպերի ընդամենը. 28,6 տոկոսը, արևելահայերենի և արևմտահայերենի հարյուրհազարանոց բառապաշարի ընդհանուր գուգադրության արդյունքում, ունենք ընդամենը 998 բառային միավոր, որոնք բնութագրվում են տվյալ բառի առկայության/բացակայության հատկանիշով, կամ տարբերությունը դրսևորվում է բառի մեկ իմաստի սահմաններում և կամ էլ արևելահայերենի արդի փուլում արևմտահայերենին բնորոշ ձևը դիտվում է իբրև հնաբանություն:

Երկու գրականների հնչյունական տարբերություններ ունեցող բառապաշարը կազմում է բառային տարբերություններ ունեցող ընդհանուր բառաքանակի 10,5 տոկոսը:

Բառակազմական տարբերություններ ունեցող քառաշերտը կազմում է ընդհանուր բառային տարբերություններով բնութագրվող բառաքանակի 18,7 տոկոսը: Ընդ որում առկա են ավելի շատ ածանցման տարբերություններ ունեցող բառեր (9.8տոկոս), քան բառաբարդման՝ 5,1 տոկոս:

Աղյուսակ 2

Բառային տարբերությունների տիպեր	Օրինակներ	Քանակը	Տոկոսը	Ընդհանուրը
Բառիմաստային տարբերություններ				
ա) բառի առկայություն/ բացակայություն	աղէկ, ասակ	607	17.4	28.6
բ) տարբերություն մեկ իմաստով	նրբանցք ² — միջանցք՝ բարակ ² - ուշադիր 1	216	6.2	
գ) արևելահայերենի արդի փուլում	անգայտ ² -նոսր	175	5.0	
հնաբանություն դիտվող ձևեր	ապաշառ ² - զղջում			

<p>Հնչյունական տարբերություններ</p> <p>ա)բառամիջի ձայնավորի սդում</p> <p>բ)ուղղագրական տարբերություններ (աբեղյանական ուղղագրությամբ չպայմանավորված)</p>	<p>Ամաչկոտ արել¹ գիտենալ¹ դողդղալ¹ ժողովել¹ խաղալիկ²— խաղալիք² գանկ²-գանգ² ինձի-ինձ</p>	<p>141</p> <p>227</p>	<p>4.0</p> <p>6.5</p>	<p>10.5</p>
<p>Բառակազմական տարբերություններ</p> <p>ա)ածանցական տարբերություններ</p> <p>բ)բառաբարդման ոլորտի տարբերություններ</p> <p>գ)մակբայակազմության տարբերություններ</p>	<p>բարձրկեկ² բանողչեք² գօղօնք² դատակնիք²— դատավճիռ² դասապահ²— դասաժամ² դյուրալ²— դյուրությամբ² իրավցընե²— իրավամբ</p>	<p>341</p> <p>179</p> <p>121</p>	<p>9.8</p> <p>5.1</p> <p>3.5</p>	<p>18.7</p>
<p>Քերականական տարբերություններ</p> <p>ա)բայակազմական (լծորդական) տարբերություններ</p> <p>բ)արևելահայերենի արդի փոլում արխայիկ դիտվող ձևեր</p>	<p>ամչնալ-ամաչել¹ այրիկ²-այրվել² ըլլալ²-լինել² ծաղկեալ¹— ծաղկած¹ գերեալ¹— գերված¹ դիեցուցել²— ծիծ տալ¹</p>	<p>1187</p> <p>292</p>	<p>34.1</p> <p>8.4</p>	<p>42.8</p>
<p>Ընդամենը</p>		<p>3486</p>		<p>100</p>

Երկու գրականների բառապաշարի ոլորտի քերականական տարբերություններ ունեցող քառաշարքը ամենից ընդարձակն է. այն պարունակում է 1187 միավոր (34,1 տոկոս): Շուրջ 100.000 բառ-միավորը դիտելով իբրև արևելահայ և արևմտահայ գրական լեզուներից յուրաքանչյուրի բառապաշարի ամբողջություն, կարող ենք եզրակացնել, որ մեր երկու գրականների բառապաշարային տարբերությունները 3,5 տոկոսից չեն անցնում (ընդամենը՝ 3486 բառ): Դա էլ հենց վկայում է արդի հայերենի երկու գրական վիճակների ընդհանրության բարձր աստիճանի մասին:

Ինչ խոսք, ինչպես գրել է Գ. Ջահուկյանը, տակավին ապագային է մնում հատկապես հայ բարբառների բառապաշարի լեզվաժամանակագրական հարցերի ավելի արդյունավետ և ճշգրիտ մեթոդների ստեղծումը (Գ. Ջահուկյան, ն.ս.): Մի բան անվիճելի է, որ այդպիսի մեթոդների մշակման գործընթացում Սվոդեշի առաջարկած բառավիճակագրական մեթոդը կարող է որոշապես օգտակար լինել իր առանձին հիմնադրույթներով:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.4.01. Քերականական զուգաբանությունների ընտրության գործընթացը կատարվում է նույն չափորոշիչներով, ինչ՝ հնչյունականը: Բարբառային յուրահատկությունների բացահայտման համար Գ. Ջահուկյանի կողմից քերականական ոլորտում նույնպես առանձնացվել են 50 հատկանիշներ: Դրանցից հինգը վերաբերում են անունների հոգնակիակազմությանը (առանձնացվում են վի, նի, **ան (անք)**, **ստան**, **ստեր**, **եր**, **ար**, **անք**, **այք** և այլն ձևերը):

Թվով ինը զուգաբանություններ վերաբերում են հոլովակազմական առանձնահատկություններին: 4 զուգաբանություն բացահայտում է դերանունների կազմության և հոլովման առանձնահատկությունները: Ընդամենը մեկ հատկանիշ, (69-րդը

ըստ Գ. Ջահուկյանի հատկանիշների փնջի) վերաբերում է դասական թվականների կազմությանը: Վերջապես, վերջին հինգ հատկանիշ, առնչվում է անունների և դերանունների շարահյուսական կիրառության բնորոշ տարբերություններին:

Երբեմն պատահում է, որ նույն բարբառում առկա են միևնույն հատկանիշի երկու հակադիր դրսևորումներ (ասենք՝ բացառական հոլովի կազմության է(ն)-ով և ց-ով): Այդպես է, օրինակ, Վանի բարբառում:

Վերջին 25 զուգաբանությունները արտացոլում են խոնարհման համակարգում հայերենի բարբառների ի հայտ բերած էական, բնորոշ տարբերությունները: Առանձին զուգաբանություններ վերաբերում են լծորդական տիպերի ի հայտ բերած տարբերություններին (հայտնի է, որ արևելահայ խոսվածքներին հատուկ է լծորդային երկու տիպ (ել, ալ), իսկ արևմտահայերենին՝ երեք (արևելահային բնորոշ տիպերին ավելացված է նաև իլ-ը): Տակավին արժեք հատուկ առանձնացնել նաև սահմանափակ թվով բայերում գործառող ուլ-ով ձևը՝ **թողուլ**, **կիզուլ** և այլն):

2.4.02. Ձևաբանական կառուցվածք: Ինչպես գրական (ազգային) լեզուների, այնպես էլ բարբառների (խոսվածքների) ձևաբանական կառուցվածքի տիպաբանական քննությունը կարելի է կատարել քանակական մի շարք մեթոդների օգնությամբ: Մենք դիմել ենք Ջ. Գրինբերգի առաջարկած մեթոդին, հաշվի առնելով, որ մի կողմից՝ արդեն կան մի շարք լեզուների նկատմամբ տվյալ մեթոդի կիրառությամբ ստացած տվյալները, և կարելի է դրանց զուգադրությամբ որոշակի եզրակացությունների հանգել, մյուս կողմից, որ առավել կարևոր է, այդ մեթոդը որոշ փոփոխություններից հետո ավելի լուրջ արժեք է ներկայացնում:

Ջ. Գրինբերգի մեթոդը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու ամենատարբեր տիպի լեզուների կառուցվածքային (կցման, թեքման, բառաբարդման, ածանցման և այլն) բազմաթիվ

ընդհանուր գծեր ոչ թե ցաք ու ցրիվ ձևով, ինչը այս կամ այն՝ չափով հատուկ է բոլոր նախորդ մեթոդներին, այլ՝ նախապես ընտրված մի շարք էական հատկանիշների միջոցով: Մեթոդը կոչվում է քանակական, թեև ամեննին էլ չպետք է կարծել, թե լեզվի որակն այդտեղ անտեսվում է: Ընդհակառակն, ամեն մի քանակական վերլուծություն մի նպատակ ունի միայն, այն է՝ որակի բացահայտումը: Այլապես քանակական մեթոդի կիրառումը կլինի աննպատակ:

Ձ. Գրինբերգի մեթոդը (տե՛ս գրականության ցանկի համապատասխան աղբյուրը), որ հիմնված է է. Սեպիրի հասկացական դասակարգման վրա, բաղկացած է տասը ցուցիչներից՝ համադրման, կցման, բառաբարդման, թեքման, նախածանցման, վերջածանցման, համաձայնության և այլն:

Նշենք, որ Ձ. Գրինբերգի վերցրած ընտրանքի ծավալը (յուրաքանչյուր լեզվի համար ընդամենը 100 բառանոց հատված) համարելով անբավարար, վերլուծության ժամանակ հաշվի ենք առել ընտրանքի ծավալի և թույլատրելի հարաբերական սխալի մեծությունները (հմմտ. Բ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Ե., 1982):

Ձ. Գրինբերգի մեթոդի առաջին չափանիշն է՝ M/W (ձևույթների թվի հարաբերությունը բառերի թվին): Հեղինակն այն անվանում է համադրության ցուցիչ, նշելով, որ դրա ամենացածր արժեքը հավասար է 1,00 և երբեք 1,00-ից ցածր չէ, որովհետև յուրաքանչյուր բառ պետք է գոնե մեկ ձևույթ ունենա: Չնայած տեսականորեն բարձրագույն աստիճանը (սահմանը) դժվար է որոշել, սակայն, ինչպես ցույց են տալիս այդ ուղղությանը կատարված ուսումնասիրությունները, գործնականում մեկ բառում առկա ձևույթների թիվը չորսից չի անցնում: Այդ առումով, Ձ. Գրինբերգի նշած 3.00 մեծությունը լեզուներում այնքան էլ հաճախ չի հանդիպում:

Եթե առաջին ցուցչի արժեքները վերլուծական լեզուների համար ցածր են, ապա համադրական լեզուների համար՝ դրանք բարձր են:

Կցականության ցուցիչը՝ A/j , կցական կառույցների (A) հարաբերությունն է ձևային կարերի թվին՝ J: Ձևային կարերի թիվը, որպես կանոն, մեկով պակաս է ձևայինների ընդհանուր թվից: AЯ-ի բարձր արժեքների դեպքում տվյալ լեզուն համարում են կցական, հակառակ դեպքում՝ ֆուզիոն: Ինչպես կարելի է նկատել, համադրության և կցականության ցուցիչները կախված են իրարից, առաջինի ցածր արժեքների դեպքում երկրորդի՝ կցականության, արժեքները նույնպես ցածր են ստացվում, այնպես որ համադրության 1,00 արժեք ունեցող լեզվի կցականության ցուցիչը իմաստ չունի որոշել, որովհետև այն ինքնըստինքյան հավասար է 0/0-ի: Կցականության ցուցչի դեպքում Գրինբերգը հաշվի չի առել Սեպիրի դասակարգման մեջ հանդես եկող II, III և IV խմբերի հասկացությունները, մասամբ այն պատճառով, որ այդպիսով կարելի է խուսափել «տիպարանական դասակարգման մեջ չափազանց մեծ բարդություններից, և մասամբ այն պատճառով, որ նրանց հաշվառումը կապված է նշանակալից դժվարությունների հետ» (Ջ.Գրինբերգ, ն.տ.):

Ջ. Գրինբերգի դասակարգման երրորդ չափանիշը Սեպիրի դասակարգման սխեմայի մեջ առանցքային կետ է՝ բառակազմական կամ ածանցական (դերիվացիոն) և կոնկրետ վերաբերական հասկացությունների առկայություն/ բացակայությունը: Համոզվելով, որ հասկացությունների դասակարգման վրա հիմնված սեպիրյան մեկնակետով հնարավոր չէ գիտական անհրաժեշտ ճշտության հասնել, նա ձևայինները դասակարգում է ըստ երեք խմբի՝ արմատական, բառակազմական (ածանցական) և բառափոխական:

Առաջին խմբի ցուցիչը՝ R/W, բառաբարդման ցուցիչն է, որտեղ R-ը արմատական ձևայինների թիվն է, իսկ W-ն՝ բառերի:

Ջ. Գրինբերգի համար անվիճելի կանխադրույթ է այն, որ ամեն մի բառ բաղկացած է առնվազն մեկ արմատական ձևույթից²: Եթե բառը բաղկացած է երկու կամ ավելի արմատական ձևույթից, ապա գործ ունենք բառաբարդման հետ: Այդ ցուցչի տեսակետից կարող են լինել երեք տիպի լեզուներ՝ 1. բառաբարդումից ընդհանրապես զուրկ լեզուներ (սուահիլի, էսկիմոսերեն)³, 2. լեզուներ, որոնք մեծապես օգտվում են բառաբարդումից (գերմաներեն և այլն) և 3. լեզուներ, որոնք միջին դիրք են գրավում:

Երկրորդը բառակազմության (ածանցման) ցուցիչն է՝ D/W: Վերջինիս բարձր արժեքների դեպքում տվյալ լեզուն պատկանում է բարդ կամ դերիվացիոն խմբին: Երրորդը բառափոխության ցուցիչն է՝ J/W, որտեղ J-ը բառափոխային ձևույթների թիվն է, իսկ W-ն՝ բառերի:

Չնայած արմատի նկատմամբ սպասարկու տարրերի հաջորդականության կարգը, ինչպես նշում է Գրինբերգը, Սեպիրի՝ լեզվի ձևաբանական կառուցվածքի տեսակետից չափազանց կարևոր է, այնուամենայնիվ վերջինս այդ չափանիշը չի մտցրել իր դասակարգման մեջ: Այնինչ դա Գրինբերգի առաջարկած ձևաբանական տիպաբանության չորրորդ չափանիշն է: Ըստ այդմ, նա տարբերակում է՝ 1. նախածանցության ցուցիչ (P/W), որն արտահայտում է նախածանցների թվի հարաբերությունը բառերի թվին, 2. վերջածանցության ցուցիչ (S/V), որն

²Այդպիսի ըմբռնման դեպքում սխալ կլինի բառ ընդունել բացատից բացառ ընկած ամեն մի տարածություն, որովհետև շաղկապները, նախդիրները և այլն բառ չեն համարվի, չնայած անջատ միավորներ են: Հետևաբար, կամ պետք է վերջիններս բառ չհամարել, կամ, որ ավելի ճիշտ է, ընդունել, որ ամեն մի բառ առնվազն մեկ ձևույթից է կազմված, այն էլ գերազանցապես արմատական ձևույթից:

³ Այդ լեզուներում բառաբարդման ցուցիչը հավասար է 1,00, այսինքն՝ մեկ բառ-մեկ ձևույթ: Տվյալներն ըստ Ջ. Գրինբերգի նշված աշխ., էջ 91:

արտահայտում է վերջածանցների թվի հարաբերությունը բառերի թվին: Միջածանցման ցուցիչը նա չի ընդունում, հաշվի առնելով, որ լեզուներում այն հանդես է գալիս հազվադեպ:

Ջ. Գրինբերգի դասակարգման վերջին չափանիշը վերաբերում է բառերի միջև եղած կապակցման միջոցներին: Այդ առիթով սովորաբար զանազանում են երեք կարգի հնարավորություն՝ բառափոխություն առանց համաձայնության, համաձայնություն, բառերի նշանակյի կարգ կամ դասավորություն: Վերջինս Գրինբերգը սահմանափակում է այնպիսի դեպքերով, երբ տարրերի որոշակի հաջորդականությունը կամընտրովի չէ, այսինքն՝ հաջորդականության խախտումը առաջացնում է կառույցի նշանակության փոփոխություն: Բացի այդ, բառափոխական ձևայինների բացակայությունը հիմք է ծառայում այն բանին, որ այդպիսի բառերի միջև եղած կապը իրագործվի բառերի ունեցած հաջորդականությամբ: Այսպիսով, վերջին չափանիշի երեք ցուցիչներն են.

1. Անջատականության ցուցիչը՝ O/N, որտեղ O-ն հաջորդականությունն է, N-ը՝ նախադասության մեջ բառերի միջև եղած հարաբերություններում այս կամ այն սկզբունքի կիրառման յուրաքանչյուր դեպքը:

2. Pi/N մաքուր բառափոխության ցուցիչն է, որտեղ Pi-ն մաքուր բառափոխությունն է (pure inflection):

3. Co/N-ն համաձայնության ցուցիչն է:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին չափանիշով Ջ. Գրինբերգը խառնում է շարահյուսական և ձևաբանական մակարդակները: Քանի որ նրա դասակարգումը անվանված է **ձևաբանական տիպաբանություն**, ուստի բառերի կարգի կամ հաջորդականության մասին խոսելը ձևաբանական դասակարգման շրջանակներից դուրս է: Արդյունքները տրվում են N 3 աղյուսակում:

Ինչպես երևում է աղյուսակից, համադրման ամենաբարձր ցուցիչը Կորյունինն է՝ 2,27 տոկոս, ապա Ագաթանգեղոսինը՝ 2,13 տոկոս: Ագաթանգեղոսի և Կորյունի համապատաս-

խան ցուցիչները բարձր են ստացվել նաև նույն հեղինակներից ընտրած այլ հատվածների վիճակագրական քննությունից, համապատասխանաբար՝ 2,29 և 2,21 տոկոս:

Միջին արժեքից ունեցած զգալի տարբերությունը պայմանավորված է մասամբ նաև նշված հեղինակների ոճական առանձնահատկություններով:

Աղյուսակ 3

Ցուցիչներ										
Հեղի- նակ	Բառերի	Համադր.	Կցական	Բառաբարդ	Բառա- կազմական	Բառավորի	Նախածանց.	վերջածանց	Նախադա- տություն	նյութի
Ազգաթանգեղոս	488	2.13	0.67	1.06	0.31	0.53	0.01	0.16	0.16	
Կորյուն	672	2.27	0.74	1.09	0.37	0.60	0.01	0.17	0.17	
Եզնիկ	508	2.12	0.58	1.08	0.27	0.46	0.03	0.13	0.17	
Բուզանդ	836	2.08	0.64	1.05	0.25	0.59	0.01	0.14	0.19	
Բանահյուսու- թյուն	284	1.99	0.64	1.05	0.21	0.52	0.01	0.11	0.20	
Ավետարան ըստ Ղուկասու	497	1.99	0.55	1.03	0.24	0.45	0.01	0.12	0.21	
Գործք առաքելոց	559	2.00	0.61	1.08	0.24	0.46	0.00	0.10	0.20	
Առակք Սողոմոնի	367	2.00	0.61	1.03	0.27	0.48	0.03	0.14	0.22	
Երգ երգոց	197	1.99	0.66	1.04	0.26	0.50	0.00	0.09	0.24	
Բարսեղ Կեսարացի	592	2.17	0.66	1.10	0.26	0.49	0.02	0.16	0.20	
Ընդամենը	5000	2.08	0.64	1.06	0.26	0.51	0.01	0.13	0.20	

Միջին արժեքին համեմատաբար մոտ է Եզնիկից վերցրած հատվածի ցուցիչը՝ 2,12 տոկոս, այն դեպքում, երբ միջին արժեքին բացարձակապես նույնանամ է Բուզանդի համապատասխան ցուցիչը (2,08 տոկոս): Անհրաժեշտ է նշել, որ վերջիններիս մյուս ցուցիչները նույնպես զերազանցապես համընկնում են:

Քննած տեքստերի համադրման ցուցչի արժեքների գուգադրությունից պարզվում է, որ Ղուկասի ավետարանի, Գործք առաքելոցի, Սողոմոնի առակների և Երգ երգոցի արժեքների տատանումները աննշան են և ամբողջությամբ համընկնում են բանահյուսության համապատասխան ցուցչի հետ (1,9 տոկոս):

Թեև ընդունվում է ընտրանքի ծավալի և թույլատրելի հարաբերական սխալի մեծությունների իրական արժեքը⁴ (ինչքան ընտրանքը մեծ է, թույլատրելի հարաբերական սխալը փոքր է, և ընդհակառակը), սակայն աղյուսակից կարելի է մի հետևության ևս անել, որոշակի սահմանից հետո (տվյալ դեպքում մոտավորապես 400 բառից) ընտրանքի ծավալի մեծացումը հարաբերական սխալի փոփոխության գրեթե չի առաջացնում միննույն հեղինակի մոտ (այսպես՝ Առակք Սողոմոնի - 367 բառ՝ 2,00, ավետարան ըստ Ղուկասու - 497 բառ՝ 1,99, վերջապես՝ Գործք առաքելոց - 559 բառ՝ 2,00 տոկոս):

Այսպիսով, դասական գրաբարի համադրման ցուցչի արժեքները տատանվում են 2,00-ի շուրջը: Այսինքն՝ ամեն բառ միջին հաշվով երկու ձևույթ է պարունակում: Պարզ է, որ այդ ամեննին էլ չի նշանակում, թե յուրաքանչյուր բառ պետք է երկու ձևույթ պարունակի: Կան առանձին բառեր, որոնց ձևույթների թիվը անցնում է յոթից, և շատ ու շատ բառեր, որոնց ձևույթների թվի հարաբերությունը բառերի թվին հավասար է մեկի (այսինքն՝ ամեն բառ մի ձևույթ է): Գրաբարում գերակշռում են ձևույթ/բառերի 3/1 և 2/1 հարաբերությունները:

Չափազանց կարևոր է նույն արժեքները պարզել նաև բարբառների նյութի քննությամբ: Ինչ խոսք, գրական մշակված

⁴ Հայտնի է, որ թույլատրելի սխալի մեծությունը կրկնակի անգամ փոքրացնելու համար անհրաժեշտ է ընտրանքի ծավալը՝ n -ը, մեծացնել քառակի չափով: Այդ պատճառով էլ, եթե Ջ. Գրինըրերգը ընտրել է 100 քառանոց հատվածներ, ապա սույն վիճակագրական քննության համար վերցվել է քառակի անգամ ավելին:

լեզվի համադրման ցուցիչները, որպես կանոն, պետք է ավելի բարձր լինեն, քան բարբառներինը:

Կցականության ցուցիչը նպատակահարմար ենք գտել հաշվել Ջ. Գրինբերգի սկզբունքից տարբեր ձևով, քանի որ կցական կառույցներ/կարեր հարաբերությամբ ստացված թվային արժեքները կարող են թյուրիմացության մեջ գցել: Ըստ Գրինբերգի սկզբունքի, երկու կցվող ձևույթներից կազմված բառի կցականության ցուցիչը հավասար կլինի $1/2$, այնինչ երեք և ավելի բաղադրիչներով կառույցների առկայության դեպքում համապատասխանաբար $1/3$, $1/4$ և այլն, որոնք ակնհայտորեն ավելի փոքր արժեքներ են, չնայած հենց վերջին դեպքում է, որ կցականության ցուցիչը պետք է բարձր ստացվեր: Այդ պատճառով էլ, ընդունելի է համարվել կցական կառույցներով բառերի թվի հարաբերությունը բառերի ընդհանուր թվին, անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև այն, թե ինչպիսի կցական կառույցներով բառերն են ավելի հաճախական:

Կցականության ցուցչի արժեքներով Կորյունի և Ագաթանգեղոսի համապատասխան հատվածները դարձյալ ամենաբարձր շեղումներն են տալիս՝ $0,074$ և $0,67$ տոկոս: Դա բնական է, որովհետև, ինչպես նշվել է, վերջինս ուղիղ համեմատական է համադրման ցուցչին և քանի որ այն ամենաբարձրն է, կցականության ցուցիչը նույնպես բարձր է ստացվել:

Եթե Բուզանդի և բանահյուսության համապատասխան ցուցիչները բացարձակապես համընկնում են միջին արժեքին $0,64\%$ (այսինքն՝ 100 բառից 64 -ին կցականության հատկանիշը հատուկ է, ապա հատկապես Ղուկասի ավետարանը ամենացածր արժեքն ունի ($0,55\%$): Այդ, ինչպես նաև առհասարակ Աստվածաշնչից վերցրած այլ հատվածների (բացառությամբ Երգ երգոցի), կցականության ցուցչի ցածր արժեքը ($0,66\%$) մեծամասամբ պայմանավորված է Ս. Գրքի ոճական առանձնահատկություններով (օր.՝ և-երի բարձր հաճախականությունը):

Կցականության իրական պատկերը նշված ցուցիչներով դեռևս հնարավոր չէ պարզել, պետք է քննել նաև, թե նշված արժեքների, որ մասն են կազմում երկու, երեք և այլ կցական կառույցներով բառերը:

Քննված բոլոր տասը հատվածների վերլուծությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացության. չնայած 0,64 կցականության արժեքը կարծես վկայում է այն մասին, որ կցական կառույցները գրաբարում բավական շատ են, սակայն եթե հաշվի առնենք մի կողմից՝ յուրաքանչյուր կցվող տարրի հիմնականում մեկից ավելի քերականական իրազեկում պարունակելը, մյուս կողմից՝ շատ հաճախ կցականության հատկանշի ըստ էության ներքին թեքմանն «ուղեկցող» հատկանիշ լինելը (օր.՝ տուն-տանտամբ), ապա ակնհայտ կդառնա, որ դասական գրաբարը կցականությունից հիմնականում օգտվում է բառակազմության ոլորտում:

Ընդամին, դասական գրաբարի կցականության մասին կարելի է խոսել վիբրապահությամբ:

Բառաբարդման արժեքները աննշան տատանումներ են տալիս: Այդ ցուցչի նվազագույն արժեքը Ղուկասի ավետարանինն է (1,03), որ պայմանավորված է ինչպես համադրման, այնպես էլ կցականության ցուցչի (0,55%) ամենացածր արժեքներով: Ընդհակառակը, Կորյունի, Բարսեղ Կեսարացու հատվածների ցուցիչները միջին արժեքից ամենաբարձր շեղումն են տալիս՝ 1,09 և 1,1% դարձյալ պայմանավորված միևնույն լեզվաօրինաչափությամբ: Գրաբարյան 100 բառին, միջին հաշվով, ընկնում է 1,06 արմատ: Միևնույն արժեքն է ստացվել նաև 1500 բառանոց այլ տեքստերի վիճակագրական քննությունից:

Բառաբարդման ցուցչի վերաբերյալ կարելի է հետևյալ դիտողությունը ևս անել, թվում է, հայերենի (և ոչ միայն հայերենի) բառաբարդման ցուցիչը շատ ավելի բարձր արժեքներ պետք է ունենար, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր հարյուր բառանոց հատվածում որոշակի տոկոս

են կազմում շաղկապները, կապերը, և այլն, որոնք լինելով մենաձևույթ (մենարմատ), ազդում են ընդհանուր տոկոսային հարաբերության վրա:

2.4.03. Լեզվակառուցվածքները լեզվի զարգացման ընթացքում փոխվում են: «Հետևաբար,- գրում է Վ.Սկալիչկան,- զարմանալի ոչինչ չկա այն բանում, որ ծագումնաբանորեն ցեղակից լեզուները տարբեր են տիպաբանության տեսակետից, օրինակ՝ ֆրանսերեն, չեխերեն և հայերեն լեզուները»⁵:

Այդ առումով հետաքրքիր է պարզել, թե ինչպիսին կլինի գրաբարից վերցված տեքստերի և դրանց աշխարհաբար թարգմանության համապատասխան ցուցիչների ընդհանուր պատկերը: Վերցվել են գրաբարի դասական շրջանից Կորյունի Գ և Ե գլուխների, Ետոասական շրջանից՝ Եղիշեի երկրորդ գլխի որոշ հատվածներ և համապատասխանաբար դրանց աշխարհաբար թարգմանությունը: Այդ հատվածների համադրման և բառաբարդման ցուցիչների համեմատական տախտակը տրվում է ստորև, աղյուսակ N 4-ում:

Աղյուսակ 4

		Կորյուն		Եղիշե		Միջինը	
		Գրաբ.	Աշխարհ.	Գրաբ.	Աշխարհ.	Գրաբ.	Աշխարհ.
Համադրում	1	2,28	1,91	2,02	1,84	2,15	1,87
	2	2,14	1,93	1,85	1,66	1,99	1,79
Բառաբարդում	1	1,07	1,03	1,02	1,01	1,05	1,02
	2	1,08	1,09	1,04	1,03	1,06	1,06

Ինչպես կարելի է նկատել N 4 աղյուսակից, գրաբարի համադրման ցուցիչների դիմաց աշխարհաբարի համապատասխան ցուցիչները ցածր արժեք ունեն: Եթե համադրման ցուցիչը

⁵ В. Скаличка, О современном состоянии типологии, НЛ, вып. III, 1963, էջ 22:

գրաբարում ստանում է միջին արժեքից ցածր թվային արտահայտություն, ապա նրա աշխարհաբար թարգմանության ցուցիչը ավելի ևս ցածր է ստացվում:

Գրաբարի և աշխարհաբարի համադրման և բառաբարդման ցուցիչների նշված տարբերությանը բացատրվում է հայոց լեզվի կառուցվածքի մեջ կատարված նշանակալից փոփոխություններով: Հենց միայն խոնարհման համակարգից բավական է նշել ներկա, անցյալ անկատար ժամանակների գրաբարյան պարզ կազմությունը, որոնք լեզվի հետագա զարգացման ընթացքում վերածվել են բաղադրյալ ժամանակների: Դա հայոց լեզվի՝ համադրականությունից վերլուծականության գնալու ընդհանուր միտումի արտահայտություններից մեկն է: Եթե համադրման տեսակետից գրաբարն իր զարգացման ընթացքում գնացել է դեպի վերլուծականություն, ապա բառաբարդման տեսակետից գրեթե մնացել է անփոփոխ (թե՛ գրաբարում և թե՛ աշխարհաբարում Ա/Բ 1,06%):

Գրաբարում բառափոխության ցուցիչն ավելի բարձր արժեքներ ունի բառակազմության ցուցչի համեմատությամբ (համապատասխանաբար՝ 0,51% և 0,26%): Նշված ցուցիչներից ամենաբարձր շեղումը տալիս է Կորյունի հատվածը (0,37% և 0,60%): Մյուս հատվածների համապատասխան ցուցիչները էական շեղումներ չունեն: Նախածանցության ցուցիչը գրեթե ամենուրեք միևնույն ցածր (0,01%) արժեքն է ստանում: Դա նկատվել է շատ հայագետների կողմից: Հանրահայտ փաստ է, որ հայերենում (առավել ևս՝ դասական գրաբարում) գերակշռում են վերջածանցները: Այդպես էլ ստացվել է քանակական հաշվումներով՝ 0,01 նախածանցության արժեքի դիմաց առկա է 0,13 վերջածանցության միջին ցուցիչը: Միջին արժեքից ամենաբարձր շեղումը Կորյունի, Ագաթանգեղոսի և Բարսեղ Կեսարացու համապատասխան հատվածներին է՝ 17% և 16%, իսկ ամենացածր շեղումը Երզ երգոցինը՝ (0,09%): Միջին արժեքի հետ բացարձակ համընկնում է Կորյունինը՝ 0,13%:

Միևնույն համաժամանակյա կտրվածքում քերականական իմաստների արտահայտման համադրական և վերլուծական (ձևաբանական մակարդակի) միջոցների փոխհարաբերության բացահայտման միջոց կարող է ծառայել նախադրության ցուցիչը: Հատկանշական է, որ այդ ցուցչի միջին արժեքից (0,20%) եղած տատանումները չնչին թիվ են կազմում (0,04%): Այստեղ ևս բանահյուսության և Բուզանդի արժեքները համընկնում են միջինին: Մի շարք հին և նոր լեզուների՝ Գրիներգի մեթոդի կիրառությամբ ստացված քանակական ցուցիչների և դասական գրաբարի համապատասխան տվյալների համեմատական տախտակը տրվում է N 5 աղյուսակում (բերված տվյալներից մեզ է պատկանում միայն գրաբարին վերաբերող մասը):

Աղյուսակում բերված ցուցիչների զուգադրությունից կարելի է նշել հետևյալը.

1. Եթե համադրման ցուցչի ամենաբարձր արժեքը էսկիմոսերենինն է (3,72%), իսկ ամենացածրը՝ վիետնամերենինը (1,06%), ապա սանսկրիտը, գրաբարը և անգլոսաքսոներենը միջին դիրք են գրավում:

2. Ինչպես համադրման, այնպես էլ բառաբարդման արժեքներով դասական գրաբարը նշված լեզուների շարքում միջին դիրք է գրավում:

3. Բառակազմության և բառափոխության ցուցիչներով նույնպես դասական գրաբարը գրավում է սանսկրիտի և անգլոսաքսոներենի միջին դիրքը:

4. Եթե նախածանցության ցուցիչով դասական գրաբարը մերձակից է անգլոսաքսոներենին, ապա վերլուծականության ցուցիչով՝ սանսկրիտին:

5. Հաշվի առնելով ստացված տվյալները, Գրիներգը նշել է մի կողմից անգլոսաքսոներենի և սանսկրիտի, մյուս կողմից՝ պարսկերենի ու անգլերենի ապշեցուցիչ նմանությունը⁶, բացի

⁶ Дж.Гринберг, и.т., էջ 93:

	Համարը.	Բառաբարը.	Կցական.	Բառակազմ.	Բառավորիչ.	Նախածանց	Վերջածանց
Սանսկրիտ	2,59	1,13	0,09	0,62	0,84	0,16	1,18
Գրաբար	2,08	1,06	0,64	0,26	0,51	0,01	0,13
Անգլոսաքսոներեն	2,12	1,00	0,11	9,20	0,90	0,06	1,03
Պարսկերեն	1,52	1,03	0,34	0,10	0,39	0,01	0,49
Անգլերեն	1,68	1,00	0,30	0,15	0,53	0,04	0,64
Յակուտերեն	2,17	1,02	0,51	0,35	0,82	0,00	1,15
Սուահիլի	2,55	1,00	0,67	0,07	0,86	1,16	0,41
Վիետնամերեն	1,06	1,07		0,00	0,00	0,00	0,00
Էսկիմոսերեն	3,72	1,00	0,03	1,25	1,75	0,00	2,72
Թամիլ	3,18	1,38	0,22	0,68	1,06	0,03	2,94
Ույղուրերեն	2,77	1,05	0,99	0,87	0,79	0,01	1,66

այդ զարգացման այն ընդհանուր ուղղվածությունը, որ կա մի շարք հին հնդեվրոպական լեզուներում՝ սանսկրիտ, անգլոսաքսոներեն, որոնք արդի լեզվավիճակներով արդեն վերածվել են վերլուծական լեզուների (օրինակ, արդի անգլերենը): Պետք է ասել, որ գրաբարը ևս, ինչպես երևում է աշխարհաբարի հետ համեմատելուց, զարգացման գրեթե նույն ուղին է անցել: Այնուամենայնիվ, ժամանակակից հայոց լեզուն համադրման և բառաբարդման ավելի մեծ արժեքներ ունի, քան, ասենք, ժամանակակից պարսկերենն ու անգլերենը:

2.4.04. Դասական գրաբարի ձևաբանական կառուցվածքը կարելի է որակել որպես թեքական՝ կցականության որոշ տարրերով, իսկ ժամանակակից հայերենինը՝ կցաթեքական (կցական կառույցներով հարուստ, բայց որոշակի թեքականությամբ օժտված): Ընդամին պետք է նշել, որ ժամանակակից հայերենը չի կարելի համարել այնպիսի կցական լեզու, ինչպիսին, ասենք, թուրքական լեզուներն են, որովհետև վերջիններիս թեքայթների գերազանցապես մենիմաստությանը արդի հայերենը հա-

կադրում է մեկ քերականական ձևի միջոցով միաժամանակ մեկից ավելի իմաստներ արտահայտելու հատկանիշով:

Դասական գրաբարի ձևաբանական մակարդակի տիպաբանական քննությունը ի հայտ է բերում հայերենի կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունը ևս. ի տարբերություն անձև կոչված լեզուների (չին-տիբեթական), գրաբարի խոսքի հատույթավորումը չի համընկնում ձևայինների (բառերի) սահմանների հետ: Ձևայինների և վանկերի թիվը ոչ միայն թվապես չի համընկնում, այլև հազվադեպ չի այն երևույթը, երբ երեք ձևային ընդամենը մեկ վանկ են կազմում (օր.՝ արտ-ի-ւ-ք): Այստեղից էլ, ի տարբերություն չին-տիբեթական լեզուների, որտեղ ձևային երկարությունը կայուն մեծությամբ է օժտված, դասական գրաբարի (ինչպես նաև արդի հայերենի) ձևային երկարությունը կարելի է պարզել միայն վիճակագրորեն (այն հավասար է 2-3 հնչույթի):

Եթե նկատի ունենանք, որ թեքական կարող է լինել այն լեզուն, որի բառի վանկատումը ձևաբանական որոշակի նշանակություն չունի (այսինքն ձևայինների և վանկերի սահմանները չեն համընկնում), ապա կարելի է վերստին նշել դասական գրաբարի ձևաբանական կառուցվածքի թեքական բնույթը:

2.04.05. Շարահյուսական կառուցվածք: Լեզուների տիպաբանական մերձակցության բացահայտման հարցում առաջնակարգ դերը հիրավի պատկանում է ձևաբանությանը, այդուհանդերձ չի կարելի ժխտել սույն հարցում նաև շարահյուսական մակարդակի ունեցած կարևորությունը: Այդ է պատճառը, որ եթե հնչույթային մակարդակը ավանդական տիպաբանության ուշադրության կենտրոնից գրեթե դուրս է գտնվել, ապա շարահյուսական մակարդակը բազմիցս ենթարկվել է տիպաբանական քննության⁷, թեև պետք է նշել, որ շարահյուսական դա-

⁷ Եթե զանց առնենք ձևաբանական տիպաբանության հիմքում դրվող որոշակի շարահյուսական հատկանիշները (վերլուծականություն, բազմահամադրականություն և այլն), բավական է նշել Վ. Շմիդտի

ասկարգման քիչ թե շատ ընդունելի սխեմաներ այնուամենայնիվ չեն տրվել:

Լեզվական տարբեր մակարդակների հիերարխիկ հարաբերությունները վկայում են, որ ձևաբանական մակարդակի քննությունը ավելի բարդ է հնչյութային մակարդակի քննությունից, ինչպես շարահյուսական մակարդակին՝ ձևաբանականից: Պետք է նշել նաև, որ առաջացող դժվարությունները տեքստի մեջ «համակարգի իրացման ընթացքում առաջացող ավելի շատ շեղումները» չեն միայն, ինչպես գտնում են տիպաբաններից ոմանք⁸: Բանն այն է, որ «վերին» մակարդակի միավորները թվապես շատ են, և բնականաբար վերջիններիս իրացման ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում, հենց դրանից էլ բխում է, որ շարահյուսական մակարդակում դժվար է գտնել լեզվակառուցվածքային օրինասահմանչական հատկանիշներ:

Մասամբ նշված դժվարությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ շարահյուսական մակարդակի կառուցվածքային- տիպաբանական քննության փորձեր քիչ են արվում:

Կարծելով, որ լեզվի մեկ ամբողջական մակարդակի նկարագրություն տալու դեպքում պետք է հիմնվել ձևաբանության վրա, որովհետև շարահյուսությունը մի շարք ենթամակարդակներ ունի՝ պարզ նախադասություն, նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ և այլն, Յու. Ռոժժենսովենսկին եզրակացնում է, որ լեզուների ձևաբանական մակարդակի տիպաբանական քննությունը կարող է լինել միակեր:

Նախ՝ անհրաժեշտ է ձևաբանական մակարդակի վերաբերյալ ասվածի մեջ որոշ ճշտումներ մտցնել. այդ մակարդակի

«մշակութային շրջանների» մասին ուսմունքը, Մառի և նրա հետևորդների՝ Ի.Ի. Սեջանինովի, Ս.Դ. Կացնելսոնի և այլոց ստադիալ-շարահյուսական տիպաբանության փորձերը և այլն:

⁸ Ю.Рожденственский, и.տ, էջ 198:

մեջ նույնպես իր հերթին հնարավոր է տարբերակել ձևային, բառային, բառաձևային ենթամակարդակներ և ապա, ելնելով մեկ մակարդակի ներսում ենթամակարդակների գոյությունից, չի կարելի ժխտել շարահյուսական մակարդակի կառուցվածքային-տիպաբանական հնարավորությունն ու անհրաժեշտությունը, հետևաբար սխալ է միայն ձևաբանական մակարդակը տիպաբանական քննության առարկա համարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տիպաբանական (ինչպես և առհասարակ յուրաքանչյուր զուգադրական) քննությունից առաջ անհրաժեշտ է ունենալ զուգադրության եզր հանդիսացող լեզուների կառուցվածքային նկարագիրը, պետք է նշել, որ դասական գրաբարի շարահյուսական ամբողջական քննություն դեռևս հրապարակի վրա չկա: Մինչև այժմ (այն էլ գերազանցապես վերջին ժամանակներս) քննության են առնվել շարահյուսական միայն առանձին հարցեր: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում նախքան բուն տիպաբանական քննության անցնելը բացահայտել դասական գրաբարի շարահյուսական մակարդակի գլխավոր միավորի՝ նախադասության կառուցվածքային հիմնական կաղապարները և հետո միայն անցնել ցեղակից և ոչ ցեղակից լեզուների շարահյուսական կառուցվածքների զուգադրություններին:

Շարահյուսական մակարդակում կառուցվածքային տիպաբանության խնդիրն է պարզել, թե տարբեր կառուցվածքի լեզուներում շարահյուսական միավորների հաջորդականության կարգի փոփոխությունը իմաստային և գործառական ինչպիսի փոփոխություններ է առաջացնում:

Տարբերելով բառերի գծային հաջորդականությունը նախադասության միավորների միջև եղած կառուցվածքաշարահյուսական հարաբերություններից, պետք նշել, որ գծային հաջորդականության փոփոխությունը (որոշիչ-որոշյալ կամ ենթակա-ստորոգյալ հաջորդականության փոփոխությունը) սովորաբար նախադասության միավորների շարահյուսական

հարաբերությունների փոփոխություն է առաջացնում այնպիսի լեզուներում, որոնք թեքման (հոլովման և խոնարհման) հարուստ հնարավորություններ չունեն (օրինակ, անգլերենում): Այդ առումով, թեև դասական գրաբարում նախադասության միավորների գծային հաջորդականության փոփոխությունը շարահյուսական հարաբերությունների փոփոխություն չի առաջացնում, այնուամենայնիվ, շարահյուսական կառուցվածքին ինչ-որ չափով բնորոշ է ենթակա-ստորոցյալ-խնդիր հաջորդականությունը:

2.4.06. Նախադասության մեջ առկա միավորների հաջորդականության կարգի տիպաբանական ուսումնասիրությունը սկսել ենք նախադասությունից փոքր միավորից՝ կապակցությունից: Անհրաժեշտ է նշել, որ միայն շարահյուսական կապակցությունների ուսումնասիրությամբ բավարարվելը կլիներ միակողմանի և անբավարար այն առումով, որ այդ դեպքում տեսադաշտից դուրս կմնային սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունները, որոնք դրսևորվում են նախադասությունների, որպես ամբողջական միավորների, հաշվառման դեպքում:

Շարահյուսական նվազ կապակցելիությամբ օժտված միավորները դիրքի տեսակետից համեմատաբար շարժունակ են, ուստի դրանց դիրքափոխությունը քերականական գործառություն չի կատարում: Օրինակ, որոշիչ-որոշյալ շարադասությանը, որն ավելի ազատ է, քան նախադասության այլ միավորների հաջորդականությունը:

Շայերենագիտության մեջ ընդունված է, որ ինչպես որոշիչ-որոշյալ, այնպես էլ հատկացուցիչ-հատկացյալի համար կանոնականը առաջինների էտադաս կիրառությունն է: Այնուամենայնիվ, այնքան շատ են կանոնականից շեղումները (որոշյալ-որոշիչ և հատկացյալ-հատկացուցիչ հաջորդականության դեպքերը), որ անհրաժեշտություն է առաջանում խնդիրը մանրամասն վիճակագրական քննության ենթարկել: Այդպիսի մի քննություն կատարել է Հ. Ավետիսյանը (տե՛ս Հ. Ավետիսյան,

Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Ե., 1969): Նա վիճակագրության է ենթարկել որոշիչների և որոշյալների նախադաս և ետադաս գործածության դեպքերը և եկել այն եզրակացության, որ սխալ է որոշիչների ետադաս կիրառությունը կանոնական համարելը: Պետք է նշել, սակայն, որ Ավետիսյանի աշխատությանը նվիրված չէ գրաբարի որևէ մեկ կոնկրետ ժամանակահատվածի համաժամանակյա քննությանը, որի հետևանքով թե՛ դասական, թե՛ ետդասական և թե՛ նախամիջին շրջանների համար ստացված վիճակագրական տվյալները միևնույն մակարդակի վրա են դրվում: Թվում է, ավելի ճիշտ է Ա. Այտընյանը, որն իր «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ ետադաս գործածությունը բնորոշ է համարում գրավոր լեզվին, իսկ նախադաս գործածությունը՝ խոսակցական լեզվին:

Քննությունից պարզվում է, որ շարահյուսական նվազ կապակցելիությամբ օժտված միավորները (որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը) ունեն դիրքափոխության ավելի լայն հնարավորություններ և շարժունակ են: Ընդհանրապես խիստ կայուն, բացարձակապես հաստատուն շարադասության դեպքում հնարավոր չէր լինի խոսել ոճական շերտերի մասին: Պետք է նշել նաև, որ վերլուծականությամբ հարուստ լեզուները, որոնք աչքի են ընկնում կայուն շարադասությամբ, այնուամենայնիվ որոշակի ոճական շերտեր ունեն (օրինակ, ֆրանսերենը):

Լեզվաբանության մեջ ընդունված է, որ լեզվի վերլուծականության ցուցիչ կարող է ծառայել հողի առկայությունը: «Վերլուծական կառուցվածքները տարբեր տիպի լեզուներում» (ռուս.) ժողովածուի մեջ կարդում ենք. «Հանրահայտ է, որ ընդունված է լեզվի վերլուծական կառուցվածքի յուրահատկություններից մեկը համարել նրա մեջ հողի առկայությունը: Հին հունարենի և հայոց լեզվի ուսումնասիրությունը համաժամանակյա հայեցակետով հետազոտողին կարող է բերել այն եզրակացության, որ այդ լեզուները վերլուծական են, իրականում հին հունարենը և

հայերենը հանդիսանում են բարձր զարգացած թեքական կառուցվածքի լեզուների ներկայացուցիչներ, թեև նրանցում համադրության (սինթեզի) հետ միասին տեղ ունեն նաև արտահայտության վերլուծական միջոցները» (ընդգ. մերն է - Ա.Ս., տե՛ս Аналитические конструкции в языках различных типов, М., 1966, էջ 146):

Անհրաժեշտ է նկատել, որ այստեղ համաժամանակյա քննության հնարավորությունների նկատմամբ առկա է միանգամայն սխալ պատկերացում: Համաժամանակյա հայեցակետով նույնպես (եթե չասենք՝ համաժամանակյա քննությամբ) կարելի է ոչ միայն պարզել թեքականության և կցականության, համադրականության և վերլուծականության տարբերը, այլև սրանց համամասնական հարաբերությունները, գործառական ոլորտները և այլն: Բացի այդ, միևնույն մակարդակի վրա են դրված ձևաբանական տարբեր բնույթի միավորներ, հունարենում հոդը անկախ գործածության ունի և ենթակա է թեքման (դասական լեզուներում անգամ առանձին խոսքի մաս է դիտվում), այնինչ հայերենում հոդը մասնիկ է և գերազանցապես կցվող տարր, զուրկ դադարից և այլն: Այնպես որ հայերենում հոդի առկայությունը հոգուտ վերլուծական տիպի չի կարող խոսել, որովհետև հատկանիշների հաշվառման ժամանակ հոդի առկայությամբ կամ բացակայությամբ չէ, որ պետք է պարզել լեզվի կառուցվածքային տիպը; Այնուհետև հայտնի է, որ «մաքուր» թեքական և կցական, «մաքուր» համադրական և վերլուծական տիպի լեզուներ չեն կարող լինել: Այստեղից էլ, բնականաբար, առաջանում է հարաբերակցային քննության անհրաժեշտությունը, որն ակնհայտորեն ցանկալի է կատարել համաժամանակյա կտրվածքով:

Ենթակա + ստորոգյալ շարադասությունը կարելի է ներկայացնել SV ձևով: Այսինքն ենթական դրվում է ստորոգյալից առաջ (օր.՝ Յիսուս ասաց), սակայն հարցական նախադասութ-

յուններում դրանց հաջորդականությունը սովորաբար փոխվում է՝ ստորոգյալ-ենթակա:

Ետադաս ենթակայով նախադասությունների մեջ այդպիսի շարադասությունը միշտ չէ, որ ոճական կամ քերականական հաստատուն և որոշակի գործառություն է կատարում: Ենթակա+ստորոգյալ հաջորդականության փոփոխությունը երբեմն պայմանավորված է անանցողական բայի որպես ստորոգյալ կիրառությամբ, նախադասության սկզբնային դիրքում դրվելու հանգամանքով: Ընդհանրապես կարելի է ասել, որ երբ նախադասությունը սկսվում է ստորոգյալի լրացումներով (պարագաներ և խնդիրներ), անկախ այն բանից, նախադասությունը հարցական է, թե ոչ, ստեղծվում է շրջուն շարադասության հնարավորություն: Դա պայմանավորված է սրանով, որ, ինչպես նշվել է, նախադասության միջուկների ներսում ամբողջական միջուկների համեմատությամբ շարադասությունը ավելի կայուն է, այդտեղից էլ որպեսզի պարագան չընդմիջարկվի մյուս միջուկի բաղադրիչով, նրան հաջորդում է ստորոգյալը:

Պետք է կարծել, որ, իրոք, լեզուներում ընդունված երևույթ է ավելի քիչ միավորներից բաղկացած միջուկային խմբի սկզբնային կամ միջակա, բայց ոչ վերջնային դիրքում դրվելը, չնայած սույն խնդրում ևս դասական գրաբարը համեմատաբար ազատ է (հմմտ. **Պատասխանի ետ Յիսուս և Յիսուս** ասաց):

Ենթակա-ստորոգյալ շարադասության հետ կապված անհրաժեշտ է պարզել նրանց միջև առկա դադարի հարցը: Ընդունված է, որ ենթական և ստորոգյալը բաժանվում են դադարով: Այդ առթիվ Շ. Բալին, որ ֆրանսերենի և գերմաներենի տիպաբանական-գուգադրական քննության մեջ մեծ ծառայություն ունի, գրել է. «Հեշտ է նկատել, որ հատույթավորված նախադասության մեջ A և Z (սուբյեկտը և պրեդիկատը - Ա.Ս.) միշտ բաժանվում են դադարով, ինչքան էլ որ կարճ լինի այն, այն դեպքում երբ այնպիսի կապակցված նախադասություններում, ինչպես՝ *Le sole il éclaire la terre, Jé vous punirai si vous dé sobéissez*

դադարների, որոնք կարող են գրի առնվել գործիքներով, խոսող անհատի համար ամեն մի ռեալականությունից զուրկ են» (տե՛ս Ս.Балли, *Общая лингвистика вопросы французского языка*, М., 1955, էջ 72):

Այս մտտեցումն այնքան էլ ճիշտ չէ, որովհետև դադարն առկա է ոչ թե սուբյեկտի և պրեդիկատի միջև որպես այդպիսիք, այլ երկու միջուկների, որոնցից մեկի մեջ կառուցվածքային հիմքը սուբյեկտն է, մյուսի մեջ՝ պրեդիկատը: Եվ քանի որ ոչ ծավալուն («պարզ») նախադասությունների մեջ գործ ունեիք միայն ենթակայի և ստորոգյալի հետ, այն տպավորությունն է ստեղծվում, թե իբր սուբյեկտը և պրեդիկատը միշտ անջատվում են դադարով, այնինչ իրականում բաժանվում են ենթակայի և ստորոգյալի միջուկները:

Դասական գրաբարի բայական կապակցությունները նույնպես ազատ են, այսինքն՝ առկա են ինչպես OV, այնպես էլ VO տիպերը: Այսպիսով, նախադասության հիմնական միավորները նշանակելով S, V, O, կարելի է դասական գրաբարի շարահյուսական միավորների զուգորդման հնարավոր տիպերը տալ N6 աղյուսակով: Ինչպես տեսնում ենք, դասական գրաբարի շարահյուսությունը այնքան ազատ է, որ հնարավոր վեց տիպերից և ոչ մեկը չի բացառվում: Գրաբարի և հին լեզուների զուգադրությունից հեշտ է նկատել, որ հին լեզուները ընդհանրապես նոր լեզուների համեմատությամբ աչքի են ընկնում ազատ շարահյուսությամբ:

	Ձուգորդման տիպեր	Օրինակներ
1	SVO	Պետրոս ասէ ցնա
2	SOV	Դուք զայն գիտէք
3	VSO	Լուսն առաքեալքն զբանն
4	VOS	Հարցանէին գնա աշակերտքն
5	OVS	Յայնժամ գնաց Յիսուս
6	OSV	Չաչս նոցա բացեալ

Գրաբարի համեմատությամբ, իրոք, արդի հայերենի շարադասությունը համեմատաբար կայուն է: Այսպես՝ որոշիչների, հատկացուցիչների և բացահայտիչների շարադասությունը արդի հայերենում բավականին կայուն է. դրանք գրաբարյան սովորական ետադիր դիրքից անցել են որոշյալներից, բացահայտյալներից և հատկացյալներից առաջ:

2.4.07. Անցնելով լեզուների շարահյուսական տիպաբանության դասակարգման տախտակին, պետք է դարձյալ անդրադառնանք Ջ. Գրինբերգին, որը սահմանել է որոշակի շարահյուսական կախվածություններ (տե՛ս J. Grønberg, *Some universals of grammar with particular reference to the order of meaningful elements*, “Universals of language”, Cambridge, 1963):

Դասական գրաբարի նյութի նկատմամբ Ջ. Գրինբերգի սխեման կիրառելու կապակցությամբ անհրաժեշտ է նշել հետևյալը: Գրաբարում մեծ տարածում ունեն բայանվանական սուբյեկտ-անվանական օբյեկտ հաջորդականությամբ նախաստությունները: Հաշվի առնելով այդպիսի կարգ ունեցող լեզուների համար տրված առանձնահատկությունները, պետք է ասել, որ վերջինս հաստատվում է նաև հայերենի տվյալներով: Այսպես՝ դասական գրաբարում նախդիրները գերակշռում են ետադրություններին ինչպես քանակով. այնպես էլ իրենց հարուստ գոր-

ծառական հնարավորությամբ: Ի տարբերության գրաբարի, արդի հայերենը գրեթե գրկվել է դրանցից և գրաբարյան բազմաթիվ նախադրությունների միայն մի փոքր մասն է օգտագործում, դրա փոխարեն հաճախ դիմելով ետադրություններին (հմմտ. **վասն հայրենեաց — հայրենիքի համար**):

Հաշվի առնելով, որ այդ բոլոր գծերը համընկնում են Ջ. Գրինբերգի դասակարգման սխեմայի վերջին տիպին (անվանական սուբյեկտ-անվանական օբյեկտ-բայ), կարելի է ենթադրել, որ արդի հայերենում հաճախականը որոշյալի ետադաս գործածությունն է: Ինչպես ցույց է տալիս արդի հայերենի քննությունը, իրոք, ժամանակակից հայերենի համար տիպականը որոշչի նախադաս կիրառությունն է: Այնտեղ, որտեղ գոյություն ունի SOV հաջորդականությունը, գոյություն ունեն միայն ետադրություններ և՛ ընդհակառակը: Առաջին դեպքում գերակշռում են վերջածանցները:

Նկատի ունենալով այն, որ ենթական սովորաբար այն լեզուներում է անմիջականորեն նախորդում ստորոգյալին, որտեղ նախադասության անդամների միջև շարահյուսական կապերը արտահայտվում են գերազանցապես բառերի հաջորդականությամբ, պետք է կարծել, որ գրաբարում ենթական ստորոգյալի նկատմամբ կայուն դիրք չունի:

2.4.08. Գրինբերգի կողմից առաջարկվել է լեզուների տիպաբանական դասակարգման մի մեթոդ ևս, որը կրում է «բառերի հիմնական կարգի (հաջորդականության) տիպաբանություն» անվանումը: Գրինբերգի այս մեթոդը խարսխվում է երեք հատկանիշի վրա: Առաջին հատկանիշը բացահայտում է բառերի հիմնական կարգը: Ենթական նշանակելով S տառով (subjectum), բայը՝ V (Verbum), իսկ խնդիրը՝ O (Objectum), Գրինբերգը 30 լեզուների ուսումնասիրությունից ստացված արդյունքների հիման վրա եզրակացնում է, որ օգտագործվում են բառերի դասավորության հիմնականում երեք ձև՝ I VSO, II SVO, III SOV):

Այստեղ, իհարկե, խոսքը հիմնական ձևերի մասին է, այլապես այնպիսի մի չկիրառվող ձև, ինչպիսին է OVS, կարելի է գտնել հենց նույն լեզուներում, այդ թվում նաև հայերենում և ռուսերենում: Երկրորդ հատկանիշը բացահայտում է սպասարկու բառերի հաջորդականությանը, այսինքն՝ ինչպիսի դիրք են գրավում վերջիններս: Այն դեպքում, երբ դրվում են իշխող բառից առաջ, գործ ունենք նախդիրների հետ՝ Pr (preposition), իսկ այն դեպքում, երբ դրվում են իշխող բառից հետո, ետադրություններ են՝ Po (postposition):

Երրորդ հատկանիշով բացահայտվում է ածականների դիրքը: Գոյականից առաջ դրվող ածականը Գրիներգը նշանակում է A տառով, իսկ հետո դրվողը՝ N:

Առաջին հատկանիշով լեզուների դասակարգման երեք տարբեր խմբերի հնարավորություն է ստեղծվում, իսկ վերջին երկու հատկանիշով՝ լրացուցիչ երկուական խմբերի ևս: Գրիներգի դասակարգման աղյուսակը ստանում է 12 վանդակ (3.2.2): Պետք է նշել, որ հնարավոր ոչ բոլոր ձևերն են իրացվում, այսպես՝ VSO գլխավոր հաջորդականության Po-A, Po-N վանդակները դատարկ են, որովհետև համապատասխան շարադասություն ունեցող ոչ մի լեզու Գրիներգը չգիտե (տ՛ես Ю. Степанов, Основы языкознание М., 1966, էջ 214):

Գրիներգյան դասակարգման սխեման ունի հետևյալ տեսքը՝

	I	II	III
	VSO	SVO	SOV
Po-A	0	1	6
Po-N	0	2	5
Pr-A	0	4	0
Pr-N	6	6	0

Ինչպես տեսնում ենք, իր մեթոդի հիմքում Գրինբերգը դրել է որոշակի շարահյուսական հատկանիշներ: Դասական գրաբարի դիրքը տրված սխեմայի մեջ որոշելու համար նախ պետք է պարզել բառերի գլխավոր շարադասությունը: Ընդունված է (թե՛ գրաբարի և թե՛ աշխարհաբարի համար), որ ենթական դրվում է ստորոգյալից առաջ, այսինքն՝ SV և ոչ թե VS: Ենթակայից և ստորոգյալից հետո (հնարավոր է նաև ենթակայի և ստորոգյալի միջև) դրվում են նախադասության այլ անդամներ: Որպես հիմնական կիրառության կարելի է տալ դասական գրաբարի շարահյուսական համակարգը բնութագրող այն գիծը, համաձայն որի՝ որոշիչները, հատկացուցիչները, ինչպես նաև կապի խնդիրները ունեն ետադաս գործածություն: Շարահյուսական մակարդակում գրաբարի նախդիրներն ունեն զգալի կշիռ: Նրանց խաղացած նշանակալից դերի մասին է խոսում այն հանգամանքը, որ նախդիրների միջոցով արտահայտվում են ինչպես խնդրային, այնպես էլ պարագայական զանազան հարաբերություններ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի դիրք է գրավում դասական գրաբարը նշված հատկանիշների հաշվառումով, ինչ ընդհանրություններ և յուրահատկություններ ունի այլ լեզուների, ինչպես նաև իր պատմական զարգացման արդյունքն հանդիսացող արդի հայերենի համեմատությամբ:

Ստորև տրվում է Գրինբերգի առաջարկած տիպաբանական դասակարգման ընդհանուր աղյուսակը (բերվում է կրճատումներով. ամբողջությամբ տես Ю. Степанов, նշված աշխ., էջ 140-141), համապատասխան վանդակների մեջ մտցնելով նաև դասական գրաբարը և արդի հայերենը:

	ISVO	II SOV	III VSO
Po-A		էստոներեն չինարեն	հինդի, բենգալի, արդի հայերեն տիբեթական լեզուներ
Po-N		աֆրիկյան մի շարք լեզուներ	շումերերեն, ավստրալիական լեզուներ, դասական տիբեթերեն
Pr -A	նաուհատլը և մի քանի այլ լեզուներ	անգլերեն, գերմաներեն, ռուսերեն	ամհարերեն
Pr-N	եբրայերեն, արաբերեն, պոլինեզիա- կան լեզուներ	գրաբար ֆրանսերեն, իսպաներեն	պարսկերեն, ակկադերեն

Անհրաժեշտ է նույն հատկանիշները կիրառել նաև բարբառների ու խոսվածքների նյութի վրա: Ստացված տվյալները մեծապես կօգնեն լեզվաբանական աշխարհագրության չափորոշիչների քննության ժամանակ...

Ինչպես երևում է աղյուսակից, դասական գրաբարի շարահյուսական համակարգն իր ցուցիչներով մտնում է II SVO Pr- N խմբի մեջ, իսկ արդի հայերենը՝ 111 SOV Po-A խմբի: Գրաբարը որոշակի ընդհանրություններ ունի ֆրանսերենի, իսպաներենի, ինչպես նաև ռոմանական այլ լեզուների հետ, այն դեպքում, երբ արդի հայերենը, ըստ Գրինբերգի շարահյուսական ցուցիչների, մերձակից է հինդիին, բենգալիին:

2.4.09. Անհրաժեշտ է նշել շատ կարևոր մի հանգամանք, դասակարգման հիմք ծառայած հատկանիշների թիվը վերոհիշյալ աղյուսակի մեջ մեծացման կարիք ունի: Լրացուցիչ այլ հատկանիշների հաշվառումը դասակարգված խմբերը կարող է բաժանել նոր ենթախմբերի, որոնք նույնպես իրենց հերթին կարող են տրոհվել: Այդպիսի փորձ արել է հենց ինքը՝ Ջ. Գրինբերգը, հենվելով մի այնպիսի հատկանիշի վրա,

ինչպիսին է՝ անուղղակի խնդիրը նախորդում է (թե՞ հետևում է) ուղիղ խնդրին: Այդ հատկանիշով, օրինակ, գերմաներենը և անգլերենը կբաժանվեն երկու տարբեր ենթախմբերի:

Այսպիսով, որքան շատ էական հատկանիշներ դրվեն դասակարգման հիմքում, այնքան ավելի ամբողջական պատկերացում կստացվի դասակարգվող լեզուների կառուցվածքային տիպաբանական առանձնահատկությունների մասին: Այսպես՝ թեև դասական գրաբարը և ֆրանսերենը, ըստ Գրիներգի դասակարգման, մտնում են միևնույն խմբի մեջ, բայց դրանց շարահյուսական կառուցվածքների փոքր-ինչ ավելի խորը քննությունը պարզում է, որ հին հայերենը համեմատաբար ավելի մոտ է լատիներենին:

Շարահյուսության խնդիրները բարբառագիտական հետազոտություններում համեմատաբար քիչ են ուսումնասիրվել: Բարբառների ու խոսվածքների շարահյուսական կառուցվածքների քննությունը հարուստ նյութ կարող է տալ լեզվի (տվյալ դեպքում՝ հայերենի) տարածքային տարբերակների առանձնահատկությունները, գրական լեզվի «շարահյուսական ստանդարտ»-ից ունեցած «շեղումների» աստիճանը և հարակից մի շարք այլ խնդիրներ ճշգրտելիս: Բարբառային շարահյուսագիտության արդի վիճակը, սակայն, այնքան է անմշակ, որ Գ. Ջահուկյանը իր «Ներածություն հայ բարբառագիտության» աշխատանքում շարահյուսության ոլորտից հատկանիշներ չի առանձնացրել:

Վերջին շրջանում տարբեր լեզուների բարբառների շարահյուսական հարցերը սկսում են լուրջ ուշադրության առարկա դառնալ: Այդ առումով հասունացել է հայերենի բարբառների շարահյուսական կառուցվածքների հանգամանալից և համակողմանի քննության ժամանակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ., Ժողովրդական լեզվի շեշտադրությունը (արևելյան ճյուղի բարբառների մեջ), «Նոր դար», 1890, NN 141-145:
- Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
- Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, ԱԲ, Ե., 1964-1967:
- Աբրահամյան Ս., Դիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ, ԳԱՏ, 1955, N 7:
- Ալավերդյան Ս.Ս., Արդվինի բարբառի ձևաբանության մի քանի առանձնահատկությունները, ՊԲՀ, 1968, N3:
- Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, Կահիրե, 1941:
- Աղայան Է., Բարբառների հնագույն տարբերությունները հայերենում, ԳԱՏ, 1958, N5:
- Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954:
- Աղայան Է., Նոր հայերենի բարբառների առաջացման մասին, ՊԲՀ, 1958, N 2:
- Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958-1962:
- Աճառյան Հ., Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ (Պոլսի, Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներ), Մոսկվա-Վաղարշապատ, 1902:
- Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 1-5, 1952-1965:
- Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911:
- Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913:
- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1-2, 1940-1951:
- Աճառյան Հ., Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935:
- Աճառյան Հ., Քննություն Առտիալի բարբառի, 1, 1953:
- Աճառյան Հ., Քննություն Ասլանբեզի բարբառի, Վենետիկ, 1898:

Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի (ձեռագիր):
 Աճառյան Հ., Քննություն Մարաղայի բարբառի, Ե., 1926:
 Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947:
 Աճառյան Հ., Քննության Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ,
 1901:
 Աճառյան Հ., Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Ե.,
 1925:
 Աճառյան Հ., Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1940:
 Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941:
 Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:
 Ամատունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
 Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ
 արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
 Անդրեասյան Տ., Սվեդիայի բարբառը, Ե., 1967:
 Անթոսյան Ս., Կեսարիայի բարբառը, Ե., 1962:
 Առաքելյան Վ.Դ., Հայ գրական լեզվի և բարբառների փոխհարա-
 բերության հարցի շուրջը, ՊԲՀ, 1964, N3:
 Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Ե., 1968:
 Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962:
 Ավետիսյան Հ., Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում,
 թեկնածուական ավարտաճառ, Ե., 1969:
 Բաղդասարյան Ս.Հ., Արարատյան բարբառի բաղաձայնական
 համակարգի մասին, ՀՀԳ, 1967, N4:
 Բաղդասարյան Ս.Հ., Խլաթի, Բաղեշ-Բիթլիսի, Ալաշկերտի, Մա-
 նազկերտի, Բուլանխի, Խնուսի, Արճեշի, Արծկեի խոսվածքները
 (ձեռագիր):
 Բաղդասարյան Ս.Հ., Մշո բարբառը, Ե., 1958:
 Բաղրամյան Ռ., Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., 1960:
 Բաղրամյան Ռ., Կոզենի բարբառը, Ե., 1961:
 Բաղրամյան Ռ., Ջայնավորների ներդաշնակության օրենքը
 բարբառներում, ԳԱՏ, 1964, N12:
 Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Ե., 1964:

Բաղրամյան Ռ., Քննություն Գարդման-Փառիսոսի միջբարբառի, ինքնառեֆերատ, Ե., 1948:

Գաբիկյան Կ., Բառգիրք սեփաստահայ գավառալեզվի, Երուսաղեմ, 1952:

Գաբրիելյան Մ., Ակնա գաւառաբարբառը և արդի հայերեն լեզուն, Վիեննա, 1912:

Գազանճեան Հ., Եվդոկիո հայոց գավառաբարբառը, Վիեննա, 1899:

Գալանտեր Մ., Ակնա բարբերն ու գավառաբարբառը, Հալեպ, 1948:

Գասպարյան Գ., Բառարան Խաչատուր Աբովյանի երկերի (բարբառային և օտար բառեր), Ե., 1947:

Գասպարյան Հ., Հաջընի բարբառը, Ե., 1966:

Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

Դանիելյան Թ., Մալաթիայի բարբառը, Ե., 1967:

Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

Դավիթ-բեկ Մ.Ա., Արաբկիրի գավառաբարբառը, ձայնաբանական և քերականական ուսումնասիրություն. Վիեննա, 1919:

Թևոսյան Ա., Բառարան Հայաստանի Աղվանաց աշխարհամասի վերջին մնացորդ Քանդակ գյուղի բարբառի (ձեռագիր):

Թումանյան Կ., Մարզվանի գավառաբարբառը, Վիեննա, 1930:

Խաչատրյան Հ.Ս., Քանաքեռի ենթաբարբառի հնչյունական առանձնահատկությունները, ՊԲՀ, 1969, N 1:

Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Ե., 1979:

Ղազարյան Բ., Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Ե., 1982:

Ղազարյան Ս., Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, N 3:

Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1954:

Ղազարյան Ս., Միջին հայերեն, I, Ե., 1960:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

Ղարիբյան Ա., Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ 1858, N 3:

Ղարիբյան Ա., Հայ բարբառների դասակարգման խնդիրը, ԵՊՀ ԳԱ, 11, 1939:

Ղարիբյան Ա.Ս., Հայերենի բարբառների մի նոր ճյուղ, ԵՊՀ ԳԱ, 11, 1939:

Ղարիբյան Ա., Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե., 1958:

Ղարիբյան Ա., Նյութեր հայ բարբառագիտությունից, Ե., 1945:

Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961:

Մաքսապետյան Ա., Ֆարսի և արաբ լեզուները վանեցվոց բարբառի մեջ, Թեհրան, 1943:

Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1953:

Մկրտչյան Ն., Բուրդուրի բարբառը, Ե., 1971:

Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967:

Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Ե., 1960:

Մուրադյան Ս., Շատախի բարբառը, Ե., 1962:

Շահյանց Մ., Մեղրու բարբառը (ձեռագիր):

Շվոտ Մ.Տ., Բալուի գավառաբարբառեն, ՀԱ, 1902:

Պեղերսըն Հ., Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907:

Պեղերսըն Հ., Հայերենի դիրքը, ՀԱ, 1909:

Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:

Պողոսյան Ա., Հաղբուրթի բարբառը, Ե., 1965:

Ջալաշյան Գ., Նոր-Նախիջևանի բարբառը (ձեռագիր):

Ջալաշյան Գ., Նոր-Նախիջևանի բարբառի բառարան (ձեռագիր):

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, N 2-3:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

Ռիվոլա Ֆ., Բառագիրք հայոց, Միլան, 1621.2-րդ հրատ., Փարիզ, 1633:

Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:

Սարգսյան Ա., Արևմտահայերենի հնչաբանություն, Տեքստ, բառ., նախադասություն, Ե., 1986:

Սարգսյան Ա., Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, «Հայոց լեզվի կառուցվածքը» ժողովածու, Ե., 1975 թ.:
Սարգսյան Ա., Լեզվաբանական տիպաբանություն, ՀՍՀ, հ. 12, Ե., 1976:

Սարգսյան Ա., Հանրալեզվաբանության դասընթաց, Ե., 2002 թ.:

Սարգսյան Ա., Թադևոսյան Ե., Հայոց լեզվի տիպաբանությունը XVII դ. մշակույթում, Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, Երևան, 15-19 սեպտ. 1986, զեկուցումների դրույթներ:

Սարգսյան Ս., Ազուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), լեզվաբանական հետազոտություն, Մոսկվա, 1883:

Սիմոնյան Ն., Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1979:

Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948:

Սևակ Գ., Հայոց բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1959, N 1:

Վարդանյան Ա., Նախիջևանի բարբառային քարտեզը, Հանդես ամսօրյա, Վիեննա, 2000:

Վարժապետյան Ն., Սյունյաց բարբառը, Ե., 1962 (դիսերտացիա, ձեռագիր):

Վեմյան Խ., Արևմտահայ բարբառների դասակարգման մասին, ԳՍՏ, 1953, N10:

Տարոնյան Է., Բաղեշի Խուլթիկ գյուղի բարբառը, Անթիլիաս, 1961:

Տեր-Սանվելյան Ս., Արարատյան բարբառի ժողովրդական բառերի ցանկ բառափնջիկ, Վաղարշապատ, 1911:

Տեր-Պողոսյան Գ., Հավարիկի բարբառը, ԲՀԳ, 1921-1922:

Տեր-Վարդանյան Գ., Երզնկա-Կամախի գավառաբարբառը և ազգագրական հուշեր, Երուսաղեմ, 1968:

Փաշայան Ա.Ա., Սվեդիայի բարբառը (ձեռագիր):

Փաշայան Ա.Ա., Սվեդիայի բարբառի ձևաբանությունը, ԳՍՏ, 1964, N 9:

Փաշայան Ա.Ա., Սվեդիայի բարբառի մասին, ՊԲՀ, 1963, N 4:

Փորքչեյան Խ.Ա., Նոր-Նախիջևանի բարբառը (ձեռագիր):

Քոչոյան Ա., Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Ե., 1963:

Քոչոյան Ա., Թբիլիսիի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Սունդուկյանի ստեղծագործություններում, դիսերտացիա, 1958 (ձեռագիր):

Абаев В. И. Скифо-европейские изоглоссы (**на** стыке Востока и Запада), М., 1965.

Агаев А. Г. Говор **Джалилабадского** района азербайджанского **языка**. Автореф. канд. дне. Баку, 1975.

Агаян Э.Б. **О генезисе** армянского консонантизма, ВЯ, 1960, N4.

Адонц Н. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Адонц Н. Армения в эпоху Юстиниана, СПб, 1908.

Аналитические конструкции в языках различных типов, М., 1966.

Антосян С.М. Кесарийский диалект (фонетика, морфология, словарь) (автореферат дисс.), Ереван, 1958.

Асланов А. М. Взаимоотношения азербайджанского и цахурского языков (на материале закатальско-кахских говоров). Автореф. канд. дис. Баку, 1965.

Асланов А. М. Иберийско-кавказский субстрат в закатальских говорах азербайджанского языка. — В кн.: Вопросы диалектологии тюркских языков. Баку, 1966.

Асмангулян А А Против гипотезы о "двуприродности" армянского языка, В Я, 1953, N6.

- Багдасарян С. А. Мушский диалект армянского языка (автореферат дисс.), Ереван, 1953.
- Баскаков Н.А. Об особенностях говора северо-кавказских туркменов (трухменов). — В кн.: Языки Северного Кавказа и Дагестана. М. —Л., 1949.
- Баскаков НА. Диалект черневых татар (Туба-кижи). М., 1965.
- Баскаков НА. О периодизации истории литературного языка "тюрки".
- Бенвенист Э. Проблема армянского консонантизма, ВЯ, 1961, N3.
- Бехбудов С.М. Зангеланский говор азербайджанского языка. Автореф. канд. дис. Баку, 1966.
- Боровков АК. Вопросы классификации узбекских говоров. — Изв. АН Узб. ССР, 1953, N5.
- Бородина М.А. Проблемы лингвистической географии (на материале диалектов французского языка), Москва, 1966.
- Бородина М.А. Волох М.Г., Сухачев НА. Микро- и макрoатласы Романии (К вопросу интерпретации лингвистической карты).
- Бурова Е.Г. Из опыта картографирования на основании количественных характеристик материала. / Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.
- Бэнэцьяну В. Некоторые вопросы этногенеза армян, ИФЖ, 1961, N2.
- Велиев А.Г. Переходные говоры азербайджанского языка. Автореф. канд. дис. Баку, 1975.
- Велиев З.М. Азербайджанские говоры Басаргечарского района Армянской ССР. Ереван, 1955.
- Вопросы диалектологии тюркских языков. Баку, 1966.
- Вопросы теории лингвистической географии, Москва, 1962.
- Вопросник общеславянского лингвистического атласа, М., 1965.
- Восточнославянские изоглоссы, Вып. 1-2. М., 1995-1998.
- Гаджиева Н.З. Проблемы тюркской ареальной лингвистики. М., 1975.

- Гаджиева Н.З. Тюркоязычные ареалы Кавказа. М., 1979.
- Гаджиев Т.И. К проблеме периодизации истории азербайджанского литературного языка.
- Гамзаев Т.Б. Ордубадский диалект. Автореф. канд. дис. Баку, 1960.
- Гарибян АС. Об армянском консонантизме, В Я, 1959, N5.
- Гарибян АС. Новая группа диалектов армянского языка, ВЯ, 1958, N6.
- Гарибян АС. Научные достижения армянской диалектологии, ИЖФ, 1961, N1.
- Гарибян АС. Еще раз об армянском консонантизме, ВЯ, 1962, N2.
- Генетическое родство и структурные различия между языковыми системами. Тезисы докладов. М., 1967.
- Георгиев В. Вопросы родства средиземноморских языков, ВЯ, 1954, N4.
- Глейе А.О месте армянского языка среди арио-европейских языков, СМОМПК, XXXI, 1902.
- Горнунг Б.В. О так называемых "азианических" языках, ИАН Арм. ССР, 1954, N6.
- Городецкий Б.Ю. Проблемы и методы современной лексикографии, НА, т. 4, М., 1965.
- Гукасян В. А. Взаимоотношение азербайджанского и удинского языков. Автореф. канд. дис. Баку, 1973.
- Даниелян Т.С. Малатийский диалект армянского языка (автореферат канд. дис.), Ереван, 1964.
- Десницкая АВ. Вопросы изучения древних языков, ВЯ, 1952, N4.
- Десницкая А.В. Вопросы изучения родства индоевропейски языков, М.— Л., 1955.
- Джаукян Г.Б. К вопросу о происхождении консонантизм армянских диалектов, ВЯ, 1960, N6.
- Джаукян Г.Б. Принципы периодизации истории языка (На материале армянского языка)./ Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.

- Жирмунский В.М. Немецкая диалектология, Москва, 1966.
- Жирмунский В.М. О некоторых вопросах лингвистической географии, -ВЯ, N4.
- Заброцкий Л. Замечания о развитии армянского консонантизма, ВЯ, 1961, N5.
- Иванов В.В. Общеиндоевропейская, праславянская и анатолийская языковые системы, М., 1965.
- Иванов В.В. Общеславянский лингвистический атлас (1958-1993). Итоги и перспективы "В кн. Общеславянский лингвистический атлас. Материалы и исследования. 1991-1993. М., 1986.
- Исламов М. И. О некоторых итогах изучения Азербайджанских диалектов методом лингвистической географии. / Совещание по вопросам диалектологии и истории языка (Лингвогеография на современном этапе и проблемы межуровневого взаимодействия в истории языка). М. 1984.
- Капанцян Г.А, Аштаракский говор (рукопись).
- Капанцян Г .А. К происхождению армянского языка, Ереван, 1946.
- Кацнельсон С.Д. Типология языка и речевое мышление. Л., 1972.
- Корелов ИА Язык триалетских урумов и его специфические особенности. Автореф. канд. дис. Баку, 1970.
- Кусикян И.К. Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1969.
- Леман У.Ф. Об армянской системе смычных и ее отношении с протоиндоевропейской системой, ВЯ, 1961, N4.
- Лингвистические атласы. Аннотированный библиографический указатель. Л., 1984.
- Лингвистическая география/Лингвистический энциклопедический словарь. М. 1990.
- Лингвогеография, диалектология и история языка, Кишинев, 1973.
- Лич Дж.Н. К теории и практике семантического эксперимента. Перевод с английского И.М.Кобозевой, НА, т. 4, М., 1965.

- Макаев Э.А. Передвижение согласных в армянском языке, ВЯ, 1961, №6.
- Макаев Э.А. Проблемы индоевропейской ареальной лингвистики, М.-А, 1964.
- Мейе А. Введение в сравнительное изучение индоевропейских языков, М. — Л., 1938.
- Ментруп В. К проблеме лексикографического описания общенародного языка и профессиональных языков. Перевод с немецкого Т.Б.Крючковой, НА, т. 4, М., 1965.
- Мкртчян А.М. Каринский диалект (автореферат канд. дис.), Ереван, 1951.
- Мкртчян Н.А. Бурдурский диалект (автореферат канд. дис.), Ереван, 1966.
- Мсерианц Л. Этюды по армянской диалектологии. МЛ Сравнительная фонетика и морфология мушского диалекта в связи с морфологией габара и среднеармянского, СПб, ч. III, 1897-1901.
- Мурадян О.Д. Карчеванский диалект (автореферат дисс.), Ереван, 1958.
- Немецкая диалектография, Москва, 1955.
- Новое в лингвистике, I-V, М., 1960-1970.
- Николс Дж. Языковое разнообразие во времени и пространстве. 1992.
- Орешников А.С. К вопросу о биографии информанта./ Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.
- Отрембский Я.Н. По поводу армянского консонантизма, ВЯ, 1961, №3.
- Павел В.К. Этимология и статистика в лингвогеографии (Из опыта интерпретации карт Молдавского лингвистического атласа). / Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.
- Патканов К. Исследование о диалектах армянского языка, СПб, 1869.
- Патканов К. Исследование о составе армянского языка, СПб, 1864.

- Патканов К. Материалы для изучения армянских наречий, вып. 1. Говор Нахичеванский, Вып. II. Мушский диалект. СПб, 1875.
- Пизани В. Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, 1961, N4.
- Покровская Л.А. Лингвистические критерии периодизации истории гагаузского языка.
- Порциг В. Членение индоевропейской языковой области, М., 1964.
- Проблемы сравнительной грамматики индоевропейских языков. Тезисы докладов, М., 1964.
- Пшеничнова Н.Н. О картах диалектологического атласа русского языка (Сводный атлас), составленных на основе статистического анализа материала. / Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.
- Расторгуева В.С. Диалектные данные при изучении процессов развития языка (На материалах иранских языков). / Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973
- Русская диалектология, М., 1965.
- Садыхов С.Б. Экспериментальное исследование согласных современного азербайджанского литературного языка. Автореф. канд. дис. Баку, 1963.
- Садыхов Б.П. О некоторых кыпчакских элементах в айрумском говоре азербайджанского языка. — В кн.: Вопросы диалектологии тюркских языков. Баку, 1966.
- Саргсян А.Е. Типологическая характеристика армянского языка. Е., 1975. (на арм.яз.)
- Саргсян А.Е. Западноармянский и восточноармянский литературные языки. Е., 1985. (на арм.яз.)
- Саргсян А.Е. Социоллингвистика. Е., 2002. (на арм.яз.)
- Севортян Э.В. Аффиксы именного словообразования в азербайджанском языке. М., 1966.
- Серебрянников Б.А. Теория волн И. Шмидта и явления языковой аттракции. В Я, 1957, N4.

Собинникова В.И. Соотношение собственно языковых закономерностей развития и изменений языка, связанных с историей этнических коллективов.

Структурно-типологическое описание современных германских языков. М., 1966.

Теоретические проблемы социальной лингвистики, М., 1981.

Томсон А.И. Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890.

Томсон А.И. К фонетике говора польских (галицких) армян.

Одесса, 1899. Тройский И.М. Общеиндоевропейское языковое

состояние, М., 1967. Трубецкой Н.С. Основы фонологии. М., 1960.

Трубецкой Н.С. Фонология и лингвистическая география, Изб. трубу, М., 1987.

Туманян Э. Армянский язык, "Советское языкознание за 50 лет", Москва, 1967.

Удлер Р.Я. Опыт группировки молдавских говоров на основе данных Молдавского лингвистического атласа (АЛМ) /

Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.

Фейди Ф. Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, N5.

Фогт Х.Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, N3.

Хабургаев Г.А. "Изогlossная стратиграфия" — основа локализации и хронологизации языковых изменений/ Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.

Шапиро А.Б. Очерки по синтаксису русских народных говоров.

Ширалиев М. Ш. Труды по азербайджанской диалектологии. Баку, 1962.

Ширалиев М.Ш. Интерпретация некоторых изогloss диалектологического атласа восточной группы диалектов и говоров азербайджанского языка. — В кн.: Вопросы диалектологии тюркских языков. Фрунзе, 1968.

Широкова А.В. Периодизация балкано-романских диалектов (На материале вокализма румынского и далматинского языков) / Лингвогеография, диалектология и история языка. Кишинев. 1973.

Эдельман Д.И. Основные вопросы лингвистической географии, М., 1968.

Adjarian H., Classification des dialectes arméniens, Paris, 1909.

Adjarian H., Etudes de dialectologie arménienne. Examen du dialecte de Karabagh. Note bibliographique par A.Meillet. JA, 1902.

Adjarian H., Lautlehre des Van-Dialekts, Marburg, ZAPH, 1901.

Allen W.S., Notes on Phonetics of an Eastern Armenian Speaker, TPS, 1950.

Ancient Indo-European Dialects. Edited by H.Bimbaum and J.Puhvel. Berkley and Los Angeles, 1966.

Austerlitz R.P. Typology and Universals on a Eurasian East-West Continuum, //Wege zur Universalien ferschung. Sprachwissenschaftliche Beitzâge zum 60. Geburtstag von Hansjakob Seilet. Tübingon 1980. S 235-244.

Austin W., Is Armenian an Anatolian Language "Language", 18, 1942, 22.

Benveniste E., Sur la phonétique et syntax de l'armenian classique, BSL, LIV, 1.

Berlin B., Breedlove D. and Raven P.H., General principles of classification and nomenclature in folk biology. —In: "American Anthropologist", 1973, 75, 214-242.

Bloom L., One word at a time. Mouton, the Hague, 1973.

Bolognesi G., Ricerche sulla fonetica armena, RL, 3.

Bonfante G., Armenians and Phrygians. AQ, 1, 1946.

Bonfante G., Les isoglosses greco- armeniennes. "Melanges... H.

Bottrglioni G., Linguistic geography: achievements, methods and orientations. "Word", 1954, vol. 10, N 2-3.

Buck C., The Greek Dialects. Chicago, 1955.

- Buzon C., Dictionnaire, langue, discours, ideologie. - "Langue française", 1958,65,14-21.
- Carroll J.B., Statistical analysis of the corpus, —In: Carroll et al. 1971, XX1-XL.
- Chomsky N., Syntactic Structures. Mouton, the Hague, 1957. (ռուս. թարգմ.: Хомский Н. Синтаксические структуры. — "Новое в лингвистике", вып. 11, Изд-во иностр. лит-ры, М.6 1962., 412-527).
- "Computers and old English concordances". Cameron A. et al. (eds.9 Toronto, Buffalo, 1970.
- Dahlgren Kathleen. The nature of linguistic stereotypes. In: "Papers from the Parasession on the Lexicon". Chicago Linguistic Society. Chicago, 1978, 58-70.
- De Vos L., Caramazza A., The development of natural language concepts: the interaction of form and function of objects. Unpublished manuscript. Johns Hopkins University, 1975.
- Dubois J., Dubois C., Introduction à la lexicographie: Le dictionnaire. Paris, 1971.
- Fillmore Ch.J., Types of lexical information. —In: "Studies in syntax and semantics". Kiefer F. (ed.), Dordrecht, 1969, 109-137. Перепечатано в кн.: "Semantics". Steinberg D.D. & Jakobovits L.A. (eds.), Cambridge, 370-392.
- Garibian A., De la morphologie du verbe dans les dialectes, SAO, 1962, IY.
- Girbied J. Ch., Grammaire de la langue arménienne, Paris, 1823.
- Gleason HA, The relation of lexicon and grammar. —In: "Problems in Lexicography". Householder F.W., Saporta S. (eds.). Bloomington, 1962, 85-102.
- Greenbaum S., Quirk R., Elicitation experiments in English. Linguistic studies in use and attitude. Longman, London, 1970.
- Greenberg J.H., Essays in Linguistics. Chicago, London, 1957.
- Greimas A.J., Sémantique structurale. Recherche de methode. Paris, 1966.

- Harp E.P., Notes on Eastern Armenian Phonemics, AO.
- Harris Z., *Mathematical Structures of Language*. John Wiley, New York, 1968.
- Heath J., A case of intensive lexical diffusion. —In: “Language”, 57, 2, 1981, 335-367.
- Hockney D. et al. (eds.) *Contemporary research in philosophical logic and linguistic semantics*. Reidel Publishing Co., Dordrecht, 1975.
- Hübschmann H., *Armenische Grammatik*. ML Leipzig, 1895-1904.
- Jackendoff R., Morphological and semantic regularities in the lexicon. -In: “Language”, 51,3, 1975, 639-671.
- Jasmine Dum-Tragut, *Dialectsyntax on the Importance of syntactic Criteria in a Multi-Feature Classification of Armenian Dialects*. - In: *Handes Amsorya, Zeitschrift für Armenische Philologie*, Wien, 2000, # 1-12, p. 69-87.
- Jensen P., *Hittiter und Armeniër*. Strassburg, 1898.
- Josselson H.H., *Lexicography and the Computer*. -In: “To Honour Roman Jakobson”, vol. 2, The Hague, Paris, 1967, 1046-1059.
- Kurath Hans. *Handbook of the Linguistic Geography of New England*. With Marcus L. Hansen, Bernard Bloch and Julia Bloch. (Providence: Brown University Press, 1939).
- Kurath Hans. *Studies in Area Linguistics*. (Bloomington, IN: Indiana University Press, 1972).
- Kurath Hans. *The Pronunciation of English in the Atlantic States*. With Raven I.
- Kurath Hans. *The Dialectal Structure of Southern England: Phonological Evidence*. With Guy S. Lowman, Jr. (Tuscaloosa, A L: University of Alabama Press, 1970).
- Leech G.N., Some assumptions in the metatheory of linguistics. -In: “Linguistics”. 1968, 39, 87-102.
- Lehrer A., *Semantic Fields and Lexical Structures*, 1974.
- Liden E., *Armeniaca*. Goteborg, 1933.

- Lodwing R., Barret E., Words, words, words. Vocabularies and dictionaries. 2nd ed. New Jersey, 1973.
- Malkiel YA., Typological Classification of Dictionaries on the Basis of Distinctive Features. -In: "Problems in Lexicography". Householder F.W., Saporta S. (eds.). Bloomington, 1962, 3.24.
- Mann S.E., Armenian and Indo-European (Historical Phonology). London, 1963. Markwardt A.H., Lexicographical Method and the Usage Survey. -In: "Lexicography and Dialect Geography". Festgabe for Hans Kurath. Scholier H., Reidy J. (eds.). Wiesbaden, 1973, 134-146.
- Maxudiantz M., Le parler ane men d`Akn, Paris, 1912.
- Meillet A., Anaiyse critique des etudes de dialectologie arménienne de H.Adjarian, JA, 1902.
- Meillet A., Esquisse d`une grammaire comparée de l`armenien classique, 2me ed., Vienne, 1936.
- Meillet A., Les dialectes indoeuropeens. Paris, 1909 (2-e e d. 1929).
- Meillet A., Position dialectale de l`armenien. MSL, 9.
- Milewski T. Comparasion de systèmes phonologiques des langues caucasiennes et americanes. "Lingua Poznaniensis", N 5, 1955.
- Mseriantz L., Armenian Dialectology. Abridged Translation from the Russian by L.H.Gray. PAPA. 1901, V, n. 32.
- Mseriantz L., Notice sur la fhone tique du dialecte arménien de Mouch, "Actes du IX Congres des Orientalistes", 299-316.
- Patkanoff K. Uber den armenischen Dialekt von Agulis. MBAW, 1869.
- Pisani V., Armenische Studiën. KZ, 68, 1944.
- Pisani V., La palatalizzazione armena. ASGM, 1, F, 1948 (RL, 1, 1959).
- Pisowicz A., Esquisse d`une grammaire du parler arménien de Pharpi, FO, XII, 1940.
- Pisowicz A., Phonétique du parler arménien du village Pharpi, FO, X, 1960.

Pottier B., La definition sémantique dans les dictionnaires. -In: "Travaux de linguistique et de littérature", III, 1, 1965, 33-39. (գերմ. թարգման.: Pottier B., Die Semantische Definition in den -In: "Strukturelle Bedeu- tungslhre". Geckeler H. (Hrsg.) Darmstadt, 1978, 403-433).

Rey A., Langage et temporalités. -"Languges", 1973, 32.

Rivola F., Dictionarium armeno-latinum, Lutetiae Parisorum, 1633.

Scholler, Harold and John Reidy. Lexicography and Linguistic Geography: Beihefte 9. (Wiesbaden: F. Steiner, 1973).

Schröder J.J., Thesaurus linguae armenicae, Amstelodami, 1711.

Solta G.R., Die armenische Sprache, "Amnenisgh und kaukasische Sprachen", Lei- den-KÖln, 1963.

Swanson D.C., Recomendations on the selection of entries for a bilingual dictionary. —In: "Problems in Lexicography". Householder F.W., Saporta S. (eds.). Bloomington, 1962, 63-78.

Van Windekens A.J., Lexique étymologique des dialectes tokhariens. Louvain, 1941.

Van Windekens A.J., L'origine d'armenien hariwer "cent". RELE, 4, 1947.

Vogt H., Les occlusives de l'arménien. NTS, 18, 1958.

Weinreich U., On the semantic structure of language. -In: Greenberg J.H., (ed.) "Universals of language", MIT Press, Cambridge, Mass., 1963, 114-171 (թարգմ. րու: Вейнрех У. О семантической структуре языка. — "Новое в лингвистике", вып. V, "Прогресс", М., 1970, 163-249.

Winter W., Problems of Armenian Phonology. "Language", 30, 2, 1954; 31, 4, 1955; 38,3,1962.

Winter W., Armenian Evidence for Proto-Indo-European Laryngeals, Texas, 1960.

Winter W., Traces of Eally Dialectal Divisity in Old Armenian, "Ancient Indo- European Dialects", Los Angeles. 1963.

Zampolli A., Congrès International de Lexicographie Anglaise, New York, 5-7 juin 1972. -In: "Cahiers de lexicologie", 22, 1973, 113-126.

ՁԱՅՆԻ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՄ

Մեր օրերում միջառարկայական կապերն աննախընթաց զարգացում են ապրում:

Միջառարկայական կապերի բուռն զարգացման օրինակ կարող է ծառայել կազմախոսության, հնչույթաբանության, հոգեբանության, էլեկտրոնիկայի և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների փոխլրացված, փոխկապակցված զարգացումը:

Լեզվաբան-խոսքագետները մասնակցում են, օրինակ, այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք սերտորեն առնչվում են ռազմագիտության, ազգային անվտանգության ոլորտի խնդիրների հետ (ռազմական խոսքաշարի կողավորում և ապակողավորում, ծածկագրային նոր համակարգերի մշակում և այլն): Խոսքի ինքնաշխատ ճանաչման խնդիրը, «տեքստ-խոսք-տեքստ» համակարգերի մշակումը (որին վերջին ժամանակներս մեծ ուշադրություն են դարձվում ՆԱՏՕ-ի բեյզիական կենտրոնում) վկայում են այն մասին, որ լեզվաբանական գիտելիքները, համակցված նոր տեխնոլոգիաներով, վաղուց դուրս են եկել նեղ լեզվաուսուցողական ոլորտից և ձեռք են բերել ժողովրդատնտեսական, ռազմաարդյունաբերական հսկայական նշանակություն: Այժմ մասնագիտորեն մշակվում է «արհեստական բանականություն» հիմնահարցը:

Հայոց լեզվի համար տակավին անցյալ դարի 80-90-ական թվականներին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության աշխատանոցում և ճարտարագիտական համալսարանում հաջողությամբ քննվել են խոսքի ձայնաբանական և հնչույթաբանական թվային արժեքները, հնչերանգային տիպերը, ադմուկի և կապակցված խոսքի վրա խանգարումների ազդեցության աստիճանը և այլն: Այդ հարցերի գերակշիռ մասը, գտնելով դրական լուծում, կարող է (և պետք է) ներառվի ուսումնական ոլորտ՝ նպաստելով մայրենի լեզվի և օտար լեզուների հնչյունական և հնչույթային կառուցվածքների յուրաց-

մանը, տարբեր լեզուների տիպաբանական ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտմանը և այլն:

Ահա թե ինչու օրավուր աճում է կիրառական լեզվաբանության դերը, քանի որ այդ բնագավառը զբաղվում է համակարգչային այնպիսի համակարգերի մշակմամբ, որոնք խարսխվում են բնական լեզվի տվյալների վրա, նպաստելով ցանկացած բնագրի և խոսքի (գրավոր թե բանավոր) կադապարավորմանը, իրագեկում որոնող համակարգերի կատարելագործմանը՝ ինքնաշխատ թարգմանիչ համակարգերի, բառարանային շտեմարան-համակարգերի ծրագրմանը և կենսագործմանը:

Խոսքի ճանաչողական խնդիրները մեծ կարևորություն են ստանում ոչ միայն ռազմական, այլև քրեաիրավական ոլորտների համար: Կիրառական նմանատիպ խնդիրների մշակման արդյունքում լեզվական համակարգը ստանում է իր տեսակի մեջ ավելի ճշգրիտ, ավելի ամբողջական և հստակ մեկնաբանություններ, և այդպիսով ավելի բարձր գիտական մակարդակի վրա է դրվում հնչյունական և հնչությային կառուցվածքի լեզվաբանական քննությունը: Այդպիսով մի կողմից լեզվաբանությունը հիմք է հանդիսանում կիրառական բազմաթիվ ոլորտների զարգացմանը, մյուս կողմից՝ այդ նույն ոլորտների զարգացման շնորհիվ՝ խոսքի լեզվաբանական քննությունն իր հերթին որակական նոր աստիճանի է բարձրանում: Այսպես, Յակոբսոն-Ֆանտ-Հալլեի մեթոդը, օրինակ, արդյունք է հնչությային էտալոնների դինամիկ փոխակերպման:

Բանավոր խոսքի ավտոմատ ճանաչողական համակարգի մշակման ժամանակ դրական արդյունք է տվել մարկովյան շղթաների տեսության կիրառումը: «Այս մոդելը, գրել է Մոսկվայի լեզվաբանության համալսարանի պրոֆեսոր Ռ.Պոտապովան, - ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները՝ 1) տարբերակիչ հատկանիշների առանձնացումն ու վերլուծությունը, 2) հնչա-

կան-հնչյունային ապակողավորումը, 3) բառային քննությունը և շարահյուսական վերլուծությունը»:

Խոսքի ճանաչման մի շարք մեթոդներ խարխսված են հիմնաբառերի վրա: Մշակված են հիմնաբառերի որոշակի ցուցակներ, որոնք կիրառվում են տեքստային հատվածների համադրությամբ: Յուրաքանչյուր բառ տվյալ մեթոդով հարաբերվում է ցուցակում առկա հնչույթային կադապարների հետ: Եթե բավական բարձր է համընկնման աստիճանը, ապա բառը «ճանաչվում է»:

Ինչպես շեշտվում է կիրառական լեզվաբանությանը նվիրված գրականության մեջ, ներկայումս հաջողությամբ կիրառվում են երկխոսական մի շարք համակարգեր՝ ինչպես օրինակ KEAL համակարգը: Այդ համակարգը ստեղծված է տեղեկատվական հարցման, տեղեկույթի մուտքի, հրամաններ ստալու կոնկրետ խնդիրներ լուծելու համար:

Համակարգը բաղկացած է հետևյալ մոդուլներից՝ հնչյունական վերլուծիչից, հնչաբառերի բացահայտիչից, ձայնական վերլուծիչից, շեշտավանկային ծրագրերի վերլուծիչ ծրագրից, հնչաուղղագրական տառադարձման/գրադարձման ծրագրից, խոսքի գեներատորից, երկխոսական ավտոմատից:

Հնչյունական վերլուծիչը նպատակ ունի որոշակի խոսքային ազդանշանից անցում կատարելու դեպի նրա հնչյունական վերաներկայացումը: Յուրաքանչյուր հնչահատվածի համապատասխանում են մի շարք կարգավորված պատասխաններ, որոնք դասավորվում են ըստ նվազող հավանականության: Այդպիսի պատասխանների «փնջերը» կոչվում են շարույթի հնչյունային սպեկտր: Բնական է, որ հնչյունական վերլուծությունը միանգամից չէ, որ կատարվում է, այլ փուլային: Առաջին փուլում կատարվում է հնչյունական ազդանշանի կողավորումը թվային տեսքով, երկրորդ փուլում կատարվում է թվային տեսք ստացած ազդանշանի հատույթավորում և վերջապես երրորդ՝ վերջին փուլում կատարվում է հնչույթների «ինքնության ճշտում»:

Ամբողջ եռակարգի առանցքային մասն է կազմում երկխոսային ավտոմատը, որն ըստ էության երկու գլխավոր գործառույթ է իրականացնում. 1) նախ պարզում է, թե շարությունների ինչպիսի տիպեր են ավելի մեծ հավանականություն ունենում հնչելու օպերատորի կողմից և 2) երկխոսության համատեքստով պայմանավորված՝ որոշում երկխոսության «ուղղվածությունը»:

«Մարդ-ԷՀՄ» հաղորդակցման ոլորտում ներկայումս հայտնի են խոսքի ճանաչման մի շարք համակարգեր: Այսպես, օրինակ «Dragon dictate» համակարգը ձայնի օգնությամբ «ճանաչում է» դադարով անջատված խոսքային հատվածները: Մարքի օգտագործման ժամանակ րոպեում արտաբերվում է 15 բառ, փորձնականը մինչև 60 բառ: Ձայնով աշխատող սարքերի մեջ ամենահզորը, թերևս, IBM համակարգն է, որը 20000 բառմիավոր է տարբերակում: Այս սարքի առավելություններից մեկն էլ այն է որ «ճանաչում» է խոսնակի հնչարտասանական առանձնահատկությունները: Ընդ որում «հարմարեցումը» որևէ կոնկրետ խոսնակի ձայնին իրագործվում է ընդամենը 20 րոպեի ընթացքում:

Խոսքի վերլուծության ժամանակակից համակարգերը խարսխված են 3 հիմնական մոտեցումների (սկզբունքների) վրա.

1. նախապես կողավորվում է խոսքային ալիքը և ապա կատարվում է վերլուծությունը.

2. արտասանական տրակտը կադապարավորվում է և այդ կադապարը վերահսկվում է մուտքային վերլուծության արդյունքների հիման վրա.

3. կիրառվում է գծային գուշակման (կռահման) գործակցի մեթոդը և նախապես ստացված արժեքների (ցուցիչների) հիման վրա իրականացվում է ստուգումը:

Նախքան հաշվողական տեխնիկայի մուտք գործելը հայ լեզվաբանության մեջ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում համապատասխան փորձեր կատարվել են հնչյունների ֆորմանտների վերլուծությո-

յան ուղղությամբ (հմմտ. Ա. Խաչատրյանի, Վ. Հայրապետյանի, Ռ. Թոխմախյանի՝ (հայերենի բաղաձայնների), Ա. Արամյանի (հայերենի ձայնավորների) աշխատանքները):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երբ անցյալ դարի 60-ական թվականների սկզբին բուռն զարգացում ապրեց մեքենական թարգմանությունը, լեզուների ձևային նկարագրությունը, փորձառական տվյալների վիճակագրական մշակումը, ակադ. Գ.Գ. Սևակը «Գրական թերթում» հրատարակեց մի հոդված, որը նվիրված էր XIX դարում Ս. Ղազար կղզում իրականացված բանասիրական հետազոտություններից մեկի հեղինակի՝ Հ. Տերոյանի բավական ուշագրավ հետևյալ փորձին: Հարություն Տերոյանը, նպատակ ունենալով ստեղծել բոլոր լեզուների և կամ հնդեվրոպական ծանոթ լեզուների համար «միջակա» արհեստական լեզու, լեզուների բառապաշարը ենթարկել էր թվային դաստասման և յուրաքանչյուր խոսքի մասի հատկացրել որոշակի թվային համակարգման սահմաններ, ասենք գոյականները՝ 1-ից 20.000, բայերը՝ 20.000-ից 40.000 և այլն: Նույն իմաստն արտահայտող յուրաքանչյուր բառ բոլոր լեզուներում պետք է ունենա նույն կարգահամարը: Ըստ այդմ թարգմանության գործը ձևայնանում է, բավական է իմանալ բառի կարգահամարը և իսկույն հայտնի կդառնա ցանկացած լեզվում այդ բառի համարժեքը: Հ.Տերոյանը հաշվի էր առել նաև բառի թեքված ձևերի առկայությունը, հոգնակի թվի կազմությունը և այլն: Ասենք հոգնակի թիվը, ըստ Հ.Տերոյանի մշակած մեթոդի ներկայացվում է քառակուսի արմատի տեսքով, հոլովական վերջավորությունները արմատի ցուցիչներով և այլն: Այդ փորձը հենց սկզբից վկայում էր Միխայրյան միաբանի ստեղծած ոչ այնքան արդյունավետ եղանակի մասին: Այսպես, օրինակ, **տներից** ձևը ձևային թվաբանական այդ եղանակով մի խճողված թվաբանական բանաձևի տեսք ուներ: Բնական է, որ այդ մեթոդը ընդունելություն չգտավ, և այսօր պարզապես պատմական արժեք ունի, թե ինչպես ավելի քան մեկ դար առաջ հայ

բանասերի կողմից փորձ է արվել արհեստական միջակա լեզու ստեղծելու:

Անցյալ դարի 40-ական թվականներին ակադ. Գ. Սևակը նույնպես փորձ է արել վիճակագրական մեթոդների կիրառմամբ ստեղծելու մի նոր մեթոդ, որին տվել է «Լեզվի սպեկտր» անունը: Ինչպես և խոստովանում է անվանի լեզվաբանը, «լեզվական սպեկտրի» հիմքում դրվել է Նիկոլայ Մորզոզովի մշակած վիճակագրական մեթոդը, որ հանգամանորեն ներկայացվել է «Христос» ութհատորյակում: Ընտրելով հատկանիշների որոշակի փնջեր, Գ. Սևակը կարողանում է, վիճակագրական հետազոտությամբ, ճշգրտել հայ հեղինակների լեզվի դարաշրջանը՝ նախաաբովյանական, Աբովյանի շրջան, Հովհաննես Հովհաննիսյանի շրջան և այլն: Հատկանիշները վերաբերում են ինչպես բառային, այնպես էլ քերականական (ձևաբանական, շարահյուսական) մակարդակներին: Ինչ խոսք, ինքնատիպ այդ մեթոդը տակավին կարոտ է ավելի լայն քննության, մեկնաբանության և գնահատման:

Վիճակագրական մեթոդների շարքում առանձնացվում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ դասակարգման մեթոդը, որը հաջողությամբ կիրառվել է հայ բարբառների դասակարգման բնագավառում: Գ. Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ դասակարգման մեթոդը (մեթոդի նկարագրությունը տրվել է Ա. Սարգսյանի «Լեզվաբանական աշխարհագրության» մենագրության մեջ, Ե., 2003 թ.) հաջողությամբ կարելի է կիրառել ոչ միայն նույն լեզվի տարածքային-բարբառային տարբերակների նկատմամբ, այլև ցեղակից լեզուների (օրինակ՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի ճյուղերի, լեզուների նյութի նկատմամբ):

Հարկ է անդրադառնալ նաև Սվոդեշի մեթոդին, որը երիցս կիրառվել է հայերենի նյութի հիման վրա (հմմտ. Իլ. Աբուլաձեի, Գ. Ջահուկյանի և Ա. Սարգսյանի համապատասխան աշխատանքները):

Գործնականում վիճակագրական մեթոդների կիրառումը պարզունակ և մեխանիկական աշխատանք չէ: Բնական է, որ բուն վիճակագրական գիտությանը և լեզվաբանությունը պետք է «համատեղվեն» կամ, ինչպես ասում են, հարմարեցվեն: Անհրաժեշտ է, որ փորձառական նյութը ճշգրտորեն համապատասխանի տրված «լեզվական պատկերին»: Ինչ խոսք, նախ պետք է մշակվեն որոշակի չափորոշիչներ և այն գործընթացները, որոնց ենթարկվելով՝ լեզվական իրողությունները պետք է ներկայանան համապատասխան թվային արժեքներով: Առ այսօր հրապարակի վրա եղած լեզվավիճակագրական շատ աշխատանքներում պարզապես թվերի «խրախճանք» է, ինչպես ժամանակին, բնութագրել է գերմանացի լեզվաբան Կրյոբերը: Թվերը, ցուցիչները, զանազան թվային արժեքները պետք է «վերաիմաստավորվեն»՝ նպաստելով լեզվական նյութի ավելի ճշգրիտ ու հստակ մեկնաբանմանը: Մի խոսքով, լեզվավիճակագրական մեթոդները ինքնանպատակ հնարավորություններ չեն:

Վիճակագրական մեթոդներով լուծվող խնդիրներ

Առ այսօր էլեկտրոնային հաշվողական մեքենաների միջոցով վիճակագրական տվյալների մշակման ծրագրերը գերազանցապես հաշվի են առել բժշկական, տնտեսագիտական, կենսաբանական և այլ բնագավառների նյութերը, և քիչ են կիրառվել լեզվաբանության մեջ, թեև զուտ լեզվաբանական ծրագրերի մշակման անհրաժեշտությունը վաղուց է հասունացել: Այդ բնագավառում կատարված եզակի մի քանի փորձերից արժե հիշատակել ամերիկյան ծրագրավորողների աշխատանքը, որի էությունն է համակարգչային օգնությամբ պարզել Հոմերոսի «Իլիականի» հեղինակային պատկանելության հարցը՝ մեկ հեղինակի գործ է այն, թե հեղինակային խմբի, ինչը ենթադրվում էր XIX դ. կեսերին (ցիկլիկ տեսությամբ): Համակարգչային եղանակով վիճակագրական համապատասխան մեթոդների կիրառմամբ, ամերիկացի գիտնականները հանգել են այն եզրակացության, որ «Իլիականի»-ի հեղինակը մեկ անձնավորու-

թյուն է, որի լեզվական պատկերը լիովին համապատասխանում է «Ողիսական» պոեմի լեզվավիճակագրական տվյալներին:

Համակարգչային եղանակով հեղինակային պատկանելիության ճշգրտման հաջորդ արդյունավետ փորձը կապված է Մ. Շոլոխովի «Խաղաղ Դոն»-ի հետ: Համակարգչի օգնությամբ և վիճակագրական մի շարք չափորոշիչների կիրառմամբ ստացվել է այնպիսի մի արդյունք, ըստ որի աներկբայորեն «Խաղաղ Դոն» վեպի լեզվական «ֆակտուրան» իր տվյալներով նույնն է, ինչ «Մարդու ճակատագիրը» վիպակինը, իսկ վերջինս ոչ մի տարակուսանք չի առաջացնում հեղինակի պատկանելության առումով (հեղինակը Մ. Շոլոխովն է): Այսպիսով, շնորհիվ մանրակրկիտ մշակված վիճակագրական մեթոդի և համակարգչային քննության՝ հստակ պատասխաններ են տրվում գիտության մեջ տարբեր բնագավառներում առաջացած տարակուսելի հարցերին: Ակնհայտ է, որ այդպիսի խնդիրների վերջնական լուծումը կարող է իրագործվել միայն հաշվողական տեխնիկայի, վիճակագրական մեթոդների և հստակ մշակված լեզվաոճական չափորոշիչների համակցմամբ:

Նույն ձևով վիճակագրական մեթոդների, համակարգչային լեզվաբանության և ավանդական լեզվաբանության «խաչավորմամբ» հնարավոր է լուծել հայագիտության մեջ շուրջ մեկուկես դար գոյության ունեցող վիճելի մի շարք հարցեր: Օրինակ՝ ո՞ր դարի հեղինակ է Մ. Խորենացին, Քուչակի անունով մեզ հասած հայրենիների հեղինակը մե՞կ անձ է, թե դրանք ժողովրդական ստեղծագործություններ են և այլն:

Հարկ է չմոռանալ, սակայն, որ խնդիրը յուրաքանչյուր անգամ, լինելով իր տեսակի մեջ եզակի, պահանջում է առանձնահատուկ մոտեցում, տվյալ խնդրի մշակմանը «համարժեք» հատուկ ձևերի և կանոնների մշակում և այլն: Անժխտելի է վիճակագրական տվյալների դերը լեզվական կանոնը ճշգրտելու գործում: Պետք է նշել, սակայն, որ չի կարելի բացարձակացնել վիճակագրական քննությամբ ստացած արդյունքները: Վիճակա-

գրությունն անգնահատելի դեր է խաղում հատկապես այն դեպքում, երբ նկատի են առնվում զուգահեռ «գոյակցող» ձևեր, լեզվական մի շարք տարբերակներ, երբ անհրաժեշտ է պարզել դրանց տարածվածության և «բաշխման» աստիճանը և այլն: Քանակական մեթոդների կիրառմամբ հնարավոր է դառնում պարզել առկա տարբերակներից, զուգահեռ կիրառվող ձևերից յուրաքանչյուրի ընդգրկման ոլորտը: Ընդ որում այդ ամենը պարզվում է ոչ թե մոտավոր, հավանական արժեքներով, այլ ճշգրիտ, հստակ տվյալներով: Հարկ է շեշտել, որ արդի հայերենի կանոնական մակարդակի շատ երևույթներ չեն ենթարկվել նմանօրինակ վիճակագրական քննության, մինչդեռ անուրանալի է այդպիսի մեթոդների կիրառման արդյունավետությունը:

Վիճակագրական հետազոտություններով կարելի է հստակորեն պարզել արդի հայերենի կանոնական արտասանական ասպարեզում տեղի ունեցած և ընթացող տեղաշարժերը, ժամանակակից երիտասարդությանը հատկապես բնորոշ համարվող գրային արտասանության աստիճանաբար գերիշխման սահմանները: «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» աշխատության մեջ նշվում է. «Գրային արտասանության հակումը և զարգացման ընթացքը նկատի ունենալով կարելի է կանխատեսել, որ մի 40-50 տարի հետո, գուցե և ավելի շուտ, գրության և արտասանության տարբերություն ունեցող միայն մի շարք բացառություններ կմնան լեզվում»: Այսօր արդեն միանգամայն մերժելի է դիտվում, ասենք, **երիտասարդական** բառը **երիտասարթական** հնչելը և պահանջվում է հնչել գրությանը համապատասխան՝ ձայնեղ դ-ով:

60-ական թվականներին տարածում ստացած քմայնացված արտասանության երևույթը 80-ականներին որոշակի թուլացում է ապրել: Քմայնացված արտասանության թուլացման մասին է խոսում հետևյալ փաստը, վերոհիշյալ աշխատանքում իբրև քմայնացված արտասանության օրինակներ բերվող ձևերը՝ **անծիպածիս, պրեզիձենտ, արձիական, սնոծիապաշա, ծիեզերք,**

Միգրան և այլն, ներկայումս կարող են դիտվել միայն իբրև զավեշտական նմուշներ: Վիճակագրական քննությամբ (ցայժմ եղած այդպիսի փորձերը եղել են խիստ սահմանափակ շրջանակ ընդգրկող) վերջնականապես կարելի է ճշգրտել նաև բառակզբնային ը-ի ներկայիս չհնչման տարածվածության աստիճանը, ձայնեղ բաղաձայնների գրային արտասանությունը (**բ, գ, դ, ձ, ջ**) նաև **մ, ն, ր, հ** և այլ հնչյունների արտասանության ներկա փուլի առանձնահատկությունները և այլն:

Փորձառական տվյալների մշակումը լեզվաբանության մեջ

Տակավին մեկ դար առաջ ռուս լեզվաբաններ Լ.Վ.Շչերբան և Ն.Ս. Տրուբեցկոյը (հմմտ. Л.В.Щерба, О трояком аспекте языковых явлений и об эксперименте в языкознании... Языковая система и речевая деятельность, Л., 1974, Н.С.Трубецкой, Основы фонологии, М., 1960) լեզվաբանական հետազոտությունները ոչ միայն հստակորեն բաժանում էին երկու խմբի՝ ավանդական *դիտարկման* և *փորձառական*, այլև հատկապես կարևորում էին փորձառական տվյալների վիճակագրական մշակման կարևորությունը (տե՛ս Արտեմ Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, «Հայոց լեզվի կառուցվածքը» ժողովածու, Ե., 1975, էջ 75): Ինչ խոսք, ժամանակակից լեզվաբանությունը ոչ միայն ավելի ու ավելի հակվում է դեպի փորձառական, վիճակագրական հետազոտությունների ոլորտ, այլև սկսել է քննության ընթացքում ներառել համակարգչային համակարգերի ընձեռած անսահման հնարավորությունները: Սկզբնապես փորձառական մեթոդները լայն կիրառություն են ստացել հնչույթաբանական հետազոտություններում (հմմտ. Էդ. Աղայան, Գրաբարի հնչյունաբանություն, Սինխրոնիա, Ե., 1962): Այդուհանդերձ պետք է ընդունել, որ առ այսօր հրապարակի վրա չկա լեզվաբանության փորձառական մեթոդներին նվիրված մի ամբողջական դասա-

գիրք կամ ձեռնարկ: Դա հատկապես կարևորվում է մեր օրերեում, քանի որ կոնկրետ լեզուների քննության ընթացքում լեզվաբանները կարիք ունեն «ոչ միայն վերլուծության ինդուկտիվ, այլև դեդուկտիվ մեթոդների» արդյունավետ կիրառման (հմմտ. Новое в лингвистике, Մ., 1965, էջ 13): Եթե նախորդ դարերում լեզվաբանությունը գերազանցապես բնութագրվում էր լեզվական փաստերի կուտակման, շտեմարանացման և մասամբ էլ դասակարգման հատկանիշներով, ապա նորագույն փուլում գիտության մեջ մեծ տեղաշարժ է կատարվել դեպի վերլուծա-համադրական, ինչպես նաև մակաձական-արտաձական եղանակների հմտալից օգտագործման դաշտ:

Այդ առումով արժե հիշատակել լեզվաբանական մի շարք ինքնատիպ մեթոդների հեղինակների անուններ (Տ. Միլևսկի, Ջ. Գրինբերգ, Մ. Շահումյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ): Այդ մասին սեղմ շարադրանք կարելի է գտնել Հայկական մեծ հանրագիտարանում, տե՛ս Ա. Մարգսյան, Տիպաբանություն, ՀՄՀ, հ. 12):

Անցյալի լեզվաբանական բոլոր դպրոցների էական բացը, թերությունը, կամա, թե ակամա, պատճառաբանված է եղել լեզվական ահռելի ծավալի տվյալների, «անվերջանալի» լեզվական փաստերից միայն սահմանափակ թվով օրինակների դիտարկմամբ, քանի որ ասպարեգում տակավին գոյություն չունեին համակարգչային գերհզոր համակարգերը՝ լեզվական միլիոնավոր կոնկրետ օրնակների արագ, ճշգրիտ և ըստ մշակված համապատասխան ծրագրերի դիտարկման շոշափելի ձեռքբերումներ ունենալու կարողությամբ:

Թեև կիրառական լեզվաբանությունը, որպես այդպիսին, գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից սկսած, քանի որ այն զբաղվում է լեզվի (լեզուների) հետ կապված ցանկացած գործնական խնդրով (մայրենի և օտար լեզուների ուսուցումից սկսած մինչև նորագույն փուլում կարևորության ստացած՝ դեկավարման գործընթացների ավտոմատացումը՝ լեզվական

կաղապարային հրամանների տեսքով): Եթե հպանցիկ թվարկենք մեր օրերում բուռն կերպով զարգացող կիրառական լեզվաբանության ոլորտները, ապա անպայմանորեն պետք է նշենք բառապաշարի լիակատար շտեմարանների, գործնական ոճագիտության, տերմինաբանության, կիրառական ճարտասանության, տեքստաբանության, լեզվի կանոնարկման և լեզվածրագրավորման, արհեստական լեզուների տեսության և, վերջապես ամենակարևորը, լեզվա/խոսքային տեղեկույթի ավտոմատ մշակման բնագավառները: Ինչպես համոզվում ենք, դրանք ներառում են չափազանց ընդգրկուն շրջանակներ» և հարկ է նշել, որ կիրառական լեզվաբանության ոչ բոլոր խնդիրներն են շոշափված վերոբերյալ ցանկում: Վերջապես կարևոր ենք համարում շեշտել, որ «մարդ - մեքենա - մարդ» հաղորդակցական կապի մեջ այսօր ավելի քան երբևէ, հրատապ խնդիր է դարձել համակարգված և հետևողական կերպով (հաշվի առնելով գիտատեխնիկական զարգացման նորագույն փուլի հնարավորությունները) փորձառական տվյալների վիճակագրական քննությամբ զբաղվելը:

ՀՆՉԱՎԻՃԱԿԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ լեզվաբանությանը հնչույթային վիճակագրության երեք փորձ արդեն հայտնի է (Հ. Աճառյան, Է. Աղայան և Մ. Մելքումյան): Եթե Հ. Աճառյանը և Է. Աղայանը վիճակագրական քննության են ենթարկել գրաբարը (Աճառյանը՝ նաև աշխարհաբարը), ապա Մ. Մելքումյանը՝ միայն ժամանակակից հայոց լեզվի հնչույթային համակարգը⁹:

Մեր վիճակագրական քննությունը մի կողմից՝ տարբերվում է Հ. Աճառյանի վիճակագրությունից: Հնչույթաբանության զարգացման հետևանքով հնչույթային միավորների հաշվառման սկզբունքների մեջ տեղի ունեցած էական փոփոխություններով, մյուս կողմից՝ կատարված լինելով մաթեմատիկական վիճակագրությամբ թույլատրելի ընտրանքի ծավալի նորմայի սահմաններում, տարբերվում է Աճառյանի և Աղայանի վիճակագրության քննության փորձերից իր հետապնդած նպատակով: Այսպես, եթե Աճառյանին հետաքրքրում էր գրաբարի (ավելի ճիշտ՝ դասական գրաբարի, որովհետև ընտրանքը կատարված է միայն այդ շրջանից) և աշխարհաբարի ներդաշնակության աստիճանը, իսկ Աղայանին՝ գրաբարի հնչույթային վիճակագրության իրական պատկերը, ապա սույն քննությունը տիպաբանական նպատակ է հետապնդում՝ տիպաբանական բնութագրման ենթարկել հին գրական հայերենի դասական շրջանի հնչույթային համակարգը (որոշ առումով Աճառյանի փորձը ևս կարելի է տիպաբանական համարել): Ընդամին վերը նշված երկու փորձից մեր մոտեցումը տարբերվում է ոչ միայն նրանով, թե ինչքան

⁹ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 269, ինչպես նաև М.Р.Мелкумян, Исходные данные и статистико — комбинаторные выделения парадигмы первого морфологического типа в армянском языке, сб. "Статистико — комбинаторное моделирование языков", М, 1965, էջ 123 և հատկապես՝ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, Ներածություն, Երևան, 1955:

պետք է լինի ընտրանքի ծավալը, այլն՝ ինչպիսին պետք է լինի ընտրանքը¹⁰:

«Գրաբարի համար, - գրում է Հր. Աճառյանը, - քննությանս առարկա է եղել հայ լեզվի հնագույն վիճակը, այն, որ երևան է գալիս մեսրոպյան շրջանի առաջին թարգմանիչների գրիչների տակ՝ իր ամենից մաքուր, ամենից ավելի բնիկ ու անխառն ձևի մեջ»¹¹: Ըստ այդմ էլ նա վիճակագրական քննությունից դուրս է թողել Ղազար Փարպեցուն, Եղիշեին, Խորենացուն, Մամբրեին և համեմատաբար ուշ շրջանի մեր մյուս մատենագիրներին: Ինչպես ինքն է ասում, բոլորովին մի կողմ է դրել «հունաբան հեղինակների շինած հունաբան հայերենը, ունիթոոների հնարած լատինաբան հայերենը»¹²:

Հ. Աճառյանը եթե մի կողմից ճիշտ է վարվել խուսափելով քննության ենթակա հատվածների մեջ գործածված հատուկ անուններից, ապա, մյուս կողմից, մեզ թվում է, տեղին չէ նրա այն մտահոգությունը, որ կարող են նվազ լինեն միևնույն բառերի կրկնությունները, որովհետև առանձնապես խոսակցական լեզվի մեջ այդպիսիք միշտ էլ անխուսափելի են: Ավելին, կրկնությունները համեմատաբար քիչ են հենց գրավոր լեզվի մեջ: Բացի դրանից, տարբեր ոճերի տեքստերի քննությունը հնարավորություն կտա պարզելու այն հարցը, թե հնչույթների վիճակագրական արդյունքների վրա ինչպիսի ազդեցություն կարող են թողնել ընտրած տեքստերի ոճական առանձնահատկությունները: Ի տարբերություն Աճառյանի, որը ոչ մի հատված չի վերցրել Կորյունից, Ագաթանգեղոսից, Բուզանդից, ինչպես նաև Հին կտակարանից, Աղայանը իր վիճակագրական փորձի մեջ

¹⁰ Բ. Ղազարյան, Հաճախականության բառարանի յուրահատուկ կողմերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, N 9:

¹¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, Ներածություն, Երևան, 1955:

¹² Հ. Աճառյան, նույն տեղում:

ներառում է նաև հատվածներ Ազաթանգեղոսից, Փավստոս Բուզանդից, ժողովրդական բանահյուսությունից և այլն:

Հնչույթների վիճակագրական վերլուծության ժամանակ բոլոր դեպքերում հիմք ենք ընդունել հնչույթը և ոչ թե տառը, չնայած ընդունում ենք, որ գրաբարի դասական շրջանի գրությունն ու արտասանությունը համարյա նույնական են: Այնուամենայնիվ, այդ խնդրում որոշ դժվարություններ են առաջանում, այսպես, մենք առայժմ որոշ դեպքերում հաստատապես չգիտենք, թե ինչպես է հնչվել այս կամ այն բառը գրաբարում, թեպետ, ինչպես նշել է Էդ. Աղայանը, մեր ժամանակակից արտասանությունը որոշ հիմք տալիս է այդ բառերի ճիշտ արտասանության համար:

Անշուշտ, կարելի է ընտրել քննության մեկ այլ, ավելի ճիշտ ուղի՝ հաշվել տառերը կամ գրությունները, ինչպես արվում է երբեմն լեզվաբանության մեջ ինչ-ինչ կիրառական նպատակներով: Լեզվաբանության համար տառերի հաշվառումը լուրջ արժեք չի ներկայացնում, և դեռևս Հ. Աճառյանն իր «Հայերենի ներդաշնակության աստիճանը թվաբանական հաշվով» հոդվածում ընդունում է ոչ թե տառերը, այլ ձայները (=հնչույթները) միայն նկատի առնելու սկզբունքը:

Հր. Աճառյանի և Էդ. Աղայանի վիճակագրական սկզբունքների միջև որոշ տարբերություն կա: Այսպես՝ Աճառյանը աւ-ը բոլոր դեպքերում երկբարբառ է համարում, ուստի և հաշվում մեկ հնչույթ, մինչդեռ Աղայանը միայն փակ վանկում է այն դիտում երկբարբառ, իսկ բաց վանկի դեպքում համարում է ձայնավորի և բաղաձայնի կապակցություն, այսինքն՝ երկու հնչույթ:

Դասական գրաբարի հնչույթների գործառական բեռնվածության իրական պատկերը ստանալու համար քննության ենք ենթարկել հետևյալ տեքստերը.

1. Երգ երգոց, գլուխ Ա
2. Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ ԺԲ

3. Աւետարան ըստ Մարկոսի, գլուխ Բ
4. Աւետարան ըստ Ղուկասու, գլուխ ԺԸ
5. Աւետարան ըստ Յովհաննու, գլուխ ԺԵ
6. Եզնիկ, գիրք 2, գլուխ Ա
7. Կորին, Վասն որոյ առեալ երանելոյն... մինչև՝ եւ անդէն ի նմին (ներառյալ):

Վերլուծության արդյունքները տրվում են աղյուսակում (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ գրաբարի ամենաբարձր հաճախականություն ունեցող հնչույթը Ա-ն է՝ 1779/15000 (11,860%): Գործառական բեռնվածության տեսակետից երկրորդ տեղում Ն-ն է՝ 1286/15000 (8,573%): Ն-ն շատ է ստացվել ոչ միայն մեր վերցրած տեքստերում, այլև Աճառյանի և Աղայանի քննած տեքստերում: Հետևաբար, Ն-ի բարձր հաճախականությունը պատահական երևույթ չէ:

Համեմատաբար հաճախ են գործածվում նաև է, ի, ը ձայնավորները, մ, ր ձայնորդները և այլն:

Երկբարբառների հաճախականությունը առավել ցածրն է բոլոր երկբարբառները միասին վերցրած ավելի քիչ տոկոս են կազմում, քան, ասենք, միայն ը-ն: Դա պայմանավորված չէ մեր տեքստերի ռճական առանձնահատկություններով, քանի որ նույն պատկերն է նաև Աղայանի վերցրած տեքստերում: Այդ պատճառով էլ, չնայած մեր ընտրանքում ընդամենը յոթ երկբարբառ կա, այնուամենայնիվ, մեր և Աղայանի տվյալների միջև եղած տարբերությունները աննշան են՝ -0,027 և 0,003:

Ընդհանրապես էական շեղումները հիմնականում մեկ տոկոսի սահմաններում են: Այդպիսի մի քանի դեպք է եղել, այն էլ միայն բարձր հաճախականություն ունեցող հնչույթների հատուկ: Մնացած բոլոր դեպքերում շեղումը մեկ տոկոսից ցածր է ստացվել: Այդ արդեն խոսում է այն մասին, որ, իրոք, լեզուն ունի հնչույթային գործառական բեռնվածության կայուն պատկեր, որը հատուկ է իրեն՝ զարգացման տվյալ փուլում:

Հաջորդ աղյուսակում (տե՛ս Աղյուսակ 2) տրվում է դասական գրաբարի հնչույթների ցուցակը ըստ նվազող հաճախականության: Ինչպես երևում է աղյուսակից, մեր և Է. Աղայանի վիճակագրված հնչույթների ըստ նվազող հաճախականության կարգահամարները տասը անգամ համընկնում են՝ մնացած դեպքերում առանձնապես էական շեղումներ չտալով:

Բաղաձայնական համակարգում երկու դեպքում էլ 14 տոկոս կազմում են ձայնեղները, 19 տոկոս խուլերը: Այդ առումով հետաքրքիր է պարզել, թե Պ. Գիրոյի և Գ. Յիպֆի կողմից հնդեվրոպական 16 լեզուների և հունգարերենի վերլուծության վրա հիմնված վիճակագրության եզրակացությունները (տե՛ս P. Guiraud, նշվ. աշխ., էջ 97-125) հաստատվում են արդյոք նաև հայերենի, մասնավորապես՝ գրաբարի տվյալներով, թե ոչ: Ըստ նրանց, հնդեվրոպական լեզուների քննությունից կարելի է եզրակացնել, որ առհասարակ նշված լեզուներում խուլ բաղաձայնների հարաբերությունը ձայնեղներին ստանում է 7:3 արժեքը: Որ տեքստերում խուլերն ավելի հաճախական են, քան ձայնեղները, ապացուցվում է նաև գրաբարի տվյալներով՝ 19 տոկոս խուլեր և միայն 14 տոկոս ձայնեղներ: Որպես դասական գրաբարի կարևոր առանձնահատկություն հարկավոր է նշել, որ ի տարբերություն լատիներենի, որն առավել ևս աչքի է ընկնում խուլերի բացարձակ գերակշռությամբ, գրաբարը համեմատաբար ձայնեղառատ է և 7:3 հարաբերության փոխարեն վերջինիս համար ծայրահեղ դեպքում հարկավոր է 6:4 հարաբերությունը նշել:

Գրաբարի տվյալները խոսում են հոգուտ այն լեզվաբանական ընդհանրույթի, որ **պ, տ, կ** հնչույթները ոչ միայն հատուկ են բոլոր լեզուներին, այլև հնչավիճակագրության ժամանակ ամենուրեք բարձր հաճախականություն ունեն:

Աղյուսակ 1

Հըն- չույթ	Երգ երգոց		Աւետարան ըստ Մատթէոսի		Աւետարան ըստ Մարկոսի		Աւետարան ըստ Դու- կասի		Աւետարան ըստ Յովհան- նու		Եզնիկ		Կորին		Հնդամենը	
	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը	թի- վը	%-ը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ա	146	0,641	475	12,431	254	11,072	412	13,770	160	8,501	172	11,443	160	14,084	1779	11,860
Ե	105	7,653	301	7,877	213	9,285	250	8,355	197	10,467	123	8,183	66	58,09	1255	8,366
Ի	105	7,653	254	6,647	157	6,843	195	6,517	140	7,438	95	6,320	55	4,841	1001	6,673
Ը	83	6,049	221	5,783	118	5,143	135	4,512	95	5,047	76	5,056	59	5,193	787	5,246
Ո	59	4,300	166	4,344	109	4,751	110	3,676	61	3,241	78	5,189	51	4,489	634	4,226
ՈԻ	24	1,749	65	1,701	52	2,266	61	2,038	29	1,540	31	2,061	27	2,376	289	1,926
Է	6	0,437	37	0,968	22	0,959	32	1,069	38	2,019	15	0,998	16	1,408	166	1,106
Էա	14	1,020	25	0,654	24	1,046	23	0,768	20	1,115	13	0,864	22	1,936	142	0,946
Էաւ	–	–	1	0,226	–	–	1	0,033	1	0,053	–	–	–	–	3	0,020
աւ	13	0,947	16	0,418	3	0,130	7	0,270	9	0,478	6	0,399	8	0,704	62	0,413
իւ	10	0,728	17	0,444	9	0,392	17	0,568	8	0,425	5	0,332	10	0,880	76	0,506
ոյ	2	0,145	8	0,209	6	0,261	4	0,133	6	0,318	–	–	2	0,176	28	0,186
այ	12	0,874	53	1,387	24	1,046	39	1,303	30	1,594	15	0,998	5	0,440	178	1,186
ուի	–	–	1	0,026	–	–	1	0,033	4	0,212	–	–	1	0,088	7	0,046
ուա	2	0,145	2	0,052	3	0,130	12	0,401	2	0,106	12	0,798	2	0,176	35	0,233

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
nɪŋ	–	–	2	0,052	–	–	2	0,066	–	–	–	–	1	0,088	5	0,033
nɪn	1	0,072	2	0,052	1	0,043	1	0,033	–	–	–	–	2	0,176	7	0,046
nɪt	–	–	–	–	–	–	–	–	1	0,053	–	–	1	0,088	2	0,013
ɧw	–	–	4	0,104	2	0,087	–	–	–	–	–	–	–	–	6	0,040
ɧwɯ	–	–	1	0,026	–	–	–	–	–	–	–	–	–	–	1	0,006
ɟ	31	0,259	138	3,611	75	3,269	116	3,877	77	4,622	61	4,058	28	2,464	526	3,506
ɟ	40	2,915	120	3,140	62	2,702	115	3,843	54	2,869	60	3,992	35	3,080	486	3,240
ɟ	130	9,475	336	8,793	212	9,241	255	8,522	115	6,110	132	8,782	106	9,321	1286	8,573
ɟ	95	6,924	254	6,647	138	6,015	175	5,848	120	6,376	131	8,715	80	7,042	993	6,620
ɟ	39	2,842	134	3,506	99	4,315	111	3,709	46	2,444	59	3,925	36	3,169	524	3,493
ɟ	10	0,728	41	1,073	52	2,266	41	1,370	28	1,487	27	1,796	26	2,288	225	1,500
ɟ	19	1,384	40	1,046	26	1,133	30	1,002	14	0,743	5	0,332	15	1,320	148	0,993
ɟ	3	0,218	19	0,497	18	0,784	36	1,203	15	0,797	24	1,596	5	0,440	120	0,800
ɟ	15	1,093	52	1,360	24	1,046	20	0,668	23	1,222	5	0,332	19	1,662	158	1,053
ɟ	20	1,457	36	0,942	14	0,600	18	0,681	12	0,304	12	0,298	12	1,232	125	0,833
ɟ	28	2,040	83	2,172	40	1,743	37	1,236	19	1,009	30	1,996	20	1,760	257	1,713
ɟ	8	0,583	32	0,837	21	0,915	29	0,635	26	1,381	2	0,133	17	1,496	125	0,833
ɟ	30	2,168	64	1,674	39	1,900	76	2,540	27	1,434	19	1,264	32	2,866	287	1,913
ɟ	24	1,749	94	2,460	54	2,353	81	2,707	49	2,603	29	2,929	17	1,496	348	2,320
ɟ	10	0,728	22	0,575	8	0,348	20	0,668	27	1,434	2	0,133	3	0,264	92	0,613
ɟ	3	0,218	10	0,261	5	0,217	2	0,066	6	0,318	7	0,466	5	0,440	38	0,253
ɟ	7	0,510	19	0,497	10	0,435	28	0,935	12	0,637	8	0,532	10	0,880	94	0,626

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
ά	2	0,145	4	0,104	4	0,174	3	0,100	3	0,159	–	–	2	0,176	18	0,120
ψ	8	0,583	9	0,235	11	0,479	4	0,133	1	0,053	1	0,066	1	0,088	35	0,233
ρ	47	3,425	68	1,779	48	2,092	47	1,570	49	2,603	15	0,998	23	2,024	297	1,980
ρ̄	7	0,510	45	1,177	35	1,089	30	1,002	23	1,222	17	1,131	11	0,968	168	1,120
g	49	3,571	120	3,140	58	2,528	90	3,008	70	3,719	43	2,860	23	2,024	453	3,020
ζ	5	0,364	39	1,020	31	1,351	32	1,069	28	1,487	19	1,264	4	0,352	158	1,053
q	39	2,822	98	2,564	48	2,092	80	2,673	87	4,622	57	3,792	17	1,320	424	2,826
δ	–	–	21	0,549	6	0,261	12	0,401	4	0,212	4	0,266	5	0,440	52	0,346
u	76	5,539	165	4,318	109	4,751	169	5,648	91	4,835	50	3,326	56	5,193	719	4,793
z	5	0,364	30	0,785	14	0,610	9	0,300	11	0,584	9	0,598	10	0,880	88	0,586
ju	6	0,437	27	0,706	7	0,305	11	0,367	15	0,797	8	0,532	5	0,440	79	0,526
h	34	2,478	50	1,308	29	1,624	23	0,768	29	1,540	26	1,729	22	1,936	213	1,420
	1372		3821		2294		2992		1882		1503		1136		15000	

Աղյուսակ 2

	Մեր տվյալները		Է. Աղայանի տվյալները	
	Հնչույթ	%-ը	Հնչույթ	%-ը
1	Ա	11,860	Ա	13,465
2	ն	8,573	ն	10,454
3	Ե	8,366	ր	6,642
4	Ի	6,673	Ի	6,367
5	ր	6,620	Ե	6,094
6	Ը	5,246	Ը	5,692
7	ս	4,793	վ	3,631
8	Ո	4,226	Ո	3,393
9	յ	3,506	զ	2,975
10	վ	3,493	Ս	2,975
11	Մ	3,240	տ	2,864
12	Յ	3,020	մ	2,700
13	զ	2,826	Յ	2,700
14	Տ	2,320	կ	2,427
15	ք	1,980	Է	2,244
16	Ու	1,926	Հ	2,208
17	Կ	1,913	Ու	2,116
18	դ	1,713	Յ	2,043
19	Լ	1,500	զ	1,624
20	հ	1,420	ք	1,524
21	այ	1,186	է	1,405
22	թ	1,120	դ	1,350
23	Է	1,106	Հ	1,168
24	բ	1,053	բ	1,058
25	Չ	1,053	էս	1,058
26	դ	0,993	ս	0,949

27	էա	0,946	զ	0,949
28	գ	0,833	ռ	0,877
29	սյ	0,833	չ	0,767
30	ռ	0,800	շ	0,712
31	ծ	0,626	իւ	0,712
32	ձ	0,613	իս	0,712
33	շ	0,586	այ	0,657
34	իս	0,526	ջ	0,620
35	իւ	0,506	ծ	0,456
36	աււ	0,413	այ	0,456
37	ժ	0,346	ոյ	0,436
38	ջ	0,253	փ	0,420
39	փ	0,233	ձ	0,365
40	ուս	0,233	ժ	0,237
41	ոյ	0,186	ճ	0,182
42	ճ	0,120	ուս	0,164
43	ուո	0,046	ուո	0,073
44	ուի	0,046	ուի	0,055
45	ուոյ	0,033	ուոյ	0,036

Հետաքրքիր է պարզել, թե վիճակագրությամբ ստացված արժեքների ինչպիսի փոխհարաբերություն կա մի կողմից՝ դասական գրաբարի և սանսկրիտի, որպես հին լեզվի, և մյուս կողմից, դասական գրաբարի և ժամանակակից հայոց լեզվի միջև: Այդ պարզելու համար վիճակագրության է ենթարկվել (հին հնդկերեն լեզվով) Դանդինի «Կավյադարշա» տրակտատից մի հատված¹³: Սանսկրիտի և գրաբարի տվյալների համեմատությունը տրվում է հաջորդ աղյուսակում:

¹³ Հատվածը տրված է Վ.Իվանովի և Վ.Ն.Տոպորովի «Санскрит» (М., 1960) գրքի 130-րդ էջում:

Աղյուսակ 3

Հնչույթ	Թիվը	%-ը	Հայերենի սվյալները	Տարբերությունը
a	200	26,24	11,86	-14,38
i (y)	90	11,81	10,18	-1,63
u (v)	42	5,51	5,42	-0,09
e	15	1,97	8,37	-6,40
o	12	1,57	4,23	-2,66
ai	7	0,91	1,19	-0,28
au	7	0,91	0,41	-0,50
r(r)	54	7,09	7,42	-0,33
l(l)	8	1,05	1,50	-0,45
n	35	4,59	8,57	-3,98
m	48	6,31	3,24	-3,07
s	29	3,81	4,79	-0,20
š	6	0,79	0,59	-0,20
ş	11	1,44	0,35	-1,09
h	20	2,62	1,42	-1,20
c	2	0,26	1,05	-0,79
ch	1	0,13	–	-0,13
j	7	0,91	0,25	-0,66
kh	–	–	–	–
g	22	2,91	1,91	-1,00
k	1	0,13	1,98	-1,85
kh	12	1,57	0,83	-0,74
gh	–	–	–	–
h	–	–	–	–
t	–	–	–	–
d	4	0,53	–	-0,53
dh	1	0,13	–	-0,13
t	54	7,09	2,32	-4,77
th	6	0,79	1,12	-0,33
d	26	3,42	1,71	-1,71
dh	5	0,65	–	-0,65
p	26	3,42	0,83	-2,59
b	3	0,38	1,05	-0,66
ph	–	–	0,23	-0,23
bh	8	1,05	–	1,05

Դասական գրաբարի և սանսկրիտի համապատասխան արժեքների գուգադրությունից պարզվում է.

ա) Ինչպես և պետք էր սպասել, չնայած հայերենի Ա-ն ամենահաճախական հնչույթն է, սանսկրիտի Ա-ն կրկնակի հաճախական է (գրաբարի 11,86 տոկոսի դիմաց 26,24 տոկոս): Սանսկրիտում Ա-ի հաճախականությունը այնքան մեծ է, որ գրային համակարգում մեծ մասամբ Ա-ն հատուկ նշելու անհրաժեշտությունը չի զգացվում:

բ) Երկու լեզուներում էլ Ի, Ու ձայնավորների, երկբարբառների, ռ, լ, ս, հ, ջ, կ, գ, բ, փ, թ հնչույթների համապատասխան արժեքների տարբերությունը մեկ տոկոսի սահմաններից չի անցնում: Նշանակում է, գրաբարի և սանսկրիտի հնչույթների հաճախականությունը օժտված է ընդհանուր գծերով, որոնք դրսևորում են նշված լեզուների համասեռությունը:

գ) Էական շեղումներ են տվել **Ե, Ո** ձայնավորները, ն, **մ, պ, տ** բաղաձայնները: Առաջին գույգի սանսկրիտի արժեքները ցածր են ստացվել (գրաբարի 8,37 տոկոսի դիմաց 1,97 տոկոս և 4,23-ի դիմաց՝ 1,57 տոկոս): Այդ կարելի է բացատրել վերը նշված համամասնությամբ:

դ) Մնացած դեպքերում բարձր հաճախականությունը բացատրվում է տվյալ հնչույթների համեմատատաբար մեծ թվով կապակցությունների մեջ հանդես գալու հնարավորությամբ: Այդպիսի հնչույթներից են **մ-ն** և **ն-ն**:

Կ Ո Ր Յ ՈՒ Ն				
Հնչույթ	Գրարար		Աշխարհարար	
	Թիվը	%	Թիվը	%
Ա	112	17,021	139	17,889
Ե	24	3,571	56	7,207
Ի	20	3,039	38	4,890
Ը	18	2,735	23	2,960
Ո	20	3,039	26	3,346
Ու	20	3,039	34	4,376
Է	4	0,608	9	1,158
աւ	2	0,304	–	–
իւ	4	0,608	–	–
ոյ	1	0,152	–	–
այ	5	0,760	–	–
ուս	3	0,456	–	–
եա	10	1,520	–	–
ուե	1	0,152	–	–
ուո	1	0,152	–	–
ուոյ	1	0,152	–	–
իայ	1	0,152	–	–
յ	13	1,974	23	2,960
մ	24	3,571	31	3,988
ն	74	11,246	76	9,781
ր	51	7,751	66	8,894
վ	24	3,799	36	4,633
լ	21	3,191	16	2,060
ղ	7	1,065	5	0,644
ռ	8	1,216	7	0,901
բ	4	0,608	4	0,505
գ	9	1,368	9	1,158
դ	10	1,520	15	1,931
սյ	6	0,910	4	0,505
կ	28	4,255	25	3,218
տ	18	2,735	25	3,218
ձ	2	0,304	2	0,287

ջ	2	0,304	3	0,386
ծ	6	0,910	8	1,030
ճ	–	–	–	–
փ	3	0,456	2	0,128
ք	3	0,456	8	1,030
թ	13	1,974	13	1,673
ց	23	3,495	17	2,188
չ	2	0,304	1	0,128
զ	8	1,216	5	0,644
ժ	2	0,304	1	0,128
ւ	20	3,039	14	1,802
շ	8	1,216	10	1,299
ի	7	1,065	7	0,901
հ	14	2,128	20	2,574
	658		777	

Որոշելու համար, թե հայոց լեզվի երկու վիճակներից (դասական գրաբար և արդի հայերեն) որն է նվազ ավելորդային կամ սեղմ, պետք է քննության առնել միևնույն բովանդակության արտահայտությունը գրաբար և աշխարհաբար: Դա պարզերս համար վիճակագրական քննության է ենթարկվել Կորյունից մի հատված (սկսած «Մաշտոց էր անունն այն մարդոյ»-ից) գրաբար և աշխարհաբար թարգմանությամբ:

Աղյուսակից երևում է, որ գրաբարը և աշխարհաբարը հնչույթային գործառական բեռնվածության գրեթե նայն պատկերն են ներկայացնում: Այդուհանդերձ, նշված լեզվավիճակների միջև կա զգայի տարբերություն:

Ամենից առաջ, երկբարբառների վերացմամբ արդի հայերենում ձայնավորների հաճախականության համապատասխան բոլոր արժեքները մեծացել են. նույն պատճառով բարձրացել է նաև յ-ի հաճախականությունը:

Եթե գրաբարից վերցրած հատվածում եղել է ընդամենը 658 հնչույթ, ապա նույն տեքստի աշխարհաբար թարգմանությունը ունի 777 հնչույթ: Այսինքն՝ միևնույն հատվածի գրա-

բարը ավելի քիչ հնչույթ է պարունակում, քան աշխարհաբարը: Մրանում ոչ մի զարմանալի բան չկա, որովհետև եթե գրաբարում կային երկբարբառներ, որոնք միայն մեկ միավոր էին, ապա ժամանակակից հայոց լեզվում նրանց մի մասը վերածվել է երկու միավորի: Պետք է նշել, որ Հ. Աճառյանը վերոհիշյալ վիճակագրական քննությամբ հակառակ իր սպասածի, միանգամայն այլ տվյալներ է ստացել, աշխարհաբարը ավելի սեղմ է ստացվել, քան գրաբարը, որ, ինչպես երևում է, պետք է բացատրել ընտրած հատվածի ոճական առանձնահատկություններով: Քանի որ գրաբարյան երկբարբառների տեսակարար կշիռը փոքր է, արդի հայերենի շեղումը այնքան էլ մեծ չի ստացվել: Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ աշխարհաբարում, ի տարբերություն գրաբարի, մի շարք բայածանցներ դուրս են ընկել, նախդիրները սղվել են և այլն:

Լեզվաբանության մեջ հետևյալ միտքն է հայտնվել, որ լեզվական համակարգի մեջ բաղաձայնների (կամ ձայնավորների) թիվը հակադարձ համեմատական է տեքստում նրանց ունեցած հաճախականությանը: Այսինքն՝ որքան համակարգը հարուստ է բաղաձայններով, այնքան ավելի քիչ են դրանք հանդես գալիս տեքստում, և ընդհակառակը: Այդ կապակցությամբ կարելի է բերել գերմաներենի օրինակը, որտեղ եթե համակարգում 52,6 տոկոսը բաղաձայններ են, ապա տեքստում բաղաձայնները կազմում են ընդամենը 61,7 տոկոս: Հակառակ երևույթն է իտալերենում՝ համակարգում բաղաձայնները 82,5 տոկոս են, մինչդեռ տեքստում՝ հազիվ միայն 52 տոկոս:

Դասական գրաբարի հնչույթային համակարգի 18,2 տոկոսը ձայնավորներ են, 81,8 տոկոսը բաղաձայններ, մինչդեռ տեքստում 44 տոկոսը ձայնավորներ են և երկբարբառներ, իսկ 56 տոկոսը բաղաձայններ (այսինքն՝ 100 հնչույթից 44-ը ձայնավոր է կամ երկբարբառ, իսկ 56-ը՝ բաղաձայն):

Այսպիսով, լեզվի զարգացման ամեն մի կոնկրետ շրջանում օբյեկտիվորեն գոյություն ունի ձայնավորների և բաղաձայնների գործառական բեռնվածության որոշակի համամասնություն: Առանձին տեքստերի ոճական առանձնահատկությունները շատ փոքր ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր արդյունքների վրա, իսկ առավել հաճախ հանդես եկող հնչյւթների տեսակարար կշռի վրա ընդհանրապես չեն կարող ազդել:

	Չայնավոր	Բաղաձայն
Ֆիններեն	51	49
Հին հնդկերեն	49	51
Իտալերեն	47	53
Հին հունարեն	46	54
Լատիներեն	45	55
Գրաբար	44	56
Հունգարերեն	41	59
Ֆրանսերեն	41	59
Աշխարհաբար	41	59
Հին գոթերեն	41	59
Գերմաներեն	38	62
Չեխերեն	37	63

Հետևաբար, Ա. Իսաչենկոյի այն թերահավատությունը, թե իբր լեզուների տիպաբանական բնութագրման համար հնչյւթների հաճախականության մեթոդի կիրառումն անօգուտ է, իրականում ճիշտ չէ: Հնչյւթների հաճախականությունը գործառական բեռնվածությունը հաշվի առնելու դեպքում հնարավոր է տիպաբանական օբյեկտիվ բնութագրման ենթարկել աշխարհի լեզուների հնչյւթային համակարգերը:

ՈՃԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

Ոճաչափության բանասիրական կարգավիճակը

Ոճաչափությունը (стилеметрия) բանասիրության ասպարեզի կիրառական այն բնագավառն է, որը զբաղվում է բնագրերի ոճական չափումներով, նպատակ ունենալով համակարգել տեքստերը կամ նրանց առանձին մասերը՝ ըստ տիպաբանության, վերականգնման, հեղինակային պատկանելության ճշգրտման, ժամանակագրության բացահայտման և այլն: Ոճաչափություն տերմինը շրջանառության մեջ է դրել գերմանացի բանասեր Վ. Դիտենբերգերը: Նախանցյալ դարի վերջում այդ գիտնականն իր առջև խնդիր էր դրել վճռել Պլատոնի երկխոսությունների հեղինակության հարցը: Ընդ որում նա փորձել է դա անել բառերի հաճախականության արժեքների միջոցով (գերազանցապես այնպիսի բառերի, որոնց հաճախականությունը սերտորեն կապված չէ բնագրերի թեմատիկայի հետ): Հատկապես այդպիսին են դիտվել սպասարկու բառերը՝ նախադրությունները, ետադրությունները և այլն:

Մինչ այժմ բազմաթիվ փորձեր են արվել՝ վիճակագրական մեթոդների կիրառմամբ պարզելու հատկապես հեղինակային պատկանելության զանազան խնդիրները: Ճիշտ են նկատել շատ մասնագետներ, որ ըստ էության այս մեթոդը դարձել է դասագրքային, ընդ որում, կիրառություն գտնելով թե՛ բժշկական ախտորոշման, թե՛ սոցիալ-հոգեբանության, թե՛ մանավանդ քրեագիտության բնագավառներում: Բուն վիճակագրության առարկայի դեպքում տեքստի հեղինակային պատկանելության պարզաբանման հարցը ներկայացվում է տիպային խնդիրների շարքում (հմմտ. Ёймбл Г., Как правильно пользоваться статистикой, М., 1982, Кокс Д., Смелл Э., Прикладная статистика. Принципы и примеры, I., 1984):

Ռուսաստանում ընդունված է առաջին «ոճաչափ» անվանումը շնորհել Ն. Մորոզովին, որը հանրահայտ «Христос»

ութիատորյակի հեղինակն է: Այդ բազմահմուտ գիտնականը ռուս իրականության մեջ առաջին անգամ լեզվական բազմահատկանիշ դասակարգման մի մեթոդ կիրառեց, որը հետագայում, որոշակի ձևափոխություններով, հիմք ընդունեց ակադ. Գ. Սևակը, իր «Լեզվական սպեկտր»-ում: Անշուշտ, Գ. Սևակի «լեզվական սպեկտրը» որոշակիորեն ձևափոխել է Ն. Մորոզովի կիրառած մեթոդը: Վերջին դեպքում ռուս գիտնականը խնդիր էր դրել, ինչպես Վ. Դիտենբերգերը, բառերի հաճախականության արժեքներով (սպեկտրով) զանազանել բուն ստեղծագործությունները կեղծված կամ աղավաղված բնագրերից:

Վերջին տասնամյակում ոճաչափության առարկան մեծապես ընդլայնել է իր թե՛ խնդիրները, թե՛ դրանց հետ կապված մեթոդները և կիրառելիք բնագավառները: Բնագրերի քանակական վիճակագրության արդյունքները լայնորեն սկսել են կիրառվել վերծանման կադապարներ մշակելիս, տեքստի քանակական տիպաբանության ժամանակ: Անցյալ դարի վերջին արդեն խոսվում էր նոր բնագավառի՝ ոճագիտական ախտորոշման մասին (տե՛ս Севбо И.П. Графическое представление синтаксических структур и стилистическая диагностика, Կիև, 1981): Ինչ խոսք, առավելագույն ուշադրություն դարձվել և այժմ էլ դարձվում է հնագույն բնագրերի վերականգնման մեթոդների մշակմանը (հատկապես հարկ է նշել անտիկ բնագրերը, 5-րդ դարի հայ մատենագիրների գործերը և այլն): Առավել մեծ հաջողության հասնելու համար, անտարակույս, անհրաժեշտ կլինի, ոճավիճակագրական մեթոդների մշակմանը զուգընթաց, ավելի մեծ չափերով ներառել համակարգչային համակարգերի ընձեռած անսահմանափակ հնարավորությունները:

Ոճի չափումները

Թույլատրելի է, արդյո՞ք, առաջին հայացքից խիստ փոփոխական քանակական վերլուծությամբ ստացած ինչ-ինչ հարաբերական արժեքների հիման վրա պնդել ոճի կայուն

չափորոշիչների ու կայուն չափումների մասին: Ասենք, հնարավոր է, արդյոք, որոշել տեքստի բարդության աստիճանը: Ընդ որում, եթե նշված հարցի դեպքում մեծ է դրական պատասխանի հավանականությունը, ապա նույնը չի կարելի պնդել հետևյալ հարցադրումների դեպքում, հնարավոր է հստակ չափորոշիչներով պարզել տեքստի ինքնատիպության աստիճանը, պատկերավորությունը, գեղարվեստական վերլուծության մակարդակը և այլն: Իհարկե, եթե նախապես առանձնացվեն որոշակի հատկանիշների փնջեր և դրանցով ստացած արժեքների հստակ կորեր, ապա հնարավոր կլինի նաև խոսել դրականորեն և՛ նշված երևույթների, և՛ տեքստի ամբողջականության, երկու և ավելի՝ տեքստերի ընդհանրության աստիճանի մասին և այլն:

Միանգամայն տեղին է նշված Ա. Գերդի ընդհանուր խմբագրությամբ լույս տեսած «Կիրառական լեզվաբանություն» գրքում (Ս. Պետերբուրգ, 1996, էջ 421). «Ոճը, եթե ճիշտն ասենք, չի կարելի անմիջականորեն չափել, այնպես, ինչպես չի կարելի չափել երջանկությունը և ստեղծագործական ունակությունները, դրանք կարելի է սոսկ նկարագրել: Չափելու մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ հետազոտողին հաջողվում է այդ բարդ երևույթը տրոհել տրամաբանության սահմաններում և յուրաքանչյուր նվազագույն հատկանիշի իմաստին վերագրել համապատասխան մեծության (արժեքներ)»:

Մեր ժամանակներում բուռն զարգացում են ապրում հասարակական գիտությունների այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են կենսաչափությունը (биометрия), մարդաչափությունը (антропометрия), սոցիոմետրիան, գիտաչափությունը (наукOMETPия) և այլն: Բնական է, որ այդ շարքում բուռն զարգացում է ապրում նաև ոճաչափությունը (стилеметрия): Ընդ որում, ինչպես նկատում են հետազոտողներից շատերը, այդ գիտություններից յուրաքանչյուրում ձեռք բերած նվաճումներ խթան են հանդիսանում հարակից բնագավառներում կատարվող հետազոտությունների հետագա խորացման:

ՈՃԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոճաչափության առարկան տեքստն է. խոսքը որոշակի տեքստի մասին է և ոչ թե ինչ-որ վերացական երևույթի: Բնական է, որ տեքստը պետք է ստեղծված լինի որոշակի ժամանակահատվածում, որևէ հեղինակի կամ հեղինակների խմբի կողմից՝ որոշակի իրադրության մեջ:

Մասնագիտական գրականության մեջ տեքստ հասկացությունը բնութագրվում է երկու առումներով՝ իբրև 1) բաժանարար և 2) հավաքական հասկացություն, նայած թե ինչ հայեցակետով է դիտարկվում: Տեքստը հավաքական հասկացություն է այն դեպքում, երբ այն դիտարկվում է նոր կիրառվող բառերի գործածության արժեքների առումով, իսկ բաժանարար հասկացության դեպքում քննվում են տեքստի գիտական, գեղարվեստական, գործնական և այլ տարատեսակները:

Բազմությունների տեսության հայեցակետից ոճաչափությունը բազմությունների հավաքականություն է, այն դեպքում, երբ համակարգերի տեսության հայեցակետից՝ ներքին համակարգերի ամբողջական կարգ է: Բոլոր դեպքերում տեքստը իրական լեզվական միավորների ամբողջություն է: Ընդ որում տեքստը բնութագրվում է տարժամանակային որոշակի կայունությամբ (հաշվի պետք է առնել այն պարզ իրողությունը, որ քննության ենթակա ցանկացած ամբողջական տեքստից անկարելի է որևէ բառ կամ արտահայտություն դուրս դնել):

Տեքստի հավաքական և բաժանարար հատկանիշների դասակարգումը ըստ տրամաբանական, մաթեմատիկական և բանասիրական հայեցակետերի «Կիրառական լեզվաբանություն» դասագրքում (նույն տեղում, էջ 423), ներկայացվում է աղյուսակի տեսքով:

Կառուցվածքի ժամանակակից ըմբռնումը իր մեջ ներառում է մասեր, բաղադրիչ տարրեր, հատկություններ և հարաբերություններ: Հատկանիշների փնջերի մեջ առանձնաց-

վում են էական գծերը: Էական հատկանիշներ են դիտվում այնպիսիք, որոնց բացառման դեպքում տեքստը (կամ առարկան) դադարում է ինքն իր նմանը լինելուց: Էական հատկանիշները ամփոփվում են պարտադիր կանխատեսելի հատկանիշների փնջի մեջ, մինչդեռ ոչ-էական հատկանիշները կամընտրային, եզրային բնութագրումներ ունեն, որոնք վերաբերում են, որպես կանոն, առարկայի եզրային, ծայրամասային բնութագրումներին:

Որպես էական և եզրային հատկանիշների օրինակ լեզվաբանական գրականության մեջ սովորաբար բերվում է աթոռի օրինակը: Աթոռի համար էական հատկանիշ է ոտքեր ունենալը (2-ից ավելին), 4 ոտքից ավելին լինելը ոչ էական հատկանիշ է, ինչպես որ ոչ-էական հատկանիշներ են աթոռի գույնը, ինչ փայտից պատրաստված լինելը և այլն: Իսկապես, ոճը չափագրելիս էական են առանցքային հատկանիշները, սակայն, մեր համոզմամբ, անհրաժեշտ է որոշակի հարաբերակցության չափանիշների կիրառում՝ էական և ոչ-էական հատկանիշների փնջերի դիտարկման ժամանակ, որոնց միջոցով միայն կարելի է հասնել տեքստերի խոսքային բնութագրերի բացահայտմանը:

**Հավաքչական և բաժանարար կարգերի
բովանդակությունը և մեթոդաբանական կարգավիճակը ***

Մեթոդաբանական կարգավիճակ	Կարգ	
	Հավաքչական	Բաժանարար
Հասկացություն Հասկացության ծավալը Հասկացության ծավալի և բովանդակության հարա- բերությունը Մասերի առանձնացման գործընթացը Ոչ լրիվ հիմքով մակաձույթան (ինդուկցիայի) խնդիր Բաղադրիչների բնութագիր	հավաքչական * տրոհում վերակազմում տարասեռ	բաժանարար ռեֆերենտների դաս մասնատում էքստրապոլյացիա միասեռ
Հասկացության ներկա յա- ցումը իբրև համակարգ	ներքին համակարգ	արտաքին համակարգ
Համակարգի բնութագիրը Բաղադրիչների ամբողջու- թյունը	տարժամանակային կազմավորումը հավաքչական բազմություն	վերացական տրամաբանա- կան կառույց բաժանարար բազմու թյուն
Կաղապար	Լեաննակու մետրոլոգիա (չափագրություն)	կոնտուրի բազմություններ
Վիճակագրության տեսություն Բանասիրական	բնական հավաքչականություն տեքստ ռուս գրականություն XIX դ	արհեստական հավաքչակա- նություն Բառացանկ ստեղծագործությունների ցանկ
Օրինակներ		

* Ներկայացվում է ըստ «Կիրառական լեզվաբանություն» (ռուսե-
րեն) ձեռնարկի, Ս.Պետերբուրգ, 1996, էջ 423:

ՈՃԱՄԵՏՐԻԿԱ

Այսպիսի խորագրով մի աշխատանք է ծրագրվել ռուս գիտնական Ռ.Վ. Մասեկինի կողմից, որն արդեն իբրև չիրապարակված աշխատանքի ներածություն գրանցվել է «Ping Banner Network-ում» («Стилометрия»): Ինչպես իրավացիորեն նշում է հետազոտողը, աշխատանքի թեման բնավ էլ նոր չէ: Ընդ որում, եթե ոճագետներից ոմանք «Ոճաչափություն» առակայի ակունքները տանում են մինչև միջնադարյան սխոլաստիկական դպրոցները, ուրիշները մինչև անտիկ աշխարհ, հատկապես՝ Հռոմ, որտեղ տեքստերի ձևայնացման խնդիրները հենց կիրառական նկատառումով որոշակի ձեռքբերումներ են արձանագրում, ապա սրամիտ է նկատում Ռ. Մասեկինը, որ իրականում մեծ հաշվով սխալվում են և՛ առաջինները, և՛ վերջինները, քանի որ «մարդը գրությունների մեջ իմաստ է փնտրել, երբ առաջին անգամ ձեռքն է վերցրել փայտիկը՝ ստիլը: Այլ խնդիր է, թե ի՞նչ է փնտրել, ասենք, հին Ասորեստանի սեպագիր աղյուսների մեջ, ինչպե՞ս է նա դա արել և ինչո՞ւ» (տե՛ս ն.ս., էջ 1):

Ռ.Վ. Մասեկինը վերոհիշյալ գրքում առանձնացնում է հինգ գիտական ուղղություններ, որոնք մշակում են համապատասխան գիտական խնդիրներ: Առաջին հերթին խոսքը վերաբերում է կառուցվածքային լեզվաբանության, կոգնիատիվ հոգեբանության, պատումնաբանության (պատմողական տեքստերի քննությանը նպատակամղված աղբյուրագիտական հետազոտությունների ամբողջություն), **հերմենևտիկային** և արհեստական բանականության գաղափարախոսությանը:

Հեղինակը իր ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես քանակական քննության և արհեստական բանականության խնդիրների վրա: Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես *իմաստի* երևույթի քննությունը:

Անցյալ դարի 60-70-ական թթ. մի շարք հասարակական գիտությունների, հատկապես լեզվաբանության և պատմագի-

տության մեջ սկսեցին լայնորեն ներդրվել վիճակագրական մեթոդները:

Այսպես, համակարգչային եղանակով քննության ենթարկելով գրական, նկարագրական հուշարձանների նյութը՝ քննությանը մշակվեցին տեքստերի հեղինակային ճշգրտման մեթոդները:

Նշված ժամանակաշրջանում (XX դ. 60-ական թթ.) Բրյուսելի համալսարանում «համակարգչային լեզվի» է վերածվել Ջենոն իմաստասերի պահոցը (Պտղոմեոսի ժամանակաշրջան): ԱՄՆ-ի Կալիֆորնիայի համալսարանում հին հույն հեղինակների գործերից կազմվել է էլեկտրոնային հավաքածու: Այլ աշխատանքների շարքում արժե հիշատակել նաև հայ հեղինակների հնագույն բնագրերի համակարգչային մշակումը (հմտ. «Պատմագիրք Հայոց»-ի արդեն հրատարակած է երկու հատորները՝ իրենց համակարգչային տարբերակով): Ներկայումս գոյություն ունի հունական ձեռագրերի տվյալների բանկը: Նմանօրինակ աշխատանք է ձեռնարկել Երուսաղեմի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Մայքլ Սթոունը: Վերջինիս մշակած մեթոդով հնարավոր է դարձել անգամ մեկ պատահական ձեռագրի գրչային առանձնահատկություններով որոշել գրչության դպրոցը, ժամանակաշրջանը և անգամ՝ գրիչի իսկությունը:

Լուվենի (Բելգիա) համալսարանում «Եկեղեցու հայրերի» աշխատանքների հիման վրա կազմվել են սրբազան տեքստերի լիակատար բառարաններ: Այս թվարկումը կարելի է շարունակել, բայց գոհանանք բերվածով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1-2, Ե., 1960-1962:

Л.В. Щерба, О тройком аспекте языковых явлений и об эксперименте в языкознании... Языковая система и речевая деятельность, Л., 1974, Н.С.Трубецкой, Основы фонологии, Մոսկվա, 1960

Ա. Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, «Հայոց լեզվի կառուցվածքը» ժողովածու, Ե., 1975

Էդ. Ադայան, Գրաբարի հնչյունաբանություն, Մին-խրոնիա, Ե., 1962: Новое в лингвистике, Մ., 1965, Ա.Սարգսյան, Տիպաբանություն, ՀՄՀ, հ. 12:

Кимбл Г., Как правильно пользоваться статистикой, Մ., 1982, Кокс Д., Смелл Э., Прикладная статистика. Принципы и примеры, Մ.1984.

Վիրառական լեզվաբանություն» ձեռնարկ, (ռուսերեն), Ս.Պետերբուրգ, 1996:

Севбо И.П., Графическое представление синтаксических структур и стилистическая диагностика, Վիև, 1981:

ՎԵՐԾԱՆՈՒՄ

Վերծանումը (демифровка) որևէ տեքստի կամ հաղորդման լեզվական քննությունն է՝ այն իրազեկելու, բացահայտելու նպատակով, որն անհայտ է հետազոտողին կամ գաղտնագրված է տվյալ հաղորդման մեջ: Մահմանումից բխում է, որ վերծանման գործընթացը գերազանցապես նկատի ունի գրված, փորագրված, այլապես նյութականացված մարդու կողմից հասցեատիրոջը «փոխանցելու» համար: Ընդ որում հասցեատերը կարող է լինել ինչպես տարածական, այնպես էլ ժամանակային թե՛ նույն, թե՛ տարբեր կտրվածքներում (հաղորդում՝ ուղղված ժամանակակիցներին, սերունդներին և այլն):

Ոչ ամեն հետազոտություն կամ «վերականգնում» է դիտվում իբրև վերծանում: Այսպես, օրինակ՝ բժշկական ախտորոշման գործընթացը, թեև որոշ հետազոտողների կողմից համարվում է վերծանման տեսակներից մեկը, իրականում ոչ մի առնչություն չունի բուն վերծանման տիպերի հետ: Վերծանումը, որպես պայման, ունի իր հիմքում որևէ մարդկային լեզվով կամ այլ նշանային համակարգերով ամրագրված տեքստ (հաղորդում): Դրանով էլ պայմանավորված, տարբերակվում են՝ 1) բուն լեզվաբանական և 2) ոչ լեզվաբանական վերծանման տիպերը: Ճիշտ է, վերջինս լեզվաբանական գիտակարգից դուրս է, սակայն այդուհանդերձ մի շարք օրինաչափություններով աղերսներ ունի զուտ լեզվաբանական վերծանման հետ:

Ի՞նչ խնդիրներ է ներառում լեզվաբանական վերծանումը իր քննության ծիրի մեջ. նախ՝ պատմականորեն գոյություն ունեցած գրային համակարգերի, գաղտնագրության (կրիպտոգրամայի) ուսումնասիրությունը: Եթե ձեռքի տակ եղած գրային հատվածի անհասկանալիությունը բացատրվում է ինչ-ինչ գրային, իմաստաբանական ավանդույթների խզումով, ապա այլ դեպքում վերծանողի խնդիրը կայանում է հավանական հասցեատե-

րերի (ուժ ուղղորդված է գրությունը) շրջանակի ըստ հնարավորինս նեղացումը:

Գրային համակարգերի գծով հայտնի մասնագետ Յու. Կնորոզովի (հմմտ. Кнорозов Ю. Забытые системы письма, М, 1982) կարծիքով, գրապատմական համակարգերը և գաղտնագրային վերծանումը ոչ մի ընդհանրություն չունեն: Յու. Կնորոզովը ճիշտ է, եթե նկատի ունենանք այսպիսի գաղտնագրությունը, որը խարսխված է սոսկ փոխատեղումների, լեզվական նշանների պայմանական դրափոխության վրա: Այլապես, «որոշ ժամանկներում և բոլոր լեզուներում կիրառվում են ինֆորմացիայի հաղորդման նմանատիպ միջոցներ» (տես Յու. Կնորոզով, նույն տեղում, էջ 5): Այդ տեսակետից միանգամայն ճիշտ են նկատել վերծանման բնագավառի մասնագետները, որ կողավորումն ու ապակողավորումը, անգամ ավանդական թարգմանությունը, ինչ-որ չափով կարելի է դիտարկել իբրև մեկ համակարգի կողերով գրված տեքստի բաղադրիչների ապակողավորում մեկ այլ համակարգի կողերով գրված տեքստի բաղադրիչներով:

Գիտական գրականության մեջ առկա սովորույթով «կող» և «շիֆր» եզրերը կիրառվում են իբրև հոմանիշներ, մինչդեռ գաղտնագրության մեջ դրանք ոչ միայն հոմանիշներ չեն, այլև հստակորեն հակադրվում են միմյանց:

Շիֆրը որպես «նումինանտ» (իմա՝ նշանակելի) ունի հնչյունը կամ գիրը (տվյալ լեզվի գրային համակարգի բաղադրիչ: Որպես շիֆրի ամենապարզ օրինակ կարող է ծառայել այբուբենի տառերի դասակարգման համակարգումը ըստ կարգահամարի):

ա — 01	ե — 05	թ — 09
բ — 02	զ — 06	ժ — 10
գ — 03	է — 07	ի — 11
դ — 04	ը — 08	լ — 12

Նման համարակալումը պետք չէ շփոթել Մաշտոցի կողմից հայոց այբուբենի յուրաքանչյուր տառին թվային արժեք տալուն: Մաշտոցյան այբուբենում, սակայն, ժ-ն 10 արժեք ունի,

իսկ Ի-ն արդեն 20, Լ-ն 30 (աճը տեղի է ունենում տասնյակներով, իսկ տվյալ դեպքում տառերի պարզ հերթականության հետ գործ ունենք: Որպես օրինակ, ասենք, ԱԲԳԱԳ անվան ծածկագրումը կունենա հետևյալ տեսքը՝ 123132:

Հայտնի է «Կեսարի շիֆրը»: Պատմիչ Սվետոնիոս Տրանկվիլլը իր «Տասներկու կեսարների կյանքը» գրքում գրում է, որ Հուլիոս Կեսարը օգտագործում էր մի այնպիսի գաղտնագրություն, որը հիմնված էր տառերի դասավորության վրա, որոնցից ոչ մի բառ պիտի չկազմվեր: Այն վերլուծելու համար անհրաժեշտ էր բառի առաջին տառի փոխարեն միշտ կարդալ չորրորդ տառը: Ստորև ներկայացնում ենք Հուլիոս Կեսարի ստեղծած շիֆրը (տե՛ս Ս. Տրանկվիլլ, Աստվածային Հուլիոս, 56, 6).

a-d	f-i	l-o	q-t	x-a
b-e	g-k	m-p	r-u (v)	y-ֆ
c-f	h-l	n-q	s-x	z-c
d-g	i-m	o-r	t-y	
e-h	k-n	p-s	u (v)-z	

Կողավորման դեպքում փոխակերպվում են միայն բառային, իմաստաբանական միավորները, իսկ քերականական և բառակազմական ձևությունները մնում են անփոփոխ:

Լեզվաբանական վերծանումը իր մեջ ներառում է մի շարք տիպերի խնդիրների լուծում (գոնե նվազագույնը՝ 4 տիպի).

1. Հայտնի է գրային լեզուն, սակայն հայտնի չէ գրային համակարգը. Դա ըստ էության վերծանում է նեղ իմաստով:

2. Գրային համակարգը հայտնի է, բայց անհայտ է լեզուն. Այս դեպքում գործ ունենք մեկնաբանության (интерпретация) հետ:

3. Անհայտ լեզուն գրի է առնված անհայտ գրային համակարգով: Այս դեպքում անհրաժեշտություն է ծագում բացահայտել և՛ լեզվի միավորների նշանակությունը, և՛ արտասանությունը. Սա արդեն լայն առումով բացահայտում է:

4. Անհայտ լեզվով և անհայտ գրությամբ տեքստի ընթերցումը, թարգմանությունը և վերլուծումը արդեն, իրոք, տեքստի վերձանում է ամենալայն առումով:

Պատկերացնենք ռուսերենով մի տեքստ, որ գրված է լատիներեն տառերով: Ինչ խոսք, ռուսերենի առանձին հնչյուններ լատինատառ համակարգով ներկայացնելու դեպքում այնպիսի տառեր, ինչպիսիք են, ասենք, Գ-ն կամ Ի-ն, անհրաժեշտություն կառաջացնեն հավելյալ գրանշաններ գործածելու: Այդուհանդերձ, ընթերցելու փորձ կատարող ռուսների գերակշիռ մասը հեշտությամբ կկարողանա կարդալ այդպիսի տեքստ և հասկանալ: Դա մոտավորապես նույն երևույթն է, ինչ ռուսական բանակից հայ կիսագրագետ տղաները տուն նամակ էին գրում ռուսատառ հայերենով:

Այն դեպքում, երբ ռուսաց լեզվով տեքստը գրված է հայերեն այբուբենի տառերով, փաստորեն հայտնի է լեզուն, բայց անհայտ է գրային համակարգը: Դժվարություններն այս դեպքում ոչ միայն ակնհայտ են, այլև նմանատիպ են, ինչին առնչվում են կրիտամիքենյան գծային Բ տիպի համակարգի հետ գործ ունենալիս: Այս գրային համակարգի վերձանությամբ զբաղվել են շատերը, այդ թվում և ակադ. Գ. Ջահուկյանը, որը հատուկ հոդված ունի նվիրված կրիտամիքենյան Բ տիպի գրային համակարգի վերձանման խնդիրներին:

Գրային համակարգի վերձանման դասական օրինակներից է խեթերենի վերձանման Բ. Հրոզնու փորձը: Հայտնի է, որ խեթերեն տեքստեր գրվել են սեպագիր արձանագրությունների տեսքով, որ մոտ է ակկադերենին: Վերջինս արդեն XX դ. սկզբին բավական մանրամասն հետազոտված էր: Բ. Հրոզնին կիրառելով ստուգաբանական նույն մեթոդը և հենվելով այն իրողության վրա, որ խեթերենը և ակկադերենը ցեղակից լեզուներ են, «վերականգնեց» արմատների հնչյունական և իմաստաբանական պատկերները:

Գրային նույնատիպ կամ մերձակա ձևերի և տարրերի հնչյունական համակարգերի «ադապտացման» օրինակ կարող են ծառայել Մաշտոցի կողմից աղվաներենի և վրացերենի համար ստեղծած գրային համակարգերը: Ներկայիս հայր տեսնելով հին վրացերենի և աղվաներենի գրային համակարգերով որևէ տեքստ, առաջին հայացքից իսկույն փորձում է կարդալ, թեև տվյալ համակարգերում միևնույն նշանները տարբեր հնչյունական «բեռնվածություն» ունեն: Նույն հնչաբառերի միանգամայն տարբեր բեռնվածություն ունենալու մասին է վկայում Փարիզի ռուսական դեսպանատանը պատահած զավեշտական մանրադեպը: Ազնվական տիկնոջ վերարկուն տալիս ռուս հանդերձապահին ասել է. «Ваш салон» (որ նշանակում է **ձեր թանկագին վերարկուն**), մինչդեռ ֆրանսերենում «Vache salope» պարզապես նշանակում է «կեղտոտ կով»: Բնական է, որ առաջացած մեծ աղմուկը հարթվում է, պարզելով, որ «վերծանումը» միանգամայն այլ պատկեր է տվել: Եվ սա տակավին այն դեպքում, երբ ռուսերենն ու ֆրանսերենը ցեղակից (հնդեվրոպական) լեզուներ են:

Ի տարբերություն ստուգաբանական մեթոդի, որն ըստ էության զուտ լեզվաբանական մեթոդ է, կոմբինատոր մեթոդը ներառում է իր մեջ ինչպես «ներքին» վերծանումը, այսինքն՝ լեզվական բաղադրիչների զուգորդական տիպերի վերլուծությունը, այնպես էլ արտաքին վերծանումը, որը ներառում է նաև արտալեզվական չափանիշներ՝ տեղեկություններ արձանագրության հայտնաբերման վայրի մասին, ինչ առիթով է կազմվել արձանագրությունը, գրանցվել «ուղեկցող» պատկերների բնույթը և այլն: Իմիջիայլոց, «արտաքին» տվյալները չափազանց կարևոր նպաստ են բերում ճիշտ վերծանման գործընթացին:

Հանրահայտ է ռոզեթյան քարի միջոցով Ժ. Շամպոյոնի կողմից հին եգիպտերեն արձանագրության վերծանման պատմությունը: Եգիպտագետների խնդիրը, անշուշտ, ավելի դժվար է

եղել, քանի որ հին եգիպտերեն գրությունը տառային (այբուբենային) հիմք չի ունեցել:

Կառուցվածքային լեզվաբանությունը և վերձանումը շատ ընդհանուր գծեր ունեն: Երկու դեպքում էլ լեզվի կառուցվածքի նկատմամբ ընդհանուր օրինաչափություններ են կիրառվում (լեզուն որպես կառուցվածք, որպես համակարգերի համակարգ և այլն):

Հակառակ այն իրողության, որ վերձանման գործընթացը լայնորեն կիրառվում է էլեկտրոնային հաշվիչ մեքենաներում, այդուհանդերձ վերձանումը բնութագրվում է ոչ թե իբրև զուտ կիրառական բնագավառ, այլ տեսական լեզվաբանության բաժին:

Վ. Շեվորոշկինը «Երբ լռում են գրային համակարգերը» (Մ., 1970) գրքում գրել է. «Վերձանման նպատակը ոչ թե հետազոտության գործընթացի մեթոդիկայի մշակումն է, այլ բուն վերձանումը, որի արդյունքում տեքստի հասկանալը ծառայում է իբրև վերջնական արդյունք»: Անշուշտ, նկատի ունի ոչ թե տեքստի սովորական ընկալումը, այլ ճիշտ հասկանալը, այնպիսի ընկալումը, որ փաստվում է, դառնում է ապացուցելի:

Այսպիսով, վերձանումը, վերձանման մեթոդների մշակումը լեզվաբանության կարևորագույն բնագավառներից է, որը սերտ կապեր է ստեղծում կիրառական և տեսական մի շարք առարկաների միջև և ոչ միայն գոյության իրավունք է ապահովել, այլև, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների լայն կիրառմամբ, դարձել է լեզվաբանության և հարակից գիտությունների հեռանակարային ոլորտներից մեկը:

**ԿԱՆՈՆԻ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հարավային Կովկասում կիրարկվող լեզուների մեջ պետական լեզվի կարգավիճակ ունեցող և ամենալայն գործառույթներով բնութագրվող լեզուներն են՝ հայերենը, վրացերենը և ադրբեջաներենը: Եթե հայերենը և վրացերենը գրային մշակույթ ունեցող հնագույն լեզուներից են, նախկին ԽՍՀՄ տարածքի հնագույն լեզուները, ապա ադրբեջաներենը՝ հին գրային մշակույթ ունեցողների շարքում է (հմմտ. Սալանով, *Азербайджанский язык в орбите языкового взаимодействия*, Б., 1988, Ընդ որում Հարավային Կովկասի նշված լեզուները պատկանում են միանգամայն տարբեր ծագումնաբանական խմբերի (հայերենը՝ հնդեվրոպական, վրացերենը՝ իբերո-կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական խմբին, Ադրբեջաներենը՝ թյուրքական լեզվաընտանիքին): Նրանցից յուրաքանչյուրը անցել է լեզվական կանոնի և կիրարկության փոխհարաբերության ինքնատիպ պատմական ուղի:

Հայ և վրաց տերմինաբանությունը հազարամյակների պատմություն ունի: Տակավին V դ, սկզբում Հայաստանում և Վրաստանում գործառում էին բավականաչափ հարուստ տերմինաբանություն ունեցող գրական լեզուներ՝ գրաբարը (հին գրական հայերենը) և հին գրական վրացերենը: Այդ լեզուների տերմինաբանության մշակման գործընթացներն ի հայտ են բերում ընդհանուր շատ գծեր: Երկու դեպքում էլ հատկապես թարգմանական հարուստ գրականության հողի վրա բուռն զարգացում են ապրում տերմինաբանության մի շարք ճյուղեր: V-XVII դդ. հայ և վրաց մատենագիրները՝ հոգևոր ոլորտի գործիչները, մշակույթի տարբեր ոլորտների մշակները ստեղծում են հազարավոր տերմիններ, զարգացնում գիտության տարբեր ճյուղերի բառապաշարը և այլն: Նոր շրջանում լեզվական կանոնի և կիրարկության

ուղորտում հայ և վրաց իրականության մեջ ուրվագծվում են երկու հզոր անհատականություններ՝ բառարանագիրներ Սուլխան-Սաքա Օրբելյանին (1658-1725) և Մխիթար աբբա Սեբաստացին (1676-1749): Իրենց բառարանագրային հուշարձաններով նրանք նոր որակի են հասցնում գիտական տերմինաբանությունը, ստեղծում մնայուն ավանդույթներ հատկապես բազմալեզվան բառարանների ասպարեզում: Ընդ որում եթե վրաց բառարանագիրները գիտական տերմինաբանությունը գերազանցապես մշակում էին մայր երկրում, ապա հայ իրականության մեջ գիտաճյուղային տերմինաբանությունը մեծով մասամբ մշակվում էր հատկապես Վենետիկում, Սուրբ Ղազար կղզում: Թե՛ հայ, թե՛ վրաց տերմինաբանության մշակման ակունքներում կանգնած էին այնպիսի դեմքեր, որոնք ոչ միայն մայրենի լեզվի խորահմուտ գիտակներ էին, այլև բազմալեզվագետ մարդիկ, որոնք տիրապետում էին տասնյակ լեզուների՝ և՛ գրական կանոնական մակարդակով, և՛ կիրարկությամբ: Այս առումով օրինակ կարող են ծառայել վրացի Ի. Բագրատիոնին (1768- 1830) և հայազգի Արսեն Բագրատունին: Վրաց գիտնականի ստեղծած կոթողային գործերից արժե հիշատակել «Վրացերեն-արաբերեն-պարսկերեն-թաթարերեն-լատիներեն-հայերեն բառարանը», իսկ հայր Արսեն Բագրատունու համար՝ «Քերականութիւն ի պետս զարգացելոց»-ը:

Տերմինաբանության առումով չափազանց ընդհանուր գծեր են դրսևորվում հատկապես հայ և վրաց գիտական գրականության և դասագրքերի ստեղծման ուղորտներում: XVII-XVIII դդ. հայերեն և վրացերեն լեզուներով ստեղծվում են մի շարք, ձեռնարկներ՝ աստղագիտության, երկրաչափության, հանրահաշվի, ֆիզիկայի, տրամաբանության փիլիսոփայության, աշխարհագրության և մի շարք այլ գիտությունների գծով (հմմտ. Բ. Гамбашидзе, Грузинская терминология, Развития терминологии на языках союзных республик СССР, М., 1987, էջ 51):

Արդի հայերենի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակները անցյալ դարի վերջին ի հայտ բերելով մշակման և կատարելագործման հստակ միտումներ, անցյալ դարի առաջին տասնամյակներում հասան կանոնարկման որոշակի մակարդակի: Գրական արևմտահայերենն այդ մակարդակին հասավ հարաբերաբար կարճ, ժամանակահատվածում, սակայն գործառության և զարգացման՝ տարբեր պայմանների և ճակատագրի բերումով՝ հետագա տասնամյակներին արևմտահայերենի բուռն զարգացումը կասեցվեց, մինչդեռ՝ արևելահայերենը ձեռք բերեց զարգացման շատ ավելի բարենպաստ պայմաններ: Բարձրանալով պետական լեզվի աստիճանի՝ գրական արևելահայերենն ընդարձակեց իր գործառական ոլորտները (պետական-պաշտոնական լեզու, գիտության նորագույն, ճյուղերի, բուհական լեզու և այլն), հարստացավ ոճական նոր տարբերակումներով, բնութագրվելով կառուցվածքային միասնականությամբ: 1915 թ. հայոց ցեղասպանության հետևանքով գրական արևմտահայերենը բռնադատվեց գոյատևելու սփյուռքի պայմաններում, շարունակելով գործառել սփյուռքի բազմաթիվ գաղթօջախներում (բացառությամբ Իրանի, որտեղ գործառում է արևելահայերենը):

Հայերենագիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, ըստ որի՝ արևմտահայերենի կանոնը (նորման) շատ ավելի մոտ է կիրարկությանը, կենդանի-խոսակցական լեզվին, քան արևելահայերենը: Ըստ այդմ առաջ է քաշվել հետևյալ թեզը. «Պատկերավոր ասած, գրաբարի և արևմտահայ լեզվի զարգացման ուղղվածությունը կարելի է որոշել իբրև ներքնից վերև (այսինքն՝ խոսակցական լեզվից դեպի գրական-կանոնական լեզուն), իսկ արևելահայերենը՝ վերնից ներքև, ընդ որում վերջինս ոչ այնքան ինքն է ձգտում մերձենալ խոսակցական լեզվին, որքան ժողովրդախոսակցական լեզուն է փորձում մոտեցնել իրեն չի կարելի ասել, իհարկե, թե բացակայում է գրական լեզուն խոսակցական կենդանի արտահայտություններով հարստացնելու միտումը

(տե՛ս Հ.Զաքարյան, Լ.Հովսեփյան, ԺՀԼ, 1983թ., էջ 192-193):

Իրականում թե՛ գրական արևելահայերենի, թե՛ արևմտահայերենի կանոնի զարգացումը ընթացել է «ներքնից-վերև» ուղղությամբ: Այն իրողությունը, որ գրական արևմտահայերենն իր կառուցվածքով ավելի մոտ է խոսակցական լեզվին, պայմանավորված է մասամբ բարբառների արևմտյան խմբակցության մեջ մտնող Պոլսի միջբարբառի կառուցվածքային համեմատաբար փոքր «ցրվածությամբ», միջին հայերենի խոսակցական տարբերակի հետ ունեցած որոշակի ընդհանրությամբ և մերձակցությամբ: Երկու գրականների դեպքում զարգացումը ընթացել է դեպի գրաբարը (արևմտահայերի համար խոսակցականի բառապաշարը օտարաբանություններից և առաջին հերթին թրքաբանություններից կտրելու և գրաբարյան ձևերով փոխարինելու, արևելահայերենի դեպքում՝ բառապատկերի հնչումը գրաբարին համապատասխանեցնելու ուղղությամբ): Արդի հայերենի երկու գրական տարբերակների կանոնական մակարդակների փոխհարաբերության հարցը, յուրաքանչյուր՝ կիրարկության հետ ունեցած մերձակցության աստիճանը և զարգացման գործընթացում **կանոն և կիրարկություն** հարաբերության ընդհանուր պատկերը որոշակի արժեք է ներկայացնում ինչպես հայերենագիտության, այնպես էլ մասնավորապես հանրալեզվաբանության առումով:

Սովորաբար ընդունվում է ինչպես գրական կանոնական մակարդակի, այնպես էլ կիրարկության երկու տարբերակ գրավոր և բանավոր: Կիրարկության գրավոր տարբերակի դեպքում նկատի է առնվում հաղորդակցման գրավոր ձևը (նամակ և այլն), բանավոր տարբերակը բուն բերանացի հաղորդակցումն է:

Հանրահայտ իրողություն է, որ արդի լեզուների բնորոշ հատկանիշներից մեկը տերմինաբանության բուռն զարգացումն է: Ըստ այդմ առաջանում են մի շարք լեզվաբանական կոնկրետ խնդիրներ՝ տերմինների հոմանիշության և բազմիմաստության, տերմինային բազմաձևության և մրցակցության հարցեր և այլն:

Այս մասին հստակորեն արտահայտվել է Ռ. Գամբաշիձեն (նույն տեղում, էջ 55):

Քննության առանցքային հարցերից է տերմինաստեղծման ուղիների և միջոցների պարզաբանումը, քանի որ կապված այն հանգամանքից, թե ինչ միջոցների է դիմում լեզուն (սեփական թե փոխառյալ), կարելի է որոշ գաղափար կազմել տվյալ լեզվի բառակազմական հնարավորությունների մասին:

Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն տերմինաբանական գրականության մեջ հստակորեն նշվում են տերմինային բառապաշարի զարգացման, հարստացման երկու հիմնական աղբյուրներ, ուղիներ՝ ներքին և արտաքին:

Ներքին միջոցները նկատի ունենալով՝ սովորաբար առանձնացվում են հետևյալ շերտերը.

1. Ընդհանուր տերմինային շերտ, այս խմբում ներկայացվում են այն տերմինները, որոնք գործառույթում են տվյալ լեզվի հնագույն փուլից սկսած առ այսօր:

2. Հին լեզվավիճակից (գրաբարից, հին վրացերենից և այլն) ավանդված տերմիններ, որոնք ներկայացվում են երկու ենթախմբով՝ ա) տերմիններ, որոնք կիրարկվում են նաև այսօր,, այսինքն՝ կենսունակ են (**երգ, քանաստեղծ**), բ) տերմիններ, որոնք այսօր պատմական արժեք ունեն:

3. Առանձնահատուկ կամ մասնակի շերտեր (օրինակ միջին հայերենի ճանապարհով անցած տերմիններ (**հայրեն, խաղիկ**):

4. Բարբառային ոլորտից անցած տերմիններ, որոնք հարաբերաբար սահմանափակ թիվ են կազմում:

5. Արդի գրական լեզվի տարբերակների մեկից մյուսին անցած տերմիններ (հմմտ. օրինակ՝ ա) արևմտահայերենից արևելահայերենին (**թերթոն, նորավեպ, թատրերգակ, գեղոն**), բ) արևելահայերենից արևմտահայերենին (**սլլան, սովետ**):

6. Նորակազմ տերմիններ, որոնք նշանակալից թիվ են կազմում տերմինաբանության հարստացման հիմնական ուղին են:

Նշված բոլոր շերտերը հայոց լեզվի տերմինաբանության հարստացման ներքին ուղիներն են:

Հարավկովկասյան լեզուների տերմինաբանության հարստացման արտաքին միջոցներն են կազմում փոխառությունները: Ըստ ժամանակային գործոնի սովորաբար տարբերակվում են ա) հնագույն և բ) նորագույն փոխառություններ: Փոխառության ճանապարհը բնորոշ է եղել հարավկովկասյան գրական երեք լեզուներին՝ զարգացման բոլոր փուլերում, սկսած հնագույն շրջանից, գրական լեզվի ձևավորման փուլից առ այսօր, փոխվել են միայն փոխատու աղբյուրները: Եթե գրական լեզվի ձևավորման փուլում (V դար) փոխատու լեզուներն էին հունարենն ու լատիներենը, ապա նորագույն շրջանում այդ աղբյուրներն են՝ ռուսերենը, ֆրանսերենը, անգլերենը և այլն: Հարկ է նշել, որ անգամ անգլերեն, ֆրանսերեն և այլ ձևերը XX դարում գրական լեզվի մեջ էին անցնում գլխավորապես ռուսերենի միջոցով: Ռուսերենի միջոցով գրական լեզուների մեջ էին մտնում նաև Խորհրդային Միության ժողովուրդների լեզուներից փոխառված առանձին տերմինային միավորներ (հմտ. օր.՝ գրականագիտական տերմիններից **կոբզարը**՝ ուկրաիներենից): Փոխառյալ տերմինները կարող են դասդասվել երկու խմբով՝ ա) լրիվ բ) մասնակի փոխառություններ: Վերջին դեպքում օտար տերմինը պատճենվում է մասամբ. Օրինակ՝ **տերմինոլոգիա-տերմինաբանություն**: Պատճենվում են նաև տերմինային բառակապակցությունները՝ գրական քննադատություն, **դրական հերոս** և այլն: Թեև տերմինի բնորոշ հասկանիչներից մեկը մենիմաստությունն է, այնուամենայնիվ հարկ է լինում ինչպես հայերենի, այնպես էլ վրացերենի դեպքում, խոսել տերմինային բազմիմաստության մասին: Տերմինային բազմիմաստության երևույթը հատուկ է նշված գրականների ինչպես կանոնին, այնպես էլ կիրար-

կուռյանը: Դրանից ազատվելու համար առարկայական փորձեր են արվում՝ ապահովելու տերմինային միանշանակությունը: Տերմինների բազմիմաստության պատճառները նշված գրականներում էլ նույնն են՝ բառիմաստի նեղացմամբ, երբ համագործածական բառը իմաստի նեղացմամբ տերմինային արժեք է ստանում և դառնում բազմիմաստ բառ՝ **անուն - վերնագիր, հատուկ անուն, եղանակ - տարվա, բայի** և այլն:

Տերմինային բազմիմաստություն է առաջանում նաև հակառակ ճանապարհով իմաստի ընդլայնմամբ:

Հարավկովկասյան լեզուներում զարգացման արդի փուլում տերմինային կրկնակ ձևերի նվազեցման որոշակի միտում նկատվում: Այն ավելի հաճախ իրագործվում է փոխառյալ տերմինի դուրս մղմամբ: Որպես կանոն այդ տերմինները զուտ ռուսական ձևեր չեն, այլ փոխառություններ եվրոպական լեզուներից (գերմաներենից, անգլերենից և այլն). հմմտ. օրինակ՝ **ալեգորիա-այլաբանություն, արխաիզմ-հնաբանություն, բիբլիոգրաֆիա-մատենագիտություն, էպիգրաֆ-բնաբան, էսթետիկա-գեղագիտություն, կուլմինացիա-- գազաթնակետ, պաուզա-դադար, տենդենց-միտում, ֆորմալիզմ-ձևապաշտություն** և այլն: Դա վկայում է այն մասին, որ եվրոպական լեզուներից փոխառության և պատճենման թեզը քնություն չի բռնում: Դրանում համոզվելու համար կարելի է դիտարկել «Գրականագիտական բառարանի» 1972 թ. և 1980 թ. հրատարակությունները: Երկրորդ հրատարակության մեջ փոխառյալ տերմինների փոխարեն հանձնարարվում են հայերեն ձևերը (հմմտ. ԼևՈՃ, 8, էջ 94- 95): Առայժմ, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, կանոնը ավելի հստականում է՝ բեռնաթափվելով զուգաբանություններից, տերմինային կրկնակ ձևերից, սակայն կիրարկությունում որոշ չափով շարունակում է գոյատևել կրկնակ ձևերի մրցակցությունը, որն, անշուշտ, որոշ ժամանակ է պահանջում նվազագույնի հասցնել ու ավելորդ տերմինային զուգաձևությունը: Որոշ դեպքերում կիրարկությունում տերմինային զու-

գաձևությունն առաջանալուն նպաստում է գրական արևմտահայերենը: Վերջինիս որդեգրած սեփական լեզվական ձևը ժամանակ առ ժամանակ սկսում է մրցակցել արևելահայերենի փոխառյալ ձևերի հետ՝ **ժուռնալիստ-լրագրող**:

Բուն տերմինային միավորներից հաճախ առանձնացվում են մասնագիտական բառապաշարում ներկայացվող հազարավոր բառեր, որոնք արտադրության բազմապիսի գործիքների, առարկաների, իրերի անվանումներ են: Դրանք ըստ էության անվանակարգային ձևեր են. որոնք ոմանք մտցնում են եզրաբանության մեջ, ոմանք դուրս են թողնում: Բայց տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հարցն այն է, թե ի՞նչ վերաբերմունք են դրսևորում նշված գրականները նման տիպի շարքերի նկատմամբ, այսինքն՝ կազմախոսական անվանումները, բուսանունները, բազմաթիվ դեղանունները նույնպես պատճենվում են, թե՛ պարզապես փոխառնվում են: Այդ հարցում այսրկովկասյան գրական լեզուների մոտեցումները շատ չէին տարբերվում. եթե անվանակարգության միավորները ավանդված են դարերով և նոր չէ, որ փոխառնվում են, ապա այդպիսիք լեզուն, բնականաբար, պահում կամ գոնե աշխատում է պահել: Խոսքը մարդակազմության, բուսանունների և բազմաթիվ այլ ոլորտների մասին է, հազարավոր անվանումներ, որոնք դարերի պատմությունն ունեն: Ինչ վերաբերում է այնպիսի անվանումների, որոնք նորագույն շրջանի են (օրինակ հազարավոր դեղանվանումներ), որպես կանոն չեն պատճենվում ինչպես վրացերենում, այնպես էլ մանավանդ հայերենում: Ուրեմն, կարելի է ասել, որ նշված լեզուները տարբերակված մոտեցում ունեն տերմինների և անվանակարգերի նկատմամբ: Վերջին դեպքում, եթե գործ ունենք նոր անվանակարգերի հետ, ապա պատճենումը անիմաստ է դիտվում, և գործում է ուղղակի փոխառելու միտումը, (հմտ. **անալգին, ասկոֆեն, բիոմիցին** և այլն):

Այսպիսի մոտեցումը տերմինաբանության մեջ անհետևողականության և սկզբունքի խախտման տեղիք չի տալիս, քանի

որ եթե տերմինների դեպքում գործ ունենք ներքին իմաստային հարաբերությամբ պայմանավորված որոշակի հասկացություններ արտահայտող բառային միավորների հետ (ներհամակարգային փոխպայմանավորվածության), ապա անվանակարգի միավորների դեպքում փաստորեն գործ ունենք մասնավոր առարկաների և նրանց մասերի անվանումների հետ:

Հայագիտության մեջ այն կարծիք է հայտնվել, որ փոխառությունների նկատմամբ լեզվի ունեցած դիրքորոշումներով կարելի է որոշել լեզվի կանոնարկվածության աստիճանը: Ահա թե ինչ են գրել այս մասին Լ. Հովսեփյանն ու Շ. Զաքարյանը. «Գրական խիստ նորմայի գոյության շրջաններում, ինչպես օրինակ դասական գրաբարի և արդի գրական աշխարհաբարի շրջաններում դրանք (իմա՝ փոխառությունները –Ա.Ս.) արտամղվում են, առաջին պլան է քաշվում լեզվաշինության սկզբունքը, տերմինաբանության և բառապաշարի անհրաժեշտ շերտերի ստեղծումի պատճենմամբ կամ բառակազմական սեփական միջոցներով» (նույն տեղը): Այդպիսով, որքան կանոնարկված է լեզուն, այնքան ավելի քիչ է դիմում փոխառությունների: Առաջին հայացքից անվիճելի թվացող այդ հատկանիշը իրականում լեզվի կանոնարկվածության հետ ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված կապ ունի: Հայտնի է, օրինակ, որ արդի հայերենի երկու գրական տարբերակները փոխառությունների հարցում հետևում են միանգամայն տարբեր քաղաքականության, արևելահայերենը փոխառությունները դիտում է իբրև լեզվի հարստացման, տերմինաբանության համալրման ուղիներից մեկը, այն դեպքում, երբ արևմտահայերենը փոխառություններից ընդհանրապես ձգտում է խուսափել: Դրանից բնավ չի հետևում, թե արդի արևմտահայերենն ավելի կանոնարկված է, քան արևելահայերենը: Փոխառությունների նկատմամբ որդեգրված արևմտահայերենի մոտեցումը ոչ թե պայմանավորված է կանոնարկվածությամբ, այլ ձուլման որոշակի վտանգով: Այսպիսով, փոխառությունները լեզվի մշակվածության և

կողավորվածության աստիճանը որոշող ցուցիչի դերում չեն կարող հանդես գալ: Արևմտահայերենի կառուցվածքային միասնականության և ավելի բարձր կանոնարկվածության մասին պնդումը (անդ, էջ 194) վիճարկելի է, ինչպես որ ընդունելի չէ այն պատկերացումը, համաձայն որի «գրական արևմտահայերենի կանոնարկումը ընթացել է կողավորման, իսկ գրական արևելահայերենինը՝ կատարելագործման ուղղությամբ» (ԺՇԼ, 1983 թ., էջ 193): Իրականում երկու գրականների կանոնարկման գործընթացում դեր են խաղացել ինչպես կողավորումը, այնպես էլ ինքնակատարելագործումը: Ընդ որում գնալով ավելի որոշակի է դառնում արևելահայերենի կանոնի ազդեցությունը գրական արևմտահայերենի վրա:

Արդի հայերենի երկու գրական տարբերակների «մերձակցության» աստիճանը վերջին հարյուրամյակում որոշակի փոփոխության է ենթարկվել: Նշված գրական վիճակների զարգացումն ընթացել է, քերականական ընդհանրությունների նվազեցմանը զուգընթաց, բառապաշարային ընդհանրությունների ավելացման (ուժեղացման) ուղիով (հմմտ., օրինակ՝ անցյալ դարի վերջին արևելահայ գրական կանոնով թույլատրվող **լավեցավ**, **փակվեցավ**, պատահեցավ բայական ձևերի, բացառական, գործիական հոլովների հոդառության՝ **վերջումը**, **Թիֆլիսումը**, ստացական ձևերի՝ **դրությունները** և այլն ձևերի ոչ կանոնական դառնալը և վերացվելը, այն դեպքում, երբ նշված քերականական երևույթները այսօր էլ մնում են իբրև արևմտահայերենի կանոնով հանձնարարվող ձևեր):

Հանրահայտ է, որ տերմինաշինության բնագավառում չի կարելի մեկ չափանիշով մոտենալ տարբեր կառուցվածք և ներքին հնարավորություններ ունեցող, գրական մշակման տարբեր ուղիներ անցած լեզուների նկատմամբ: Այդ առումով հայերենը և վրացերենը հնագիր լեզուների շարքում աչքի են ընկնում գիտական հազարավոր անվանումները, տերմինները լեզվի ներքին միջոցներով արտահայտելու ճկունությամբ, որից

եթե գրական արևմտահայերենը օգտվում է առավելագույն չափերով, ապա արևելահայերենն էլ՝ նվազագույն հնարավորությամբ, բառակերտման ներքին «մեխանիզմը» երբեք չդնելով գերբեռնվածության տակ:

Գրական արևելահայերենի կանոնարկման ողջ ընթացքում այդ մեխանիզմը արգելակող հանգամանք է եղել լեզվի ներքին հնարավորության լավագույն դրսևորումը «մաքրամոլությամբ» պիտակվելը մի կողմից և փոխառությունների նկատմամբ չափից ավելի «լայնախոհ» մոտեցումը՝ մյուս կողմից:

Չանց առնելով առանձին տերմինային միավորների հայերեն թարգմանությունների անհաջողության պատճառով չտարածվելը կանոնում և հատկապես կիրարկության մեջ, լեզվի զարգացման ողջ ընթացքում տեղի է ունեցել անհարկի փոփոխությունների մաղում: Կարելի է ասել, որ արևելահայերենի կիրարկության մեջ փոխառյալ բառերը հեշտությամբ են մտնում, բայց յուրացվում են դժվարությամբ: Կանոնի մեջ անցնելուց հետո էլ հայերեն հոմանիշ ձևի և փոխառյալ տերմինների միջև մրցակցությունը սովորաբար ավարտվում է հայերեն ձևի հաղթանակով: Քիչ չեն նաև դեպքերը երբ սեփական և փոխառյալ տերմինային ձևերի միջև անհամապատասխանություն է ստեղծվում կանոնի և կիրարկության մեջ: Քանի որ տերմինահամակարգում կանոնի և կիրարկության միջև եղած շեղումները լեզվից լեզու բնութագրվում են ոչ միևնույն արժեքներով, առաջանում է ինչպես վրացերենի և ադրբեջաներենի, այնպես էլ արդի հայերենի երկու գրական տարբերակների կանոնի և կիրարկության փոխհարաբերության տարածամասնակյա քննության անհրաժեշտությունը:

Քննության են առնվել առկա տերմինաբանական, բացատրական բառարանները: Հ. Բարսեղյանի «Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տեմինաբանական բառարանի», ինչպես նաև Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» և ԳԱԱ լեզվի ինստիտուտի քառահատոր բառարանի

համեմատությամբ՝ Ֆ.Խլղաթյանի «Նոր բառեր և իմաստներ» բառարան-տեղեկատուս դիտվել է իբրև չկանոնագրված բառացանկ՝ կիրարկության արդյունք: Բառարանի հեղինակը նույն կարծիքին է. «Բառարանը կանոնարկման նպատակ չունի... դա հատկապես վերաբերում է տերմինային նշանակություն ունեցող բառերին, որոնք հավակնություն չունեն մրցելու արդեն իսկ գործածվող և կայունացած համարժեքների հետ» (էջ 5): Ուրեմն, բառարանագրի նպատակից դուրս է եղել օտար տերմինների հայացումը. ահա թե ինչու բառացանկի մեջ ազատորեն մտել են բավականաչափ փոխառյալ բառեր: Այսպիսով նշված բառարանը կարելի է դիտել իբրև կիրարկության մակարդակ ներկայացվող նմուշ:

Մեփական թե փոխառյալ միջոց	Բառերի քանակը	Տոկոսը	Նմուշ
Մեփական (ինքնուրույն) բառաշերտ	552	55,2	շարժիչ
Չուտ փոխառյալ բառաշերտ	204	20,4	ակտ
Փոխառյալ տերմին հայերեն վերջնաբաղադրիչով	212	21,2	տանկակայան
Փոխառյալ տերմին հայերեն առաջնաբաղադրիչով	32	3,2	փոխպրեզիդենտ

Շուրջ հազար բառ պարունակող տվյալ բառարան-տեղեկատուի վիճակագրական տվյալները ընդհանուր գծերով արտացոլում են կիրարկության մեջ փոխառությունների տեսակարար կշիռը:

Աղյուսակից վստահաբար կարելի է անել հետևյալ եզրակացությունները. կիրարկության մակարդակում նույնպես սեփական միջոցներով կազմված նոր բառերը գերակշռում են (ավելի քան 55%): Չուտ փոխառյալ բառերը ամբողջ բառաշերտի մեկ հինգերորդ մասն են կազմում (20,4%): Շուրջ մեկ տոկոսով

ավելի է հայերեն վերջնաբաղադրիչներով փոխառյալ բառերի քանակը: Ինչպես ակնկալելի և սպասելի էր, հայերեն առաջնաբաղադրիչներով փոխառյալ բառերը կազմում են ընդհանուր բառաքանակի շուրջ 3 տոկոսը: Ընդհանուր առմամբ, չկանոնարկված (կիրարկության) մակարդակում փոխառությունները կազմում են շուրջ 45%:

Բնականաբար, լեզվի կանոնական մակարդակում փոխառությունների տեսակարար կշիռը զգալիորեն նվազում է: Այսպես, օրինակ՝ Թ. Ավդալբեկյանի «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանի» 5 հազար տերմինի քննությունից պարզվում է, որ ավելի քան 20% գուտ փոխառյալ բառերի դիմաց կանոնական մակարդակում գործ ունենք շուրջ 11% փոխառյալ շերտի հետ, այսինքն՝ կանոնարկումից հետո, ըստ էության, փոխառյալ երկու բառից մեկը իր տեղը զիջում է սեփական բառածին, ըստ այդմ՝ երկու անգամ նվազում է փոխառությամբ տվյալ իմաստն արտահայտելու անհրաժեշտությունը: Արդի գրական հայերենի երկու վիճակներում էլ կանոնով հանձնարարվող մի շարք ձևեր կիրարկության մեջ «փոխարինվում» են փոխառյալ ձևերով, օրինակ՝ **ժապավենատուփ-կասետ, լուսապատկեր-սլայդ, շարժասանդուղք-էսկալատոր:** Եթե արևելահայերենի կիրարկության մակարդակում կանոնով հանձնարարվող ձևի փոխարեն կիրառվում է գերազանցապես ռուսերենից փոխառված բառածինը, ապա արևմտահայերենում՝ ֆրանսերենից և անգլերենից փոխառված համապատասխան բառածինները՝ **բալետ-բալե, բուֆետ-բուֆե, բանկ-բանք, սինդիկատ-սինդիկա, սպորտ-սբոր, սովետական-սովետ** (հմմտ.՝ **Սովետական Միություն-Սովետ Միություն**): Վերջին դեպքում արևմտահայերենի կանոնը հանձնարարում է խորհրդային ձևը: Նկատելի է, որ նման երևույթի հետ գործ ունենք հատկապես այն դեպքերում, երբ փոխառյալ բառը ավելի կարճ է, ուստի և արտաբերվում է հարաբերաբար նվազ ճիգով, հմմտ., օրինակ **մեկնարկագիծ-ստարտ, գազաեռակցող-սվարշիկ, վերելակ-լիֆտ**

և այլն: Նվազագույն ճիգի սկզբունքը, սակայն, ըստ էության չունի վճռական դեր, քանի որ բազմաթիվ օրինակներում թեև միջազգային բառաձևը ավելի կարճ է, քան սեփականը, այնուամենայնիվ նշված համարժեքների մրցակցության մեջ հաղթող է ճանաչվում հայերեն համարժեքը: Այդ մասին են վկայում Բ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանից» բերվող հետևյալ վիճակագրական տվյալները, **վերլուծական-56, անալիտիկ-6, դասախոսություն-87, լեկցիա-6, հեղափոխություն-424, ռեվոլյուցիա-66, մտավորական-32, ինտելիգենտ-4** և այլն (էջ 13): Նշված բառարանում ներկայացված մինչև 3 հաճախականություն ունեցող 19.200 բառի շուրջ 0,8% է փոխառյալ (շուրջ 320 բառ), բայց ահա ընդամենը 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում փոխառյալ բառերի թիվն արդեն շատ է՝ 572 բառ (շուրջ 4%): Եթե նկատի ունենանք, դր հայերենի հաճախականության բառարանի ընտրանքի ընդհանուր ծավալը եղել է ավելի քան երկու միլիոն բառագործածություն, ապա կարելի է եզրակացնել, որ գրական հայերենի կանոնական մակարդակում փոխառությունները գերակշիռ մաս չեն կազմում: Բացի այդ, փոխառյալ բառերի զգալի տոկոսը նվազ հաճախականությամբ բնութագրվող, նեղ մասնագիտական տերմինաբանությանը բնորոշ ձևեր են. Օրինակ՝ **ալգորիթմ, պերիֆրազ, դեմոգրաֆիական, աֆրիկատ, էվֆեմիզմ** և այլն, որոնց մեծ մասը գիտական գրականության մեջ ներկայացվում և լայն տարածում է ստացել հայերեն համարժեքով՝ **աֆրիկատ-կիսաշփական, էվֆեմիզմ-մաքրամտություն** և այլն:

Կարելի է ասել, որ հայերենում տերմինային նույնանիշների (միևնույն տերմինահամակարգին պատկանող տերմինային բառերի) մրցակցությունը սովորաբար ավարտվում է հայերեն համարժեքի հաղթանակով, քանի որ վերջինս ի գորու է լինում արտահայտելու փոխատու լեզվում տվյալ տերմինի ունեցած իմաստային բոլոր նրբերանգները և դեռ ավելին՝ առաջին իսկ

հայացքից լինում է հասկանալի, մոտիվացված. Օրինակ՝ **կենսաբան-բիոլոգ, բանասեր-ֆիլոլոգ, կենսաքիմիա-բիոքիմիա** և այլն:

Միջազգային և սեփական բառերի մրցակցությամբ (տերմինային բառերի մի ամբողջ շարք) XX դարի 60-70-ական թվականներին լայնորեն կիրառվում էին ինչպես փոխառյալ տերմինը, այնպես էլ սեփական բառաձևը, օրինակ՝ **աբստրահել-վերացարկել, աբսոյուտ-բացարձակ, ավտոնոմ-ինքնավար** և այլն: Գրական լեզվի կանոնարկման գործընթացով միջազգային ձևերը աստիճանաբար սկսեցին նվազ կիրառություն ստանալ, և այժմ կարելի է ասել, որ գրական կանոնով հանձնարարելի ձևերը լեզվի ներքին միջոցներով արտահայտվածներն են: Կիրարկության մեջ, սակայն, դեռևս փոխառյալ բառաձևերը ազատորեն հանդես են գալիս:

Ի տարբերություն այն երևույթի, երբ գրական կանոնը հանձնարարում է սեփական բառաձևը, իսկ կիրարկության մեջ այն հաճախ փոխարինվում է փոխառյալ տերմինով, կա նաև հակառակ երևույթը, երբ գրական կանոնը հանձնարարում է փոխառյալ ձևը, բայց կիրարկության մեջ արմատացած է սեփական միջոցներով կազմված բառը, օրինակ՝ **ժուռնալիստ-լրագրող, կոմայուտեր-համակարգիչ, անսամբլ-համույթ** և այլն: Հեշտ է նկատել, որ միջազգային բառաձևերի հետ կիրարկության մեջ մրցող ձևերը գրական արևմտահայերենի կանոնով հանձնարարվող բառերն են: Այսինքն՝ արևելահայերենի կիրարկության վրա ազդում է որոշ չափով արևմտահայերենի գրական կանոնը, սակայն միշտ չէ, որ արևելահայերենի կիրարկության մեջ անցած բառաձևերը հեշտությամբ թափանցում են նաև կանոնի մեջ:

Բառակերտման, «լեզվաշինարարության» գործընթացը հատկապես արդի գրական հայերենում տարբերային, անհատական մոտեցումներից վերածվել է գիտական հիմքերի վրա դրված նպատակամղված աշխատանքի: Կանոնի և կիրարկության փոխհարաբերության հարցում այսրկովկասյան տերմինաբանական

կոմիտեների հանձնախմբերի ջանքերի շնորհիվ վերջին տասնամյակի գործունեության մեջ նկատվում է մի կողմից՝ կիրարկության ոլորտում տարերայնության, անկազմակերպվածության և ինքնահնար լեզվական նորակազմությունների ըստ հնարավորին սահմանափակում և կանոնի հիմնական սկզբունքների համապատասխան ձևերի հանձնարարում, մյուս կողմից՝ կանոնի մեջ կիրարկությամբ լայն տարածում ստացած ձևերի:

Առանձին դեպքերում կանոնով հանձնարարվող ձևը կիրարկության ոլորտում որոշակի «դիմադրության» է արժանանում: Այսպես, վերջերս պաշտոնական մամուլում սկսել է լայն տարածում ստանալ ռեգիոն տերմինը: Կիրարկության ոլորտում այդ տերմինի դեմ որոշակի հակազդեցություն է նկատվում, քանի որ մինչ այդ եղած և կիրարկվող **տարածք**, **շրջան**, **ոլորտ** բառերը լիովին արտացոլում են ռեգիոն բառի արտահայտած իմաստը:

Տերմինային միավորների զուգադրությունը վկայում է, որ պատճենման ընթացքում հիմք է ընդունվում ստուգաբանական հատկանիշը. այսպես օրինակ՝ *край журавль* բառի հայերեն պատճենումը՝ **կռունկ (ամբարձի)**, ֆրանսերենից համապատասխան պատճենումով՝ **բարիկաղ-պատնեշ**: Նման կարգի պատճենումները երբեմն կիրարկության մեջ չեն ընդունվում, օրինակ՝ *розетка* հայերեն պատճենումը՝ **վարդակ** (տե՛ս Ա. Ղարիբյանի բառարան):

Հետաքրքիր է այն երևույթը, երբ օտար բառի պատճենման ճանապարհով երկու գրական լեզուներում առաջանում են նույն իմաստն արտահայտելու համար զուգաձևեր (տարբերակներ): Այսպես, օրինակ՝ ռուսերեն *номер* բառաձևի պատճենումով արևելահայերենում գործածում են **համար** բառը («տարօրինակ՝ անսովոր արարք» իմաստով, հմմտ. Է. Ադայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, 1985, էջ 95): Նույն իմաստն արտահայտող ֆրանսերեն բառից արևմտահայերենի կիրարկության ոլորտում հանդես է գալիս **նումերո** բառը. հմմտ. Գևորգին նումերոները (այսինքն՝ տարօրինակ արարքները):

Հայերենի տերմինաշինարարները, ինչպես նշվեց, հաճախ պարզապես պատճենում են ռուսերենի տերմինների արտահայտած իմաստները: Պատճենման գործընթացն աստիճանաբար կաղապարված, կույր հետևողության փոխարեն ընթանում է լեզվի ներքին հնարավորությունների հաշվառումով: Դա երբեմն արտահայտվում է, օրինակ՝ ռուսերենի բառակապակցությամբ արտահայտված տերմինային միավորների մեկ՝ բարդ բառով արտահայտելու որոշակի միտումով: Այսպես, օրինակ՝ *масло сливочное*—կարագ, *масло смазочное*—քայուղ, *заготовка масла*—յուղամբարում, *горный массив*—լեռնազանգված, *земельный налог*—հողահարկ, *подходный налог*—եկամտահարկ:

Կիրարկության ոլորտում նման կարգի պատճենումների դեպքում քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ հայերենի բառամթերքում վաղուց ի վեր գոյություն ունեցող և նույն իմաստն արտահայտող բառը «մոռացվելով» կազմվում է բառացի պատճենմամբ երկարաբան և մերժելի ձև. Օրինակ՝ **գոմ** բառի փոխարեն ստեղծվել է և կիրարկության մեջ (մամուլ, դասագիրք և այլն) է **անասնագոմը**, **փեթակի փոխարեն՝ մեղվափեթակը**, **տեղի, աթոռի փոխարեն՝ նստատեղը** և այլն:

Լեզվի զարգացման ընթացքում, նոր բառերի և իմաստների «հեղեղում» մի կողմից մոռացվում են եղած, ավանդված առանձին ձևեր, և դրա փոխարեն, մյուս կողմից՝ ստեղծվում են հայերենին ոչ բնորոշ առանձին պատճենումներ, որոնք առանձին տերմինաբանների, լեզվագետ-ոճաբանների առարկության տեղիք են տալիս: Նման դեպքերում սովորաբար, կանոնի և կիրարկության մեջ ստեղծվում է որոշ անհամապատասխանություն: Դա բնական վիճակ է կենդանի հաղորդակցմամբ բնութագրվող գրական կանոնարկված լեզվի **համար**, որ անընդհատ փոփոխման, հարստացման և կատարելագործման վիճակում է գտնվում: Կանոնը հիմնավորում է ստանում կիրարկությամբ, կիրարկությունը հիմք է ընդունում կանոնը: Սակայն ինչպես և սպասելի է, նրանց միջև «փոխհամաձայնեցվածություն» բոլոր հարցերում

գրեթե անհնար է լինում ստեղծել: Այսպես, եթե արևելահայրենի կանոնը նախընտրում է բազմահամադրական տերմինային ձևերը, օրինակ **կահարտադրություն, ընտանեբյուջե** (տե՛ս Տնտեսագիտական տերմինների բառարան, էջ 448), ապա կիրարկության ոլորտում նախապատվություն է տրվում վերլուծական կառույցներին՝ կահույքի արտադրություն, ընտանեկան բյուջե և այլն:

Ինչպես կանոնը, նույնպես և կիրարկությունը իսկույն ամրագրում են այնպիսի տերմիններ, որոնք սեղմ են և դյուրահունչ: Այսպես, օրինակ՝ ռուսերենի лошадиная сила բառակապակցության համեմատությամբ **ձիաուժ, авансовая оплата** –կանխավճար և այլն:

Տերմինակազմության ոլորտում պատճենումը հաճախ կատարվում է «բառացի», ռուսերենի բաղադրիչների ստուգաբանական հիմքի վրա, այնուհետև կիրարկության մեջ է դրվում լեզվի նվազագույն ճիգի օրենքով ստեղծված հայերեն համարժեք տերմինը: Օրինակ՝ ռուսերենի фигурное катание մարզական տերմինը սկզբում հայերեն պատճենվեց **ձևավոր չմշկասահք** համապատասխան բառակապակցությամբ, սակայն հետագայում ինչպես կանոնում, այնպես էլ կիրարկության մեջ արմատավորվեց **գեղասահք** տերմինը:

Հարկ է նշել, որ քանի որ տերմինային համակարգի միավորները համակարգային հարաբերության մեջ են գտնվում, և մեկ տերմինի կաղապարային ձևը ազդում է համակարգի այլ բաղադրիչների վրա ձևավոր ձիավարությունն էլ փոխարինվեց ավելի կարճ **գեղավարք** ձևով, հմմտ. **գեղալող** և այլն:

Նման դեպքերում, երբ որդեգրված մի տերմին կանոնում փոխարինվում է մեկ այլ, թեկուզև ավելի լավ, նախընտրելի տերմինով, կիրարկության մեջ դեռևս որոշ ժամանակ շրջանառության մեջ մնում է նախորդը: Այսինքն, կանոնի ներգործությունը կիրարկության վրա կայծակնային չի լինում: Այսպես՝ **գեղասահք** տերմինին անցնելուց հետո էլ առօրյա խոսքում դեռևս

շարունակվում էր գործածվել լեզվի կանոնարկման մակարդակով արդեն մերժված **ձևավոր** չմշկասահք ձևը:

Պատճենման գործընթացը սովորաբար ընթանում է հետևյալ առանձնահատկությամբ. մեկ միջազգային տերմինի փոխարեն հաճախ առաջարկվում են մի բանի տարբերակներ: Այդ երևույթը հստակ է դրսևորվում մանավանդ տերմինաբանական բառարաններում: Այլ լեզուների (գերազանցապես՝ ռուսերենի) տերմինային միավորների դիմաց ազգային լեզվի համարժեքները սովորաբար հոմանշային շարք են կազմում: Այդպիսի լավագույն օրինակ է ռուսերենի *зажигалка* բառի դիմաց ներկայացկող հետևյալ շարքը **ինքնավառիչ-լուցիչ-կայծահան-կայծավառ-վառիչ-հրահան** և այլն (տե՛ս Էդ. Աղայան, էջ 153): Դրանք գերազանցապես համաժամանակյա կերտված ձևեր են և խոսում են այն մասին, որ մեկը կամ մյուսը ընդհանրացված չէ տակավին, և բառարանագիրը մեկ ձև հանձնարարելու հիմք չունի:

Տերմինային ազատ տարբերակների քանակի նվազեցման ուղղությամբ որոշակի աշխատանք են կատարում տերմինաբանական ճյուղային հանձնաժողովները: Այսպես ռուսերենի *преemptивность* բառի դիմաց մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը կիրառեց գրեթե միաժամանակ երկու տարբերակ **հաջորդայնություն և ժառանգորդայնություն**:

Բառագործածության արդի կանոնի առումով ազատ տարբերակներ չստեղծելու համար տերմինաբանական կոմիտեն որդեգրեց և հանձնարարելի համարեց **ժառանգորդային** տարբերակը: Բնականաբար, այդ որոշումից հետո կիրարկության մակարդակում հեշտությամբ **հաջորդայնությունը** դուրս մղվեց գործածությունից:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները (հմմտ. Էդ. Աղայան, անդ, էջ 175), ռուսերենից փոխառնված բառերի գերակշիռ մասը, այսպես կոչված, միջնորդական փոխառություններ են, որոնք ռուսերենն իր հերթին փոխ է առել եվրոպական

լեզուներից՝ **ավտոբուս, ավտոմոբիլ, գրամ, գեներալ, ռադիո, տանկ, ֆուտբոլ, ֆիլմ և այլն:**

Արևմտահայերենում այդպիսի ձևերի բացարձակ մեծամասնությունը ներկայացվում է հայերեն համարժեքներով՝ **ինքնաշարժ, ձայնասփյուռ, հրասայլ, շարժանկար** և այլն: Եթե, ի վերջո, արևմտահայերենում առկա է փոխառյալ ձևը, ապա այն տարբերվում է արևելահայերենի համապատասխան փոխառյալ բառից իր հնչյունական ձևավորմամբ՝ պայմանավորված այլ աղբյուրով: Օրինակ՝ **ավտոբուս** բառի փոխարեն արևմտահայերենում՝ **բաս, գեներալի** փոխարեն **ժեներալ** և այլն:

Հայ տերմինաբանության մեջ փորձ է արվել ճշտելու, թե փոխառությունների հարցում ինչպիսի մոտեցում է որդեգրել հայերենը՝ ռուսերենի և եվրոպական լեզուներից ռուսերենին անցած բառերի դեպքում: Ահա թե ինչ է գրել այդ կապակցությամբ Ռ. Իշխանյանը («Ակնարկ հայերենի տերմինաշինության», Երևան, 1981, էջ 110-111). «Ուշադրություն է գրավում մի հետաքրքրական հանգամանք. արևելահայերը, որ թարգմանությունը հիմնականում կատարում են ռուսերենից և եվրոպական լեզուներից, ամենից լավ գիտեն ռուսերենը, այդ լեզվի միջոցներով կազմված բառերն ու անվանումները աշխատում են անպայման որևէ կերպ թարգմանել հայերեն, մինչդեռ եվրոպական այլ լեզուներից ռուսերենին անցած այլազգի բառերի նկատմամբ զիջող են, ավելի հաճախ չեն տարբերվում: Օրինակ, վերցնենք երթևեկության միջոցների մի քանի անուններ, **паровоз, паролод, самолет, вертолет, воздушный шар** և այլն, սրանք զուտ ռուսերեն բառեր են և թարգմանվում են հայերեն՝ **շոգեքարշ, շոգենավ, ինքնաթիռ, օդանավ կամ ինքնաթիռ, ուղղաթիռ, օդապարիկ, արքանյակ:** Մինչդեռ ռուսերենի փոխառյալ троллейбус, трамвай, автомобиль, автобус, метрополитен, лайнер և նման շատ բառեր նույն արևելահայերենում չեն թարգմանվում, նույնությամբ օգտագործվում են: Պատճառն, ըստ երևույթին արևելահայոց մեջ ռուսերեն բառերի նախնական իմաստի

ըմբռնումն ու ստուգաբանումն է ռուսերենում փոխառյալ (ոչ ռուսերեն) բառերի նախնական իմաստի ըմբռնման բացակայությունը»:

Խիստ վիճարկելի պնդում է, քանի որ պատճենվում են ոչ միայն ռուսերենի բառաձևերը, որոնք հեշտ «ստուգաբանելի են», այլ նույն չափով, եթե ոչ ավելի, եվրոպական, այլ լեզուների բառաձևերը., հմմտ., օրինակ՝ **парад-շքերթ, сувенир-հուշանվեր, пейзаж-բնանկար, натурщик- բնորդ, деталь-մանրակ, барельеф-հարթաքանդակ, абсурд-անհեթեթություն, фальсификация-կեղծարարություն** և այլն, և այլն: Ինչ վերաբերում է Ռ. Իշխանյանի բերած բառաշարքին, ապա այն տվյալ պնդումը հավաստիացնող ուժ չի կարող ունենալ, բանի որ բերված են այնպիսի ձևեր, որոնք գրեթե նույնությամբ փոխառնվում են և վրացերենում, և՛ ադրբեջաներենում, անկախ այն բանից՝ իմաստը ըմբռնվում է հեշտությամբ, թե ոչ:

Դեռ ավելին, ռուսերնի պատճենումների մի զգալի մասը առօրյա հաղորդակցման ոլորտում «փոխարինվում է» բուն ռուսերեն ձևով, ինչպես՝ **պարավոզ, վերտալյոտ, սամալյոտ** և այլն, մինչդեռ եվրոպական այլ լեզուներից փոխառյալ բառերը լայն տարածում ունեն ինչպես կանոնում, այնպես էլ կիրարկությունում, հմմտ.՝ **հուշանվեր, բնանկար, կեղծարարություն** և այլն:

«Իհարկե,- գրում է Ռ. Իշխանյանը,- սա համընդհանուր օրենք չէ. երբեմն չեն թարգմանվում նաև բուն ռուսերեն բառերը, ինչպես և թարգմանվում են բառեր, որոնք ռուսերենում փոխառյալ են: Մակայն ընդհանուր առմամբ վերոհիշյալ երևույթը դիտվում է, և դա նույնպես այն բանի վկայությունն է, որ հայերենի բառաշինական արվեստը շատ կողմերով թարգմանական արվեստ է» (ն.տ.):

Ինչպես նշեցինք, դա ոչ թե երբեմն է տեղի ունենում, այլ սովորաբար, իսկ ինչ վերաբերում է հայերենի բառաշինական արվեստի թարգմանական բնույթին, ապա դա միանգամայն ճիշտ է և լավագույնս դրսևորվում է արևմտահայերենի օրինա-

կով, ուր անխտիր թարգմանվում են օտար բառերը, առանց տարբերակիչ մոտեցման՝ **պարաշյուտ-անկարգել, ավտոմոբիլ-ինքնաշարժ** և այլն:

Ինչ վերաբերում է արևելահայերենին, ապա տարբերակված մոտեցման վերաբերյալ կարծիքը ժխտում է եվրոպական այլ լեզուների տերմինների դիմաց հայերեն, պատճենված համարժեքների գոյությունը: Մտորն ներկայացվում է հազարավոր պատճենված բառերից պատահականորեն ընտրած բառերի հետևյալ շարքը՝ **արստրակցիա-վերացարկում, անտրակտ-ընդմիջում, դադար, էլեմենտ-տարր, էսթետիկա-գեղագիտություն, էպոխա-դարաշրջան, լոգիկա-տրամաբանություն, կուլտուրա-մշակույթ, մասսա-զանգված, ինտելիգենցիա-մտավորականություն, մարշրուտ-երթուղի, իդեա-գաղափար, ինֆորմացիա-իրազեկում, կոնստրուկցիա-կառույց, կաֆեստրադան, իյուզիա-պատրանք, ֆուկլոր-բանահյուսություն, պենալ-տուգանային, ռեյտինգիա-հեղափոխություն, ունիֆիկացիա-միօրինակում, ուլտրա-ծայրահեղ, ուլտիմատում-վերջնագիր, պրոֆեսիա-մասնագիտություն, պրոֆեսիոնալ-մասնագիտական** և այլն: Բառերի այդ շարքը չափազանց երկար է և բնորոշվում է հայերենին հատուկ թեքման (հոլովման-խոնարհման), այլև բառակազմական լայն հնարավորություններով:

Նկատի ունենալով, որ տերմինաբանական բառապաշարը զգալիորեն գերակշռում է արևելահայերենում՝ գիտության, տեխնիկայի բազմազան բնագավառների հարաճուն զարգացման հետևանքով ստեղծվում են հազարավոր նոր բառեր և իմաստներ, աստիճանաբար ավելի շոշափելի է դառնում գրական արևելահայերենի ազդեցությունը արևմտահայերենի վրա (ինչպես կանոնի, այնպես էլ հատկապես կիրարկության վրա):

Մրցակցության մեջ սեփական-փոխառյալ մրցավեճին առավելություն տալիս հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, թե արդյոք փոխառյալ բառն իր ձևով շփոթ չի՞ ստեղծում

սեփական բառաձևի հետ: Օրինակ՝ **պարկ** բառը թեև կարճ և թվում է ավելի հանձնարարելի է, բայց ահա հայերենի **պարկ** (տոպրակ) բառի հետ շփոթ է ստեղծում, այնպես, ինչպես ցեխ-**արտադրամասը** բուն **ցեխի** հետ:

Անժխտելի է, որ անհարկի փոխառություններն իրենց տեղը զիջելով հայերեն համարժեքներին, փաստորեն վերացնում են տերմինային ֆոնդի ավելորդ գերծանրաբեռնումը: Բացի այդ, փոխառյալ բառերի նման փոխարինմամբ՝ լեզվի ներքին բառակազմական հնարավորությունները շատ ավելի հստակ են դրսևորվում: Շնորհիվ փոխառյալ բառ-սեփական բառաձև մրցակցության, կատարվում տերմինային միավորների իմաստային ճշգրտումներ, բառիմաստի հատկացումներ և դրանով նպաստում մայրենի լեզվի բառապաշարի իմաստային կատարելագործմանը: Այդպես է, օրինակ **կոնցերտ** բառի դեպքում, իբրև կատարում այն փոխարինվում է հայերեն **համերգ** համարժեքով, իբրև ստեղծագործության մի տեսակ մնում է և հանձնարարվում լեզվական կանոնով, «համերգին կատարվեց Բաբաջանյանի կոնցերտը»: Առաջին դեպքում հայերեն ձևը լայն իմաստ է արտահայտում, մինչդեռ փոխառյալ կոնցերտ ձևը ստեղծագործության տեսակի անվանում լինելով՝ բնութագրվում է նեղ իմաստով»:

Կան այնպիսի դեպքեր, երբ ռուսերենի մեկ բառի իմաստային պատճենման դեպքում անհրաժեշտություն է առաջանում հայերենում կազմել մի շարք ձևեր, որոնք, սակայն, ոչ թե զուգահեռ ձևեր են, հոմանիշներ, այլ իմաստային տարբերակմամբ պայմանավորված բառեր: Տիպական օրինակ է ռուսերենի բառի հայերեն համարժեքները՝ մենակատար **մենանվագ**, **մեներգ**, **մենապար**: Ինչպես տեսնում ենք, հայերեն նմուշներում հստակորեն ներկայացվում է ոչ միայն մենակատարելու ընդհանուր իմաստը, այլև թե ինչ է կատարվում **երգ**, **պար**, **նվագ**:

Փոխառյալ բառ-սեփական բառ մրցակցության մեջ գերապատվություն տալու դեպքում գործել է ոչ թե հախուռն մոտեցումը, այլ տրամաբանական կշռադատումը, իմաստային ճշգրտման սկզբունքը, հաշվի առնելով այն հատկանիշը, թե սեփական բառաձևը ի վիճակի է, արդյո՞ք, արտահայտելու փոխաստու լեզվի տվյալ բառի բովանդակած ողջ իմաստները:

Վրացերենը ավելի հաճախ է դիմում ռուսերենից և ռուսերենի միջոցով եվրոպական լեզուներից կատարած փոխառություններին, օրինակ՝ ռուս. ռևոլյուցիա (ֆրանսերենից) - հայ. **հեղափոխություն**, ցիտատ- հայ. **մեջբերում**, **կաբինա** (խցիկ) և այլն:

Ռուսերենի ազդեցությունը ազգային (այդ թվում նաև հարավկովկասյան 3 գրական) լեզուների վրա ի հայտ է գալիս ոչ միայն ուղղակի փոխառությունների և կամ պատճենումների ոլորտով, այլև այն դերի կրկնօրինակմամբ, որ խաղում է տվյալ բառակազմական կաղապարը, ածանցը ռուսերենի տերմինակազմության մեջ և նույն դերը ստանձնում է նաև ազգային լեզվի համարժեք միավորը: Մեխանիզմը աշխատանքի դրվելուց հետո արդեն այն առանց պատճենման դերի էլ սկսում է գործել տերմինաբանության ոլորտում: Այսպես, ռուսերենի հարուստ նախածանցման շնորհիվ որոշակի աշխուժացում են ապրել հայերենի այնպիսի նախամասնիկներ, ինչպես **նախա-**, **ստոր-**, **մակ-** և այլն: Բազմաթիվ նախդրավոր կառույցներ են կազմվել և հնում եղածները լայն կիրարկություն ստացել՝ **ի նպաստ**, **ի շահ**, **ի դեմ**, **ի գիտություն** և այլն, ձևեր, որոնք այսօր սովորական են դարձել հայերենի ինչպես կանոնի, այնպես էլ կիրարկության մակարդակներում:

Հայերենի ակնհայտ ճկունությունը, բառակազմական հարստությունը ի հայտ է գալիս ռուսերենին համարժեք ձևեր ստեղծելու, կիրառելու ընթացքում: Այսպես, ժամանակակից կյանքի հետ սերտորեն առնչվող բազմաթիվ բառեր հայերենում հեշտությամբ ստեղծվում և կիրառվում են համապատասխան

լեզվական համարժեք հատկանիշներով (նկատի ունենք՝ սեղմության, դյուրահունչ լինելու և այլ հատկանիշները), օրինակ՝ *однополчанин*-համագնդեցի, *новоселье*- նորամուտ, բնակարանամուտ, *метролог*-չափաբան, *датчик*-տվիչ և այլն: Այսպիսի ձևերը հակասություն չեն ստեղծում կանոնի և կիրարկության մեջ: Պատճառներից մեկը դարձյալ հայերենի սեփական ձևերի պատճառաբանված՝ հասկանալի լինելն է:

Ժամանակին Հր. Աճառյանն, օրինակ բերելով *օսցիլոգրաֆ* սարքանվանումը, գտնում էր, որ հայերեն **ճոճագիր, տատանագիր** բառը, որն ընդհանուր գծերով արտահայտում է փոխառյալ բառի իմաստը, ունի այն դրական հատկանիշը, որ «հասկանալի է»: Այդ բառն առաջին անգամ լսողն անգամ գաղափար կարող է կազմել սարքի էության մասին և այլն:

Նաև «հասկանալիությամբ» պայմանավորված՝ գրական կանոնով հանձնարարվող մի շարք ձևեր, որոնց համարժեքները կիրարկության մակարդակում փոխառյալ ձևեր էին, աստիճանաբար դուրս են մղվում նաև կիրարկության ոլորտից և հայերեն համարժեքները ընդհանուր տարածում են գտնում՝ **լիֆտ-վերելակ, լիֆտոր-վերելակավար** և այլն:

Դիմելով ինչպես ուղղակի փոխառության, այնպես էլ տերմինային ձևերի պատճենման, կիսապատճենման ուղիների, արևելահայերենի համակարգում, ի տարբերություն արևմտահայերենի, հանդես են գալիս ինչպես՝ **համակարգ, դասընթաց, մակնիշ, մանրակերտ** սեփական բառաձևերը, այնպես էլ **ալերգիկ, սիլոս, սենսժ, ֆիլզիտ** փոխառյալ բազմաթիվ ձևերը և այլն:

Ինչպես կանոնում, այնպես էլ կիրառության մեջ տերմինաբանության հարստացման միջոցներից է ներքին հնարավորությունների օգտագործումը:

Տերմինային բառապաշարի հարստացման ուղիներից մեկը ներլեզվական հնարավորությունների իրացումն է՝ գրաբարից, բարբառներից, խոսակցական լեզվից և արևմտահայերենից

անցած բառերի միջոցով, որոնք ձեռք են բերել տերմինային արժեք:

Արևմտահայերենից գերազանցապես արևելահայերենի կիրառության ոլորտն անցած տերմիններից են՝ **հեռաձայն**, **ինքնաշարժ**, **հրասայլ** և այլն:

Վերջին ուղիով արևելահայերենի մեջ մտած տերմինների զգալի մասը կազմում է բառային տարբերակներ **հեռախոս-հեռաձայն**, **դասաժամ-դասապահ** և այլն: Դրանք հիմնականում տարահիմք տարբերակներ են, որոնցում սովորաբար վերջնային բաղադրիչը փոխվում է՝ **խմբական-խմբային**, **սառցարան-սառնարան**, **հեռուստացույց-հեռատեսիլ** և այլն: Տարահիմք տարբերակներ են առաջանում նաև բաղադրության առաջին բաղադրիչի առանձնահատկությամբ՝ **բուժարան-առողջարան (հիվանդանոց)**, **ծրագիր-հայտագիր**, **գրագետ - գրականագետ** և այլն:

Հայ լեզվաբանության մեջ ճիշտ է նշվել, որ «ներքին փոխառություններով մեր գրական լեզուն հարստացնելու գործընթացում ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից փոխառվող, պարսկա-թուրքական ծագումով բառերի գործածությունը գրական լեզվի չեզոք, պաշտոնական ու գիտական ոճերում խիստ սահմանափակվելով՝ ընդհանուր առմամբ մերժվում է» (Էդ. Աղայան, էջ 174): Օրինակ ժողովրդախոսակցական լեզվում մի ժամանակ լայնորեն կիրառվող **չաքուչ**, **գյուլլա**, **ջեյրան** և այլ ձևերը խիստ սահմանափակ կիրառություն են ստացել նաև կիրարկության ոլորտում: Պարսկաթուրքական փոխառյալ ձևերը կիրառության մեջ իրենց տեղը զիջում են գրական լեզվի համապատասխան ձևերին, այսինքն, կարելի է ասել, որ տեղի է ունենում ժողովրդախոսակցական լեզվի բառապաշարի գրականացում: Հարկ է նշել, սակայն, որ գեղարվեստական գրականության մեջ էլ տեղի է ունենում հակառակ գործընթացը՝ գրական առանձին բառաշերտեր «փոխարինվում են» ժողովրդախոսակցական և բարբառային տարբերակներով:

Արդի հայերենի մոտ երկու հարյուր հազար բառից հարյուր հիսուն հազարը ներկայացված է հայոց լեզվի բացատրական բառարաններում: Գրեթե նույնքան բառ է պարունակում նաև շուրջ 40 տարի առաջ լույս տեսած Մտ. Մալխասյանցի բացատրական բառարանը, բայց Աղայանի և նշված բառարանի բառամթերքի միջև հսկայական տեղաշարժ է եղել: Մալխասյանցի բառարանի շուրջ 57 հազար բառ էդ.Աղայանը դուրս է հանել իբրև հնացած կամ բարբառային, իսկ 70 հազար բառ ավելացրել է, որոնք բացարձակ գերակշռությամբ նորակազմություններ են: Բնականաբար, այդ բառամթերքի ծանրակշիռ մասը պատկանում է տերմինաբանությանը: Այդ բառազանձը տարբեր ձևերով է իրացվում կիրառությունում, և այդ առումով էլ տարբերություններ ունեն մեր երկու գրական լեզուները: Գրական արևելահայերենը ոչ միայն կանոնական մակարդակում ստեղծում է հազարավոր նոր բառեր, այլև ջանում է դրանք լայն շրջանառության մեջ դնել, հնարավորին չափ մտցնել գործուն բառաշերտի մեջ, այն դեպքում, երբ արևմտահայերենում նորակազմ բառերի, տերմինների գերակշիռ մասը, ցավալիորեն, մնում է բառարանների շրջանակում: Ուստի, կարելի է պնդել, որ հաճախ արևմտահայերենի բառարաններում ներկայացված բառաձևերը կիրարկության ոլորտում քիչ են հանդես գալիս, ոչ գործուն բառաշերտի մեջ մտնելով: Մինչդեռ արևելահայերենում գիտության և տեխնիկայի տարբեր ոլորտների պատկանող բառերն արագությամբ են անցնում գործուն բառերի շարքը և զուտ տերմինային արժեք ունեցող բառերը անհրաժեշտորեն կիրառվում են նաև առօրյա խոսքում: Կարելի է պնդել, որ գրական արևելահայերենում, արևմտահայերենի համեմատությամբ, ավելի արագ է ընթանում մի կողմից բառերի տերմինացում (հմմտ. **էջ, տառ, տողատակ, հնչյուն** և մի շարք այլ բառերի տերմինացումը) և, մյուս կողմից՝ տերմինների «մուտքը» չեզոք քառաշերտ՝ **ուռուցք, խոց, լիբերալ** և այլն:

Արևելահայերենի կիրառության ոլորտում ավանդական բառաձևերի մի մասը «մոռացվում է»: Կանոնական մակարդակով ստեղծվում են հազարավոր նոր տերմիններ, այն դեպքում, երբ կիրառությունն «անտեսում է» լեզվի նախորդ փուլերից ավանդված տերմինային մի շարք ձևեր՝ **գոմ-անասնագոմ, երինջ-աղջիկ կոլ** և այլն: Այսպիսով, միաժամանակ գործ ունենք հակոտնյա գործընթացների հետ՝ կանոնական մակարդակում բառակերտման, տերմինաստեղծման բուռն գործընթացին ի հակակշիռ, կիրարկության ոլորտում դարերով ավանդված, եղած տերմինային շարքերի, անվանողական ձևերի «մոռացման», անտեսման:

Տերմինային համանշտության, զուգաձևության դեմ մղվող պայքարը լեզվական ընդհանրույթ է, ուստի հատուկ է ոչ միայն մեր երկու գրականներին, այլև գրական վրացերենին: Այդուհանդերձ այդ երկույթը շատ ավելի բնորոշ է արևելահայերենին: Փոխառությունները, անցնելով հայերենի բառապաշարի մեջ, ենթարկվում են հայերենին բնորոշ հնչյունաքերականական «հարմարեցման» երևույթին, այսինքն՝ փոխառյալ տերմինները հայերենում ստանում են ոչ թե փոխաստու, այլ փոխառած լեզվի շեշտային, հնչյունական, քերականական կառուցվածքին բնորոշ հատկանիշները՝ **բրիգադ, պլան** և այլն: Կարելի է նշել փոխառյալ բառերի կրած հետևյալ փոփոխությունները՝ հնչյունական կորուստ, կրկնակ բաղաձայնների տարբերակված հնչում, գրություն և այլն: Ըստ այդմ, ի տարբերություն փոխաստու լեզվի, հայերենում փոխառյալ բառերի շեշտադրությունը վերջնավանկային է. Այսպես՝ **մեխանիզատոր, ռեկտոր, կոմպոզիտոր** և այլն: Այդ է պահանջում կանոնը, այդպես են հնչում ռադիոյով և հեռուստատեսությամբ, պաշտոնական ելույթների ժամանակ, սակայն առօրյա հաղորդակցման ժամանակ քիչ չեն նաև հայերենին ոչ բնորոշ շեշտադրությամբ հնչման դեպքերը՝ **ազիտատոր, ռեկտոր, կոմպոզիտոր** և այլն: Ոչ միայն շեշտն է ոչ վերջնավանկային, այլև առկա է վերջնավանկիային ձայնավորի թուլա-

ցում և հնչյունափոխություն ը-ի, որը նույնպես հայերենին ոչ հատուկ երևույթ է՝ **պրոֆեսոր (պրոֆեսոր-ի փոխարեն)** և այլն: Հայերենի գրական կանոնական շեշտը ընդգծված ուժային բնույթ չունի, և պետք է պայքարել այդօրինակ շեշտադրման երևույթի դեմ:

Աստիճանաբար փոխառյալ բառերի շեշտադրության հարցում կանոնի և կիրարկության միջև եղած բացը, հակասությունը հարթվում է, վերանում՝ կիրարկության շեշտադրությունը մոտեցնելով կանոնով հանձնարարվող ձևին:

Փոխառյալ բառերում կիրարկության, մեջ տասնամյակներ առաջ դրսևորվող քմայնացած հնչումը (**թ-ծ, դ-ձ** և այլն՝ **ձիրեկտորը**) 70-ական թվականներին հիմնականում հաղթահարվել էր. ընդ որում, եթե 20-30 տարի առաջ շուրջ ընդհանուր քմայնացման սկսել էին ենթարկվել նաև բնիկ հայերեն բառերը (**մատյան-մածյան, պատյան- պածյան, Տիգրան-Օրգրան** և այլն), ապա այժմ կանոնական մակարդակում նման հնչումները խիստ մերժելի են, իսկ կիրարկության ոլորտում՝ տակավին հանդիպող:

Տերմինային միավորների բառապատճենման ժամանակ, երկու գրական լեզուներում էլ ինչպես կանոնի, այնպես էլ կիրարկության մակարդակում առաջանում են տերմինային տարբերակներ՝ հնչյունափոխ և անհնչյունափոխ ձևերով՝ **ալյուրադագ-ալրադագ, հնչույթային- հնչութային, ձևույթային- ձևութային** և այլն: Այդպիսի տարբեր բառային ձևերի մրցակցությամբ սովորաբար կանոնական և միակ հանձնարարելի ձևի իրավունք է ստանում լեզվի ներքին օրինաչափություններին համապատասխանող տարբերակը: Երբեմն էլ՝ հավասարապես շարունակում են կիրառվել ինչպես հնչյունափոխ, այնպես էլ անհնչյունափոխ ձևերը (հմմտ. **մշակութային-մշակույթային**):

Մինչև 1995 թ. ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն, այնուհետև ՀՀ լեզվի պետական տեսչության Հայերենի բարձրագույն խորհուրդը, ջանում են

կանոնական մակարդակում վերացնել տերմինային զուգաձևությունները: Այնպես, «Ռուսերենից և օտար լեզուներից փոխառյալ բառերի և վերջնահնչյունի մասին» որոշմամբ զուգահեռաբար գործածվող մի շարք տերմինների ընտրության հարցում հստակություն է մտցվել, այնինչ մինչ տերմինաբանական կոմիտեի համապատասխան որոշումը, փոխատու **ա**-ով վերջացող մի շարք բառերի դեպքում հայերենում հանդես էին գալիս ինչպես **ա**-ով, այնպես էլ առանց **ա**-ի ձևեր **բրիգադա-բրիգադ, թեորեմա-թեորեմ, լեզենդա-լեզենդ** և այլն: Ըստ կանոնի, հայերենում փոխառյալ նման բառերը պետք է ներկայավեն առանց **ա**-ի՝ **բրիգադ:** Կանոնը, սակայն, ունի նաև բացառություններ նշող կետեր, եթե **ա**-ի սղումը բառապատկերի աղավաղում կարող է առաջացնել՝ **մեխանիկա-մեխանիկ** կամ դժվարահունչ կարող է դարձնել բառը՝ **կապելլա-կապել, բուրժուա-բուրժու**, ինչպես նաև թվով 24 բառ, որոնք ավանդաբար ներկայացվել են **ա**-ով՝ պրոպագանդա և այլն:

Այս նույն որոշմամբ, փոխառյալ **ա**-ով մի շարք ձևերի դիմաց հանձնարարվելի են դիտվում հայերեն համարժեքները՝ **անկետա- հարցաթերցիկ, մետեոր-ասուպ, ֆորմուլ-բանաձև** և այլն: Այսպիսով ոչ միայն սահմանափակվում են տերմինային զուգահեռ ձևերը, այլև հայերենի բառապաշարն անհարկի փոխառություններից ազատվում է:

Ռուսերենի ազդեցությամբ, մի շարք արմատական ձևեր, հանդես գալով բարդությունների վերջնային դիրքում, հատկապես տերմինակազմության մեջ, ձեռք են բերել ածանցական իմաստ, օրինակ՝ **կիր, տար, վար և այլն (հրթիռակիր, ռմբակիր, բենզինակիր, ցեմենտատար, հոսանքատար, էներգատար, խմբավար, կոմբայնավար, կռունկավար** և այլն): Ընդ որում տեղի է ունենում տերմինակազմիչ նշված միավորների իմաստային որոշակի տարբերակում՝ **կիր** և **տար** ածանցները կիրառվում են հիմնականում առարկայի, մեքենայի համար, իսկ **վար**-ը՝

մարդու: **Կիր**-ը հանդես է գալիս նաև առանձին անձնանիշ ձևերում՝ **դափնեկիր, դրոշակակիր, և նկարակիր** և այլն:

Կանոնի և կիրարկության փոխհարաբերության առումով հետաքրքիր է հետևյալ հարցը, ինչպես է արձագանքում կանոնը կիրարկության մեջ կատարված փոփոխություններին: Հայտնի է, որ կանոնական բառարանները երբեմն հապաղում են կիրարկության մեջ ընդհանրացած և, ըստ էության, կանոնի մակարդակի բարձրացած ձևերն արձանագրելիս: Թեև կա տերմինաբանական կոմիտեի դեռևս 1955 թ. որոշումը «հայոց լեզվի նորմավորման ընդհանուր սկզբունքները» վերնագրով, ուր հստակորեն նշված է. «մայրենի քերականության մեջ գոյություն ունեցող զուգահեռ ձևերից ընտրել այն ձևերը, որոնք բացարձակ գերակշռություն ունեն գրական հայերենում կամ որոնք ներկայացնում են առաջադեմ տեղեկաց և նպաստում են քերականական ձևերի միօրինակությանն ու պարզեցմանը»:

Այդ առումով քննենք, թե ինչպես են ներկայացվում **կոշիկ, սուրճ** բառերի սեռական-տրական կանոնական ձևերը, ըստ կանոնական բառարանների՝ երկու դեպքում էլ կանոնական են համարվում հնչյունափոխված ձևերը՝ **սրճի, կոշկի**: Մինչդեռ կիրակության մեջ լայնորեն տարածված և ըստ էության կանոնական մակարդակի բարձրացած ձևերն են՝ **կոշիկի, սուրճի**, հմմտ. **կոշիկի տուն, սուրճի բաժակ** և այլն: Պետք է հուսալ, որ ապագա հրատարակվելիք բառարաններում համապատասխան փոփոխություն կկատարվի: Բառարանները հրատարակվելուց հետո տասնամյակների ընթացքում (հմմտ. լեզվի ինստիտուտի քառահատոր բառարանը) երբեմն իբրև կանոնական ձևեր ներկայացնում են այնպիսի բառային միավորներ, որոնք արդեն հնացած են և փոխարինված այլ ձևերով: Այսպես՝ մի ժամանակ տարածված **բույծ** և **գործ** ածանցների հոմանիշությունը ներկայումս որոշ չափով սահմանափակվել է՝ **բույծը** հատկացվելով կենդանիներ **բազմացնողին, գործը**՝ իր արտադրողին՝ **խոզաբույծ, ոչխարաբույծ, ճագարաբույծ**, բայց **մե-**

տաքսագործ, գաջագործ (մի կողմից բացառվում է մետաքսաբույծ, գաջաբույծը, մյուս կողմից խոզագործ, ճագարագործը), սակայն բառարաններում (հմմտ. Ա. Ղարիբյանի բառարանը) տակավին ներկայացվում են բամբակաբույծ, թելաբույծ և այլ ձևերը, որոնք կանոնի արդի մակարդակով հնացած են և մերժելի: Նույն ձևով, կիրակության մեջ հաճախ է խոսվում **կանացի և կանանց** ձևերի հոմանիշային կիրառության դեմ (կանացի հատկանիշ ցույց տվող, կանանց՝ պատկանելություն), այնինչ բառարանները նշված ձևերը շարունակում են դիտել իբրև գուգահեռ ձևեր: Այսպիսով, կիրարկությունը ճշգրտում է առանձին կանոնական ձևեր, բայց կանոնը ներկայացնող բառարանները որոշապես հետ են մնում դրանք «գրանցելու» գործում:

Արդի կիրարկության և կանոնի մակարդակով անհամապատասխանության հարաբերաբար զգալի կշիռը դրսևորվում է կանոնական արտասանության՝ ուղղախոսության ոլորտում:

Կարելի է ասել, որ եթե մինչև XX դ. կեսերը գրային կանոնի վրա մեծ էր խոսակցական լեզվի և բարբառների ազդեցությունը, ապա վերջին երեք տասնամյակներում որոշակի է գրային ձևի ազդեցությունը ուղղախոսության վրա: Փաստորեն ձայնեղ տառերի խուլ արտասանության մի շարք դեպքեր, որ ներկայացնում է կանոնը, ներկա գրական տարածված հնչարտաբերման համաձայն՝ ըստ դրության է:

Հակառակ թափված բոլոր ջանքերին, նկատելի է, որ գրական կանոնում և առավել ևս կենդանի լեզվական կիրարկության ոլորտում (կիրարկության բանավոր տարբերակում) հնամենի անվանակարգային բառերի, տերմինների մի մասը «մոռացության» է տրվում այսրկովկասյան երեք լեզուներում էլ (օր.՝ ծառանունները, բույսերի անվանումները և այլն), հաճախ եղած ձևերի անգիտության պատճառով ստեղծվում են նորերը, անտեղի «ծանրաբեռնում» լեզվի բառապաշարը: Այդ բոլորով հանդերձ, մի բան անուրանալի է, որ գրական լեզուներն էլ

առավել կամ նվազ չափով ավելի կանոնարկված են, ինքնակատարելագործված մի վիճակ են ներկայացնում, ուր հստակորեն ուրվագծված է կանոնի և կիրարկության հարաբերության հարաբերաբար բարդ պատկեր, ինչը բնորոշ է ժամանակակից զարգացած ցանկացած լեզվի: Այսպիսով, կանոնի և կիրարկության հարաբերության ընդհանուր պատկերը կարելի է ներկայացնել հետևյալ ամփոփիչ բնութագրումներով:

1. Հարավկովկասյան գրական լեզուները, թեև կանոնի և կիրարկության հարաբերության միօրինակ պատկեր չեն ներկայացնում, այնուհանդերձ ի հայտ են բերում որոշակի ընդհանրություններ: Այդուհանդերձ տարբեր են ոչ միայն փոխառությունների հարցի նկատմամբ նրանց ունեցած մոտեցումները, այլև լեզվի կանոնարկվածության աստիճանը, առավել ևս՝ կանոնի և կիրարկության մերձավորության աստիճանը:

2. Հարավկովկասյան լեզուներում աստիճանաբար ավելի ուժեղանում է կանոնի ազդեցությունը կիրարկության վրա: Մեծ է ուղղագրության ներգործությունը ուղղախոսության վրա. գնալով ավելի հստակ է դրսևորվում արտասանական տարբերակներից դեպի միօրինակացում գնալու ձգտումը:

3. Եթե որոշ դեպքերում կիրարկությունը խանգարում է կանոնով հանձնարարվող պատճենված կամ սեփական տերմինային միավորի ընդհանրացմանը, ապա առկա են նաև այնպիսի դեպքեր, երբ կանոնն է արգելք հանդիսանում կիրարկության մեջ տարածում գտնող սեփական բառին (հմմտ. **անսամբլ-համույթ** և այլն):

4. Կանոնի ազդեցությամբ պայմանավորված՝ որոշակի պայքար է մղվում տերմինային հոմանիշության դեմ: Դրանով տերմինային բառապաշարը փորձում է ազատվել ավելորդ բեռից: Դրան զուգընթաց աշխատանք է տարվում դարավոր ավանդույթով բնութագրվող բառաշերտերի «մոռացության» դեմ:

5. Վերջապես, անուրանալի է մինչև անցյալ դարավերջ հատկապես ռուսերենի, իսկ ներկայումս նաև անգլերենի,

Ֆրանսերենի և այլ լեզուների բարերար դերը ոչ միայն մայրենի լեզվի մեջ մտած բազմաթիվ փոխառյալ տերմինների, բառապատճենումների հարցում, այլև այդ լեզուների համապատասխան ձևերի ազդեցությամբ՝ մայրենի լեզվի բառակազմական, քերականական մի շարք երևույթների աշխուժացումը, լեզվի կանոնարկման գործընթացը տարերային վիճակից գիտական հիմքերի վրա դնելու ձգտումը: Տերմինաբանության արդի վիճակը հարավկովկասյան երեք գրական լեզուներում ի հայտ է բերում կյանքի հետ «քայլ մեկնող» մայրենի լեզվի ողջ ներուժը:

Տերմինաբանության ոլորտում եղած ձեռքբերումների ու նվաճումների որոշ գաղափար կարող է տալ նաև այդ լեզուներով հրատարակված գիտական-տերմինաբանական բառարանների քանակը:

Այնուամենայնիվ, միայն բառարանների քանակով դատելու դեպքում, պետք է ընդունել, որ, ասենք, ուզբեկերենի տերմինաբանությունը շատ ավելի հարուստ է, քանի որ այդ լեզվով հրատարակված տերմինաբանական բառարանների թիվը հարյուրից անցնում է: Անշուշտ, քանակը որոշապես միտվում է դեպի որակ: Անվիճելի է, որ հարավկովկասյան երեք հիմնական լեզուների գծով մշակվող տերմինաբանությունը աննախընթաց զարգացման փուլ է ապրում, և ինչպես հայերենում, այնպես էլ հատկապես վրացերենում, շնորհիվ հազարավոր նորաստեղծ տերմինների, տերմինակերտման գիտական սկզբունքների կիրարկման, աստիճանաբար լեզվական կանոնի և կիրարկության միջև եղած «անջրպետը» փոքրանում է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	3
ԳԼՈՒԽ 1.	
Հանրալեզվաբանություն. առարկան և խնդիրները.....	6
ԳԼՈՒԽ 2.	
Լեզվի եվ խոսքի գործառույթները. մարդու հաղորդակցական գործունեությունը.....	25
ԳԼՈՒԽ 3.	
Լեզու և մշակույթ.....	43
ԳԼՈՒԽ 4.	
Լեզու և կրոն.....	55
ԳԼՈՒԽ 5.	
Աշխարհիկ ժողովուրդներն ու լեզուները ռասաներ, ազգություններ, լեզուներ.....	76
ԳԼՈՒԽ 6.	
Հանրային և հոգեբանական գործոնները լեզուների պատմության մեջ.....	114
Մատնանշված և օգտագործված գրականության ցանկ.....	137
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	149
ԳԼՈՒԽ Ա	
Լեզվաբանական աշխարհագրության խնդիրներն ու նպատակները	154
ԳԼՈՒԽ Բ	
Լեզվաբանական աշխարհագրության կապը հարակից գիտությունների հետ.....	170
ԳԼՈՒԽ Գ	
Լեզվաբանական ատլաս.....	180
ԳԼՈՒԽ Դ	
Հայ բարբառների ուսումնասիրության շրջանափուլերը.....	195

ԳԼՈՒԽ Ե

Հայ բարբառների դասակարգման Գ. Ջահուկյանի բազմա-
հատկանիշ մեթոդը: Լեզվաբանական աշխարհագրությունը
և հարավկովկասյան տարածքի բառագիտական խնդիր-
ները..... 202

ԳԼՈՒԽ Ա

Բարբառային կենտրոններ և բարբառախոս վայրեր..... 207

ԳԼՈՒԽ Բ

Ձուգաբանությունների ընտրության կերպը և նշանակման
եղանակները..... 210

ԳԼՈՒԽ Գ

Լեզվաբանական աշխարհագրությունը և լեզուների (բարբառ-
ների) հնչյունական կառուցվածքը..... 215

ԳԼՈՒԽ Դ

Հնչյունական և բառային զուգաբանություններ..... 223

Օգտագործված գրականության ցանկ 273

Ձայնի ճանաչում և խոսքի մշակում 291

Վիճակագրական մեթոդների կիրառումը լեզվաբանության
մեջ..... 296

Հնչյավիճակագրություն..... 304

Ոճաչափություն..... 320

Ոճամետրիկա..... 326

Գրականություն..... 328

Վերծանում..... 329

Կանոնի և կիրարկության հարաբերությունը հարավկով-
կասյան լեզուների տերմինաբանության մեջ..... 335